Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան

ԱՐՄԵՆ ՀՐԱՉԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Ժ.02. 02 – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ատենախոսություն

Գիտական ղեկավար՝
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ.Ս.Հովսեփյան

ԵՐԵՎԱՆ - 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....18

1.1. Կրկնության վերլուծությունը հոգելեզվաբանության մեջ և ավանդապահ ժողովուրդների խոսույթներում.....18

1.2. Կրկնության վերլուծությունը տեքստի և խոսույթի տեսության մեջ.....23

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

2. ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....33

2.1.Կրկնության սահմանումը և պայմանները.....33

2.2. Կրկնության արտալեզվական գործոնները.....37

2.3. Խոսույթի կրկնության սերումը լեզվի մակարդակներում.....41

2.4. Խոսույթի կրկնության սերումը խոսքային ակտում.....53

2.5. Իմաստային կրկնություն.....64

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

3. ԽՈՍՈՒՅԹԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.79

3.1. Շեշտման գործառույթով կրկնություն.. 79

3.2. Հուզական լարման գործառույթով կրկնություն.....88

3.3. Համագործակցության գործառույթով կրկնություն.....93

3.4. Բովանդակային արձագանքման գործառույթով կրկնություն.....103

3.5. Աղմուկի հետևանքով կատարվող կրկնություն..... 113

3.6. Պատկերավորման գործառույթով կրկնություն.....120

3.7. Միավորող գործառույթով կրկնություն.....129

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....143

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....151

6. ՀԱՎԵԼՎԱԾ.....164

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության զարգացման հետսոսյուրյան շրջանն աչքի է ընկնում բազմաթիվ նորամուծություններով, որոնք հիմնականում հակադրվում են 19-րդ դարի լեզվաբանական ըմբռնումներին և նոր գաղափարներ են բերում ներլեզվաբանություն, սակայն լեզվաբանական հետազոտության ոլորտների որոնումները ճշգրտումներ են կատարում նաև լեզվաբանության զարգացման Ֆ.դը Սոսյուրի նախանշած ուղիներում: Հակադրվելով ժամանակի ըմբռնում-ներին՝ Շ.Բալին հենց խոսքը և նրա արտահայտչամիջոցները դարձրեց լեզվաբանական ոճաբանության հիմնական խնդիրը [Балли Ш., 1961:187-189]: Խոսքի նկատմամբ ուշադրությունն սկսել էր դեռ անտիկ լեզվափիլիսոփա-յության շրջանից: Հին Հունաստանում դասական քերականության ձևավորմանը զուգընթաց դիպուկ բնութագրությունների ենք հանդիպում խոսքի, փոխաբե-րության, բառակիրառման ոլորտների վերաբերյալ, որոնց առումով կարևորվել է խոսքի չափավորությունն ու բառի տեղին օգտագործումը: Հին ճարտասանական արվեստը խոսքի կառուցման գործում նորաբանությունների, օտարաբանութ-յունների, բառընտրանքի, բառապաշարի հետ կապված հարցերը դիտել է որպես խոսքը հաճելի ու գեղեցիկ դարձնելու միջոց: «Համանուն բառերն օգտակար են սոփեստի համար, քանզի դրանց միջոցով նա դիմում է խորամանկ հնարքների, իսկ հոմանիշներն օգտակար են բանաստեղծի համար», - գրել է Արիստոտելը [Тронский, 1936 :177]:

Շ.Բալիի կողմից բանավոր խոսքն ուսումնասիրելու կարևորության ընդգծումը նոր ներդրում եղավ հետսոսյուրյան լեզվաբանության մեջ [Մելքոնյան Ս., 1984:34], որին հետևեցին տեքստերի, նրանց կազմության, հատկանիշների և գործառույթների ուղղությամբ կատարվող հետազոտություններ:

Վերջին տասնամյակներին լեզվաբանական մի շարք ուղղություններ ուսումնասիրության նյութ են դարձրել լեզվական հաղորդումների կապը հաղորդակցման միջավայրի հետ: Խնդիրը տարբեր կողմերից լուսաբանելով՝ տեքստի լեզվաբանությունը, խոսքի և խոսույթի վերլուծությունը, հանրալեզ-վաբանությունը, գործաբանությունը ձևավորեցին հետազոտական մոտեցում,

որի համաձայն լեզվական նյութի վերլուծությունը բավարար լուսաբանում կարող է ստանալ միայն խոսքին ուղեկցող իրադրության հանգամանքների ամբողջական գնահատման դեպքում: Նշված մոտեցման շրջանակներում խոսույթի վերլուծության կողմից ուսումնասիրվեցին բնական երկխոսության ռազմավարությունները, շփվողների փոխհարաբերությունները, միջավայրի ու խոսքային իրադրության ազդեցությունը երկխոսության կազմակերպման վրա: Կապակցման դերը՝ իբրև կարևոր բաղադրիչ, սկսեց կենտրոնական տեղ գրավել տեքստի լեզվաբանական հետազոտություններում, իսկ կապակցում իրականացնող հիմնական գործոնների մեջ կարևորվեց կրկնությունը: Կրկնության ուսումնասիրությամբ զբաղվեցին խոսքի վերլուծության ուղղությունները՝ հետզհետե դեպի տեքստի լեզվաբանություն և գործաբանություն տանող միտումներով:

Հասարակական և միջանձնային հաղորդակցման տարբեր գործոնների բերումով բոլոր լեզուներում հնչույթների, ձևույթների, բառույթների ու բառահիմքերի կրկնության պահանջը ամեն լեզվում պատմականորեն ստեղծել է որոշակի բառակազմական կաղապարներ, որոնք մինչև օրս էլ գործում են տարբեր արդյունավետությամբ: Լեզուներում նման կրկնությունների ոլորտը բավականաչափ ուսումնասիրված և բացահայտված է [հայերենի կրկնությունների վերաբերյալ տես՝ Կարապետյան Ա., 2005, Ամբարդարյան Գ., 2007, Հովսեփյան Լ., 1999 և այլն], սակայն խոսույթում լեզվական և խոսքային կառույցների կրկնության տարբեր երևույթները և նրանց բազմազան ձևերն ու գործառույթները դեռևս մանրակրկիտ և համակարգված ուսումնասիրության և տիպաբանական դասակարգման չեն ենթարկվել, թեև կրկնության և կրկնությունակերպ երևույթների շուրջ միավորումների խնդիրը՝ դրանց տարբեր կողմերի բացահայտումներով, լուսաբանվել է դեռ բավական վաղ արված հետազոտություններում: Եթե մի կողմ թողնենք այն տեսակետները, որոնք կրկնությունը որպես «տեքստային դատարկություն» համարում են նաև տեքստի ոճական թերություն [Harris Z.,1952:28, Austin J, 1962], ապա ոճաբաններին և լեզվաբաններին կրկնությունը հիմնականում հետաքրքրել է որպես խոսքի կամ

լեզվի կառույց, որն իրականացնում է *բովանդակության շեշտում, հաստատում, նույնացում* և այլն [Tannen D., 1979, Brody J., 1986, Grice P.,1975, և ուրիշներ]: Տեքստի լեզվաբանությունը զարգանում է կառուցվածքային, հաղորդակցական և լեզվամշակութաբանական ուղղություններով: Շարահյուսական բարդ միասնություն ներկայացնող գերասույթային միավորների ուսումնասիրությունը հանգեցնում է տեքստի քերականության առանձնացմանը: Ամեն անգամ, երբ պարզ է դառնում, որ լեզվական կառույցների ձևաբանաշարահյուսական և իմաստաբանական տվյալները չեն բավարարում տեքստի իրողությունների մեկնաբանության համար, փորձ է արվում իմաստավորել խոսքին զուգահեռ ընթացող արտալեզվական միջավայրի գործոնները, որով հաղորդման բովանդակությունը դառնում է առավել ամբողջական, իսկ խոսքային կառույցների կրկնության ուսումնասիրությունները, մեր կարծիքով, հանգեցնում են միմյանց լրացնող մոտեցումների ձևավորմանը: Նշված առումներով կարելի է առանձնացնել Չ. Մորիսի, Ս.Լևինսոնի, Ջ.Օստինի, Ջ.Սիրլի և Հ.Գրայսի գործաբանական մոտեցումները [Morris Ch.,1938:86, Levinson S., 1983, Austin J.,1962, Searle J., 1976:1-23, Grice P., 1975:41-58], որոնք տարբեր նպատակներով փորձում էին լեզվի կիրառությունները բանալի դարձնել նրա իսկ բնույթի բացահայտման համար: Սերող իմաստաբանությամբ զբաղվողները ևս ասույթը բնութագրելիս դիմում էին ոչ միայն շարահյուսական կառույցի բովանդակությանը, այլև արտալեզվական իրողությունների հաշվառմանը [Levinson S.,1983: 35-36, Chomsky A., 1965], ինչը բավականին լայն ընդհանուր դաշտ է ստեղծել նշված ուղղությունների միջև:

Մ. Ստաբսի բացահայտած խոսույթի երեք հատկանիշները (որ այն ձևի առումով նախադասությունից ընդարձակ է, կառուցվածքը հիմնականում երկխոսական է, բովանդակության պլանը ունի զուգահեռ արտալեզվական համատեքստ) [Stubbs M., 1983:10] համընկնում են այլ ուսումնասիրողների կողմից տեքստի ըմբռնումների մեկնաբանությանը՝ որպես «հաղորդակցական իրադրության մեջ ընթացող խոսույթ/դիսկուրս, և տեքստ, որը հեռու է նման իրադրությունից» [Карасик В., 2002:189]: Է.Գոֆմանը աշխատանքային

պարտականությունների շրջանակներում (ինստիտուցիոնալ խոսույթ՝ Ա.Հ.) վարած զրույցը հակադրում է սովորական ինքնաբուխ զրույցին, որի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի խոսք սկսել կամ լսել ուրիշներին՝ առանց նախապայմանի [Goffman E.,1976: 264]: Ամեն մեկի խոսքը և դրա գնահատումն ընդունվում է զրուցող զույգի կողմից, ընդ որում, վերջնական համաձայնություն կամ տեսակետների համաձայնեցում չի պահանջվում [Levinson S., 1983:287]: Դրանով են պայմանավորված խոսողների համագործակցությունը, մասնակցի ներառումը խոսքային համագործակցություն, որը ոչ միայն ձևավորվում է միջավայրի կողմից, այլև ինքն է ձևավորում նոր միջավայր: Զրույցի կանխատեսումներն ու հետևանքները թելադրում են մուտքերի հաջորդականությունը, բոլոր խոսակիցների կողմից հաղորդման վերահսկումը (ով՝ որ պահից կարող է մուտք գործել զրույց) և զրուցող զույգերի ձևավորումը [Schegloff E., 1972, Jefferson G., 1977, Sacks H., 1977:370]: Զրուցակիցներն իրենք են որոշում այլ խոսողի մուտքի տեսակը և զրուցազույգերի կայացումը: Որևէ զրույցում Ա կողմը հարցով կամ ողջույնով պահանջ և հիմք է դառնում հաջորդ գործողությանն անցնելու համար [Heritage J.,1985 : 2-3, 8, Levinson S.,1983 : 334]:

Ոճաբանության մեջ կրկնության համար կարևորվում է նրա արտահայտչականությունը: Կրկնությունը հիմնականում ուսումնասիրվում է իբրև ճարտասանական կառույց և շատ ավելի հետաքրքրում է արձակի ու չափածոյի, քան խոսքի մյուս ձևերի ուսումնասիրողներին, այդ պատճառով սույն խնդրին վերաբերող պարզաբանումների ենք հանդիպում ավելի շատ լեզվաոճական, քան կառուցվածքային լեզվաբանական ուսումնասիրություններում:

Ըստ Դ. Շիֆրինի՝ Ժամանակակից գործաբանությունը երկու հիմնական նպատակ ունի՝ խոսողի տեսանկյունից ուսումնասիրել հաղորդումների բառային ազդեցությունները և լսողի համար ընտրել, դասակարգել ու խմբավորել խոսքի տեղեկատվության վերաբերյալ հնարավոր բոլոր վարկածները՝ հաղորդման առավելագույնս ընկալման պայմաններ ստեղծելու համար [Schiffrin D.,1987:11]: Տարբեր մեկնաբանությունները խոսույթի վերլուծությունը տանում են կամ դեպի

տեքստ, կամ դեպի երկխոսություն, որոնց տարբերություններն էլ, ըստ Ս. Լևինսոնի, կասկածի տակ են դնում լեզվի նկարագրության գործիքների բավարար լինելը խոսույթի ուսումնասիրության գործում՝ դուռ բացելով այն բանի համար, որ դրանք լրացվեն երկխոսության հետազոտության մեջ կիրառված մեթոդներով [Levinson S., 1983:294]:

«Հաղորդակցման ազգագրությունը» [Hymes D., 1972: 35-71], «Խոսույթի վերլուծությունը» [Taylor T.,Cameron D.,1987:11], “Խոսույթի քննական վերլուծությունը» [Fairclough N., 1989, 1992, 1995, Stubbs M., 1983:8] խոսույթի, նրան զուգահեռ ընթացող միջավայրի և իրադրության գործոնների հաշվառման առումով որոշակի սկզբունքներ են մշակում: Ոմանք կարևոր են դիտում կրկնվող կառույց պարունակող տեքստերի շարահյուսական ձևավորվածությունը [Petofi J., 1971, van Dijk T., 1972], մյուսներն ընդգրկում են նաև արտալեզվական միջավայրը, խոսքի կայացման իրադրությունը, անգամ կանխենթադրույթները [de Beaugrande R., Dressler W., 1981], երրորդները փորձում են միավորել նշված երկու ըմբռնումները: Ըստ նրանց՝ խոսույթի տեսությունը նախ և առաջ պետք է պարզի ներլեզվական ու արտալեզվական միջավայրերի ունեցած կապի իր ձևակերպումը [Halliday M., Hasan R., 1976, Hoey M., 1991]: Դ.Թանընը գտնում է, որ խոսույթը պետք է ընդունել որպես լեզվից դուրս գտնվող մի երևույթ [Tannen D.,1989:6]: Նշենք, որ Զ.Հարիսը [Harris Z., 1952]՝ կառուցվածքային լեզվաբանության, իսկ ավելի ուշ՝ Տ. Դայքը [van Dijk T., 1972] սերող քերականության ուսումնասիրության մեթոդները գործադրեցին խոսույթի հետազոտության ոլորտում և համոզվեցին դրանց անբավարարության մեջ: Ստեղծված իրադրության մեջ Դ.Շիֆրինի մի արտահայտությունը [Schiffrin D., 1987:7] («Արդյոք խոսույթի կառուցվածքը ընդհանրություններ ունի լեզվի կառուցվածքի հետ և կարող է ուսումնասիրվել լեզվի հետազոտության մեթոդներով») մասնագետներին մղում է բնական երկխոսության ուսումնասիրության համար որոնելու նոր, առավել արդյունավետ մեթոդներ: Սակայն խոսույթը լեզվի նույնպիսի կառուցվածքային արդյունք չէ, ինչպես նախադասությունը, այլ «նույնական դիտավորություն ունեցող միմյանցից անկախ և հաճախ միմյանց

հակասող երկու կամ ավելի մարդկանց փոխազդեցություն է և պահանջում է այլ մոտեցում» [Levinson S., 1983:294]:

Չնայած խոսույթի կրկնության դրսևորումների և դրանց գործառույթների հետազոտությանը նվիրված ծավալուն գրականությանը, գտնում ենք, որ մինչև այսօր դեռ չի ստեղծվել կրկնության մի այնպիսի ուսումնասիրություն, որը բազմակողմանիորեն ներկայացներ երևույթն իր բազմաձևության և բազմագործառույթայնության մեջ: Ենթադրում ենք, որ մեզ հետաքրքրող երևույթի գիտական ուսումնասիրությունների ոչ բավարար արդյունքը հետևանք է այն բանի, որ խոսույթի կառույցների կրկնության ձևերն ու նրա գործառույթների տարբերակները լեզուներում հանդես են գալիս որպես «թաքնված կարգ» [Есперсен О, 1958], քանի որ՝

- դրանք ներկայացնող երևույթների անվերջավոր բազմությունը,
- դրսևորման հատկանիշների հարափոփոխությունը և բազմազանությունը,
- բազմության մեջ անփոփոխակների տարբերակման դժվարությունները,
- ուսումնասիրողների կողմից դրանց տրված անվանումների առատությունը (կրկնություն, կուտակում, շրջասություն, զուգահեռույթ, շրջում /հակադասություն՝ շարախախտում և հերթաշրջում տեսակներով/, բանադարձում, հարակրկնություն /անաֆորա/, նույնաբանություն /տավտոլոգիա/, հոմանիշություն, առձայնույթ/ ալիտերացիա և այլն) [Tannen D., 1979, Եզեկյան Լ., 2003],
- դրանց տրված տարբեր դասակարգումները,
- երևույթի բացահայտմանն ուղղված լեզվական հաղորդման և արտալեզվական միջավայրի տվյալների զուգադրական դիտարկման դժվարությունները,
- կրկնության և դրան հարակից երևույթների սահմանների անորոշությունը և վերջիններիս նկատմամբ կրկնության կատարած բազմակողմանի տեղաշարժերը հասկանալի են դարձնում կրկնության դրսևորումներն ու դրանց գործառույթները հետազոտման նույն դաշտում տեսնելու դժվարությունը:

Իրականում ոչ միայն կրկնությունն է «թաքնված կարգ»: Նրա գործառույթների մեկնաբանմանը նպաստող խոսքի և դրան ուղեկցող իրադրական պայմանների հնարավորությունները նույնպես «թաքնված են» խորքային ստորոգումների,

միջուկային կառույցների ու կանխենթադրույթների ոլորտում: Այդ է պատճառը, որ խոսույթի կրկնության վերլուծությունը, խոսքից բացի, լայնորեն հաշվի է առնում միջավայրը, ակտանտների խորքային հարաբերություններն ու մակերեսային կառույցներում ասույթների ստորոգման հատկանշային մեկնաբանությունը, նախադասության հնչերանգը և այլն, որոնցով հաղորդումը միշտ խոսքի բովանդակությունից ավելի ծավալուն է ստացվում: Այս առումով Է. Աթայանն առանձնացնում է վերաբերության չորս կերպավորում՝ *լեզվական վերաբերություն, առարկայական վերաբերություն, իրադրական վերաբերություն և միջավայրային վերաբերություն:* «Սրան պետք է լավ դաս տալ» ասույթը հուշում է ընդամենը, որ «սա»- ն հաղորդման մասնակիցներից մեկն է, իսկ թե կոնկրետ ով է՝ առկայացվում է վերաբերության տեսակների ներգործությամբ (հայացքով, մատով, խոսքի արագության փոփոխմամբ, նախորդ և հաջորդ հատվածների բովանդակային վերաբերությամբ) [Է.Աթայան, 1981:225 և այնուհետև]:

Մի խումբ լեզվաբաններ [Labov W., 1972ա, 1977, Edmondson W., 1981] բառային գործողությունների առկայացման գործոններն ընդգրկում են կրկնության գործառույթների վերլուծության գործիքակազմի մեջ և ցույց են տալիս բնական երկխոսությունների և դրանց պարունակած հաղորդումների կապը տարբեր մակարդակներում: Թե՝ կրկնության գործառույթների նկարագրման, թե՛ երկխոսության կանոնների սահմանման նպատակներով մենք հետևել ենք այդ մակարդակների տվյալներին:

Քիչ են դեպքերը, երբ կրկնությանը նվիրված հետազոտություններում կարևորվում է դրանց տեսակների սահմանման և դասակարգման հարցը: Պ.Քվիրկն, օրինակ, դրանցից մեկն է և խոսույթի կառույցների կրկնություններն իրենց գործառույթներով բաժանում է երեք խմբի՝

ա/ հնչերանգային արտահայտությունների կրկնություններ, որոնք տեղեկատվության ճշգրտման, զրույցի ընթացքում ստեղծված դադարի հաղթահարման, խոսքի լրացման, ուշադրություն հրավիրելու նպատակներ են հետապնդում և

միանգամից արժանանում են ունկնդիրների համաձայնությանը, զարմանքին կամ անվստահությանը,

բ/ տվյալների կրկնություններ, որոնք թեմայի հարցերի շրջանակում իրականացնում են արտահայտչականության և հուզականության շեշտում, ուժեղացում,

գ/ կրկնություններ, որոնք ցույց են տալիս կրկնվող երևույթների շարունակականություն, նյութի քանակական աճ՝ նայած թե կառույցում բայը, թե գոյականն է կրկնվում [Quirk R., 1972:295, 408-411, 618-619, 970-971]: Կրկնության տեսակների դասակարգման ենք հանդիպում նաև Գ.Պերսընի աշխատանքում [Persson G., 1974]:

Ռ. Յակոբսոնը փորձում է կրկնությամբ զբաղվող լեզվաբանների ուշադրությունը դարձնել դեպի գրական տեքստերը՝ պոեզիան և, հատկապես, տեքստային պարալելիզմը (այսուհետև՝ զուգահեռույթ: Ա.Նազարյանը [1993:361] առաջարկում է զուգահեռականություն, զուգահեռություն, նույնադասություն): Ոճաբանների մոտ զուգահեռույթը՝ որպես կրկնության տարատեսակ, համարվել է տարբեր մակարդակներում պոեզիա «արտադրող» գործոն, սակայն չի անտեսվել նաև դրա քերականական տեսակը, որն իր հատկանիշներով ներկայանում է որպես կառուցվածքային և քերականական կրկնություն [Levin S.,1973: 30]: Կրկնության ուսումնասիրությունո ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական տեքստերում ի հայտ է բերել տարբեր դերակատարություններ: Ոճաբանները թվարկում են փաստի հիշողության ապահովումը, զուգորդվող տվյալների սերտ կապակցումը և “զուգահեռույթից ծորող մաքուր մեղեդիական հաճույքը’ [Jakobson R.,1981ա:773]: Ըստ Լ. Եզեկյանի՝ «Կրկնությունը ոճական, շարահյուսական այնպիսի դարձույթ է, որի դեպքում բառակապակցությունների, բառերի կրկնությունը խոսքին հաղորդում է արտահայտչականություն և հուզականություն»: Նա կարևորում է նաև կրկնությամբ դրսևորվող ոճական տարբեր երանգները՝ դրանք կապելով բանաստեղծական տողի սկզբում, վերջում և տողամիջում հանդիպող առանձնահատկությունների հետ: Լ. Եզեկյանը շեշտում է նաև կրկնության մեջ մեզ հետաքրքրող կարևոր

գործառույթներց մեկը՝ «կրկնությունն ապահովում է անցումները բանատողերի միջև» [Եզեկյան Լ., 2003:362]: Այս դիտողությունը տեքստի լեզվաբանության մեջ գնահատվում է որպես տեքստայնության կարևորագույն հատկանիշ, որպես կրկնության կապակցող դեր: Նշված գործոնների համար հետազոտողները հետզհետե ուրվագծեցին կրկնության ունեցած դերն ու նշանակությունը խոսույթի ներքին և արտաքին կազմակերպման գործում:

Ռ.Բոգրանդի և Ու.Դրեսլերի կաղապարում խոսույթը ներկայանում է իբրև գործընթաց, որտեղ տարբերվում է տեքստի մակերեսային կապակցման ամբողջականության և խորքային տրամաբանվածության մակարդակներ: Որպես «մակերեսային տեքստի» կառույց, կրկնությունը պատկանում է առաջին մակարդակին, քանի որ ընդունվում է, որ «մակերեսային կապվածությունը հիմնված է տեքստին վերագրվող կապակցման ունակության վրա» [de Beaugrande R., Dressler W.,1981:110]: Սակայն գիտենք, որ կա նաև կրկնության *միավորող* գործառույթը, որը բովանդակության ոլորտին է պատկանում և դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ (տես՝ Միավորող գործառույթով կրկնություն, էջ 114):

Ատենախոսության մեջ խոսույթի կրկնության գործառույթների տարբերակման առումով կարևոր է դառնում նաև սահմանել մասնակիցների ունեցած դերերը զրույցում մուտքի «պատվիրման» կամ էլ ընտրված գործողությունների մեղմացման-ուժեղացման գործում: Մեր այս մոտեցումը զրույցի համագործակցության կաղապարի վերաբերյալ Դ. Շիֆրինի [Schiffrin D., 1987:20] մի դիտարկման հետևանք է. «Եթե մենք փորձենք խոսույթի կառուցվածքն ուսումնասիրել, առանց հաշվի առնելու մասնակիցների փոխազդեցությունն ապահովող իմաստաբանական և գործաբանական կրկնվող բովանդակությունը, ապա չենք կարող պարզել տվյալ կրկնության առանձնահատկությունը»:

Կրկնությանը տրված բնութագրությունները բավական տարբեր են: Որպես աշխատանքային վարկած հենվել ենք Գ. Բաբինյոտիսի սահմանման վրա, ըստ որի «կրկնությունը բնութագրվում է որպես կառույցում նույնական կամ նման

իմաստային, շարահյուսական, ձևույթային, հնչյունական տարրերի դրսևորում» [Μπαμπινιωτης Γ., 1991: 13]: Սակայն խոսույթի կրկնությունն առավել ամբողջականորեն բնութագրելու նպատակով սույն բնորոշմանը մենք հավելել ենք նաև նյութի ուսումնասիրմամբ թելադրված հաղորդակցական միջավայրի և լեզվական կառույցների կապի ու դրա «նախապատմության» մեջ մտնող մի շարք հարցերի քննարկումը:

Ատենախոսության մեջ «Հաղորդակցման Ա կամ Բ կողմեր» արտահայտությունների տակ ներկայացված են խոսողը և խոսակիցը, որոնց հետ չպետք է շփոթել «Կրկնության Ա և Բ եզրեր» արտահայտությունները, որոնք ներկայացնում են կրկնյալին և կրկնորդին:

Սույն աշխատանքի նպատակն է թեկնածուական ատենախոսության ծավալի ընձեռած սահմաններում կատարել գեղարվեստական խոսույթում հանդիպող կրկնության բազմազան դրսևորումների ուսումնասիրություն, խոսույթի ամենատարբեր բաղադրիչների ներդրումների հաշվառմամբ սահմանել նրանց անփոփոխակային գործառույթներն ու դրանց տարբերակները, տարբերակման չափանիշները, պարզել, թե որո՞նք են, ի՞նչ ձևեր կարող են ստանալ և ի՞նչ ներդրումներ իրականացնել: Նշված նպատակին հասնելու համար անհարժեշտ ենք համարել առաջադրել և լուծել հետևյալ խնդիրները:

1.Պարզել՝ ծառայու՞մ է արդյոք խոսույթի կրկնվող կառույցների բարձր հաճախականությունը որևէ տեղեկատվություն արտահայտմանը, թե՞ կրկնությունն իսկապես բովանդակային դատարկություն է:

2. Եթե խոսույթի կրկնությունն արտահայտում է որոշակի տեղեկատվություն, ապա դրա ընկալման համար ի՞նչ դերակատարություն ունեն խոսակիցներն ու նրանց տարբեր որակները, խոսքի կառույցը և դրան ուղեկցող իրադրությունը, հաղորդակցման միջավայրը, հարալեզվական ու արտալեզվական գործոնները և այն ամենը, ինչ վերջին շրջանում հասկանում են ժամանակատեղային /քրոնոտոպ/ գործոններ ասելով:

3. Հաղորդակցական կոնկրետ նպատակներ ապահովող կրկնության հետազոտության հիման վրա ընդունել եզրակացություններ, որոնք թույլ են

տալիս «կրկնություն-գործառույթ» միասնություններն առանձնացնել և դասակարգել որոշակի բազմահատկանիշ տիպաբանական դասակարգման մեջ:

4. Կրկնության գործառույթները բացահայտել՝ հաշվի առնելով արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը, նույն կամ այլ խոսողից սերված լինելը, կրկնության եզրերը միմյանցից բաժանող միջատարածքը, կրկնության առույթների ճանաչման չափանիշները, հաղորդակցության հիմնական բաղադրիչների՝ խոսողի, խոսակցի, իրադրության և հաղորդման կապի տեսակը, կրկնության Ա և Բ եզրերի արտահայտության ձևերը, տեղեկատվության հետ կրկնության ունեցած կապը, մինչհաղորդակցական և հետհաղորդակցական նշանակությունները, դրանց համակարգակազմիչ գծերը՝ երևույթն ուրվագծելով որպես միասնական հարացույց:

5. Կրկնության ռազմավարության և մարտավարությունների սահմանման ու գործադրման նպատակով պարզաբանել կրկնությունների տեղը և դերը գրավոր և բանավոր խոսույթի տեքստային կապակցման գործում, կրկնվող կառույցների և դրանց տարրերի փոխհարաբերությունները:

6. Կրկնության գործառույթների ընդհանուր լեզվաբանական արժեքի լուսաբանման և դրանց անդրլեզվական բնույթի առավել ճշգրիտ բացահայտման նպատակով հայերեն (գրական արևելահայերեն, արևմտահայերեն, գրաբար) օրինակներին զուգահեռ ոչ սիստեմատիկ կերպով դիմել նաև հունարենի կրկնության դրսևորումներին:

7. Կրկնությունների տարատեսակ բազմության վերլուծության հիման վրա ձեռք բերած արդյունքներն ամփոփել սեռանիշ և տեսականիշ համակարգային տիպաբանական դասակարգման մեջ:

Լեզվաբանական գրականության մեջ առաջին անգամ են ներկայացվում՝

- «կրկնություն-գործառույթ» լծորդության համակարգային նկարագրության և բազմահատկանիշ տիպաբանության կառուցման խնդիր՝ ընդգրկելով կրկնության յոթ անփոփոխակներ և նրանց տարբերակները,
- կրկնության Բ եզրի կառույցները, որոնք դասակարգվում են մեր կողմից բացահայտված կառուցվածքային 5 տիպերով, ինչպիսիք են՝ անփոփոխ,

բառիմաստի կամ քերականական որևէ իմաստի փոփոխությամբ, տվյալների հավելումով, տվյալների հանումով, խառը կամ բարդ կրկնություններ,

- իմաստային կրկնության՝ մեր կողմից սահմանված 11 տեսակներն ու դրանց նկարագրությունները՝ («ինքնակրկնություն», «նույնիմաստ», «մերձիմաստ», «համիմաստ», «հակիմաստ» (հականիշ), «հարիմաստ», «հեռիմաստ», «տարի-մաստ» հարանունների կամ համանունների մասնակցությամբ», «բազմիմաստ բառի տարբեր իմաստներով», «նախադասության անդամի և նրա զեղչմամբ» և «գոյականական ու բայական հիմքերով» ստեղծված իմաստային կրկնությունները),

- համագործակցային գործառույթներով կրկնությունները, որոնք բնութագրվում են ոչ թե թռուցիկ, ընդհանուր գծերով, այլ խոսույթի մասնակիցների համագործակցության («համաձայնությունից» մինչև «անտարբերություն») բևեռների միջև գտնվող կենսականորեն տարբերակված վարմունքային պահերի գործաբանական բազմազանությամբ՝ «համաձայնության», «հաստատման», «կասկածի», «տարակուսանքի», «անհամաձայնության», «հակադրության», «համոզման», «մերժման», «զրույցին հետևելը հավաստող», «զրույցին ընթացք տվող և շարունակումը քաջալերող», «զրույցն ընդհատելու դրդող» և «անտար-բերության» շեշտման գործառույթներով, որոնցից մի քանիսը ներկայացվում են իրենց տարբերակներով:

Հետազոտության նյութը հայերեն և հունարեն գեղարվեստական և դրամատիկական, ծիսական կամ նման բնույթի տեքստերից քաղված երկխոսության, մենախոսության, բազմախոսության և հեղինակային խոսքի կրկնություն պարունակող արձակ և չափածո նմուշներ են: Հայերենով նյութերի շարքը ամբողջացրել ենք հայերեն բնագրերից՝ արևելահայերենից (Դ.Դեմիրճյան, Նար-Դոս, Հ.Թումանյան, Ա.Շիրվանզադե), հայերենի թարգմանված ստեղծագործությունների տեքստերից (Վ.Սարոյան)՝ հավելվածում ներկայացնելով դրանց թարգմանիչների ցանկը, արևմտահայերենից (Հ.Պարոնյան) և գրաբարից (Գ.Նարեկացի): Ելնելով այն հանգամանքից, որ հունարենի գեղարվեստական ստեղծագործությունները հայերեն թարգմանված

չեն, դրանցից ընտրված նյութը ներկայացրել ենք հունարենով, բայց, այն հասկանալի դարձնելու նպատակով, կցել ենք մեր կատարած թարգմանությունները: Հունարենն ընտրել ենք՝ ելնելով այն հանգամանքից, որ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեզ ամենամոտ լեզուն է՝ հատկապես լեզվաոճական արտահայտչամիջոցների մեծ ընդհանրությամբ: Տեքստերի ընտրության սկզբունք է ծառայել դրանց տեքստակազմական հատկանիշների մերձությունը բանավոր հանպատրաստից խոսքին: Կրկնության գործառույթներն առավել հստակորեն դասակարգելու նպատակով երկու լեզուների տեքստերում էլ ծավալուն զրույցները տրոհել ենք միավոր գործառույթ կատարող երկխոսությունների: Կրկնության տարբեր դրսևորումները լուսաբանելիս՝ հայերենի և հունարենի օրինակները դիտել ենք իբրև անդրլեզվական համարժեք միջոցներ և հիմնականում ձգտել ենք նույն գործառույթը լուսաբանել երկու լեզվից վերցված համասեռ օրինակներով՝ հատուկ կանգ չառնելով ամեն մեկի հանրալեզվական և լեզվամշակութային տարբերությունների վրա, որոնք այս գործում էական դեր չեն դրսևորել, թեև, երբեմն շեշտել ենք դրանց որոշ առանձնահատկությունները:

Ատենախոսության նյութի հավաքագրումը կատարել ենք վերը նշված աղբյուրներում հանդիպած կրկնությունների բազմության զանգվածային ընտրանքի մեթոդով՝ ուսումնասիրելով կրկնություն պարունակող մեզ հանդիպած բոլոր կառույցները, որով ձևավորել ենք երկլեզվյան կրկնությունների ուսումնասիրության համար բավարար պաշար: Ատենախոսության տեքստի պահանջված ծավալը չգերազանցելու նպատակով կրկնության տեսակները լուսաբանել ենք դասակարգված նյութը ներկայացնող տեսակների առավել բնութագրական նմուշների ընտրանքի մեթոդով: Հետազոտության հիմնական մեթոդներից կիրառվել է նկարագրականը, որն իրականացվել է երկխոսությունների դիտարկման, համեմատության, ընդհանրացման-մասնավորեցման, վերացարկման-կոնկրետացման, եզրահանգման-մեկնաբանման ընդհանուր իմացաբանական մեթոդներով: Երբեմն դիմել ենք արտածական կաղապարավորման մեթոդին՝ դրանով ճշտելով կրկնության հնարավորությունների և դրանց

լեզվական իրական դրսևորումների հարաբերակցությունը: Իմաստային կրկնություններ դասակարգման նպատակով նրա կրկնվող տարրերն ուսումնասիրել ենք բառիմաստների բաղադրիչային վերլուծության մեթոդով: Կրկնության տեսակներն ու դրանց գործառույթները բնութագրել ենք հաղորդակցության գործոնների՝ մասնակիցների, խոսքի, արտալեզվական միջավայրի և խոսքային իրադրության զուգադրական հետազոտության մեթոդով, քանի որ տեքստային բաղադրիչների տվյալները միայնակ ի զորու չէին լուծելու աշխատանքում առաջադրված խնդիրները:

Կրկնություն-գործառութների մեր համակարգային հետազոտության մեջ առանձնացրել և հիմնվել ենք այն կարևոր չափանիշների վրա, որոնք անհրաժեշտ են կրկնության տեսակների համապարփակ տիպաբանական դասակարգման համար:

Ատենախոսության մեջ պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Կրկնվող լեզվական կառույցը հաղորդակցության գործընթացում դադարում է իմաստային դատարկություն լինելուց և խոսույթի հարալեզվական ու արտալեզվական գործոնների /քրոնոտոպ/ ներգործության շնորհիվ ունկնդրին է փոխանցում կա՛մ լեզվական-իմացական, կա՛մ իրադրական-փոխազդեցական տեղեկատվություն:

2. Ընդհանուր առմամբ առանձնացրել և հետազոտել ենք կրկնության 7 անփոփոխակային հիմնական գործառույթներ: Դրանք են՝

ա. ներդրման և շեշտման,
բ. հուզական լարվածության,
գ. համագործակցության,
դ. բովանդակային արձագանքման,
ե. «աղմուկի» հետևանքով առաջացած,
զ. պատկերավորող,
է. միավորող:

Թեև նշված գործառույթները, լեզվաբանական գրականության մեջ հիմնականում հանդիպում են (տարբեր անվանումներով և ընդգրկումներով), սակայն տվյալ երևույթի նկատմամբ իրագործված համալիր վերլուծություն և բազմակողմանի համադրություն չեն իրագործվել, նշված օբյեկտները չեն

դիտարկվել անհրաժեշտ լայնությամբ և խորությամբ և չեն ներկայացվել միասնական տիպաբանական հստակ դասակարգման ձևով: «Կրկնություն-գործառույթ» լծորդության արտահայտության և բովանդակության պլանների ու դերակատարությունների հետ կապված գործոնների մանրակրկիտ վերլուծությունը և վերջում համադրումը միասնական, բազմահատկանիշ (սեռանիշ և տեսականիշ) տիպաբանական դասակարգման մեջ որպես գիտական հետազոտության համակարգ նույնպես ներկայացվում է պաշտպանության:

3. «Իմաստային կրկնությունը» հետազոտվում և ներկայացվում է բովանդակության պլանի աստիճանական անցման այնպիսի բաժանումներով, ինչպիսիք են՝ *ինքնակրկնություն, նույնիմաստ, մերձիմաստ, համիմաստ, հակիմաստ /հականիշ, հարիմաստ, հեռիմաստ կրկնություններ, տարիմաստ կրկնություն՝ համանունների կամ հարանունների մասնակցությամբ, բազմիմաստ բառի իմաստներով կրկնություններ, նախադասության անդամի և նրա զեղչման հակադրությամբ և գոյականի ու բայի հիմքերով կազմված* իմաստային կրկնություններ: Ընդ որում, լուսաբանող օրինակների մեջ հետևողականորեն ցուցադրվում է այն հանգամանքը, որ բառերի միջև եղած լեզվական-իմաստային կապերը խոսույթի կապակցող գործոնների շնորհիվ կրկնության մեջ առանձնահատուկ կերպով ուժեղանում են: Ընդգծում ենք, որ խոսույթում իմաստային կրկնությունն առանձնացվում է որպես կրկնյալ-կրկնորդ եզրերի իմաստային հարաբերությունները ճշգրտող վերլուծության արդյունք, որը մասնակցում է կրկնության գործառույթների բնութագրմանը: Ընդ որում, իմաստային կրկնությունների որոշ տեսակների տարբերակումը վարկածային բնույթ ունի:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խոսույթի կրկնությանը նվիրված մասնագիտական գրականության վերլուծման և ներկայացման համար ընտրել ենք թեմատիկ մոտեցման սկզբունքը երեք պատճառով: Առաջին՝ գրականության ցանկը բավական ընդարձակ է /օգտագործված են հինգ լեզվով մասնագիտական գրականության աղբյուրներ/, ուստի կարծում ենք, որ դրանով զգալիորեն կհեշտացնենք գիտակ ընթերցողի և նշված տեսությունների հետ նոր ծանոթացողի անելիքները: Երկրորդ՝ գրականության վերլուծության ընթացքում ընդգծում և դասակարգում ենք կրկնության ուսումնասիրությամբ զբաղվող բազմաթիվ հեղինակների կատարած վերլուծությունները, որոնք կարևոր ենք համարում ապագա տիպաբանական դասակարգման համար: Երրորդ՝ առանձնացնում ենք կրկնության այն տեսակները, որոնց վերաբերյալ գրականությունից որդեգրել ենք որոշակի ավանդույթներ: Դա վերաբերում է տիպաբանական դասակարգման մեր օգտագործած հիմնական չափանիշների մի մասին:

1.1.ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԱՎԱՆԴԱՊԱՀ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԽՈՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Հոգելեզվաբաններից շատերը երեխայի կամ ինչ-որ բան սովորողի կողմից հաղորդման որևէ կառույցի կրկնությունը համարում են նրանց խոսքային գործունեության «ընդօրինակման մարտավարություններից մեկը»՝ լեզվի յուրացման ընթացքում մեծահասակների խոսքը կրկնությամբ ընդօրինակելու «գրոհ» [Piaget J., 1923, Menyuk P., 1963, Keenan E., 1977 և ուրիշներ]: Այստեղ, կանգ առնելով լեզվի յուրացման գործում կրկնությունների ունեցած դերի վրա, փորձել ենք պահպանել «լեզվական երևույթ - արտալեզվական գործառույթ» զուգահեռությունը:

Կրկնությունն իր ձևերով ցանկացած լեզվի յուրացման հիմնական և արդյունավետ եղանակներից մեկն է համարվում դեռ մայրենիից սկսած: Լեզվի ուսուցման մեթոդների մեջ ուսուցչի կողմից կրկնության կազմակերպումը

երեխային հրահանգավորելու միջոց է, որով նրան լրացուցիչ հնարավորություն է տրվում լավ հիշել և ճիշտ շարադրել լեզվական միավորները, ուղղել իր ասածն ու գրածը և մտապահել դրանք: Կրկնության երևույթի վրա հիմնված են ուսուցման բազմաթիվ վարժություններ: «Արդյո՞ք երեխաների կողմից մեծահասակների խոսքի տվյալները կրկնելով ընդօրինակելը լեզվի յուրացման հետ է կապված» հարցին հոգելեզվաբանները երեք պատասխան ունեն՝

ա/ լեզվի ամբողջական յուրացումն է հիմնված ընդօրինակման վրա,

բ/ կրկնություն-ընդօրինակումը լեզվի յուրացման մեխանիզմ չի կարող լինել,

գ/ պետք է չափել կրկնելով սովորելու օգտակարությունը լեզվի միավորների, նրանց միջև գործող կապերի ու հարաբերությունների յուրացման գործում:

Մինչև 70-ական թվականների վերջերը գիտնականները երեխաների ընդունակությունների ուսումնասիրությամբ փորձում էին պարզել, թե նրանց կողմից լեզվական տվյալների կրկնություններն իրենց ծավալով և շարահյուսական կառուցվածքով որքանով են բարդ նրանց ինքնուրույնաբար սերած լեզվական կառույցներից: Ժամանակի առումով ամենահին հետազոտությունների խումբը քիչ թե շատ ընդգծված ձևով պնդում է, որ լեզվի յուրացումը հիմնված չէ կրկնության ընդօրինակող գործառութի վրա: Պ. Մենյուկը [Menyuk P., 1963], ելնելով նախադպրոցական տարիքի երկու խումբ երեխաների հետ կատարած փորձից, եզրակացնում է, որ կրկնությունը կօգնի երեխաների կողմից գիտելիքի յուրացմանը, եթե նրանք կարողանան տիրապետել լեզվի կառուցվածքից բխող կանոններին: Հետևաբար, երեխաների կրկնությունները չեն կարող դիտվել պարզ ընդօրինակումներ: Առավել մանրակրկիտ է Ու.Ստեֆանիի [Stephany U., 1973] ուսումնասիրությունը՝ նվիրված երեխայի և չափահասի հաղորդակցման ժամանակ կրկնության կատարած դերին: Նա լեզվի յուրացումը դիտում է ոչ միայն որպես կրկնության արդյունք, այլև նրա օգտագործման հասարակական նորմ՝ միաժամանակ դրանք կապելով Ժ. Պիաժեի՝ երեխայի ճանաչողության զարգացման փուլերի հետ [Piaget J.,1923]: Ու. Ստեֆանին կրկնության «երկխոսության ռազմավարությունը» չի համարում երեխայի պարզ լեզվական ունակություն, այլ դիտում է որպես նրա լայն հաղորդակցման հնարավորություն:

Հոգելեզվավաբանների ուսումնասիրությունների հետ ծանոթանալուց հետո մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում հարց է առաջանում՝ գոյություն ունե՞ն արդյոք հաղորդակցման լեզվական կամ արտալեզվական գործոններ, որոնք պայմանավորում են կրկնության ի հայտ գալը երեխայի կամ չափահասի սերած խոսքում: Նշենք, որ ի պատասխան այս հարցի, լեզվի յուրացման գործում ուղղակի ընդունվում է կրկնության դրական դերը և հանգեցվում նրան, որ երեխան արտահայտության ընդօրինակումն ընդունում է որպես չափահասի օգնություն, եթե այն ուսուցման տվյալ փուլում իր լեզվական-գիտակցական ունակություններից ավելի բարդ է:

Ռ. Կորիգանը [1980] «կրկնությամբ ընդօրինակելու» դիրքերից նկատում է, որ փորձարկվող երեք երեխաներից հենց նա է ավելի լավ յուրացնում լեզուն, որը կրկնություններ շատ է օգտագործում: Նույնն է կարծում նաև Կ. Սնոուն [Snow C., 1981]: 1970-ական թվականների վերջերից սկսած՝ կրկնություն-ընդօրինակման նկատմամբ հետաքրքրությունը մտնում է մի նոր փուլ. լուրջ չի համարվում այն պնդումը, որ երեխան լեզվի համակարգը յուրացնում է միայն չափահասներին ընդօրինակելու շնորհիվ:

Լեզվաբանության մեջ կատարված ընդհանուր անդրադարձը դեպի հաղորդակցություն բերում է լեզվի յուրացման գործընթացում կրկնության գործառույթների կարևորմանը: Է. Քինընը [Keenan E., 1977] կրկնությունն այնպիսի միջոց է համարում, որը հասարակության մեջ խոսքային գործողություններ վարելիս երեխային օժանդակում է կրկնության եզրերի մեջ զգալ «հինը» և «նորը»: Հետևաբար, կարելի է նշել, որ այն դրական ներգործություն ունի երեխայի զարգացման առաջընթացի վրա, քանի որ նպաստում է նրա բուն հաղորդակցական և ոչ թե միայն լեզվական պարզ հնարավորությունների յուրացմանը: Ջ. Ֆոլգերը և Ռ. Չապմանը [Folger J., Chapman R., 1978] նույնպես կրկնությունը լեզվական ակտ են դիտում, միայն թե նրանք լեզվի յուրացման գործում համայնքային ազդեցությունների մեջ տեսնում են ծնողների կողմից կրկնություններն ընդօրինակելու երևույթի ազդեցությունը երեխաների լեզվական վարքի վրա: Կարևորն այն է, որ կրկնությունը ներառվում է երեխաների կարևորագույն

հաղորդակցական մարտավարությունների մեջ, ինչպիսիք են ուրիշների հետ ունեցած տարաձայնությունները և դրանց շտկումը, մեծահասակների զրույցին մասնակցելը կամ պահանջներ առաջադրելը և այլն: Ա. Պիտերսը նշում է, որ կրկնություն-նմանակումը հզոր գործիք էր ի ծնե կույր մի երեխայի կողմից լեզվի յուրացման ընթացքի ուսումնասիրության ժամանակ և շրջակա միջավայրի հետ այդ երեխայի ունեցած բոլոր հարաբերություններում [Peters A., 19871987]:

Հոգելեզվաբանության կողմից կրկնությանը տրված մեկնաբանություններն ի մի բերելով՝ տեսնում ենք, որ երեխաները կրկնում են և կրկնում են շատ: Եթե հետևենք մի շարք հեղինակների [Ervin-Tripp S., Mitchell-Kernan C., 1977 և ուրիշներ], կրկնությունը խոսողից հատուկ ջանք չի պահանջում: Իսկ, ըստ Է.Քինընի. «Այն կենտրոնանում է նախորդ արտահայտության պատկերավոր կառույցի վրա և, օգտագործելով որոշ բառեր կամ դարձույթներ, ձևափոխվում է հաջորդող արտահայտության մեջ» [Keenan E., 1977:19]: «Երեխան հավասար զրուցակից չէ չափահասի համար: Մինչև որոշակի տարիքի հասնելը՝ նա վատ է տիրապետում լեզվի համակարգին, ուստի չափահասը կոչված է սովորեցնելու նրան»: Սակայն կա նաև տեսակետ, որ մեծահասակների խոսքում կրկնության գործածությունը մանկական վարքի մնացուկ է [Leech G,1966:129,193, Persson G.,1974:52,149, Burton D., 1980:66, Shepherd S., 1985:544]:

Ա. Լոմաքսը նկատել է, որ կառույցների կրկնումն առավել բնորոշ է սոցիալական պարզ կազմակերպվածություն ունեցող «անգլուխ» համայնքներին [Lomax A.,1977:15-47]: Ընդ որում կրկնությունը հանդիպում է նրանց բանավոր խոսքի և լեզվի բոլոր մակարդակներում: Կրկնության թեմային նվիրված առաջին խմբի հետազոտողները ընդհանուր կրկնություններն ուսումնասիրում են ավանդական հանրության խոսքի տարբեր դրսևորումներում: Այս խմբում աչքի է ընկնում Բրազիլիայի և Նոր Գվինեայի բնիկների լեզուներում կատարած Ջ.Գրայմսի հետազոտությունը: «Ծածկույթը» կամ ծածկվող կառույցը խոսքի ծավալուն հատվածների հաճախակի կրկնությունն է այնպես, որ մի հատվածի որոշ միավորներ մյուսի մեջ ամեն անգամ կրկնվում են նոր միավորների հետ: Միավորների կրկնությունները շատ նկատելի են իբրև տեղեկատվության

կազմակերպման «ծավալվող» տեսակ, որը «լուծվում» է միմյանց հաջորդող խոսքի հատվածներում: Բացի կանխատեսման այս յուրահատուկ ձևից, Ջ.Գրայմսը [Grimes J., 1972] նշված լեզուներում տարբերում է նաև կրկնությունների այլ գործառույթներ՝ *կապ անցյալ թեմայի հետ, անցում նոր թեմայի, խոսքի ծավալում, երևույթի տևականության արտահայտում, տեղեկության ուղղորդում, ընկալման լարվածություն* և այլն: Ս.Շեֆերդը [Shepherd S.,1985:17] կրեոլական «անտիգուա» լեզվում դիտարկած կրկնության բարձր հաճախականությունը համարում է մանկական խոսքից մնացած հետևանք: Ուշագրավ են կրկնության տարածվածության մասին Ջ. Բրոդիի դիտարկումները Մեքսիկայի մի համայնքի խոսքում: Այստեղ կրկնությունն ուսումնասիրվել է հատկապես զրույցի, վեճի, ծիսական խոսքի և պատմողական խոսքի կառույցներում, ուր կրկնելը զրույցի թեման փոխելու նշան է: Երկխոսության թեմայի վերջում կատարած կրկնությամբ խոսողը *զրույցի թեման փոխելու* առաջարկություն է անում խոսակցին: Ըստ Ջ. Բրոդիի, կրկնությունը նոր տեղեկատվության չի բերում, բայց ուժեղացնում է խմբի «համերաշխությունը»՝ հաստատում է *գոյություն ունեցող իրադրությունը*, շեշտում է *համագործակցությունը զրուցակցի հետ*, ապահովում է *անցումը հաջորդ կառույցին*: Հաճախ կրկնությունն ստանում է հատուկ իմաստ՝ օգտագործվելով որպես «անցման նշան», մի բան, որի նկարագրությունը, ըստ Ջ. Բրոդիի, արևմտյան լեզվական ավանդույթում դեռևս բացահայտված չէ [Brody J., 1986]:

Հետազոտողների մի այլ խումբ զբաղվում է պոեզիայում և ավանդական հանրությունների ծիսական խոսքում լեզվի միավորների շարահյուսական և իմաստային զուգահեռույթներով, որոնցում կրկնվում են միջուկում մեկ կամ մի քանի իմաստային գործոններ ունեցող շարահյուսական միատեսակ կառույցներ: Ռ.Յակոբսոնի հետազոտություններից [Jakobson R., 1960, 1981ա, 1981բ] հայտնի է, որ ավանդական հանրությունների բանահյուսության մեջ այս երևույթն ընդհանուր է (հավանաբար մարդու հիշելու կենսաբանական հնարավորությունների բերումով Ա.Հ.): Ոմանց կարծիքով, զուգահեռույթի այս կառույցները հանրությունների ծիսական խոսքում ուժեղացնում են *խմբերի սոցիալական*

համերաշխությունը և անձերի կապվածությունը [Toporov V., 1978, Ong W., 1981]: Նկատվել է, որ, այդ հանրություններում անհայտի նկատմամբ ունեցած տագնապի հետևանքով, կրկնվող կառույցն ապահովում է հոգեբանական անդորր՝ ուժեղացնելով մարդկանց կապվածությունը և անվտանգության զգացումը [Johnstone B.,1994:8]: Ըստ հետազոտողի, կառույցի կրկնումն այստեղ բովանդակային որևէ դեր չի կատարում, բայց *կապում է մարդկանց:*

Ընդհանրացնելով ասվածը՝ նշենք, որ վերլուծված գրականության մեջ առաջին անգամ Բ.Ջոնսթոնի մոտ ենք հանդիպում կրկնության նկատմամբ կառուցողական մոտեցման [Johnstone B., 1994, Lovday L., 1983], ընդ որում՝ բացահայտվում են կրկնության մինչ այդ անհայտ երկու գործառույթներ՝ *տեղեկատվական հոսքի վերահսկում և նոր թեմայի անցնելու ցուցում:*

1.2. ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՔՍՏԻ ԵՎ ԽՈՍՈՒԹԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվական կաղապարի ընդարձակմանը զուգընթաց ասույթը դադարում է հանդես գալ որպես լեզվի միավոր, ուստի աճում է հետաքրքրությունը գրավոր և բանավոր տեքստերի նկատմամբ: Առաջին պլան է մղվում տեքստի ամբողջականությանը նպաստող հատկանիշների ուսումնասիրությունը, որոնց շնորհիվ տեքստը, որպես ամբողջություն, անկախանում է ձևավորող ասույթներից: Առաջին անգամ կրկնությունը դիտվում է որպես տեքստի կառուցվածքային միավոր, հետազոտվում է նրա մասնակցությունը կապակցմանը, տեքստայնությանը և դրանց հիմնական բաղադրիչներին: Իրենց համատեղ աշխատության մեջ Մ.Հոլիդեյը և Ռ.Հասանը հատուկ գլուխ են հատկացրել անգլերենի բառային կապերին և կրկնությունը որակում են որպես կապակցող տարրերի ակտիվացում՝ դրանց կրկնելու միջոցով: Ըստ նրանց՝ խոսքում կառույցի երկրորդ անգամ հայտնվելը և առաջին անգամ «իբրև հոմանիշ» հայտնվելու հետ կապն է հենց ապահովում տեքստի կապակցումը: Հետագա աշխատություններում այլ հեղինակներ եղած կարգերի լուրջ փոփոխություններ են առաջարկում, սակայն Մ.Հոլիդեյի և Ռ.Հասանի աշխատությունը, մեր տվյալներով, այդ երևույթին

նվիրված հիմնական ուսումնասիրություններից մեկն է՝ որպես կրկնության առաջին համակարգված մոտեցում [Halliday M., Hasan R., 1976: 285]:

Եթե սովորաբար տեքստը դիտվում է իբրև արդյունք, ապա Դը Բոգրանդի և Ու.Դրեսլերի կաղապարն այն ներկայացնում է իբրև գործընթաց, որում տեքստի կապակցական ամբողջականության մեջ տարբերակվում են մակերեսային կապվածության և խորքային տրամաբանվածության մակարդակներ: Դրսևորման մակարդակում ձևույթային, բառույթային և շարույթային կրկնության օրինակները ներկայացվում են որպես ուղիներ, որոնցով բառային կամ իմաստային որևէ տարր հարաբերում է խոսքին և, առանց մտքի ծավալը նվազեցնելու, նպաստում նրա ընկալման արդյունավետությանը: Եթե կա նաև կապող ուղի միջուկային մակարդակի հետ, ապա, իբրև բովանդակության տարրերի միջև հնչող «կանչ», զգացվում է կրկնության անհրաժեշտությունը [de Beaugrande, Dressler, 1981:127]: Անդրադառնալով խոսույթում կրկնության երևույթին՝ Գ.Բաբինիոտիսը [Μπαμπινιωτης Γ., 1991] դիմում է նաև ավանդական լեզվաբանության և ճարտասանության արդեն քննարկված դրույթներին: Ի տարբերություն այլ հեղինակների, որոնք զուգահեռույթը համարում են կրկնության ենթակարգ, Գ.Բաբինիոտիսը կրկնությունն է ստորադասում զուգահեռույթին, բայց, դրա հետ մեկտեղ, նա *տեքստային կապակցումն ապահովող հիմնական դերը վերագրում է կրկնությանը*՝ դրանով առանձնացնելով կրկնության մի տեսակ, որն «անհրաժեշտ» չէ և տեքստայնության տեսանկյունից պակասավոր է, քանի որ «հաղորդումը» ընկալման ընթացքը ծանրաբեռնում է անօգուտ և խանգարող տարրերով» (մենք նկատել ենք, որ խոսքի այդպիսի «ոչ պիտանի» կրկնությունները լեզվի տնտեսման սկզբունքի բերումով լայն տարածում չունեն, Ա.Հ.), բայց ընդունում է նաև կրկնության միջոցով տվյալների միավորման երևույթի դրական ներդրումը խոսքի տարբեր ոճերում [Μπαμπινιωτης Γ., 1991: 267]: Է. Վինտերը [Winter, 1974:70] դասական նախադասության սահմաններից դուրս առաջադրում է համատեքստային քերականության տեսության ծրագիր թե՛ որպես գիտական հետազոտության արդյունք, թե՛ որպես «իմաստային փոխարինման» երևույթ: Փոխարինումը նա

դիտում է որպես «խոսքի կառույցի որոշակի նպատակով արված կրկնություն» և այն սահմանում է իբրև «ձևաբանաշարահյուսական անխուսափելիություն», եթե նախադասության մտքի տարրերը կրկնվում են հաջորդում: Է. Վինտերի աշխատության հիմնական նպատակը նախադասության կամ նրանց հատվածների միջև եղած կապակցման ուղիների ուսումնասիրումն է: Այդպիսի մոտեցման դեպքում ցույց է տրվում մի կողմից՝ կրկնության դրական ներդրումը տեղեկատվության կառուցվածքում, մյուս կողմից՝ հաջորդ նախադասության բառընտրանքի կոնկրետ կախվածությունը նախորդ նախադասության բառույթներից, ինչպես նաև այն, որ *այսպիսի կրկնությունը նոր տեղեկատվության անխուսափելի մասն է կազմում* [Winter E., 1974: 55,63]:

Մ. Հոյը [Hoey M.,1991] ևս զբաղվել է լեզվի իմաստակիր տարրերի կրկնության ուսումնասիրությամբ, սակայն բոլորովին այլ տեսանկյունից: Նա համարում էր, որ կրկնությունն իր մեջ ամբողջովին թուլացնում-լուծում է բառերի կապակցող դերը: Ե՛վ Է.Վինտերը, և՛ Մ.Հոյը, օգտագործում են Մ.Հոլիդեյի և Ռ.Հասանի ներկայացրած կապակցման բոլոր տեսակները, բացի պարզ կրկնությունից և հաղորդման փոխարինման, հոմանշության տարրերից: Նրանց կաղապարում ներկայացվում է *բազմապատիկության իմույթը*, որը բացահայտվում է հարակից կամ ոչ հարակից կառույցների միջև կրկնվող երևույթներում: Գերմանիայում ապրող հույն երեխաների երկլեզվյան բանավոր տեքստերի ուսումնասիրություններում կրկնությունը համարվում է *շեշտման և զգայական մասնակցության ներդրման, թեմայի և ռեմայի փոխհարաբերությունները կարգավորող* մեխանիզմ [Ντορφμουλλερ-Καρπουζα Κ., 1986]:

Չնայած տեքստի կապակցման վերաբերյալ եղած բավական մեծ գրականությանը, մենք կբավարարվենք կատարած քննարկմամբ, որովհետև տեքստի լեզվաբանությունից քաղել ենք կապակցող-տրամաբանական կրկնության բազմաթիվ կիրառություններ, որոնք առնչվում են մեր քննարկվող թեմային:

Թեև բավական հստակ սահման կա «տեքստի լեզվաբանության» և «խոսույթի վերլուծության» միջև, այնուամենայնիվ վերջինս ավելի մոտ է կանգնած հաղորդակցությանը: Այս տեսությունները լեզվական երևույթների նկատմամբ

աչքի են ընկնում գործաբանական մոտեցմամբ: Նրանց նպատակն է ցուցադրել տեքստակազմական գործոնների առկայությունը բանավոր խոսքում, նկարագրել դրա հորինվածքը: Մեր օրինակները ցույց են տալիս, որ կրկնությունը կարելի է դիտել որպես բանավոր կամ դրան առավելագույնս մոտ թատերական խոսքի, ինչպես նաև բանաստեղծական և ծիսական տեքստերի կապակցման բացառիկ հատկանիշ:

Կրկնության վերաբերյալ այս ոլորտի տարբեր հետազոտողներ շեշտում են մի շարք գործառույթներ. այսպես՝ Ու. Լաբովը [Labov W., 1972b:339] որպես կրկնության գործառույթ ընդգծում է *լարման շեշտադրումը և գործողության երկարացումը,* Է. Շեգլոֆը [Schegloff E., 1972:364] կարևորում է հեռախոսային խոսակցությունների ժամանակ *զրուցազույգի ձևավորման պայմանները,* Գ. Ջեֆերսոնն զբաղվում է խոսակցի կատարած կրկնություններով, որը հետագա պարզաբանումների կարիք ունի [Jefferson G., 1972:295-296], Ա. Դյուրանտին և Է. Օչը ուսումնասիրության մեջ կրկնությունը համարում են *բանավոր երկխոսության կապակցող տարր* [Duranti A., Ochs E., 1979:396-398], Գ. Ուելսի աշխատանքում կրկնությունը *ասվածի հաստատման կամ պարզաբանման* մի փորձ է և *զրույցի շարունակման* նշան [Wells G., 1981:80], Է. Օչը կրկնությունը համարում է *ինքնաբուխ խոսքը մանկական խոսքին մոտեցնող բնութագրիչ* [Ochs E., 1979]: Ջ. Գամպրեզը, Գ. Օլաքը և Հ. Քալտմանը նշում են կրկնության *ռազմավարական գնահատման տարբերությունները*՝ անգլախոս հնդկացիների (դրական գնահատական) և հարավի խոսողների (բացասական գնահատական) միջև, որոնց շփումը հաճախ է տանում թյուրիմացությունների [Gumprez J., Aulakh G., և Kaltman H.,1982:22-56], Մ. Սիլվերսթայնն ուսումնասիրում է հաղորդակցվողների կրկնություններն ու զուգահեռույթները և նրանց ներդրումը «արձակ բանաստեղծություններում» [Silverstein M., 1984], Դ. Անդրե-Լարոչբուվին կրկնության համար բացահայտում է *խոսքը զրուցակցից «վերցնե-լու», աղմուկին վերջ տալու, ժամանակ շահելու, ասվածը հաստատելու, կապակցման, միավորման, տևողության ցուցչի կամ դեպքի կրկնման* և այլ նոր գործառույթներ [Andre-Larochebouvy D., 1984:181-185], Դ. Սպերբերը և

Դ.Վիլսոնը հաստատում են, որ կրկնություն օգտագործող *շփման ոճը հիմնված է «կրկնվող տարրերի համարժեքության» վրա,* իսկ համարժեքությունը համարում են հաղորդակցման բանալի [Sperber D., Wilson D., 1986:219-222], Յ. Բրոունը և Ս. Լեվինսոնը ունկնդրի կողմից կառույցի կրկնումը դիտում են որպես *համաձայնության ռազմավարության հասպատում* [Brown Y., Levinson S., 1987:112-113]:

Անցյալ դարի 80-ականների կեսերից կրկնությունը դառնում է Դ. Թաննենի [Tannen D., 1987բ:3] և Բ. Ջոնսթոնի [Johnstone B., 1987:74] երկու ժողովածուների նյութը: «Տեքստ» հանդեսի «Հեռանկարները կրկնության մեջ» հատորն սկսվում է Բ. Ջոնսթոնի ներածականով: Հեղինակը ցույց է տալիս, որ տարբեր հետազոտողների մոտ կրկնության գործառույթները հաճախ խառնվում են կրկնության ձևի և իմաստի հետ՝ չառանձնացնելով հայտնին և նորը: Կարևորն այն է, որ *կրկնությունը բերում է գիտելիք և դառնում նրա կապակցման միջոցը:* Ն. Նորիկը [Norrick N., 1987] կրկնությանը վերագրում է *հաղորդման կառուցումը հեշտացնելու և «մտքով կառչելու» գործառույթներ*՝ դրանով իսկ հաստատելով կոնկրետ մարտավարություն: Իր չափանիշներով նա առաջարկում է զրուցակցի կատարած կրկնության գործառույթների պարզ տիպաբանություն՝ ա/ եթե դրանք վերահամոզելու, բացահայտելու, պնդման հարց ու պատասխան են, ապա պատկանում են հաղորդակցվողներին, բ/ եթե ուրիշի ասածը հաստատող պարզ կրկնություն են, ապա չեն պատկանում հաղորդակցվողներին: Այստեղ խոսակցի կրկնության տարբերակումը հենվում է միայն իմաստային, խոսքակազմական նպատակով, խոսքի ըմբըռնմանը նպաստող և համագործակցային միտումով կատարված կրկնությունների վրա, որոնցից առանձնացվում է երեք տեսակ: Իսկ նույն խոսողի կատարած կրկնությունների տարբերակումը նա կատարում է տարբեր չափանիշներով: Ըստ Ն.Նորիկի վարկածի՝ նույն խոսողի կատարած կրկնությունների համագործակցային գործառույթը հաղորդակցվողների միավորման արդյունքն է: Ն.Նորիկի տիպաբանությունը իր չափանիշների պակասավոր լինելու պատճառով ընդունելի չէ:

Դ. Թանընը [Tannen D., 1979, 1980ա, 1983] ևս երկար ժամանակ զբաղվել է բանավոր խոսքի մեջ կրկնության դերի ուսումնասիրությամբ: Վերը նշված Տեքստում նա ներկայացնում է նախորդ շրջանում կրկնության մասին արած իր բոլոր հրապարակումները՝ փորձելով ստեղծել միասնական տեսական դաշտ: Սակայն այստեղ կրկնությունն ընկալվում է որպես անորոշ և խառը սխեմա, որի տակ հասկացվում է հատկապես լեզվի ուսուցման գործընթացում հաղորդակցող զույգերի ստեղծման և պահպանման նպատակով միավորների կամ հասարակական վարմունքում հայտնի կառույցների կրկնման փաստը: Երկխոսության ուսումնասիրության արդյունքում տեղ են գտել տարբեր ոլորտներում դիտարկված կրկնության՝ *գնահատման, կանխատեսման, ասվածի պարզաբանման, կապակցման, գիտելիքների հակադրման և անհամապատասխանության, համաձայնության, հումորի, ցուցման, մասնակցության* գործառույթները: Կրկնության վերաբերյալ իր ծավալուն հոդվածում Դ.Թանընը կրկնությունը դիտում է խոսույթի «գեղագիտական» ընկալման շրջանակում [Tannen D.,1987բ]: Ըստ նրա՝ ավտոմատացված կրկնությունը բազմակի գործառույթներ ունի. այն *թեթևացնում է խոսքի արտաբերումը, իմաստավորումը, կապակցումը և փոխազդեցությունը:* Գերտեքստի մակարդակում նա կրկնությանը վերագրում է մասնակցության և ներգրավվածության զգացումն ուժեղացնող գործառույթ: Դ. Թանընը նշում է. «Կարծում եմ, որ կրկնությունը ձևերի փնջով մի միավոր է, որը նպաստում է խոսքի կապվածության, դրանով էլ աշխարհի կապվածության ընկալմանը» [Tannen D., 1987բ:576]: Հետաքրքիր է այն դիտարկումը, որ խոսակիցն ինքնաբուխ բանավոր խոսքը լսելուց անմիջապես հետո՝ տասնորդական վայրկյանի ընթացքում, մեխանիկորեն կրկնում է լսածը: Ըստ նրա, խոսողը միայն մեխանիկորեն կրկնելուց հետո է զգում սխալը, բայց կրկնելու միջոցով անմիջապես ճշտում է լսածը [Tannen D., 1987բ:595]: Մի այլ աշխատանքում նա ցույց է տալիս կրկնության ռազմավարական ներդրումը խոսույթի մեջ, որը զրուցակիցների համար ապահովում է զգայական մասնակցություն, մանրամասներ ու պատկերավորում ([Tannen D., 1989]:

Բ.Ջոնսթոնի [Johnstone B., 1994]՝ երկու մասից բաղկացած հետազոտությունը ամբողջովին նվիրված է կրկնությանը: Այստեղ կրկնությունը դիտարկվում է մայրենի և երկրորդ լեզվի ու գրականության յուրացման վարժություններում, խուլ-համրերի ժես-տերի լեզվում: Հետազոտած նյութի հիման վրա հեղինակը ցուցադրում է կրկնության բազմիմաստությունը:

Չնայած անգլերենի խոսույթում կրկնության վերաբերյալ Գ.Պերսընի [Persson G., 1974] աշխատության վաղեմությանը՝ դրա վերլուծությունը քննարկման վերջին թողեցինք երկու պատճառով: Նախ, մեր կարծիքով, գործ ունենք թեմայի ամենահիմնավոր հետազոտության հետ, երկրորդ՝ որ չկարողացանք միանշանակ կերպով որոշել շատ հարցերում օրինակելի այդ հետազոտության ճիշտ տեղը տեսական մոտեցումների որևէ կոնկրետ խմբում: Հեղինակն ընդունում է, որ չի հետևել գոյություն ունեցող որևէ տեսության [Persson G., 1974:15] և կրկնության տեսակների հետ դիտարկում է նաև խոսողի վարքը, որն առավել լայն կարևորություն է ձեռք բերում նյութի դասակարգման գործընթացում: Հեղինակը կրկնությունների հիմնական դասակարգում է կատարում ըստ նրանց կատարած դերերի և բառային գործողությունների և հաճախ աչք է փակում իմաստային կամ ձևային բնութագրերի վրա [նույնը, էջ 12]: Գ.Պերսընի դասակարգման մեջ [Persson G., 1974:26-57] ներառված են այլ լեզվաբանների կողմից նկատված և իր կողմից լրամշակված կրկնության մի շարք տեսակներ և գործառույթներ, որոնց հիշատակումը կարևոր է մեր ատենախոսության համար: Դրանք են՝

ա. Ուժգնացնող կրկնությունը ծավալում է կրկնվող կառույցների քանակ կամ աստիճան արտահայտող իմաստները:

բ. Ապրումակցային կրկնությունը պարունակում է կենտրոնացման, հակադրման կամ հուզականության որոշակի տարրեր, որոնց շնորհիվ Գ.Պերսընն առանձնացնում է *վճռորոշ, զգացմունքային, հաստատական, բացականչական, անհապաղության, համոզման, համառման կամ հակադրման* գործառույթները:

գ. Միավորող կրկնությունը որոշվում է կառուցվածքային սխեմայի հիման վրա:

Կրկնվող տարրերը անգլերենում միավորվում են «and»-ի միջոցով /«hours and hours»/: Լեզուներում դրանք արտահայտում են *գործողության կրկնություն, տևականության ծավալում, քանակի մեծացման ընթացք:*

դ. Ընդօրինակող տարրական կրկնության տակ նա ներկայացնում է «ձայների, շարժումների և այլ պարզունակ երևույթների կրկնությունները» (նույնը, էջ 143):

ե. Պարզ կրկնությունը պատասխանի սահմաններն ազդարարող նշանների կրկնություն է և նման է կայուն շեշտադրման, բայց ցույց է տալիս խոսողի տատանումը, անվճռականությունը:

զ. Կանխամտածված կրկնությունը նա նույնացնում է ուշադրություն գրավող միավորների կրկնության հետ (Հե՛յ, ուշադրությու՛ն, լսե՛ք) [Persson G., 1974:26-57]: Մենք այս տեսակին կդասեինք մանկավարժական խոսույթի ինչպես նաև չարձագանքող ունկնդրի ուշադրությունը գրավելուն ուղղված կրկնությունները:

Մեր ուսումնասիրության շրջանակում Գ.Պերսընի աշխատանքը կրկնության երևույթի որոշ տեսակների թեև մեթոդական վրիպումներով, բայց գիտական, մանրակրկիտ դասակարգման առաջին փորձն է: Կարևորություն ունի նաև բանավոր և գրավոր ինքնաբուխ խոսքից քաղված կարգերի կոնկրետ նյութի բաշխման հավելվածը: Գ.Պերսընի առաջարկած դասակարգումը, սակայն, կապված է որոշակի խնդիրների հետ, որոնք, մեր կարծիքով, թուլացնում են աշխատանքի արժեքը: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Հասկանալի չէ, թե ինչու է միավորող կրկնությունը դիտվում իբրև առանձին տեսակ, երբ այն միաժամանակ հանդես է գալիս մի քանի գործառույթով:

2. Ուժգնացնող կրկնության երևույթները երեք կարգի են բաժանված, սակայն միջարկության կամ «աղմուկի» հետևանքով սովորական կրկնությունը չի դիտվում «կանխամտածված», ոչ համասեռ կրկնության ենթատեսակ:

3. Դասակարգման անհետևողականության ենք հանդիպում նաև կարգերի մշակման մեջ. արձագանքման ցուցիչները հեղինակը մի դեպքում դիտարկում է մակդիր լինելու, մյուս դեպքում՝ այդպիսին չլինելու պատճառով [Persson G., 1974:60-62,97]: Այս ամենով հանդերձ՝ հետազոտության արդյունավետությունը՝ իբրև առաջին համակարգային մոտեցում, շատ բարձր է:

ԱՄՓՈՓՈՒՄ: Լեզվաբանությունը, ելնելով գրավոր և բանավոր տեքստերում ունեցած ոճական դրսևորումներից, դերից և զբաղեցրած տեղից, նշում է կրկնության տարբեր ձևեր, որոնք խոսույթում հստակ շեշտելով առկայացնում են ներդրված տվյալները: Հոգելեզվաբանությունը ներկայացնում է կրկնության տեղեկատվական և փոխազդեցական դերերը: Ավանդապահ հանրություններում խոսույթի ուսումնասիրությունն ի հայտ է բերում տեքստակենտրոն գործառույթներ՝ տեղեկատվական հոսքի հսկում, տեքստի կապակցում և սոցիալական խմբերում հույզերի միջոցով համագործակցության ամրապնդում: Տեքստի լեզվաբանության մեջ քննվում է հատկապես կրկնության շնորհիվ հասանելի դարձող համագործակցության գործառույթը, որը կապվում է նաև ընդհանուր հղումների և չկրկնվող միավորների հետ: Խոսույթի տեսության մեջ, ուր երևույթն ավելի խոր վերլուծության է ենթարկվել, քան մյուս ուղղություններում, կրկնությունն իր բազմաձևությամբ և գործառույթներով դիտվում է իբրև միջանձնային հաղորդակցության առանձին միավոր: Հետազոտությունների մեջ Գ.Պերսընի աշխատանքն առանձնանում է իր հետևողականությամբ: Ներկայացվում են կրկնության ուժգնացնող, ապրումակցային, միավորող, ընդօրինակող, տարրական, պարզ և կանխամտածված տեսակները: Սակայն, ընդհանուր առմամբ, տարբեր լեզվաբանների կողմից առանձնացված կրկնության բազմաթիվ գործառույթների նույն շարքում հաճախ ներկայացվում են անփոփոխակ և տարբերակ գործառույթներ, դրսևորման հաճախականություն չներկայացնող դիպվածային գործառույթներ, որոնցից ոչ բոլորն են համակարգային մոտեցման դեպքում պահպանում իրենց օրինաչափությունը: Մյուս կողմից՝ մեր հետազոտության արդյունքում բացահայտվել են կրկնության այնպիսի գործառույթներ, որոնք քննարկված գրականության մեջ չեն հանդիպում: Նույնը վերաբերում է նաև կրկնության գործառույթների առանձնացման մոտեցումներին և չափանիշներին: Ուստի բազմաթիվ հարցեր դեռևս մնում են անպատասխան: Ի՞նչ է կրկնությունը: Ինչպե՞ս է խոսակցի կամ ունկնդրի հիշողության մեջ կրկնորդը նույնանում «անցյալ կրկնյալի» հետ: Ի՞նչ է կրկնության բերած «միջտեքստայնությունը»: Որո՞նք են և ինչի՞ հետևանք են կրկնությամբ

դրսևորվող գործառույթները: Արդյո՞ք լեզվի բոլոր մակարդակներում կրկնությունը նույն գործառույթն է կատարում: Արդյո՞ք տարբեր են նույն կամ այլ խոսողի կրկնությունները: Ուրիշ ինչպիսի՞ ձևեր կարող են ստանալ կրկնություն համարվող լեզվական կառույցները: Ի՞նչ իմաստ կարող է հաղորդել մեկ կրկնությունը:

Նշված հարցերից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում կրկնության ուսումնասիրությունը տեղափոխել մեկ այլ հարթություն, որը հնարավորություն կտա միասնական դաշտում միավորելու հետազոտությունների տարասեռ արդյունքները՝ դարձնելով այն առավել ամբողջական և կապակցված:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2.1. ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կրկնությանը տրված բնութագրությունները նույնքան տարբեր են, որքան տարբեր են կրկնությունները: Կրկնությունների վերը նշած բնութագրությունների բազմազանության վերլուծության համար ատենախոսության մեջ հիմք ենք ընդունել Գ.Բաբինյոտիսի բնորոշումը [Μπαμπινιωτης Γ. 1991], ըստ որի, կրկնությունը բնութագրվում է որպես կառույցում իմաստային, շարահյուսական, ձևույթային, հնչյունական տարրերի նույնական կամ համանման դրսևորում: Խոսույթի կրկնությունը առավել ամբողջականորեն բնութագրելու համար Գ. Բաբինյոտիսի տված սույն բնորոշմանը մենք հավելել ենք նաև հաղորդակցական միջավայրի ու լեզվական կառույցի «նախապատմության» հետ կապված մի շարք գործոններ, առանց որոնց հնարավոր չէ իրագործել կրկնության երևույթի գիտական քննությունը և նրա գործառույթների բացահայտումը (տես՝ տիպաբանական աղյուսակը): Դրանք չափանիշներ են դառնում նաև կրկնություն-գործառույթ լծորդության տիպաբանության կառուցման համար, դրանք են՝

- նու՞յն թե այլ խոսողի կողմից կրկնության սերված լինելը,
- կրկնվող երևույթների բնութագրերը,
- կրկնյալ և կրկնորդ եզրերի միջատարածքը՝ տեքստային հեռավորությունը,
- կրկնության ձևերը,
- կրկնման քանակությունը,
- կրկնության առնչությունը տեղեկատվությանը:

Կրկնությունը նախատեսում է գոնե երկու պայման՝ խոսույթում կրկնություններ սերող կրկնյալ և կրկնորդ եզրերի առկայություն, որտեղ կրկնյալը չի նախատեսում և չի ենթադրում կրկնորդի հայտնվելը, սակայն կրկնորդը պարզորոշ հենվում է կրկնվող ողջ «Ա» եզրի կամ նրա որևէ կառույցի վրա: Այս հարաբերությունը թույլ չի տալիս երկու եզրերն անվանել կանխատեսում և վերադարձ, քանի որ կանխատեսումն սպասում է իր վերադարձին, որպեսզի

ստացվի մտքի ավարտուն շրջան: Կրկնության «Ա» եզրը շարահյուսորեն և իմաստաբանորեն անկախ է «Բ»-ից:

Ա: - Այդ դու՞ էիր երգում, Յուջին, դու՞ էիր երգում (Վ.Սարոյան, 269):

Եթե կրկնելը շարունակվի, ապա կհայտնվեն «Գ» և «Դ» եզրեր, բայց կրկնվող ամեն մի եզրի հարաբերությունը նախորդին կմնա նույնը, քանի որ գործողության ուղղվածությունը միակողմանի է.

Ա: - Արա՛մ: Արա՛մ: Իմ անունը Արամ է: /Վ.Սարոյան,1: 269/:

A: - Σήκω.. .Σήκω.. .Σήκω... /Վե՛ր կաց...Վե՛ր կաց... Վե՛ր կաց...(Κεχαήδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:95):

Կրկնությունը խոսքում լեզվական տարրի վերարտադրման երևույթն է, երկու եզրերի *հարաբերական համազորությունը:* Մենք կարող ենք ունենալ նաև եզրերի նույնություն, երբ լեզվական տարրերը ներկայացնում են հանդիպում կամ հրաժեշտ:

Ա: - Բարի լու՛յս, միսիս Հիլպլի: Բ: - Բարի լու՛յս, Ջո: (Վ.Սարոյան, 1:147): Կամ՝

Ա: - Ցտեսությու՛ն, - ասացի ես: Բ: - Ցտեսությու՛ն, - ասաց միսիս Հիլպլին (նույնը՝ 1: 152):

Այստեղ երկու եզրերի հայտնվելը սովորույթի մասն է կազմում, որտեղ կրկնության տեսակի հարցը սոցիալական անհրաժեշտության համեմատությամբ երկրորդ պլան է մղվում («Բ» եզրում «Բարև»-ի փոխարեն կարող են լինել «Բարի առավոտ» կամ իրադրական այլ նույնանիշներ, որոնք ոչինչ չեն փոխում): Կրկնորդն ապահովում է համագործակցություն, որի կանխատեսում և վերադարձ արտահայտող տարրերը պահանջում են փոխադարձ գործունեության սահուն իրականացում:

Ա/ *Նույն խոսողի սերած կրկնություններում* առավել հանգամանալի վերլուծության համար առանձնացնում ենք նույն և տարբեր մուտքերում սերած տեսակներ:

ա/ *Նույն խոսողի նույն մուտքում սերած կրկնություն*

Ա: - Տեր հայր, նա ճաշ եփել գիտի՞ : Շատ եմ ուզում իմանալ՝ ճաշ եփել գիտի՞: Այս երկրի կերակուրներից խենթացել եմ: Ճաշ եփել գիտի՞ (Վ.Սարոյան, 1:142):

Ա: -Դու ձկնորսությունից գաղափար չունես, -ասաց հնդկացին: - Դու ձկնորսությունից գաղափար չունես: Դու երբևէ ձուկ բռնե՞լ ես (Վ.Սարոյան, 1:296):

Α: - Ωχ ρε μαμά... άρχισες πάλι τη δίαιτα... Άρχισες πάλι τη δίαιτα... Και τι θα φάω εγώ τώρα; /Է՛խ մայրի՛կ: Դու նորից դիետայի անցար... Դու նորից դիետայի անցար... Իսկ ես ի՞նչ եմ ուտելու (Κεχαήδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:48):

բ/ *Նույն խոսողի տարբեր մուտքերում սերված կրկնություն*

Ա: - Այս սևամորթը քեզ ինչ ընկեր:

Բ: - Այ, հարցրեք Գլենին, ե՞ս եմ վառել տունը, թե ոչ, նա ձեզ կասի: Գլեն, ե՞ս եմ արել:

Ա: - Այս սևամորթը քեզ ինչ ընկեր (Վ.Սարոյան,1:157):

Α: Μεγάλη άνεση έγετε κύριε... /Ա: - Այստեղ ձեզ մոտ հրաշալի է կահավորված, պարո՛ն... Β: Παρντόν; /Բ: - Ներեցե՞ք:

Α: Λέω... μου προξενεί εντύπωση η άνεσή σας. /Ա: - Ասում եմ՝ ցնցված եմ, ինչ հրաշալի է կահավորված... (Ευθημιδιάδης Μ. Μ. Էվթիմիդիադիս, 1981:23):

գ/ *Խոսողի նույն մուտքով սերած կրկնություն՝ կառույցի տարրերի փոփոխումով*

Ա: - Արի, Հոմեր, - ասաց Սփենգլերը, - արի մի քիչ ման գանք (Վ.Սարոյան, 479):

դ/ *Խոսողի տարբեր մուտքերում սերած կրկնություն՝ կառույցի տարրերի փոփոխումով*

Ա: - Ինչու՞ ես գրել այս ոտանավորը:

Բ: - Չեմ գրել, - ասացի ես:

Ա: - Անշուշտ դու կասես, որ չես գրել, բայց և այնպես ինչու՞ ես արել այդ բանը:

Բ: - Չեմ գրել (Վ.Սարոյան, 21:253):

Հաղորդակցման ծիրում այլ խոսողի կողմից կատարված միջարկություններում կրկնությունների գործառույթները բազմաթիվ են և բազմաբնույթ (վճիռ, հաստատում, կասկած, ժխտում և այլն): Ներկայացնենք դրանց քննարկումը:

Բ. *Այլ խոսողի կողմից սերված կրկնություն*

Ա : - Եթե չեք կարող, հանձն մի առեք, - փորձեց հրամանատարը: - Կարո՞ղ եք:

Բ: - Կարող ենք, - ասաց Ղոնդին:

Գ: - Կարող ենք, - ասաց Գլդըլը (Դ.Դեմիրճյան, 196):

A: - Κι άμα δεν το πει; / Ա: - Իսկ եթե չասի՞:

B: - Θα το πει. /Բ: - Կասի:

Γ: - Θα το πει. /Գ: - Կասի (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986:105):

Գ-ի կողմից Բ կողմի ասածի կրկնությունը գործում է իբրև հաստատում: Հաջորդ օրինակում ժխտվում է Ա կողմի արտաբերած կառույցի պնդումը:

A: - Εν πάση περιπτώσει, είμαστε όλοι άνθοωποι. /Ա: - Ամեն դեպքում մենք բոլորս մարդ ենք:

B: - Εμείς δεν είμαστε άνθρωποι. /Բ: - Մենք մարդ չենք (Ευθημιάδης Μ./ Մ.Էվթիմիդիադիս, 1981:78):

Ա: - Բլիթ ունե՞ք, - հարցրեց հաճախորդը:

Բ: - Բլի՞թ, - կրկնեց խանութպանը պատրաստակամությամբ: - Ի՞նչ տեսակ բլիթ: (Վ.Սարոյան, 1:419):

Բ մասնակիցը կրկնում է միայն «բլիթ» բառը: Փոփոխությունը ներկայացնում է նրա ազատ ընտրությունը, որը կրկնում է այն, ինչը կամենում է առանձնացնել:

Ա: - Խնդրիր մայրիկին:

Բ: - Թույլ չի տա:

Ա: - Իսկ եթե թո՞ւյլ տա (Վ.Սարոյան, 1:123):

Այստեղ խոսողի կողմից մյուս խոսողի կառույցի կրկնության մեջ շեշտմամբ ուժգնացման հետ փոխվում է արտահայտությունը: Խոսողը, Ա եզրը հարցական երանգավորումով կրկնելով, իր պնդմամբ «շեշտում է» բարեկրթության նորմը:

Ա: - … Ես չեմ փախել…

Բ: - Միշտ փախչում էիք, - վրա բերեց իշխանուհին:

Ա: - Ոչինչ չեմ թաքցրել…

Բ: - Դա դեռ հարց է, չե՞ք թաքցրել: Իսկ ի՞նչ կա այստեղ: (Նար-Դոս, 156):

Այստեղ ասույթի միտքը փոխակերպվում է կրկնության ժխտում/ հաստատում-մով: Մյուս խոսողը գործածում է հռետորական հարցի ձևը՝ «Դա դեռ հարց է,

չե՞ք թաքցրել», որպեսզի կասկածի տակ դնի կամ ժխտի Ա - ի տեղեկատվությունը և նրա օրինավոր մարդ լինելը: Այս ամենի հետ կապված՝ անհրաժեշտ է պարզաբանել, թե հաղորդակցման գործընթացում կրկնության ինչ տեսակներ և գործառույթներ են հանդիպում, ինչպես են նրանք բաշխվում եղած կարգերի վրա, խոսակիցների կողմից խոսողի արտաբերած կառույցի կրկնումը պահպանու՞մ է միտքը, թե՞ կա «իմաստային տեղաշարժի» վտանգ: Այստեղ կարող ենք համաձայնվել Մ. Հոյի [Hoey M.,1991:54] մի տեսակետի հետ. «Խոսակցի կողմից խոսողի արտահայտության կրկնումը դրսևորում է նրա ասածին միանալու ցանկություն»:

2.2. ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Աշխատանքի շրջանակներում հատուկ կարևորություն է ձեռք բերում կրկնության տեսակների որոշման և նրա գործառույթների ճանաչման հատկանիշների առանձնացումը: Ըստ Ջ.Սինքլերի և Ռ.Քուլթհարդի հաշվարկի [Sinclair J., Coulthard R., 1975:32]՝ գոյություն ունեն լեզվի գործառնական չափանիշների վրա հիմնված շարահյուսական կապակցությունների 10000 - 22000 տարբերակ: Ունկնդիրն աշխատում է այդ բազմության մեջ ուղիներ գտնել խոսողի նպատակն ընկալելու համար, եթե անգամ դրա լեզվական «բանալիները» և ցուցիչները՝ միջավայրի հետ ասույթի ունեցած կապերը, հստակ արտահայտված չեն: Ելնելով գրականության մեջ խոսույթի կրկնության գործառույթների սահմանման նպատակով քննարկված և մեր օրինակներից բխող գործոններից՝ առանձնացրել ենք հատկանիշների չորս դաս՝ *միջավայրի փվյալներ, հնչերանգ, հաղորդակցմանը նախորդող և հաջորդող փեղեկափվական ներդրումներ և շրջասություն:*

ա/ Միջավայրի գործոնը կարևոր է հաղորդման ընկալման և մեկնաբանման համար: Դրա տակ առանձնացվում են մասնակիցների, իրադրական դաշտի և արդյունքների գործոնները: Ջ.Բրաունը և Ջ.Յուլեն [Brown G., Yule G., 1983:58] առաջարկում են «իրադրության ճանաչումը հեշտացնելու» երկու միջոց՝ չսերել պահանջված ծավալից ավելի խոսք և պարզել կրկնյալի և կրկնորդի միջև եղած տարբերությունները: Տեքստի, միջավայրի և իրադրության հարաբերություննե-

րից բխող հիմնական հարցն այն է, թե «որո՞նք են խոսքի պահանջները իրադրությունից, և ընդհակառակը՝ ի՞նչ է պահանջում իրադրությունը խոսքից» [Merritt M.,1994:24]:

բ/ Հնչերանգը ձևային միակ չափանիշն է, որը բոլորն են ընդունում որպես կրկնության գործառույթների սահմանմանն օժանդակող երևույթ: Կրկնության ներգործող բովանդակությունը ճանաչվում է գործառույթների պարտադիր սպեկտրում դրանք կոդավորվելու միջոցով, ուստի, եթե գործառույթի մեկնաբանման համար այլ հիմքեր չկան, ապա հնչերանգը դառնում է վճռորոշ գործոն [Geluykens R., 1989]: Մեր օրինակներից դատելով՝ միշտ չէ, որ հնչերանգն է կրկնության դասակարգման միակ չափանիշը: Սակայն ասվածի նկատմամբ խոսողի վերաբերմունքի ճշտման առումով հնչերանգը մնում է վերլուծողի հուսալի հենարանը:

գ/ Հաղորդակցությանը նախորդող կամ հաջորդող ներդրումների խնդիրը մենք ընտրել ենք խոսույթի կրկնության գործառույթների տարբերակմանը նպաստող գործոն-ներից: Նկատել ենք, որ աղմուկի հետևանքով ընդունողի արձագանքի բացակայությունը հանգեցնում է նրան, որ հաղորդողը կրկնում է կառույցը:

Α: - Να σου φέρω το κρασί σου: / Ա: -Բերե՞մ գինիդ: Β:…/Բ:-(պատասխան չկա):

Α: - Να σου φέρω το κρασί σου και το φαΐ σου; /Ա: - Բերե՞մ գինիդ և ուտելիքդ (Καμπανέλλης Γ. / Յ.Կաբանելիս, 1982:157):

Եվ հակառակը, կարող է տեղի ունենալ երկընտրանքից մեկի ժխտում, երբ հաջորդում է հակադրություն պարունակող կրկնություն՝

Ա:- Ի՞նչ գույնով էր (թիկնոցը՝ Ա.Հ.), ճերմա՞կ, թե թուխ:

Բ:- Ո՛չ, սև էր: (Հ.Պարոնյան:222):

դ/ Շրջասույթի չափանիշը մենք գործադրել ենք խոսույթի կրկնության լեզվական և ոչ լեզվական գործոնների կապի բացահայտման նպատակով: Այն ստեղծում է խոսքային գործընթացի պատկերավոր կառույց, որը ներկայացնում է լեզվական փաստի և շրջասությամբ նրա մեկնաբանության համապատասխանությունը:

Ա:- Այս ի՞նչ վայրենի տեսարան է: Այս ի՞նչ վայրենի տեսարան է... (ՇԵՇՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՎԱՅՐԵՆԻ ՏԵՍԱՐԱՆ Է) (Նար-Դոս:155): Եթե շրջասույթը համապատասխանում է կրկնության հիմքին, նշանակում է՝ բառային գործողության դերը ճիշտ է մեկնաբանված: Երկխոսության ակտիվ մասնակիցը իր տրամադրության տակ ունի նաև միջավայրի, շեշտման, իրավիճակի ընդհանուր ընկալման և մեկնաբանության բանալիները: Վերը նշված հատկանիշների չորս դասերը, հարախոսքային ցուցիչների հետ կամ առանձին-առանձին, ընդգրկված են խոսույթի կրկնության գործառույթների սահմանման մեր գործիքակազմում:

Հասարակական շփման գործընթացում կրկնության կարգավորող դերի կարևորումը մեր առջև խնդիր է դնում պարզաբանել նաև զրուցակիցների միջև զարգացող հարաբերությունները և բնական երկխոսության գործոնները: Այս առումով երևույթն իր բազմազան օբյեկտիվ դրսևորումներով բացահայտելու ձգտող տիպաբանական դասակարգումը պետք է հենվի կրկնության գործառույթների և ոչ թե նրա ընդունած ձևերի վրա, քանի որ դրանք շատ բազմազան են և այդ պատճառով իսկ հուսալի չեն որպես հիմք: Ջ. Օստինը [Austin J., 1962] ներկայացնում է արտալեզվական իրականության վրա լեզվի ազդեցությամբ որոշակի գործառույթներ իրականացնելու անհնարինությունը: Ավելի ուշ Ջ. Սիրլը [Searle J., 1976] նկարագրում է խոսույթի բառային գործողությունները և դասակարգում՝ *ներկայացուցչական, կառավարող, կապակցող, արտահայտող և ազդարարող* 5 կարգի տվյալներ: Նշված հեղինակները վերլուծում են խոսույթի բառային գործողությունները և հաստատում, որ իր քերականաշարահյուսական ձևա-վորվածության շնորհիվ կրկնությունը հենց հաղորդակցական կարգ է:

Մենք որոշակի նմանություն ենք տեսնում «տրամաբանական սիլլոգիզմ»-ի և կրկնություն պարունակող երկխոսության միջև: Այն տարբերությամբ, որ սիլլոգիզմի եռամիասնությունից այստեղ առկա են դրույթը և հակադրույթը, իսկ համադրույթը խորքային է, խոսույթում լեզվական նշույթավորում չունի, գիտակցվում է բաղադրիչների ներքին կապի, խոսողի փորձի, ասույթի միջուկային կառույցի կամ այլ գործոնների շնորհիվ, որոնք անմիջականորեն տրված չեն խոսքում:

Ա:- Դու վիրավորվեցի՞ր, - հարցրեց Գարեգինը (դրույթ):

Բ:- Ես… չեմ սիրում, երբ ինձ հարցաքննում են…(հակադրույթ: Համադրույթ՝ հերոսուհին իրենից բան հարցնելը համարում է վիրավորական հարցաքննություն) (Նար-Դոս, 313):

A: - Πολύ βήχεις τελευταία βρε παιδί μου. /Ա:- Որդի՛ս, վերջերս շատ ես հազում (դրույթ):

B: - Εντάξει, το σβήνω. Բ:- Լավ, հանգցնում եմ (հակադրույթ): Համադրույթ՝ որդու մոտ ծխելուց առաջացող հազը հուզում է մորը (Καμπανέλλης Γ. / Յ. Կաբանելիս, 1982:100):

A: - Θα κλείσεις τελικά την πόρτα; /Ա:- Դուռը կծածկե՞ս վերջապես (դրույթ):

B: - Σε λίγο μπαίνο μέσα. /Բ:- Շուտով ներս եմ գալու (հակադրույթ: Համադրույթ՝ չեմ ուզում երկու անգամ մոտենալ դռանը) (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:105):

Խոսույթի արտալեզվական գործոնները մեզ օգնում են վերլուծել կանխենթադրույթները ճանաչելու գործողության պահանջը: Հաջորդ օրինակում հանդիպում ենք նույնի չափազանցված մեկնաբանությանը, որն արվում է մարդկանց կողմից բառային գործողությունների ոչ համարժեք ըմբռնումն ընդգծելու նպատակով:

Ա:- Սառան նեղացավ, որ «դու»-ով էի խոսում հետը:

Բ:- Վա՛յ, վա՛յ, - բացականչեց Բաղիրյանը, - տեսա՞ք ինչ է պատահել, էդ հո ամեն բան քանդվեց, կործանվեց, վերջացավ, պրծավ – գնաց, մու՛թ, խավա՛ր տարտարոս… Հիմի ի՞նչ անենք… (Նար-Դոս, 315):

Բառային գործողության իմաստավորումը օգնում է այլ չափանիշներով դասակարգելու բառային գործողության գործառույթը: Ջ. Սինքլերը և Ռ. Քուլթհարդը բառային գործողությունը համարում են ամենափոքր ազատ միավոր, անգամ եթե նա բաղկացած է մի շարք ենթագործողություններից [Sinclair J., Coulthard R., 1975:23]:

Ամենօրյա ինքնաբուխ խոսքի և երկխոսության ուսումնասիրումը լույս է սփռում իրական պայմաններում խոսույթի կազմակերպման կարևոր կողմերի հետա-

զոտման անհրաժեշտության վրա, բայց նաև այդ հետազոտության անբավարար մեթոդական զինվածության վրա: Հաղորդակցման մասնակիցները, մեխանիզմը, միջավայրը և խոսքի իրադրությունը հաղորդման ըմբռնման և մեկնաբանման կարևոր գործոնների համալիր են: Միևնույն լեզվական հանրության անդամները տեղեկություններ փոխանակելու նպատակով մտնում են համագործակցության մեջ [Brown G., Yule G., 1983:4]: Մասնակիցների համագործակցությունը խոսույթի սահուն ընթացքի գլխավոր պայմանն է, որը, ըստ Հ.Գրայսի [Grice H., 1975], կամ խանգարում է հաղորդակցմանը, կամ նրան տալիս է հատուկ ուղղվածություն: Անգամ եթե «խոսող-խոսակից» կողմերի շահերը միմյանց չեն համապատասխանում, համագործակցությունը միշտ առկա է: Դա այն առանցքն է, որի շուրջ պտտվում և նշանակություններ են ձեռք բերում խոսույթի տարրերը: Ըստ Ջ. Լայոնզի, խոսույթի բերած բովանդակության համար ամենակարևորը հաղորդակցվողների պարզաբանման կարողությունն է և՛ տեղեկատվության և՛ ներգործման պահանջների բերումով [Lyons J., 1977:638]: Ուստի մեզ հետաքրքրում են այն կրկնությունները, որոնց հայտնվելը պահանջված է խոսքի կազմակերպման և միջավայրի կողմից, դրսևորում է հաղորդակցական գործառույթ, արտահայտում է խոսողի վերաբերմունքը, արժանանում է ունկնդրի որոշակի արձագանքին, կրկնությունների տեղեկատվության հետազոտության արդյունքների հիման վրա ուրվագծում է դրանց փոխհարաբերությունների ցանցը: Ուսումնասիրողը լեզվական և իրադրական երևույթների մեջ պետք է տարբերակի կրկնությունները և բացահայտի միջավայրի գործոններով պայմանավորված նրանց դերակատարությունները:

2.3. ԽՈՍՈՒՅԹԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՄԸ ԼԵԶՎԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

Մեր աշխատանքի այս հատվածի համար, որպես ուղղության ճիշտ ընտրության հաստատում, խիստ շահեկան եղավ ակադեմիկոս Է. Աթայանի միտքը լեզվական կառույցների տեսակներին համապատասխանող գերասույթային (հիպերֆրաստիկ), ասույթային (ֆրաստիկ) և ենթասույթային (հիպոֆրաստիկ) խորքային ստորոգումների առանձնացման վերաբերյալ, քանի որ կրկնություններ կազմվում են նշված բոլոր երեք մակարդակների միավորներից՝ իբրև

«հարց-պատասխան» կառույցներ (դրույթ-մեկնաբանություններ՝ 1-ին մակարդակ), իբրև կատարողական խոսքային կամ «բառային գործողություններ» (կանխենթադրույթներ՝ 2-րդ մակարդակ), իբրև ենթասույթային մակարդակի «սուբյեկտային և օբյեկտային առկայացումներ» (երրորդ մակարդակ) [Աթայան Է., 1981:215-218]:

1. *Հնչութային մակարդակի միավորների կրկնությունը խոսույթում:* Հնչութային մակարդակը յուրաքանչյուր լեզվում վերջավոր բազմությամբ փակ համակարգ է: Ինչպես նշում են Ռ.Բոգրանդը և Ու.Դրեսլերը [Beaugrand R., Dressler W., 1981:82], ամենօրյա ինքնաբուխ բանավոր խոսքում բառերի կազմում հանդես են գալիս հնչյունների կրկնություններ, որոնք հիմնականում աննկատ են մնում, որովհետև պատահական են և լեզվում որևէ կոնկրետ գործառույթ չունեն: Խոսքում լեզվական նշանի նշանակչի որևէ բաղաձայն կամ ձայնավոր հնչյունի կրկնությունը՝ խոսողի սխալվելու, կակազելու կամ այլ պատճառներով, բնավ չի խախտում նշանի ինքնությունը:

Ա: - Ա՛…ա…ա՛խպեր ջան, կա…կա՛…կաակազների դպրոցի տեղը չե՞ս ա՛…ասսի:

Բ: - Կակազների դպրո՞ցն ինչ ես անում, լավ էլ կակազում ես: (Անեկդոտ):

Այս երևույթը կարող է հանդիպել հատկապես կատակերգական տեքստերում որպես դրամատուրգի կամ դերասանի հուզական պահեր ստեղծելու միջոց: Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնի դերասան Կարպ Խաչվանքյանն իր խոսքում ամենատարբեր նպատակներով սիրում էր դիմել բաղաձայների ու ձայնավորների կրկնությանը և միշտ հասնում էր իր նպատակին:

Գեղարվեստական խոսքում տարբեր ձայնավորների կրկնության դեպքերը կարող են ունենալ չափի ծավալման գործառույթ:

Ա: - Ես թխսահավ չեմ, թևերս ընտանիքիս վրա չեմ փռում: Թևերը թռչելու համար են տրված: Թռչելու տեղերն էլ շ ա ա ա՛ տ …(Դ.Դեմիրճյան, 1, 260): «Շատ» բառում «ա» ձայնավորի երկարացումը (գրավոր տեքստում կրկնությունը) շեշտում է բառի իմաստը, դրանով՝ «թռչելու տեղերի» հնարավորությունները: Էլեկտրոնային հաղորդակցման գրավոր խոսքում տարբեր բառերի ձայնավոր

որևէ հնչյունի բազմապատիկ կրկնությունը ձեռք է բերել դրանով արտահայտված հատկանիշի շեշտման դերակատարություն: Քնարական գործերում կրկնությունների ընդհանուր դաշտում հանդիպում են նաև բաղաձայնական կուտակումներ: Բանաստեղծները շատ են դիմում հնչյունների կրկնության/կուտակման գեղարվեստական եղանակին: Սրանք տարբեր բառերի, նույն կամ նման հնչյունների համախմբումներ են, որոնք ոճավորում են բանաստեղծական տեքստի տողերը:

Ա: - Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից,

Ի վեր, ի վերայ վարսից, ծավալէր ծաղիկ ծովային (Գ. Նարեկացի):

Այլ կրկնությունների հետ հնչյունային կրկնությունը տեքստի մակարդակում ունկնդրի կենդանի մասնակցության պատրանք է ստեղծում և ունի գեղագիտական հաճույք պատճառելու հատկություն, եթե խոսքը վերաբերում է գրավոր տեքստին, և տպավորման ու հիշեցման նպատակ, եթե խոսքը վերաբերում է գովազդին [Leech G., 1966:89]: Շեշտելով «ԱՊՊԱ» տրանսպորտային միջոցների ապահովագրության և ճանապարհային երթևեկության գաղափարների միասնությունը՝ գովազդային տեքստերում հանդիպում ենք «ԱՊՊԱհովագրություն» և «ճանԱՊՊԱրի» ձևերին, որոնց փոփոխությունները, խաթարելով նշանի նշանակչի կազմը, չեն վնասում տվյալ խոսքաշարում նշանի ինքնության ընկալմանը: Գեղարվեստական արտահայտության միջոցների զգալի մասը կապված է հնչյունային տարրերի կրկնության կամ շեշտադրման սխեմաների հետ, ինչպես ալիտերացիան, բաղաձայնական կամ ձայնավորական կուտակումները, հանգը, չափը, ռիթմը և այլն: Ջ. Լիչը [Leech G.,1966:95] համարում է, որ գեղարվեստական խոսքի կառուցման տարրերը հանդես են գալիս նաև առօրյա խոսքում և շեշտում, որ հնչյունային կրկնությունը ռիթմի հետ միասին տեքստի զգայական և իմաստային ընկալումներում նպաստում է ունկնդրի առավել ներգրավմանը, ուստի մշտապես օգտագործվում է խոսքի կառուցման նպատակով, ուժեղացնում է հաղորդման տարրերի կապվածությունը և չպետք է ուսումնասիրվի միայն գրական տեքստում: Դ.Թաննենը [Tannen D., 989: 20,84,134,135] իր հերթին ընդունում է, որ այդ բանաստեղծական միջոցների

շնորհիվ առօրեական խոսքը ունկնդրի մոտ առաջացնում է հետաքրքիր հուզական արձագանքներ: Այդ եղանակներից է նաև հանգավորումը, որը երբեմն հնչյունային կրկնության ձև է:

Ա: - Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին /Հ.Թումանյան, 1978:39/:

Մի այլ տեսանկյունից այսպիսի կրկնությունը կարող է գնահատվել նաև որպես ձևույթային կրկնություն, որը, սակայն, չի հանում դրա՝ որպես հնչյունային կրկնություն դիտելու հնարավորությունը: Կրկնվող հնչյունների սահմանները կարող են համընկնել որևէ ձևույթի սահմանի հետ՝ «գին» երևույթը «ահագին» բառում ձևույթ է, իսկ «հոգի+ն» բառում (բանավոր՝ հոքին)՝ առանձին իմաստ չարտահայտող կառույց. տաղաչափության համար սա հնչյունային (վանկային) կրկնություն է: Ինչևէ, հանգերի կրկնությունը չի արժանացել լեզվաբանության պատշաճ ուշադրությանը: Պատճառը գուցե այն է, որ այսպիսի կրկնությունները արժեքավոր բովանդակություն չեն կրում, եթե հաշվի չառնենք հին հույներից եկող հնչյունային սիմվոլիկայի տեսությունը, որը ներկա հետազոտությանը չի առնչվում: Նույնը չենք կարող ասել հնչութային մակարդակի գերհատույթային միավորների և հատկապես շեշտի ու հնչերանգի մասին, քանի որ այն, ասույթին պատմողական, հարցական, բացականչական և հրամայական երանգ հաղորդող իր տարբերակներով, մեզ համար կարևոր է կրկնության՝ հաստատում, ժխտում, հարց, ցանկություն, հրաման գործառույթների որոշման գործում:

2. *Ձևույթային մակարդակի միավորների կրկնությունը խոսույթում:* Ձևույթների կրկնությունը առանձնապես արտահայտիչ է պոեզիայում և գովազդում, հատկապես զուգահեռույթի և հանգի շրջանակներում: Դրա վրա որոշակի ուշադրություն է դարձնում նաև Գ. Բաբինիոտիսը [Μπαμπινιωτης Γ.,1991:196-197]. «Ձևաբանական տիպերի կանոնավոր օգտագործումը այլ ձևեր է կազմում, որոնք սպասարկում են գրական գեղարվեստական արտահայտության ոլորտը»: Եթե հնչութային կրկնությունները ունկնդրի վրա ներգործում են միայն վերը

նշված արտահայտչականության հատկանիշներով, ապա ձևույթային կրկնություններից սկսած՝ ներգործությունն ուժեղանում է նաև բովանդակային ազդակներով: Ջ.Լիչը «Բառային կրկնություններ» գլխում [Leech G.,1969:82] համառոտ ներկայացնում է ճարտասանության ձևույթային կրկնության երկու երևույթ՝

ա/ Տարաթեքույթ /պոլիպտոտոն/՝ նույն բառույթի կրկնությունը քերականական տարբեր թեքույթներով:

Ա: - Ինչի՞ մասին խոսեցին, - հարցրի մորս:

Բ: - Ոմանք, երբ խոսելու բան ունեն, խոսում են, - ասաց մայրս, - ոմանք էլ՝ ոչ:

Ա: - Ինչպես կարող ես խոսել, երբ բերանդ չես էլ բացում (Վ.Սարոյան 1:305):

A: - Θα γυρίσω. /Ա: - Ես կվերադառնամ:

Β: Περειμένω το γύρισμό σου. / Բ: - Սպասում եմ քո վերադարձին (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:20):

Տարաթեքույթ կրկնություն անվան տակ դիտարկվում են բառահարաբերական, ինչպես նաև բառակազմական այն ձևույթները, որոնք միասին որևէ հարացույց են կազմում: Այս դեպքերի համընկնման կապակցությամբ Ս. Գալստյանը գրում է. «Նյութապես միևնույն երկրորդական ձևույթը հատկապես խոսքային մակարդակում կարող է հանդես գալ և՛ բառաձևերի հարացույցային շարքում, ուր այն բառաձևերի տարբերիչ հատկանիշն է, և՛ բառակազմական նշանակությամբ /հմմտ,՝ աղ-աղի… և աղի ջու» [Ս.Գալստյան,1978:11]:

Ա: - Հա՛: Էդ են ժամանակն էր, որ աղքատն աղքատանում էր, հարուստը՝ հարստանում (Դ. Դեմիրճյան,1: 256):

Ա: - 1838-ին մտավ ճեմարան, ուր ճեմելեն զատ բան չսորվեցավ (Հ.Պարոնյան, 39):

բ/ Նույնահանգ կրկնության (օմիոտելեֆտոն) տակ հասկանում են քերականական նույն ձևույթի կրկնությունը տարբեր կառույցներում:

Ա:- …Քանզի կարկամեալ էր,

…Քանզի անկռինչ էր,

…Քանզի խորտակեալ էր,

…Քանզի վնասապարտ էր …, (Գ.Նարեկացի, Բան ԺԴ: Բ):

Բեմական խոսքում կամ ամենօրյա առտնին զրույցում ձևույթների կրկնություններ հազվադեպ են և ոչ մի կոնկրետ գործառույթ չունեն: Հաղորդման մեջ զուգահեռույթի կազմում հանդես գալուց բացի՝ խոսողի տրամադրությունից է կախված խաղային հնչերանգով կատարել որոշ շեշտադրումներ:

Ա: - Հիմա մենք ձվիկ կգնենք, մեր տնակը կգնանք ու ձվածեղիկ կպատրաստենք (Մանկական հեռուստահաղորդումից): Այս կրկնության լեզվական տեղեկատվությունը (փոքր ձու, փոքր տուն, քիչ ձվածեղ) փոխակերպվում է երեխայի նկատմամբ ջերմության դրսևորման գործառույթի, որը բացահայտվում է միայն արտալեզվական գործոնների օգնությամբ: Բառահարաբերական ձևույթների կրկնությունները հայտնվում են հարակից կառույցների կազմում:

Ա: - Դու պետք է մի կարգին գործ սովորես: Պետք է սովորես կավից կամ փայտ*ից*, կամ մետաղ*ից*, կամ էլ գործվածքեղենից ինչ-որ մի բան, մարդկանց համար ինչ-որ մի օգտակար իր սարքել (Վ.Սարոյան, 52):

՝Ձևույթային կրկնության մեջ ևս հանդես է գալիս կուտակումը, որը դեռ վաղ ժամանակներից հետաքրքրել է բանասիրությանը և լեզվաբանությանը, թեև այս եզրույթի տակ լեզվաբանական տարբեր մշակույթներում հասկանում են հնչյունային, ձևույթային, բառային, շարույթային կուտակումները:

3. *Նշանային մակարդակի միավորների կրկնությունը խոսույթում:* Այս միավորների կրկնության համակարգային ուսումնասիրությունը էապես դժվարանում է, քանի որ նախ՝ գործ ունենք ավելի բարձր կարգի միավորների հետ, ապա՝ այն, որ բառույթների ձևերը հանդես են գալիս նաև որպես ստորոգական մակարդակի նվազագույն միավորներ՝ շարույթներ, և միշտ չէ, որ կարելի է հստակ սահմանազատել բառույթներն ու շարույթները: Այս հանգամանքն է նշում նաև ԽՍՀՄ-ում կառուցվածքային շարահյուսության հիմնադիր, ակադեմիկոս Է. Աթայանը [1981:223]՝ գրելով, որ «Շարահյուսական կառույցների բառային տարբերակումը առանձնապես բարդ և քիչ ուսումնասիրված երևույթ է»: Բազմաթիվ տեքստերում բառույթների կրկնությունները հիմնականում ներկայացվում են իմաստային կրկնության եղանակներով, որտեղ կրկնյալի և

կրկնորդի դերերում հիմնականում ներկայանում են հոմանիշներ, հականիշներ և գերբառ-ենթաբառեր: Պ.Սևակի մոտ կարդում ենք՝

Ա: - Ես նա եմ նաև,

Որ տարբերում է պաչը համբույրից…

Գեղարվեստական խոսքում նույնքան ուշագրավ են հականիշները՝

Ա: - Հա, կյանքում ես միշտ այսպես եմ եղել,

Խնդացող տխուր, *սրտաբեկ* ուրախ…(Հ.Թումանյան, 1:467):

Երբեմն կրկնությունները ներկայացնում են այնպիսի անհատական բնութագրեր, որ նրանց ուսումնասիրությունը, թեև հետաքրքիր ու գրավիչ, այնուամենայնիվ պահանջում է խոսույթին հատուկ իրադրական վերլուծություններ:

Ա: - Ամերիկացիներ են, ասաց Սփենգլերը, - նայի՛ր նրանց: Ամերիկացիներ են՝ հույն, սերբ, լեհ, ռուս, հայ, գերմանացի, իսպանացի, պորտուգալացի, հաբեշ, հրեա, ֆրանսիացի, անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի…(Վ.Սարոյան, 1: 473):

Այստեղ հեղինակը ցուցադրում է, որ ամերիկյան ուծացնող միջավայրում «ամերիկացի» բառը վերաճում է գերբառի/հիպերոնիմ, որը տարբեր ազգերի անվանումները միավորել է որպես ենթաբառեր/ հիպոնիմներ:

Ն.Նորիկը [Norrick N.,1987:101] նշում է, որ արտահայտության կրկնությունը իմաստային կապակցման հնարավորություն է բերում, և արտահայտչական նույն եղանակով կրկնվող բառերը ընկալվում են իբրև հոմանիշներ (մեծ մասամբ՝ տեքստային, Ա.Հ.) և դասվում են նույն կարգում: Նույնը վերաբերում է նաև ենթաբառերին: Բանաստեղծները բառային կրկնություններ են կերտում, որոնցում, համարձակորեն միմյանց կամրջելով իմաստային թույլ կապերով կապված լեզվական նշաններ՝ ստեղծում են իմաստային կրկնություններ: Խոսույթում բառային կուտակումները բերում են իմաստների ծավալման և կապակցման: Դրան օժանդակում է նաև այն, որ կրկնության եզրերը ասույթի կազմում զբաղեցնում են շարահյուսական նույն անդամի դիրքը և գործառույթը:

Ա: - Այն ճորտն ճաւճ էր և ճապուկ,

Ուռամիջակ, հաստաբազուկ,

Լայնաթիկունք, խարտիշագեղ, աեղագոչ… (Գ.Նարեկացի, 1979: 568:

4. *Ստորոգական մակարդակի միավորների կրկնությունը:* Եթե ստորոգական մակարդակում կրկնությունը դիտենք որպես շարահյուսական կառույցների որոշակի վարքագիծ, այդ դեպքում նրա ամենատարածված և ամենաուսումնասիրված հիմնական դրսևորումը պարալելիզմն է (բառարանները նշում են «զուգահեռականություն», «զուգահեռություն», «նույնադասություն» թարգմանությունները, որոնց համեմատությամբ զուգահեռույթ ձևը մեզ ավելի դիպուկ է թվում) [Ա.Նազարյան1993:36]: «Զուգահեռույթ է կոչվում մակերեսային կառույցի երկու անգամ կրկնվելու երևույթը, որն ընդհանուր կառուցվածքը լրացնում է տարբեր արտահայտություններով» [Beaugrande R., Dressler W., 1981:57]: Թեև լեզվի ստորոգական մակարդակը պարունակում է լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակների կառույցներն ու միավորները, զուգահեռույթը գործածվում է ստորոգական մակարդակի կրկնությունների համար, երբ նույն կառույցը այլ միավորների հետ կրկնվում է այլ բովանդակությամբ [Leech, 1969]:

Ա: - Մեծ մասամբ հայերն էին հաճախում այս սրճարան, բայց գալիս էին նաև ուրիշները: Բոլոր նրանք, ովքեր հիշում էին հին երկիրը: Բոլոր նրանք, ովքեր սիրում էին հին երկիրը (Վ. Սարոյան, 1, 302): Այստեղ «բոլոր նրանք, ովքերը»-ը շարահյուսական այն կառույցն է, որ իբրև զուգահեռույթ, ամեն անգամ «լցվում» է նոր լրացումներով: Սակայն զուգահեռույթի հորինվածքը կրկնվող տարրերի հետ ներառում է նաև չկրկնվող, բայց նրանց հետ իմաստաբանորեն կապված այլ տարրեր, որոնք, կրկնվողների ազդեցությամբ, մտնում են կապակցության մեջ: Արդյունքում ստացվում են երկանդամ հավասարումներ, որոնց մի եզրը միշտ նույնն է, իսկ մյուսն անընդհատ փոփոխվում է: Եթե կրկնյալները «հավասար» են, ապա հավասարման օրինաչափությամբ կրկնորդները նույնպես միմյանց հավասար են: Նրանք ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց. այսպիսին է անհամատեղելին համատեղող զուգահեռույթի զորությունը:

Α: - Μίλαγες για τη βέρα, μίλαγες για τη δάφνη, μίλαγες για τις πλακέ, μίλαγες για τις κανονικές. / Ա:- Խոսում էիր մատանու, խոսում էիր փառքի, խոսում էիր առևտրի, խոսում էիր համակարգի մասին (Դ.Կեխաիդիս / Κεχαΐδης Δ., 1979:33):

՝Ռ.Յակոբսոնը և Ջ.Լիչը սա անվանում են «քերականական զուգահեռույթ», որպեսզի կոնկրետ շեշտեն նրա վերաբերությունը հենց շարահյուսական մակարդակին: Վ.Տոպորովը [Toporov V., 1978:112] գրում է. «Չնայած զուգահեռույթը հանդիպում է ինչպես առօրյա, այնպես էլ գեղարվեստական խոսքի ձևերում, այն՝ իբրև գիտակցված ընտրություն, հատուկ է նաև ժողովրդի ավանդական և ծիսական տեքստերին»: Նույնը տեսնում ենք հայկական ծիսական և կառուցվածքով դրանց հիշեցնող տեքստերում:

Ա: - Երկնէր երկին,
Երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի:
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ…

Պոեզիայում զուգահեռույթը ուսումնասիրվել է ավելի լավ, քան որևէ այլ ոլորտում: Ռ. Յակոբսոնը զուգահեռույթը համարում է բանաստեղծի գլխավոր հնարամտությունը: Զուգահեռույթի միջոցով լեզուն բանաստեղծին թույլ է տալիս ընտրություն կատարել, բայց կարծես նրա միտքն ուղղում է միակ հնարավոր ընտրանքին: Զուգահեռույթը տարբերվում է մեխանիկական կրկնությունից, քանի որ ենթադրում է նաև չկրկնվող տվյալներ: Ռ.Յակոբսոնին հետևելով՝ Ջ.Լիչը ևս կրկնում է, որ զուգահեռույթի յուրաքանչյուր կառույցում պետք է փնտրել ընդհանուր և փոփոխվող տարրեր: Նրա այս բնութագրից բխում է նաև երևույթի գլխավոր գործառույթը. «Յուրաքանչյուր զուգահեռույթ կառույցում համազոր մի կապ է ստեղծում աչքի ընկնող երկու կամ ավելի տարրերի միջև: Ընդհանուր առմամբ դա կապ է համադրության կամ հակադրության հետ» [Leech G.,1969:65]: Ներկայացված օրինակը ցույց է տալիս, որ սա ստեղծագործական հնար է, որը հաճախակի և արդյունավետ կերպով օգտագործում է քնարերգությունը:

Μου ζήτησαν | να πάω να δω | και να πιστέψω
Μου είπαν | ν’ αγγίξω χωρίς να δω | και να πιστέψω
Μου είπαν | να δω χωρίς ν’ αγγίξω | και να πιστέψω
Μου είπαν |να μη δω καθόλου | και να πιστέψω.

Ինձ խնդրեցին՝ գնամ տեսնեմ և շոշափեմ ու հավատամ:

Ինձ ասացին՝ տեսնեմ առանց շոշափելու ու հավատամ:

Ինձ ասացին՝ շոշափեմ առանց տեսնելու ու հավատամ:

Ինձ ասացին, որ հավատամ ես բացարձակ չտեսնելով (Βαλαορίδης Ν. /Ն. Վալաորիդիս 1978:23): Այստեղ ունենք «և հավատամ» կառույցի ինքնակրկնություն, «ինձ խնդրեցին /ասացին» կառույցի հոմանշային կրկնություն և «զգայելով հավատալուց» անցում «հավատալուն» առանց «զգայման»: Ստորոգական մակարդակում, զուգահեռույթը կարծես հղում է կատարում իմաստային կրկնության ինչ-որ մի տեսակի վրա: Ձևը հնարամտորեն ձեռք է բերում որոշակի բովանդակություն, քանի որ լեզվի մարդկային էությունը երևի չի կարող հաշտվել իմաստային դատարկության հետ:

Վ. Տոպորովը [Toporov V., 1978:106] զուգահեռույթը բնութագրում է որպես մի եղանակ, որը թույլ է տալիս. «Մեծագույն արդյունքի հասնել փոքր միջոցներով»: *Այն փաստը, որ շարահյուսական կառույցում բառային երկու միավոր զբաղեցնում են նույն տեղը, նախադրյալներ է ստեղծում, որ հոմանշային միջոցների շնորհիվ բանաստեղծական գործառույթը միավորների համադրության առանցքից անցում կատարի նրանց զուգորդումների առանցքին:* Շարահյուսական զուգահեռույթը նաև ժողովրդական քնարերգության և ծիսական խոսքի պատկերավոր հատկանիշներից մեկն է: Համարվում է, որ կրկնությունը, հաղորդման արտահայտչականությունից բացի, ծիսական տարածքում ստեղծում է նաև կապվածության և ներգրավվածության զգացում, այդ իսկ պատճառով էլ այն հանդիպում է ծիսական տեքստերում [Toporov V.,1978, Sherzer D.,1994]: Չնախապատրաստված ամենօրյա խոսքում շարահյուսական զուգահեռույթը և շարահյուսական կառույցների ընդհանուր կրկնությունը բավական հաճախակի հանդիպող երևույթներ են և հաղորդմանը տալիս են որոշակի ամբողջականություն ու կապվածություն: Երկու կամ ավելի միավորների համազոր դաշտում գտնվելու հանգամանքը նրանց միջև ստեղծում է իմաստային որոշակի մերձություն: Ասվածը դիտարկենք հետևյալ օրինակներում:

A: - Τον ξέραμε ως στάρ. Τον ξέραμε ως πάθος. Τον ξέραμε ως ηθοποιό. Νομίζω ήρθε η ώρα να τον γνωρίζουμε σήμερα ως άνθρωπο. Ա: - Նրան ճանաչում էինք իբրև աստղ: Նրան ճանաչում էինք իբրև կիրք: Նրան ճանաչում էինք իբրև դերասան: Կարծում եմ՝եկել է ժամանակը, որ այսօր ճանաչենք նրան իբրև մարդ (աստղ-կիրք-դերասան-մարդ) (Ευθυμιδιάδης Μ./ Մ. Էվթիմիդիադիս, 1981:28):

Զուգահեռույթի մասին խոսելիս հարց է առաջանում, թե որքան պետք է լինեն արտատեքստային և ներտեքստային կրկնվող կառույցների բովանդակային աղերսները, որպեսզի դրանք ընդհանրանան ուկնդրի գիտակցության մեջ: Բ.Ջոնսթոնը [Johnstone B., 1984: 257] համարում է, որ կրկնությունը կարող է ընկալվել իբրև զուգահեռույթ, քանի դեռ նրանց սահմանները ճշտված չեն: Հաճախ միավորները և անգամ նրանց կառուցվածքները նույնական են, տարբերվում է միայն միջավայրը: Թե՛ կրկնությունը, թե՛ զուգահեռույթը բնութագրվում են որոշակի ընդհանրություններ պարունակող կառույցներով: Դ. Շերզերը փորձում է միավորել «կրկնություն թե զուգահեռույթ» հակադրությունը՝ համարելով, որ դա երկու եզրերի միջանկյալ սահմանի ընդլայնման խնդիր է. կրկնությունը ճանաչվում է սահմանների անորոշությամբ, որը տարածվում է ձևերի, միջատարածքի, կրկնվող տարրերի քանակության վրա, քանի որ «այն, ինչ կընդգրկվի այդ շրջանակում, բավական սուբյեկտիվ է» [Sherzer D.,1994:41]: Դ.Շերզերին հետևելով՝ կարելի էր ընդունել կրկնության և զուգահեռույթի միջև և՛ սահմանների տարտամությունը, և՛ փոխներթափանցման, փոխնույնացման հնարավորությունները, սակայն, շարահյուսական կառույցների կրկնությունների մեր կատարած քննությունից հստակորեն երևում է, որ *կարող ենք ունենալ կրկնություն առանց զուգահեռույթի, սակայն հակառակը մեզ չի հանդիպել:* Հանդիպել են կրկնության որոշ օրինակներ, որոնք հստակ տարբերություններ են ցուցաբերում զուգահեռույթից: Այդ օրինակներում կրկնության եզրերը վերլուծվում են իրենց բաղադրիչներին կամ էլ բաղադրիչ երկու կառույցները համադրվում են շարահյուսական մեկ միասնության մեջ: *Դա նշանակում է, որ զուգահեռույթը մտնում է կրկնության կարգի մեջ:*

ա/ Վերլուծությամբ օրինակ՝ Ա: - Ես ուրախ էի, որ կա աշխարհ և կարող էի և ես լինել: Ես մենակ էի և տխուր. տխուր ամեն ինչի համար, բայց և ուրախ: Ես շատ ուրախ էի այն ամենի համար, ինչի համար որ տխուր էի (Վ.Սարոյան, 1: 81):

A: - Και... δεν την είγες πειράζει./Ա: - ԵՎ...Նրան չե՞ս նեղացրել:

B: - Όχι βέβαια! Αλλά η μικρή έτσι τους είπε. Πως την είχα...πειράζει. /Բ. Ո՛չ, իհարկե: Սակայն փոքրիկը այդպես է նրանց ասել: Որ ես նրան...Նեղացրել եմ (Ματέσης Π./ Պ.Մատեսիս, 1982:36):

բ/ Համադրությամբ օրինակ՝ Ա: - Մազերս կկտրե՞ք, քսանհինգ սենթ ունեմ:

Բ: - Նստեցեք խնդրեմ, նախ ես մի սուրճ պատրաստեմ:

Ա: - Դե, ասե՛ք, կարող եք ինձ այնպես խուզել, որ երկար ժամանակ մազերիս մասին խոսք չլինի:

Բ: - Սուրճ, նախ մի սուրճ խմենք, ապա մազերդ կտրենք /Վ. Սարոյան,1: 83/:

A: - (ειρωνικά): Είστε πολύ σκληρός κύριε Ταρζάν. /Ա: - Դուք շատ չո՛ր եք, պարո՛ն Տարզան:

B: - Τι θέλατε να είμαι κύριε, μαλακός; /Բ: - Ի՞նչ, ուզում էիք, որ փափու՞կ լինեմ:

A:- Και απόλυτος. /Ա: Ձեր տեսակետներում դուք չո՛ր եք և ծայրահեղ:

A: - Είσαι σκληρός κι απόλυτος στις απόψεις σου. /Բ. Եթե փափուկ ես, պարո՛ն, քեզ անասուններն են ուտում/: (Ευθημιδιάδης Μ. / Մ. Էվթիմիդիադիս, 1981:81):

Նմանատիպ օրինակները մեր նյութում շատ չեն, սակայն հատկանշական են: Կարծում ենք, որ կրկնության համար գոյություն ունի նաև զուգահեռույթը շրջանցող շարահյուսական բնութագրման հնարավորություն, որը նմանության և տարբերության խնդիրը վերածևում է ընդհանուր տարրերի տեսանկյունից: Այստեղ ունենք նույն կառույցների կրկնությունը, որոնք մի դեպքում ներկայանում են իբրև երկու անկախ տարր, մյուս դեպքում միավորվում են հենց նույն համադրական շարույթի մեջ: Նման օրինակների հանդիպել ենք առավելապես դրամատիկական երկխոսություններում: Սակայն այն հանգամանքը, որ տվյալ օրինակները համապատասխանում են մեր հարցադրումներին, մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ կգտնվեն շարահյուսական միավորների կրկնության

առավել տարածված դեպքեր, որոնք նախորդում են կրկնությանը, բայց ոչ կառույցի վերլուծությանը կամ նրա տարրերի համադրությանը:

2.4. ԽՈՍՈՒՅԹԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՄԸ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏՈՒՄ

Հետազոտության ամբողջականության նպատակով անրադառնանք նաև խոսույթի գերտեքստային մակարդակին՝ լեզվին և արտալեզվական իրականությանը: Գործաբանությունը, տեքստաբանությունը, խոսույթի վերլուծության տեսությունն ու պրակտիկան ընդունում են, որ իրական պայմաններում լեզվական հաղորդակցության կապն իրագործվում է բառային գործողությունների մակարդակում, որով խոսքի կազմակերպման մեջ մտնում է մի նոր գործոն: Իրական հաղորդակցման շրջանակում յուրաքանչյուր արտահայտություն ունի իր նպատակը, ներկայացնում է որևէ գործողություն, որը տեղի է ունենում հաղորդման ներգործության արդյունքում: Իր խոսքը «թաթախելով» արտալեզվական իրականության և խոսքային միջավայրի մեջ՝ խոսողը ձգտում է որոշակի ներգործություն թողնել ունկնդրի վրա: *Խոստումը, հավաստիացումը, ներգործումը, հայտարարությունը* բառային այն գործողություններն են, որոնք խոսողի կողմից գործադրվում են հիմա կամ երբևէ, անմիջականորեն կամ միջնորդավորված, ուղիղ կամ անուղղակի կերպով: Հաղորդակցումը հաջողված է, եթե ընդունողն ըմբռնել է բառային գործողությունը, ինչն ամեն անգամ երևում է նրա հետադարձ կապով:

Ա:- Բոլո՞ր իրերն եք հավաքել:

Բ,Գ:- (Անհամբեր) Բոլորը:

Ա:- Ուրեմն, բոլո՛ր իրերն եք հավաքել:

Բ,Գ:- (Գրգռված) Հավաքե՛լ ենք:

Ա:- Իսկ սա ի՞նչ է (3+2 կինոֆիլմից): *Շարունակական հարցումը բառային գործողության հաճախակի հանդիպող ձևերից է:* Այս դեպքում հարցը կամ պատասխանը ոչ թե նույն բովանդակությունն են կրկնում, այլ բառային գործողության նույն տեսակը: Մեր օրինակներում բառային գործողությունների կրկնություններն առավել ակնհայտ են, քանի որ, հարցերից բացի, նույն կամ մոտավոր կառուցվածքով կրկնվում են և՛ բառային տվյալները, և՛ պատասխան-

ների տեսակները: Ստանում ենք «քննչական» հետազոտության տպավորություն, որը բացահայտում է զրուցակիցների ենթադասական հարաբերությունը: Բացի հարցապնդումներից կրկնվում են նաև բառային այլ գործողություններ՝

- *հաստատում*՝

A: Θείε μου! /Ա:-Հարազա՛տս:

B: Ανιψιέ μου! /Բ:- Եղբա՛յրս:

A: Ξάδερφε! /Ա:- Ախպե՛ր ջան:

B: Ξαδερφούλη! Բ:- Ապերի՛կ ջան (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:26):

- *պահանջ*՝

Ա: - Ես պապա եմ ուզում, - գոչեց նա բռունցքը թափահարելով օդում, - սիրտս պապա է ուզում….շա՛տ է ուզում (Դ. Դեմիրճյան, 1:552):

A: Δώσε την εντύπωση πως είσαι κύριος. Κρύψε τις φωτογραφίες. Ηρέμησε το πρόσωπό σου. Μην είσαι άγριος. Βάλε λίγο γλύκα. / Ա:- Այնպիսի տպավորություն թող, որ դու պարոն ես: Թաքցրու՛ լուսանկարներդ: Բիրտ մի՛ եղիր: Մեղմացրու՛ դեմքդ: Փոքր ինչ ջերմ ու քա՛ղցր եղիր (Սկուրտիս Գ., 1982: 15):

- *վիրավորանք*՝

Ա: - Ծաղրում էլ ես հա՞… Ծիծաղում էլ ես հա՞… Ես քեզ կմորթե՛մ, - ճչաց Նասիբյանը (Նար-Դոս, 550):

Այս մակարդակում կրկնության բովանդակության գիտակցումը երբեմն բխում է կրկնած բառային գործողության ձևի գիտակցումից: Կրկնվող լեզվական ձևի և բառային գործողության միջև պարզ համապատասխանություն գոյություն չունի: Արժեք չունի, թե իրականում ինչ է նշանակում արտահայտությունը, ինչ է մտածում, կամ ինչ նկատի ունի խոսողը: Անգամ պարտադիր չէ, որ մեկ կառույցն արտահայտի միայն մեկ բառային գործողություն, չնայած որ մեկ ձև ունի: Եթե խոսքը վերաբերում է բառային նույն գործողությանը, ապա տարբեր պայմաններից է կախված, թե կոնկրետ ո՞ր գործողությանն է վերաբերում կրկնությունը (շեշտադրում, ներլեզվական և արտալեզվական միջավայր և այլն): Խոսքային ակտերում կրկնության ուսումնասիրությունն ակնհայտ դարձրեց խոսույթի ևս մի քանի գործոն, որոնք կարևոր դեր ունեն կրկնության

միավորների և նրանց գործառույթների որոշարկման համար. դրանք են՝ *կրկնության միջատարածքը, ձևերը, կրկնման հնարավոր քանակությունը և բերած տեղեկատվությունը:*

1.*Կրկնության միջատարածքը:* Կրկնության եզրերը կարող են միմյանց հետևել անմիջականորեն, առանց միջատարածքի, սակայն սովորաբար հանդիպում են նաև միջատարածքով կրկնություններ: Խոսույթի շրջանակներում կրկնության երևույթի սահմանները որոշելու առումով կարևոր է ուսումնասիրել, թե՝ ա) կրկնյալ և կրկնորդ եզրերի միջև ինչպիսի միջատարածք կարող է լինել, որպեսզի մարդու հիշողության մեջ դրանց կապը չաղոտանա և գիտակցվի կրկնության ամբողջականությունը և բ) ազդու՞մ է արդյոք, միջատարածքի մեծությունը կրկնություն-գործառույթ լծորդության որոշարկման վրա: Դիտարկենք՝ գոյություն ունի՞ արդյոք մարդու հիշողական ընկալման շեմին համապատասխանող միջատարածքի սահման:

A: - Θυμάσαι τι σούλεγα κάποτε; Βλέπω μακριά τις άσπρες αέρες που έργονται σαν τα πρόβατα; Έργονται οι άσποες μέρες! /Ա:- …Հիշու՞մ ես՝ ինչ էի քեզ ասում ժամանակին. «Տեսնու՛մ եմ հեռվում ճերմակ օրերը, որ գալիս են գառների նման» (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:21): Տեքստում սրան հետևում է 24 էջ միջատարածք, ապա կրկին՝ Ա: - Գալի՛ս են ճերմակ օրերը (Κεχαϊδης Δ. /Դ.Կեխաիդիս 1978: 45): Սա դրամայի հիմնական թեման է, հերոսների կողմից լավ կյանքի որոնումը, և, չնայած մեծ միջատարածքին, ունկնդիրը մտապահում է կրկնությունը իր խորհրդանշական իմաստով: Ն.Նորիկը [Norrick N.,1987:259] բերում է 15-18 ասույթներով միմյանցից հեռու գտնվող կրկնության օրինակներ: Լ.Կորիգանը [Corrigan L.,1980:231] և Կ. Սնոուն [Snow C.,1980:206] լեզվի յուրացման ընթացքում երեխայի խոսքի կառույցների կրկնության և դրանց ճանաչման սահմանային միջատարածքը համարում են *հինգ միջարկություն:* Մեր կարծիքով սա կապ ունի Վ.Ինգվեի «Խորության վարկածում» հաշվարկած լեզվի միավորների կապակցելիության սահմանների հետ, որը (7+ 2)՝ 5-9 միավոր է [Yngve V.,1961:145]: Պարզ կրկնության դեպքում կրկնյալի և կրկնորդի միջև այլ կառույցներ չեն ենթադրվում: Ցանկանալով լուծել ընդունելի միջատա-

րածքի չափի խնդիրը՝ Ն.Նորիկը և Բ.Ջոնսթոնը նշում են, որ կրկնության երկու եզրերն էլ հաղորդակցության ծիրում գործնականորեն պետք է գտնվեն «համագոյակցող» մոտակա տեքստերի տարածքում [Norrick N., 1987:262, Johnstone B.,1994:4-5]: Սակայն ո՞րն է այդ «մոտակա տարածքը», ինչպես այն որոշել: Ըստ նրանց՝ կրկնությունները ունկնդրին չեն պարտադրում հաղորդումը ընկալելու համար դիմել այլ աղբյուրների, որը երևույթի վերլուծության տեսակետից մեթոդապես մեզ ավելի ընդունելի է թվում: Դ. Թանընի համար «ամբողջ խոսքը մի կրկնություն է, որը մեկ շատ, մեկ քիչ չափով հենվում է նախորդող տեքստի վրա» [Tannen D.,1987, h1:217, 1987, h2:580]: *Այսպիսով կառուցված կրկնությունը կարողանում է թափանց(ն)ել խոսույթի ժամանակը և տարածությունը:*

Մեր կարծիքով հաղորդակցման մեխանիզմն է պահանջում, որ մարդը շփման ակտը հիմնի կրկնություն պարունակող խոսքի, իսկ ասույթը՝ թեմա-ռեմատիկ կառուցվածքի վրա: «Բարի ճանապարհ» տիպի կարծրատիպային արտահայտությունը և նույն պատմությունն ամեն անգամ նոր ունկնդրին պատմելը հաշվի չեն առնում միջատարածքը: Այս երևույթները հետաքրքիր են կրկնության լայն դիտարկման դեպքում: *Վերջապես, մարդու կյանքը ևս մի միջատարածք է նրա ծննդյան և մահվան միջև:*

Մեր օրինակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծ միջատարածքով կրկնություններ օգտագործող հեղինակները դրանց մտապահումն ու նույնացումն ապահովող բազմաթիվ հնարներ են ներմուծում տեքստ: Նրանք, ըստ երևույթին, միջատարածքին մոտենում են որպես հաղորդակցության մեջ գործող անհրաժեշտ «աղմուկի»: Դրա մեծությունը հակադարձ համեմատական է հաղորդումն ըմբռնելու խորությանը, ուստի ստեղծագործությունների հեղինակներն այն չեզոքացնելու համար օգտագործում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են *կրկնության բովանդակությունը, գաղափարայնությունը, տեքստի ծավալը, անփոփոխ լինելը, կրկնության առնչությունը հիմնական թեմային, հեղինակավոր կամ՝ ոչ, ազդեցիկ կամ՝ ոչ, դրական կամ ոչ՝ կերպարի կողմից արտաբերված լինելը, կառույցում նույն տեղն զբաղեցնելը* և բազմաթիվ այլ

հանգամանքներ: Նարեկացու տեքստերում հիշողական «կպչունություն» ապահովող տեքստակազմիչ հնարքներն ու եղանակներն անսահման են և հնարավորություն են ստեղծում ծիսական, խոհական-քնարական ծավալուն տեքստի մեծ միջատարածքներն ընթերցողին մատուցել՝ չլարելով նրա մտքի սևեռման ջանքերը: Այս ոլորտում նման հաջողության կարող է հասնել միայն համաշխարհային գրական փորձին քաջածանոթ հզոր գեղագետն ու խոսքի վարպետը, որը խոսույթի բազմատեսակ, բազմագործառույթ և մեծ միջատարածքներով կրկնությունները արվեստով մատուցելու համար օգտագործում է վերը նշված մեթոդաբանական կարևոր միջոցները: Նույնական շարահյուսական կառույցների, քերականական ձևերի, մտքի հզոր գործիքներով սերված կրկնությունների թվում հանդիպում են՝ և - և, պիտի - պիտի, կարող եմ - կարող եմ, ով - ով, ոչ - ոչ, աղաչում եմ քեզ - աղաչում եմ քեզ, ազատիր - ազատիր, փրկիր - փրկիր, ինչպես որ - ինչպես որ, ըստ - ըստ, ինչ - ինչ, թե - թե, ինձ- ինձ, ես - ես, դու - դու, նա - նա, դեռ - դեռ, մեղա - մեղա և բազմաթիվ այլ բառերով ու արտահայտություններով սկսվող կրկնության տողեր, տողախմբեր, տներ, որոնք տեքստում միմյանց հաջորդում են ընդարձակ միջատարածքներով: Սրանից մի եզրահանգում է բխում՝ այն, որ *որպես տեքստակազմական միջոց հանդես եկող կրկնության միջատարածքի դերն այնքան կարևոր է, որ մարդկությունը հաղորդակցության զարգացման ողջ ընթացքում բազմաթիվ միջոցներ է ստեղծել նրա բերած անհարմարությունները չեզոքացնելու նպատակով:*

Ա:- …Քանզի կարկամեալ էր,

….Քանզի անկռինչ էր,

…Քանզի խորտակեալ էր,

…Քանզի վնասապարտ էր …, (Գ.Նարեկացի, Բան ԺԴ, Բ):

Նարեկացու տեքստերում կրկնությունների միջև գտնվող տարբեր մեծության բազմաթիվ միջատարածքները չեն խաթարում տեքստի միասնականությունը: Խոր ներշնչանքով ու նպատակասլացորեն կառուցված նրա գեղարվեստական տեքստերում եղած միջատարածքները «չեզոքացվում են» ոչ միայն վերը նշված

ոճական միջոցներով, այլև կրկնյալ-կրկնորդների բովանդակության իմաստային - գաղափարական - աստվածային կապով, տոգորող ներշնչանքով ու բարձր ոգեղենությամբ, որոնք, չնայած տեքստային կապակցման վերացական բավանդակությանը, տեքստը պահում են ամբողջական ու անեղծ, ընկալելի ու մտապահվող: Գ.Նարեկացու նույն «Բանի» տարբեր հատվածներում կրկնություններ են հանդիպում միմյանց հաջորդող մեկից մինչև վեց տող աճող միջատարածքներով: Կրկնությունները հանդիպում են տողերի սկզբում, մեջտեղում, վերջում, սկզբում և մեջտեղում, սկզբում և վերջում: *Սփեղծագործության մեջ ամենամեծ միջատարածքներով հանդիպում է «Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստծոյ» ասույթը, որը պոեմում կրկնվում է 93 անգամ՝ ամեն դեպքում «խորհուրդ» ունենալով հերթական «Բան»-ը որպես դպարկ սափոր տեքստայնորեն լցնելու աստվածային բովանդակությամբ:*

2. *Կրկնության ձևերը:* Կրկնությունները հանդիպում են տարբեր ձևավորումներով, և ոչ մեկը հակասության մեջ չի մտնում կրկնության հիմքի հետ: Սակայն որքան շատ են կրկնությունների ձևերը, այնքան ուսումնասիրողի համար դժվարանում են դրանց ինքնության ճանաչման, ընկալման և բնութագրման հնարավորությունները: Հիշենք երեխայի զգուշավոր վարմունքը լինել - եղա, գալ - եկա, ուտել - կերա տիպի միավորներ պարունակող կրկնությունների նկատմամբ (այստեղից էլ՝ ուտեցի): Նույն կամ այլ խոսողի կողմից արված կրկնության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեցող ձևային փոփոխությունները պայմանավորված են թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական իրողություններով: Որպեսզի ասույթի բովանդակությունը, հաղորդողի դեմքը, հաղորդման վայրը, պայմանները և այլն անփոփոխ մնան, լեզվական տվյալները պետք է ճշտեն հաղորդման տեսանկյունը, որն ամեն անգամ ուրույն կերպով է ձևավորում «խոսող - ունկնդիր» փոխհարաբերությունները: Կրկնության ձևերն ուսումնասիրողներն առանձնացրել են երկու հիմնական տեսակ՝ կառույցի անփոփոխ կրկնություն և կառույցի տարրերի փոփոխումով կրկնություն: Դիտարկելով այն ձևերը, որոնք կրկնյալի համեմատությամբ փոխվում են կրկնորդի տվյալներում, և շարահյուսական

միավորի ձևափոխությունները՝ խոսողի և խոսակցի կողմից կատարված կրկնությունների ձևային բազմազանության բերումով՝ վերը նշված երկու տեսակի դիմաց մեր օրինակների հիման վրա առանձնացրել ենք կրկնության հինգ ձև: Դրանց անվանել ենք՝ ա) անփոփոխ կրկնություն, բ) բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխությամբ կրկնություն, գ)տվյալների հավելումով կրկնություն, դ) տվյալների հանումով կրկնություն, ե) խառը կամ բարդ կրկնություն:

ա.*Անփոփոխ կրկնությունը* (ա…ա) առանձնահատուկ է նրանով, որ կրկնյալ կառույցի որևէ տարր կրկնորդում փոփոխություն չի կրում ոչ ձևի, ոչ բովանդակության առումով:

Ա: - Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է պատահել…(Նար-Դոս:415):

բ.*Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխությամբ (ա1…ա2)* կրկնության մեջ կառույցը կրկնվում է կամ բառիմաստի, կամ վերաբերական իմաստի փոփոխմամբ, որը կրկնյալից տարբերվում է ինչ-ինչ նրբիմաստով: Համարժեքության խնդիրը որոշում է կրկնողը:

Ա:- Լռությո՛ւն, ոչ մի ծպտուն չլսեմ (բառային իմաստ) (Վ. Սարոյան, 3:9):

Ա: - Դու պետք է սովորես կավ*ից* կամ փայտի<u>ց</u>, կամ մետաղի<u>ց</u>, կամ էլ գործվածքի<u>ց</u> մարդկանց համար ինչ-որ մի օգտակար իր սարքել (քեր. իմաստ) (Վ.Սարոյան,1:52):

գ. *Տվյալների հավելումով կրկնություն (ա….ա+):*

Ա:- Նա ինչ-որ բան է վաճառելու: <u>Ուր էլ որ գնա, ուր էլ որ լինի՝ գնացքներում, նավերի վրա՝</u> նա ինչ-որ բան է վաճառելու՝ (Վ.Սարոյան,1:49)…

Ա:- Ուզու՞մ եք, ասացի ես, - ձեզ հետ պարապեմ հայերեն:

Բ:- Ուզու՞մ եմ… <u>ինչպես թե</u> ուզում եմ… <u>իհարկե</u> ուզում եմ, - բացականչեց Քալին ուրախությունից վառված աչքերով (Նար-Դոս,191):

դ. *Տվյալների հանումով կրկնություն (ա…ա-):* Կրկնվում են Ա եզրի միայն որոշ տվյալներ, ոչ ամբողջ եզրը:

Ա:- Չամիչով բլիթ ունե՞ք:

Բ: - Բլի՞թ Վ. Սարոյան,1:419):

Α: - [...] Το χρήμα κύριε! Το χρήμα! / Ա:- Փո՛ղը, պարո՛ն: Փո՛ղը (Χασαπάδης Γ./Գ.Գ.Խասապադիս, 1986:18):

ե.*Խառը կամ բարդ կրկնություն:* Կրկնության այս տեսակում տեղ են գտնում վերևում նկարագրված հինգ դեպքերի տարբեր զուգորդումները:

Α: - Έλα δω... / Ա: - Արի այստեղ...

Β: - Έχω δουλειά τώρα, άμα γυρίσω. /Բ: - Հիմա գործ ունեմ, հետո:

Α: - Έλα δω. θέλω να σου μιλήσω. Ա: - Արի այստեղ, ուզում եմ հետդ խոսել (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:104):

Կրկնության ներկայացված ձևային 5 կարգերի դասակարգումը ունի մեթոդական արժեք և ընդգրկում է կրկնության դեպքերի ողջ բազմազանությունը:

3. *Կրկնության քանակությունը և տեղեկատվությունը:* Կրկնվելու քանակի խնդիրը բավականին վիճահարույց է: Պերսընը համարում է, որ նույն կառույցը կարելի է կրկնել մինչև հինգ անգամ: Է. Շեգլոֆը [Schegloff E., Jefferson G., Saks H., 1977:365] կարծում է, որ «Օ՛լգա, Օ՛լգա...» տիպի կանչը չի կարող կրկնվել 5 անգամից ավելի: Սակայն նման պնդումներն, առանց խոսույթի իրադրության կոնկրետ գործոնների քննության, կարծում ենք՝ որևէ արժեք չունեն, քանի որ կրկնապատիկության քանակը կախված է նրա դերից, ձևից, բովանդակությունից և նպատակից: Անօգնական վիճակում գտնվող մեկը, որը ժամանակ առ ժամանակ ուժ հավաքելով օգնության է կանչում, չի հետևի կանչերի պատշաճ քանակություն պահպանելու որևէ նորմի և կկանչի՝ որքան ուժերը ներեն: Կամ մի՞թե Յու.Գագարինի ինքնաթիռը ռադարի էկրանից անհայտանալուց հետո ինքնաթիռի հետ կապ պահպանող ռադիստը միայն հինգ անգամ «325-րդ...» կանչեց և հետո անջատեց ռադիոկապը: Հիշենք նաև Վահե Քաչայի հերոսի անընդհատ կրկնվող կանչերը. «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ... գոնե մեկնումեկը»:

Դ.Դեմիրճյանից վերցված օրինակում այգետերը իր ծառի տակ հանգստացող օտարականի առջև 6 անգամ այգուց դուրս գալու պահանջ է դնում: Բայց քանի որ կրկնյալի բովանդակությունը ամեն անգամ դրսևորվում է կրկնորդի նոր կառույցով և շրջասությամբ, կրկնության քանակը անբնական չի թվում, և

հաղորդման ոճը չի ծանրանում: Խոսույթն ընթանում է հուզական լարված իրադրության մեջ: Խիստ զայրացած այգետերը զանազան ձևերով շարունակում է կրկնել իր պահանջը, քանի որ խոսակիցը, ըստ երևույթին, տրամադրված չէ նրան ենթարկվելու (տե՛ս Դ. Դեմիրճյան,1:27):

Հաղորդակցության տեսաբանների գնահատմամբ որքան անորոշ է հաղորդումը, այդքան մեծ տեղեկատվություն է այն ենթադրում: Խոսույթի տեղեկատվական հոսքի նվազումը կարող է հանգեցնել հաղորդակցության ընդհատմանը, մինչդեռ անհասկանալի կամ անիմաստ տեղեկատվությունը թուլացնում է հաղորդակցման հետաքրքրականությունը, բայց չի ընդհատում այն [Cherry C., 1957:13-14]: Ըստ Ռ. Բոգրանդի և Ու.Դրեսլերի [de Beaugrande R., Dressler W., 1981:8-9]՝ ընդհակառակը, որքան տվյալները ծանոթ ու սպասված են, այնքան նրանց տեղեկատվությունը ցածր է, որը տեքստը դարձնում է անհետաքրքիր: Մարդկանց զրույցը կառավարող գործոնները, ըստ Հ.Գրայսի, կարգավորվում են հետևյալ աքսիոմայով՝ «տալ միայն այնքան տեղեկատվություն, որքան պահանջվում է զրույցի կարիքների համար» [Grice H. 1975:-45-46]: Կարծում ենք այս պնդումը ճիշտ է միայն ընդհանուր առմամբ, սակայն մասնակիցների ունեցած տարբեր միտումների պայմաններում միշտ չէ, որ միակն է: Հարուստ տեղեկատվությունը տեքստին բերում է ոչ միայն գրավչություն, այլև մշակման ու ընկալման դժվարություններ: Հայերենում գոյականի առկայացնող տրոհման կարգերի շնորհիվ կրկնության տեղեկատվությունն իրականում ավելի հստակ է ձևավորվում [Հակոբջանյան Հ., 2011:150-153]: Հարկ է լինում պարզել, թե առկայացնող տրոհման բևեռներից թեմայի՞ն, թե՞ ռեմային է բաժին ընկնում կրկնության գործառույթը, ինչպե՞ս որոշել այն տվյալների բերած տեղեկատվությունը, որոնց ի հայտ գալը կախված է անկայուն պայմաններից: Քանի որ կրկնության պահանջը խոսքի շարահյուսական կամ իմաստային կարիքներով չի պայմանավորված, ապա նրա խորհուրդը պետք է փնտրել լեզվից դուրս՝ իրադրության և համագործակցության մեջ, իսկ կրկնության բերած «իմացակա՞ն թե ներգործող տեղեկատվության» զուգընթաց մեկնաբանությունը կատարվում է ոչ թե մտքով, այլ ենթագիտակցությամբ:

A: - Τον κούφανες. Καλά τον κούφανες. / Ա:- Նրան չլսեցրիր: Լա՛վ չլսեցրիր նրան (Καμπανέλλης Γ. / Յ.Կաբանելիս, 1982:90): Այս օրինակում ասվածը կրկնելու պատճառ չկար, քանի որ աղմուկ չկար: Խոսողը կրկնության միջոցով միայն իր վերաբերմունքը շեշտեց խոսակցի նկատմամբ: Գրայսի վերն արված պնդումը, թե խոսողը միշտ էլ ներկայացնում է բավարար չափով տվյալներ, մեզ համար ավելի քան հասկանալի է, քանի որ տվյալների քանակը կարգավորվում է նրանով, թե ունկնդիրը որքանով է տեղյակ թեմայից, իսկ տեղեկատվության շատ կամ քիչ լինելու դեպքում ունկնդիրը կարող է դրա տակ որոշակի միտում տեսնել, որով կթուլանա նրա վստահությունը խոսողի նկատմամբ: Ինչ վերաբերում է «երեխան երեխա է» «պատերազմը պատերազմ է», տիպի հոռի կրկնությունների տեքստային զրոյական տեղեկատվությանը, ապա խոսույթում իրադրության քրոնոտոպ գործոնների օգնությամբ անգամ հոռի կրկնությունը նշանակություններ է ձեռք բերում: Ըստ Է.Աթայանի՝ «Խոսույթի վերլուծությունը ... լայնորեն հաշվի է առնում իրադրությունը, միջավայրը, մակերեսային կառույցներում ստորոգմամբ չարտահայտված ատրիբուտների խորքային վերագրումները, որոնցով խոսույթի բովանդակությունը միշտ ավելի ծավալուն է ստացվում, քան խոսքի բովանդակությունը: Նա նշում է նաև, որ խոսույթի որոշ տվյալներ երբեմն կրկնվում են ոչ այնքան տեղեկացնելու, որքան ներգործելու նպատակով: Կրկնություն սերող նպատակը միտված է ընդունողի արձագանքին՝ բովանդակության հաստատում, ճշտում, հերքում, համաձայնում, մասնակցություն և ունկնդրի գոնե առերես ընդգրկվածություն: Եթե կառույցի կրկնությունը լեզվական նոր տեղեկություն չի բերում հաղորդմանը, ապա այն հաստատ փոխում է հաղորդակցության հրահանգը՝ ԿՐԿՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՇԵՇՏԵՄ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԵՎԵՌԵՄ, ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐԵՄ, ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՄ, ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ ԴՆԵՄ, ԺԽՏԵՄ, ՄԵՐԺԵՄ և այլն, այսինքն՝ օբյեկտիվացնեմ իմ սուբյեկտիվ վերաբերմունքը կրկնությամբ դրսևորված բովանդակության նկատմամբ: Արտահայտության կամ նրա մի մասի կրկնությունը խոսույթի մասնակիցների համար գործում է որպես հետհաղորդակցական նշան՝ ՀԱՍԿԱՑԵ՛Ք՝ ԿՐԿՆՈՒՄ ԵՄ, ՔԱՆԻ ՈՐ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՄ ԱՍԱԾՍ

ՀԱՐՍՏԱՑՆԵԼ ՈՉ ԹԵ ՆՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ, ԱՅԼ ՆՈՐ ՆՐԲԻՄԱՍՏՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԿՎԵՐԱԲԵՐԵՆ ՈՉ ԹԵ «ԻՆՉ»-ԻՆ, ԱՅԼ «ԻՆՉՊԵՍ»-ԻՆ [Աթայան Է.,1981:205]:

Եթե ընդհանրացնենք, ապա խոսույթում կրկնությունը միշտ ինչ-որ բան է ասում, բայց ոչ թե հաղորդման բովանդակության մասին, այլ այն ձևի մասին, թէ ունկնդիրը ինչպե՛ս դա հասկանա հաղորդակցման արդյունքում:

A: - Για τον κινηματογράφο είπαμε. Παράλληλα έκανε.../ Ա:- Կինոյի վերաբերյալ ասվեց: Դրան զուգահեռ նա զբաղվում էր նաև...

B: - Τα μιούζικαλ. / Բ: - Մյուզիքլով:

A: - Ναι, μιούζικαλ. / Ա: - Այո՛ մյուզիքլով (Ευθυμιάδης Μ./ Մ. Էվթիմիդիադիս, 1981:26): Այս օրինակում Ա կողմը Բ-ին կրկնում է ոչ թե նոր տեղեկություն տալու, այլ հաստատելու համար, որ խոսակիցը գուշակել է իր միտքը: Խոսողը կրկնության միջոցով կարգավորում է տեղեկատվական հոսքի կանոնավոր մատուցումը և բանավոր խոսքի արագությունը: Ինչպես Ջ.Բրոդին է նշում, կրկնության լեզվական տեղեկատվությունը ասույթի բովանդակային մակարդակում լրացվում է այն բարձր տեղեկատվությամբ, որը բխում է ողջ խոսույթից [Brody J., 1986:258, Rygiel D., 1994:120-121]: Այդ են հաստատում նաև այլ հեղինակներ [Derbyshire D.,1977:176, Brody J.,1986:256, Tannen D.,1989:49, Merritt M.,1994:28]: Խոսողի մտահոգությունն այն է, որ իր նպատակադրումը հնարավորինս անկորուստ վերածվի ունկնդրի հետհաղորդակցական ընկալման: Ամեն մի թեմայի հետ խոսողն իր ունկնդրի համար հաղորդակցական կոնկրետ տեխնոլոգիա է մշակում՝ հենվելով նրա տեղեկացվածության վերաբերյալ ունեցած իր պատկերացումների վրա: Խոսողն իր նպատակադրումը համակարգային - ստատիկ վիճակից (գիտակցություն - լեզու) դինամիկ գծայնության (մտածողություն - խոսք) վերածելու գործընթացում օգտագործում է լեզվական, հարալեզվական և արտալեզվական միջոցներ, որպեսզի կառուցի ունկնդրի իրազեկվածությանը առավելագույնս համապատասխանող հաղորդում, ապահովի տեղեկատվության ընկալումը ինչպես նվազագույն կորուստով, այնպես էլ՝ նվազագույն ջանքերի գնով: Այդ նպատակին հասնելու միջոցների մեջ կարևոր-

վում է նաև ասույթի տվյալների կրկնումը, որը, տեղեկատվական դադար է, բայց ոչ անիմաստ դատարկություն: Հիշելի լինելու առումով կրկնությունը պարտադիր է բանավոր խոսքում, որպեսզի լուծի ասվածին վերադառնալու ունկնդրի մշտական կարիքի խնդիրը: Սակայն, ինչպես տեղեկությունների հաղորդումը լեզվի միակ խնդիրը չէ, այնպես էլ տեղեկատվական հոսքի դանդաղեցումը կրկնության հիմնախնդիրը չէ [Brody J., 1986:256]:

2.5. ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցության համար կարևոր խոսույթային հատկանիշների թվին է պատկանում իմաստային կրկնության տարբեր տիպերի օգտագործումը, որոնք բազմապիսի գործառույթներ են կատարում և մասնակցում կրկնության բազմաթիվ ռազմավարությունների ու մարտավարությունների իրականացմանը: Նրանք օժանդակում են լեզվի բոլոր, հատկապես՝ հաղորդակցական, իմացական և ներգործման այն գործառույթների դրսևորմանը, որոնք գերազանցապես ուղղված են ունկնդրի վրա ներազդելուն, հատկապես՝ նրա համոզմունքների փոփոխման գնով: Հարաբերակցող իմաստներով ձևավորված իմաստային կրկնությունն ավելի արդյունավետ է ներգործում խոսակցի համոզմունքների վրա, քան որևէ անփոփոխ ինքնակրկնություն: *Լեզվի բառարանում «ինքնուրույնության ձգտող ամեն մի բառիմաստ» խոսույթում գնում է բովանդակության միասնականացման՝ ներդնելով իր ընդհանրությունները, որպեսզի այդ դիրքում ավելի ուժգին հնչեցնի իր իմաստային նրբերանգները:*

Այս առումով լեզվի բովանդակության պլանի համակարգային ուսումնասիրությունն իր արդյունավետությամբ զգալիորեն հետ է մնում կառուցվածքային մակարդակների և ոլորտների նկարագրման հաջողություններից: «Լեզուներում նշանակությունների առկա համակարգերի պատմության ստեղծումը ժողովուրդների ու նրանց մտքերի պատմությունը հասկանալու վերին աստիճանի արդյունավետ միջոց է, բայց դեռ այնքա՞ն քիչ բան է արված այս դժվարին բնագավառում», - գրում է Է. Աթայանը [1981:135]: Իմաստաբանության զարգացման ամենակարևոր դժվարությունը հատկապես իմաստա-իմաստային նրբագույն և բազմահյուս հարաբերությունների ուսումնասիրության գործիքա-

կազմի պակասն է, որը հնարավորություն կտար չափումներ կատարել լեզվական նշանների բովանդակության դաշտում: Այս կապակցությամբ Է. Աթայանը գրում է. «Միայն միտումով է նշանակվողը ոչ նյութական, իսկ նշանակողը» նյութական. դրանք բացարձակապես նյութական/ոչ նյութական են լոկ իբրև նշանային շղթայի ծայրերում գտնվող օղակներ, մինչդեռ այդ երկու եզրային կետերի միջև՝ այդ շղթայի երկայնքով մեկ, դիտվում է նշանաբանական գոյավիճակի վերոհիշյալ աստիճանական փոփոխությունը՝ [Աթայան Է.,1981: 244]: Մեզ մոտ խոսքը գնալու է հենց «այդ երկու եզրային կետերի միջև»՝ բավանդակային այդ շղթայի երկայնքով մեկ, նշանաբանական քիչ թե շատ չափելի աստիճանավորում ստեղծելու շուրջ:

Ա:- Ոմն եւ փուշք իւր, ոմն եւ արմատք իւր…

Ոմն եւ ճիւղք իւր, ոմն եւ ոստք իւր…(Գ.Նարեկացի,Բան Զ:Գ):

Բերված Զ Բանի ողջ Գ հատվածում շարահյուսորեն նույնական կառույցների կազմում բացի գոյականական հիմքերից մնացած ամեն բան կրկնվում է և տեքստի տեքստայնորեն միմյանց համադրված գոյականների զույգ և եռանդամ շարքերը «Իմաստաբանություն» գիտությունից հրամայաբար պահանջում են ճշգրիտ բնութագրում տալ, դասակարգել իրենց ակնհայտ ընդհանրությունները, քանի որ «հոմանիշ» անվանելը քիչ բան է ասում կամ ոչինչ չի ասում դրանց իմաստային մերձության աստիճանի վերաբերյալ, ինչպիսիք են, ասենք՝

ծնունդք - շառավիղք, փուշք - արմատք, արմունկք - մատունք - ճիրանք, նշմարանք – տիպք, ճիւղք - ոստք, ցնցուղք - աղբիւրք - գետք, ստուերք - մթութիւնք, զաւրութիւնք - ազդմունք, հնոցն - հալոցն - գոլորշիք, պատիրք - դիտմունք, հարձակմունք - հնարք, վիհք - անդունդք, չափք - խորք, կայծակունք - կիրք, ամպրոպք - կայլակք, մթերք - գանձք, հոսմունք - հեղեղ, շանթք - հրդեհմունք, տապ - հրատն, շաւիղք - ճանապարհք, հալոցքն ճարպին - ճենճերմունք, գոռոզն - սպառազէնք, բռնաւորն - յելուզակք, աւշինդրն - դառնութիւն և այլն:

Խոսելով նման մի խնդրի մասին՝ Է.Աթայանը գրում է. «Որ այս ամենը մտքի կամայական մարզանք չէ, ապացուցվում է բառարանագրության և քերականության հազարամյա պրակտիկայով, որն, ըստ էության, սպառվում է արմատների, հիմքերի, բառաձևերի ու ավելի ծավալուն կառույցների երբեմն բավականին բարդ իմաստային կառուցվածքի խորքային ստորոգական բովանդակության «մակերեսայնացմամբ»՝ նրանց ստորոգական միջուկի վերհանումով» [1981:220]: Լեզվաբանական գրականության մեջ իմաստային կրկնությունները ներկայացված են երկու մեծ խմբերով, որոնցում կրկնության երկու բաղադիչները՝ կրկնյալն ու կրկնորդը՝ ա) նույնական են իրենց արտահայտության և բովանդակության պլաններով (նույնաբանական/տավտոլոգիկ կրկնություններ) և բ) հանդես են գալիս որպես իմաստային համարժեքներ, որոնց տարբեր նշանակիչների տակ առկա է իմաստային նմանություն [de Beaugrande R., Dressler W., 1981:67]:

Α: - Άλλη μια στεναχώρια κι άντε γειά. Τέξα. Σέκος. Νεκρός κι αποθαμένος. Πτώμα. \Ա:- Եվս մի անհանգստություն և հրաժեշտ: Լռությո՛ն: Քար: Մեռած ու թաղված: Դիակ (Ευθημιδιάδης Μ./ Մ. Էվթիմիդիադիս, 1981-1:85):

Ա:- Ինչն արդար է՝ արդար, էստեղ ոչ մի և չկա: Ոչ մի խարդախություն: Ոչ մի խաբեություն: Ոչ մի մի խնամակալություն: Ոչ մի զիջողություն (Վ. Սարոյան, 3:197).

Քանի որ համարժեքությունն առավել գործաբանական քան իմաստաբանական գնահատական է, ուստի մենք ստորև փորձ ենք արել կրկնության բաղադրիչների իմաստային առընչությունները ներկայացնել հենց գործաբանական մոտեցմամբ:

Ժամանակակից հայերենի կրկնության ուսումնասիրությանը նվիրված Ա. Կարապետյանի վերը նշված դոկտորական ատենախոսության մեջ ևս փորձ է արվում առանձնացնել իմաստային կրկնության տեսակները: Ըստ նրա, «ասելիքն ավելի պատկերավոր և վերաբերմունքի ընդգծումով արտահայտելու համար», շարահյուսական միևնույն կառույցում նույն իմաստը դրսևորվում է լեզվական հարիմաստ ձևերով: Սակայն, խոսելով կրկնության եզրերի

իմաստային աստիճանավորման մասին՝ հեղինակը բավարարվում է միայն իմաստների *ուժեղացման*, թուլացման և *հավասար դրսևորման սկզբունքների* թվարկմամբ, որով հեռանում է հարակից իմաստների աստիճանավորման մեր ըմբռնումից [Կարապետյան Ա., 2005:516-517]:

Լեզվական նշանի բովանդակության պլանում ծավալվող հարաբերությունների անցումը աստիճանավորող առաջարկության ենք հանդիպում երկու հոդվածներում [Հակոբջանյան Հ., 1982, 1983], որտեղ փորձ է արվում ցանկացած երկու բառույթի իմաստային հարաբերությունների դաշտը բնութագրել նույնիմաստություն, մերձիմաստություն, հարիմաստություն, հեռիմաստություն և տարիմաստություն աստիճաններով: Նշված սխեման ստեղծված է լեզվի անմիանշանակության և անմիաձևության երևույթների համակարգային հարաբերությունների նկարագրման համար, սակայն խոսույթի մեր օրինակներով համոզվեցինք, որ սանդղակը, շնորհիվ գեղարվեստական խոսքի երկխոսական դինամիզմի և խոսույթային գարծոնների, առավել որոշակիորեն է գործում խոսույթի իմաստային կրկնության եզրերի միջև ծավալվող հարաբերությունների գնահատման ոլորտում: Այդ գործիքակազմը մասնակիորեն համալրելով իմաստային տարբերակման նոր աստիճաններով՝ մենք փորձեցինք տալ խոսույթի կրկնությունների իմաստաբանորեն ավելի մանրամասն և տարբերակված դասակարգում, քան հանդիպում ենք դրան նվիրված լեզվաբանական գրականության մեջ: Ռ.Բոգրանդը և Ու.Դրեսլերը սահմանում են, որ «իմաստային կրկնությունը ներքին կրկնություն է, որն արտահայտության փոփոխմամբ իրականացնում է բովանդակության վերարտադրություն» [de Beaugrande R., Dressler W., 1981:58]: Ելնելով կրկնյալի և կրկնորդի մեր օրինակներում բացահայտած իմաստային բազմազան դրսևորումներից՝ մենք այն ներկայացնում ենք հետևյալ ճշգրտումով՝ «իմաստային կրկնությունը ներքին կրկնություն է, որն արտահայտության փոփոխմամբ իրականացնում է բովանդակության *լրիվ կամ մասնակի* վերարտադրություն, որի շնորհիվ խոսույթում զգալիորեն ընդարձակվում են իմաստային կրկնության շրջանակները: Խոսույթ ձևավորող միջավայրը իմաստային կրկնությունների եզրերն ուղղորդում է դեպի

հոմանիշություն և այն տեղայնացնում խոսքային համապատասխան իրադրության մեջ, որը նպաստում է միևնույն հաղորդման ավելի խոր ընկալմանը, քանի որ կրկնորդը՝ մեկնաբանելով, խորացնելով, ընդհանրացնելով կամ կոնկրետացնելով ճշտում է կրկնյալին, որպեսզի նրա շրջասությամբ ինչ-որ բան շեշտի մի այլ տեսանկյունից: Այս կաղապարը ակտիվ է գործում հատկապես չափահաս - երեխա խոսույթում, երբ երեխայի սահմանափակ բառապաշարի պատճառով խոսողն ստիպված է լինում ասվածը կրկնել ավելի մատչելի հոմանիշ բառերով [Johnstone B., 1984:256]:

՝Իմաստային կրկնությունների քննությունը հանգամանորեն ցույց է տալիս, որ հոմանշային նրբիմաստների տարատեսակներն իրականում ավելի շատ են, քան ներկայացված է գիտական գրականության մեջ և գործաբանորեն անհրաժեշտություն է առաջանում դրանք բնութագրել վերը նշված գործիքներով: Իմաստային կրկնությունները Ա եզրի շրջասությամբ լրացնում են առանձին բառի կամ կառույցի անզորությունը, մենակությունը, դատարկությունները և բացերը: Այստեղ խոսքը վերաբերում է մի միավորի կամ կառույցի բովանդակության արտահայտմանը նրա հետ որոշակի իմաստային կապեր դրսևորող այլ միավորներով:

Ա:- Ամեն տեղ կռիվ, կեղծություն, խաբեություն, հացի խնդիր...(Դ. Դեմիրճյան, 2:12):

Α: - Διότι, σκέφτομαι καμιά φορά, πως εσύ είσαι ένα κάθαρμα. Ένα χαμένο κορμί. Ένας άχρηστος της κοινωνίας. /Ա: - Ուրեմն լսի՛ր, հաճախ եմ մտածում, որ դու սրիկա ես: Կորած մարդ: Հասարակության մրուր (Ευθημιάδης Μ./ Մ. Էվթիմիդիադիս, 1981:99):

«Հռետորները գտնում են, որ խնդիրը պետք է կրկնել այնքան, մինչև այն ըմբռնվի լսարանի կողմից: Այս դեպքում կրկնել, նշանակում է նույնն ասել տարբեր բառերով» (Leech G.,1966:86): Այստեղ խոսքի ոճավորմանը նպաստում են նաև իմաստների հակադրումը (ոչ սառը՝ տաք) կամ համադրումը (կլինեմ լուռ, մունջ):

Α: [...] Κι όχι πολλά λόγια, λίγα και σταράτα. / Ա:- Եվ ոչ շատ բառեր՝ քիչ և հակիրճ / (Χασαπάδης Γ. /Գ.Խասապադիս, 1986:22):

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ իմաստային կրկնությունը կամ զուգահեռույթը շարակարգում ստեղծում է «հարացույցային համարժեքություն»՝ հնարավորություն տալով միավորների հոմանշային ընկալման համար: Եթե խոսակիցը կրկնում է շրջասելով, ապա նա միտում ունի բանակցությունը վարելու իր պայմաններով [Johnstone B.,1984:257, 1983b:59, Haliday M., Hasan R,1976:292]: Նպատակ ունենալով որոշարկելու իմաստային կրկնության բազմազան տեսակները՝ մեր օրինակները հնարավորինս ենթարկեցինք մանրակրկիտ տեսականիշ իմաստային դասակարգման՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի իմաստներով է փոխարինվում, շրջասվում կրկնյալի բովանդակությունը՝ լայնշանակային /սիգնիֆիկատիվ, վերաբերական /ռեֆերենցիալ, նեղնշանակային /դեսիգնատիվ, թե՛ նշանակցային/կոննոտատիվ (եզրույթները՝ Է.Աթայանի, Ա.Հ.), ինչպես նաև օգտագործեցինք բառույթների իմաստային անցման վերը նշված աստիճանավորումները: Խոսույթի իմաստային կրկնությանը մենք հատկացնում ենք բավականին լայն մի տեսականի՝ դրա տակ ներկայացնելով կրկնորդի թեկուզ դույզն-ինչ իմաստային առընչությունը կրկնյալին, այսինքն բոլոր այն դրսևորումները, որոնցում կրկնյալն ու կրկնորդը իմաստային դաշտերի, թեմատիկ խմբերի, գերբառի և ենթաբառի, հականիշ, նույնանիշ և հոմանիշ, բազմիմաստ բառերի կամ նրանց տարբերակների հատկանիշներով կարող են հանդես գալ միմյանց փոխարեն կամ միմյանց լրացնելով: Դիտարկումները ցույց են տալիս, որ լեզվում անգամ իմաստային փոքր-ինչ աղերս ներկայացնող միավորները խոսույթում «նետվում» են կազմելու իմաստային կրկնություններ կամ ստեղծելու նման կրկնության տպավորություն, քանի որ խոսքի կրկնվող շարահյուսական կառույցներն ու նրան ուղեկցող իրադրության գործոնները միասնաբար նպաստում են, որպեսզի այդ դրսևորումներն ընկալվեն որպես իմաստային կրկնություն: Գարուն և ձյուն, արյուն և ջուր բառերը ոչ մի լեզվի հականիշների բառարաններում չեն հանդիպում, սակայն ժողովրդական երգում խոսույթային

հականիշներ են ձևավորում, օրինակ՝ Ա: - «Գարուն ա ձյուն ա արել: Արունը ջուր ա դառել»:

Քանի որ հոմանշային միավորների միմյանց նկատմամբ ունեցած իմաստային աղերսները ձգվում են նույնությունից դեպի տարբերություն անցնող ողջ առանցքով, ուստի այն աստիճանավորել ենք «նույնիմաստություն - մերձիմաստություն - համիմաստություն - հակիմաստություն - հարիմաստություն – հեռիմաստություն - տարիմաստություն» աստիճաններով և ատենախոսության մեջ առանձնացրել իմաստային կրկնությունների հետևյալ տեսակները՝ ինքնակրկնություն, նույնիմաստ, մերձիմաստ, համիմաստ, հակիմաստ/ հականիշ, հարիմաստ, հեռիմաստ կրկնություններ, տարիմաստ կրկնություն՝ հարանունների կամ համանունների մասնակցությամբ, բազմիմաստ բառի տարբեր իմաստներով կրկնություններ, նախադասության անդամի և նրա զեղչման միջոցով ստեղծած իմաստային կրկնություններ, իմաստային կրկնություններ նույնահիմք տարբեր խոսքի մասերից: Ընդ որում՝ առանձնահատուկ դեպքերում ցուցադրվում է խոսույթային կրկնություններում հանդիպող իմաստային կապերի սերտաճման երևույթը և իմաստային կրկնության որոշ տեսակների տարբերակման վարկածային բնույթը:

1. *Ինքնակրկնություն:* Իմաստային կրկնության տեսակների թվարկմանն ու մեկնաբանմանն անցնելու համար որպես ելակետային տեսակ առանձնացրել ենք ինքնակրկնությունը: Այն պարզ կրկնություն է, քանի որ կրկնյալի ու կրկնորդի դերում հանդես է գալիս նույն լեզվական նշանը կամ կառույցն իր նշանակիչով և նշանակելիով: Լեզվի համակարգում սա հոռի նույնություն է դիտվում, որը, սակայն, առնչվելով հաղորդակցման հարափոփոխ իրադրության հետ, խոսույթում շարունակ «բեռնվում է» որոշակի գործառույթներով: Ստորև բերված օրինակում Գ մասնակցի կողմից Բ-ին նույնությամբ կրկնելը Ա-ին տրվող խոստման երաշխիքի ուժեղացման գործառույթ ունի:

Ա:- Եթե չեք կարող…, - փորձեց հրամանատարը: - Կարո՞ղ եք:

Բ:- Կարո՛ղ ենք:

Գ:- Կարո՛ղ ենք (Դ.Դեմիրճյան,1:196):

2. *Նույնիմաստ կրկնությունը* եզրերի նրբիմաստային տարբերությամբ կրկնություն է, որի դեպքում կրկնյալը փոխարինվում է նույնիմաստ-նույնանշանակ մեկ այլ բառի միջոցով: Քանի որ գոյաբանական առումով նյութական նույնություն գոյություն չունի, ուստի լեզվախոսքային նույնիմաստություն-նույնանիշությունն ըմբռնվում է որպես միավորի գործաբանական-գործառնական նույնության: Սրանք բացառիկ են որպես կրկնություն, ուստի և սակավադեպ են:

Ա: - Ոչ հայտնացեալ իմ՝ եւ գթացար,….

….Ոչ պաղատեալ՝ եւ ողորմեցար (Գ.Նարեկացի,ԺԸ:Ա):

3. *Մերձիմաստ կրկնությունը* կատարվում է այնպիսի կրկնորդով, որը կրկնյալին «հակադրում է» այլ լեզվական նշան՝ «հեռավոր» նշանակիչով և «մերձավոր» նշանակելիով և բնութագրվում է որպես նրբերանգով մերձիմաստություն: Դրանք նույն իմաստային դաշտի միջուկին պատկանող միավորներ են (միավորներ, որովհետև այս դիրքում կարող են հանդես գալ բառույթ, շարույթ, դարձվածք, բառակապակցություն, դերբայական դարձված կամ նախադասություն):

Ա - Խնդրում եմ, աղաչում եմ, Միքայել, մի՛ կոտրիր սիրտս: Ես նրան սիրում եմ: Սիրում եմ անչափ: Սա իմ անդրանիկ սերն է: Ես պաշտում եմ նրան: Որ թույլ տա՝ *մոմ կվառեմ նրա առջև*, ծունկ կչոքեմ և կհամբուրեմ այն գետինը, որի վրա ոտք է դնում… (Նար-Դոս, 326): Այստեղ հանդես են եկել կրկնյալին մերձիմաստ տեքստային տարբեր միավորներ և կառույցներ:

4. *Համիմաստ կրկնություններում* հանդես են գալիս համընկնող, ընդհանուր իմույթներով կապված բառեր կամ կառույցներ, որոնք նույն իմաստային դաշտի մերձմիջուկային գոտում են ընդգրկված:

Ա:- Մինչդեռ այն, ինչ որ դու ես քարոզում՝ սոփեստություն է, ստություն է, կեղծիք է, դիմակ է միայն (Նար-Դոս 432):

5. *Հակիմաստ/հականիշ կրկնություններ:* Հականիշ բառերը իմաստային որոշակի ընդհանրությամբ կապված միավորներ են: Նրանք իրենց բովանդակությամբ «նույնի այլն» են և տարբերվում են «ուրիշի այլից»: Նման մեկնաբանությունը բխում է հենց մարդկային լեզվամտածողությունից, քանի որ, ասենք, «բարի» և

«չար» իմաստները բոլոր լեզուներում միավորվում են «բարութուն» հակադրամիասնության մեջ:

Ա:- …Իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք *խավար* են, մենք՝ լոյս, անոնք տգետ են, մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են մենք՝ վարդ, անցան, անցան այն դարերը, ուր մարդկությունը տգիտության օրորոցին մեջ մեյ մը ասդին, մեյ մը անդին կերթար, կուգար… (Հ.Պարոնյան,235-36): Մենախոսության վերջում Հ. Պարոնյանը երեք զույգում փոխում է սկզբունքը և տեքստայնորեն հակադրում ոչ լեզվական հականիշներ՝ փուշ-վարդ /արևելյան քնարերգական իրակությունից/, միս-բանջարեղեն, վարունգ-խնձոր (սննդի իմաստային դաշտերից), որոնք, կարծես, «խոսույթային հանձնարարություն» են ստանում հանդես գալու որպես տեքստային հականիշ:

Ա:- …Համ ախորժելի է, համ անախորժ, համ ծիծաղում ես համ զայրանում, բայց ընդհանրապես գժի պես ուրախ ես զգում քեզ (Նար-Դոս, 422): Այս օրինակում ընդգծված լեզվական հականիշները տեքստում իրենց իմաստային հակադրությունը չեզոքացնում են «գժի պես ուրախ» գերիմաստային միավորի մեջ:

6. *Հարիմաստ կրկնություններն* ունենում են իմաստաբանորեն միմյանց հարող, միմյանց հետ որոշակի կապ ունեցող, իմաստային կամ թեմատիկ դաշտերի եզրային գոտիներում հանդես եկող միավորներ: Այս դասին ենք կարգում տեքստում ժամանակային հաջորդականությամբ, տարածական, պատճառային, հետևանքային կամ այլ հարաբերություններով միմյանց հաջորդող բառերը:

Ա:- Ո՛չ ի ծնունդ յառաջագայիլ,

Եւ ոչ ի լոյս կենաց հասանիլ… (Գ.Նարեկացի,ԲԱՆ Դ: Գ):

Կառույցները լեզվական-բառարանային բովանդակությամբ դրսևորում են իմաստային կապեր, որոնք տեքստում շեշտվում են:

7. *Հեռիմաստ կրկնության* դերում հանդես են գալիս «երևույթի աստիճանական զարգացումը» ներկայացնող, իմաստային հեռավոր աղերսներ ունեցող, լրացականությամբ կամ միմյանց փոխարեն հանդես եկող բառեր, որոնք, շնորհիվ

բանաստեղծի բառազգացողության, բառակիրառման վարպետության և խոսույթի «կապակցող» գործոնների, ստեղծում են իմաստային կրկնության անհերքելի փաստ: Այս հանգամանքի մասին է վկայում Լ. Եզեկյանը՝ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի մի հատվածի օրինակով, որի բայերը ներկայացնում են «երևույթի աստիճանական զարգացում» [Եզեկյան Լ., 2003:365]:

Խոցեցին ու ջնջեցին, Վաթեցին արյուն-արցունք,
Հատեցին հաստ ու բարակ, Ներկեցին ձոր ու բարձունք,
Հոշեցին ու տանջեցին, Քանդեցին երկինք մի լուրթ,
Փշրեցին, տվին կրակ. Մորթեցին մի ժողովուրդ...:

A. (ξεσπάει) Παράτα το... / Ա: - (Պայթելով) Չմոտենա՛ս:

B. (στέκει ακίνητη) /Բ: - (Քարանում է անշարժ):

A. Ούτε να το αγγίζεις! /Ա: - Անգամ մտքովդ չանցնի ձեռք տալ: (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:177):

Կրկնվող լեզվական միավորներից զատ խոսույթում առկա են նաև *քերականական նույն ձևավորումով, նույն տեղում և դերով հանդես եկող երևույթներ, իրադրական գործոններ,* որոնք իրենց հերթին են ուժեղացնում կրկնվող կառույցների տեքստաիմաստային ընդհանրության զգացողությունը: Լեզվի օբյեկտիվ, չափելի երևույթների կողքին հանդես եկող նույնքան օբյեկտիվ, սակայն իմաստային դժվարմեկնելի և անչափելի հարաբերությունները բանաստեղծի և լեզվաբանի ստացած ընդհանուր տպավորության ազդեցությամբ ուժեղանում և ստեղծում են համապատասխան երևույթի իրական զգացողություն և *խոսույթի իմաստային կրկնության փաստ:*

8. *Տարիմաստ կրկնությունները* կրկնյալների և կրկնորդների դերում հանդես են բերում համանուն և հարանուն բառազույգեր: Դրանց ընդհանրությունն արտահայտության պլանում նշույթավորված է, իսկ բովանդակության պլանում՝ ոչ, բացառությամբ հարանուն-հոմանիշների, ինչպես՝ արվեստ - արհեստ, կամար - քամար, գորգ - քուրք, լույս - հույս - հույզ.., և անուշ - անհուշ, նուշ - փուշ, աղտ - ախտ... տեսակի հարանունների, որոնք լեզվի զարգացման պատահականություններից են: Լեզվի տարիմաստ բառույթները խոսույթում ինչ-ինչ իմաստային

ընդհանրություններ են ձեռք բերում: Դրան օժանդակում է հատկապես այն, որ կրկնության եզրերը ասույթի կազմում զբաղեցնում են շարահյուսական նույն անդամի դիրքը, գործառույթը և քերականական ձևավորումը: Այս երևույթը նկատել է Ն.Նորիկը: Նա նշում է, որ արտահայտության կրկնությունը իմաստային կապակցման հնարավորություն է բերում. արտահայտչական նույն եղանակով կրկնվող բառերն ընկալվում են իբրև հոմանիշներ և դասվում նույն կարգում [Norrick N.,1987:251]: Տարբեր լեզուների ոճերին նվիրված աշխատություններում, դասագրքերում և բառարաններում բերված են նման «կրկնություններ» պարունակող բանաստեղծական տեքստեր: Ստորև կներկայացնենք մի քանի օրինակներ՝ վերցված հայերենի ոճագիտությանը նվիրված աշխատություններից [Եզեկյան Լ., 2003, Մելքոնյան Ս., 1984]:

ա/ *Հարանունների մասնակցությամբ կրկնություններն* այս առումով մոտ են համանունների կրկնություններին. թվում է, թե խոսույթի բառային իմաստներն «անհաղորդ» պիտի մնան միմյանց նկատմամբ, բայց արդյո՞ք այդպես է՝

Կյանքից հարբած, անցավոր, Դու վազում ես դեպի մահ…

Ահա կրկին անցավ օր, Մահը բռնում հանցավոր(Հ.Թումանյան, 1:535):

Օրինակում համատեղված են համանունության և հարանունության դեպքեր, որոնցում համատեքստի կապակցող միջոցների ազդեցությամբ իմաստային փոխներթափանցման «շարժումներ» են կատարվում:

բ/ *Համանուն բառերի մասնակցությամբ կրկնություններ:* Միշտ էլ կարելի է պնդել, որ համանուն բառերի կրկնությունը ձևային կրկնություն է և մեղանչած չլինել ճշմարտության դեմ, սակայն համակողմանի վերլուծությունից պարզվում է, որ խոսույթի կապակցող գործոնների ազդեցությամբ դրանք ևս «ձեռք են բերում» տեքստաիմաս-տային ինչ-ինչ աղերսներ, ընդհանրություններ և ստեղծում իմաստների սերտաճման և իմաստային կրկնության հոգեբանական տպավորություն: Իրենց գեղարվեստական հնարամտությամբ շատ պոետներ են կրկնություններ կերտել նման բառերով:

Ա:- Ի՞նչ ես կանչում. կամ թույլ եղիր, կամ արի,

Կամ հեռացիր, ընդմիշտ գնա, կամ արի,

Թե չէ այդպես դու նման ես չփլված,

Բայց ուր որ է գլխիդ թափվող կամարի: (Պ.Սևակ, 1:250):

Համանունների շարքում իմաստային առավել ակտիվությամբ աչքի են ընկնում *բազմիմաստ բառի իմաստային բաղադրիչների օտարումից առաջացած համանունները:* Հայտնի է, որ իմաստային երբեմնի պատմական կապերը մթագնել և չեն գիտակցվում: Սակայն մենք բացահայտել ենք խոսույթի օրինակներ, որոնցում երբեմնի բազմիմաստությունից առաջացած համանունները հանդես են գալիս իբրև կրկնյալ և կրկնորդ և դրսևորում են իմաստային նախկին մերձավորությունը: *Տեքստաիրադրական որոշակի գործոնների ազդեցությամբ այդ համանունների իմաստային օտարվածությունը «նահանջում է» բառի պատմական բազմիմաստական ըմբռնման առջև, նրանցում անթեղված իմաստային կապերը՝ ունկնդրի մտքում կայծակելով, միանում են միմյանց՝ հանդես գալով որպես խոսույթի իմաստային կրկնություն:*

Ա:- Գնացել վարժապետ ու գրող ես դառել, վա՛յ գրողը տանի քեզ, Պատրիկ ջան, գրողը… ինձ էլ քեզ հետ, - ավելացրեց քարտուղարը… /Նար-Դոս,148/:

Ա:- Ո՞վ եք, - բղավեց ներսից մեկը տարօրինակ ձայնով:

Բ:- Ավետի՛ս, աղա, - ասաց ծերունի ժամկոչը ինքը ևս վախեցած այդ միջադեպից:

Ա:- Ի՞նչ, - հարցրեց ճաղատ պարոնը:

Բ:- Ավետի՛ս, - կրկնեց ժամկոչը:

Ա:- Ի՞նչ Ավետիս, ո՞վ է Ավետիսը:

Բ:- Ավետիս անելու ենք եկել, աղա /Նար-Դոս, 135/:

9. *Բազմիմաստ բառի տարբեր իմաստներով կրկնություններ:* Գեղարվեստական տեքստերում կրկնյալի և կրկնորդի դիրքերում հանդիպում են նաև բազմիմաստ բառի բառաիմաստային տարբերակներ: Օրինակ՝

Ա: - Ինչու՞ համար սա մարդուն պատվույն դպար:

Բ:- Ես չը հայհոյեցի:

Գ:- Ինձի վատ և կենդանի ըսելեն ետքը կպնդե, որ կենդանի բառը մարդ կը նշանակե, և այս նշանակութենե կը եզրակացնե, թե ես ալ մարդ եմ:

Ա:- Մարդ բառը չե՞ք ընդունիր, անոր դե՞մ կը բողոքեք:

Գ:- Չէ, մարդ եմ, բայց կենդանի չեմ:

Բ:- Եթե կենդանի չես, ուրեմն մեռած ես (Հ. Պարոնյան:42):

10. *Նախադասության անդամը և նրա զեղչումը որպես իմաստային կրկնություն:*

Նախադասության անդամի կամ որևէ միավորի զեղչումը տեքստի կառուցվածքային կարևոր հատկանիշ է: Այն դադարի փիլիսոփայական կարգի դրսևորումն է խոսքում: Լեզվական նշանի զեղչման հանգամանքը չի խանգարում սույն երևույթը խոսույթում դիտելու որպես իմաստային կրկնություն, քանի որ մեր գիտակցության համար զեղչված միավորը տեքստում շարունակում է իր «գոյությունը»:

Ա:- Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ,

Եթէ պատգամաւոր՝ (տեսանեմ) խստութեան (ակն ունիմ) … (Գ.Նարեկացի,

Բան ԻԳ:Գ):

Ա: - Քանզի ո՞վ ոք ի մարդկանէ մեղաւ եւ ոչ զղջեցավ,

Ո՞վ ոք (ի մարդկանէ) զազրացաւ՝ եւ ոչ ամաչեաց.…(Գ.Նարեկացի,1977:146):

Նարեկացուց վերցված այս օրինակներում «տեսանեմ» և «ակն ունիմ» շարույթները զեղչված են 14 անգամ, իսկ «քանզի» և «ի մարդկանէ» միավորները՝ 37 անգամ, բայց ամեն մի տողում նրանք հիշեցնում են իրենց գոյության մասին՝ «պահանջելով ներկա համարել», որով երևույթը խոսույթում ձեռք է բերում իմաստային պարզ կրկնության արժեք: Ստացվում է այնպես, որ նախադասության գործառութակիր զեղչված անդամը խոսույթում նույնքան լիարժեք է հնչում, որքան չզեղչվածը, որի հետ այն իմաստային կրկնություն է կազմում:

11. *Իմաստային կրկնություններ նույնահիմք գոյականից և բայից:*

Հետևյալ օրինակներում իմաստային կրկնության եզրերի դերում հանդես են գալիս նույնահիմք գոյական և բայ, որոնցում չեզոքացվում է քերականական հակադրությունը:

Ա: - Հա՛: Էդ են ժամանակն էր, որ աղքատն աղքատանում էր, հարուստը հարստանում (Դ. Դեմիրճյան,1: 256):

Ա: - 1838-ին մտավ ճեմարան, ուր ճեմելեն զատ բան չսորվեցավ (Հ.Պար.: 39):

Ա: - Մինչդեռ ես կասեմ, որ այն, ինչ որ դու ես քարոզում, սոփեստություն է, ստություն է, կեղծիք և դիմակ (հմմտ.՝ քո քարոզը սոփեստություն է)(Ն.-Դ.: 432):

A: - Θα γυρίσω. /Ա: - Ես կվերադառնամ:

B: - Περειμένω το γύρισμό σου. / Բ: - Սպասում եմ քո վերադարձին (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:20):

ԱՄՓՈՓՈՒՄ: Գ.Բաբինիոտիսի կողմից կրկնությանը տրված սահմանումը ընդլայնելով խոսույթի կրկնության որոշարկման համար անհրաժեշտ գործոննե-րի լրացուցիչ կազմի ընտրությամբ՝ այս գլխում ներկայացվում է խոսույթի «կրկնություն-գործառույթ» լծորդության աշխատանքային սահմանումը, որն իբրև գործիքակազմ կիրառվում է կրկնության գործառույթների բնութագրման և տիպաբանական դասակարգման մեջ: Որպես այդպիսիք առանձնացվում են միջավայրի տվյալները, հնչերանգը, հաղորդակցմանը նախորդող և հաջորդող տեղեկատվական ներդրումները և շրջասման հնարավորությունը:

Ըստ մեր ուսումնասիրության՝ խոսքում սերված կրկնությունների գործառույթ-ները լեզվի մակարդակներում սերված խոսույթային կրկնությունների համեմա-տությամբ ավելի մեծ կախվածություն են ցուցաբերում խոսքին ուղեկցող միջավայրային, արտալեզվական հանգամանքներից և կրկնության ներքին ու արտաքին հատկանիշներից, որոնք սովորաբար նկատելի չեն: Այդ պատճառով կրկնության միջատարածքը, ձևերը, կրկնվելու «պատիկությունը» և նրա բերած տեղեկատվությունը ևս մանրամասնորեն ուսումնասիրել ենք, քանի որ դիտել ենք որպես «կրկնություն-գործառույթ» լծորդության դասակարգման տվյալներ:

Մենք որոշակի ընդհանրություն տեսանք որոշ կրկնությունների և «տրամա-բանական սիլոգիզմ»-ի կառուցվածքների միջև, այն տարբերությամբ, որ երկխո-սության կազմում սիլոգիզմի եռամիասնությունից առկա են դրույթը և հակադրույթը: Համադրույթը խորքային-միջուկային է, մակերեսային նշույթավո-րում չունի, բայց *գիտակցվում է բաղադրիչների ներքին կապի, խոսողի փորձի, ասույթի միջուկային կառույցի կամ այլ գործոնների վերլուծության շնորհիվ, որոնք խոսքում տրված չեն*:

Իմաստային կրկնությունների ուսումնասիրությունները ներկայացրել ենք այս գլխում, քանի որ դրանք, այլ գործառույթներ չկատարելով, օգնում են այն կրկնության գործառույթների մեկնաբանմանը, որոնց կազմում հանդես են գալիս: Իմաստային կրկնություններն այստեղ քննարկվում են ավանդական լեզվաբանության համար «չափից» ավելի ընդարձակ շրջանակում՝ կրկնության բաղադրիչային վերլուծության մեկնաբանման նոր լույսի տակ:

Այս ամենից հետո տեքստի լեզվաբանության և հարակից գիտությունների առումով մեզ համար գործնական լրացուցիչ խնդիրներ են առաջանում պարզելու, թե ի՞նչ նպատակների է ծառայում կրկնությունը, որո՞նք են նրա կենսունակության և բազմաձևության պատճառները, ինչպիսի՞ն է կրկնության վերաբերությունը ամենօրյա խոսքի կառուցման կարիքներին, որո՞նք են նրա ձևերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽՈՍՈՒՅԹԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

3.1. ՇԵՇՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է, որ կրկնությունների համար ամենահիմնականը, ճանաչվածը և ուսումնասիրվածը ասվածի շեշտման գործառույթն է [Frederic M, 1985:60-61]: Ինչպես նշում է Գ. Պերսընը [Persson G., 1974:158, տե՛ս նաև Brody J., 1986: 256], «Տվյալն ավելի ակնհայտ է դառնում, եթե կրկնվում է, անկախ նրանից, թե որն է կրկնության «նպատակադրումը կամ վերջնական արդյունքը»: Իսկ «կրկնությունը շեշտելու ամենահեշտ» միջոցն է [Κακριδης Ι., 1976:82]: Եթե խոսողը կրկնությունը կատարում է համապատասխան շեշտումով, ապա կոնկրետ խնդրի վրա ուշադրություն հրավիրելու համար այլևս լեզվական կամ հարալեզվական այլ միջոցների դիմելու կարիք չունի: Է. Աթայանը համարում է, որ շեշտումը սուբյեկտի օբյեկտիվացումն է, որը շատ ավելի ցայտուն է դառնում հաղորդակցության ընթացքում: «Հաղորդակցման սկիզբը՝ խոսողը, գոյաբանորեն /իբրև սկիզբ/ «էություն է», ավարտը՝ լսողը (իբրև ավարտ)՝ «երևույթ»: Բայց իմացաբանորեն էությունը լսողն է, որը պայմանավորում է հաղորդակցման գոյը, նրա առկայությունն ու որոշակիությունը» [Է.Աթայան, 1:165]: Այսպիսով, կրկնության մեջ շեշտումը խոսքի որևէ տվյալն ավելի ակնհայտ դարձնելու միջոցն է, որի դերում հանդես է գալիս տվյալի կրկնումը խոսողի կամ ունկնդրի կողմից:

Գրականության մեջ շեշտումը հանդիպում է բազմաթիվ անուններով՝ պրոյեկցիա, ներդրում, շեշտում, ընդգծում, սաստկացում, ավելացում, հիացում, պնդում, ուժգնացում և այլն: Ատենախոսության մեջ մենք նախընտրում ենք «ներդրման շեշտում» եզրը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու նրա հզոր և թույլ աստիճանները, ինչպես նաև պարզ ցուցանիշերը՝ այո, ո՛չ, իհարկե, հարկավ և այլն, որոնք առավել կապված են եղածի գնահատման հետ:

Α: - Ο Καραιιήτσος τα βγάζει αυτά Κώστα. Ο Καραμήτσος! / Ա: - Կառամի՛ցոսն է այն արտադրում, Կո՛ստա: Կառամի՛ցոսը (Κεχαϊδης Δ./Դ.Կեխաիդիս, 1980:42):

1. *Շեշտման գործառույթով կրկնության արտահայտության ձևերը:* Վերլուծության այս հատվածում նախ տեսնենք, թե ինչ տեսք ունի կրկնյալը, այնուհետև՝ թե ինչ

տեսք է ստանում կրկնորդը: Մեզ հետաքրքրում է, թե կրկնյալի ո՞ր տվյալները և որքա՞ն են կրկնվում: Մյուս կողմից՝ մեզ հետաքրքրում է, թե կրկնյալի ինքնության պահպանման առումով որքանով է կրկնորդը համապատասխանում նրա ձևի, գոյության, տարածության և այլ չափանիշներին: Ձևի տակ նկատի ունենք եզրի հնչերանգային տեսակը՝ պատմողական, հրամայական, հարցական, բացականչական:

Ա կողմի արտահայտության ձևերը: Հետազոտության ամբողջականության նպատակով սկսում ենք նախադասության դասական բնութագրից, որտեղ կրկնությամբ կատարված ներդրումը շեշտելու դեպքում ունենում ենք հնչերանգային բոլոր 4 տեսակները՝ թե՛ հաստատական և թե՛ ժխտական ձևերով:

- Ժխտական կրկնյալներ՝

Ա:- Դա ուրիշ բան է, ասաց Գրիգոր եղբայրս, - դու Սամսոնը չես:

Բ:- Չե՞մ, - ասացի ես: - Դու ի՞նչ գիտես, որ չեմ: Իսկ ինչու՞ չեմ, ինչու՞ ես այդպես կարծում (Վ.Սարոյան, 1:81):

- Հրամայական կրկնյալներ՝

Ա:- Մի՛ դիպչիր ինձ…

Բ:- Չեմ դիպչի…

Ա:- Ազա՛տ թող ինձ…

Բ:- Ահա՛, ազատ: Դե՛…

Ա:- Ո՛չ. Բոլորովի՛ն ազատ թող, ավելի՛…(Դ. Դեմիրճյան, 141):

Հարցական կրկնյալներ՝

Ա:- Ի՞նչն եմ սխալ անում:

Բ.:- Ամեն ինչը: Դու երբևէ ձուկ բռնե՞լ ես (Վ.Սարոյան,296):

- Բացականչական կրկնյալներ՝

Ա:- Ամեն տեղ կռի՜վ, կեղծությու՜ն, խաբեբայությու՜ն …/Դ.Դեմիրճյան, 2:12/:

Ջ.Սիրլը [Searle J.,1976:18] ներկայացնում է Ա կողմի կատարած կրկնության բառային գործողությունների արտահայտության վրա հիմնված 5 տեսակ՝

նկարագրական, ուղղության, արտահայտող, հայտարարող և պատճառական, որոնք բոլորն էլ հանդիպում են մեր օրինակներում:

- *Նկարագրական գործողություն՝* Ա: - Ինչ ո՛ւտ եմ դրել էս տունը, ո՛չ մի լավ օր չեմ տեսել, միշտ ծե՛ծ ու հայհոյանք, միշտ հայհոյա՛նք ու ծեծ /ՇԵՇՏՈՒՄ ԵՄ, որ այս տանը միշտ ծեծ ու հայհոյանք եմ տեսել (Նար-Դոս, 53):

- *Ուղղության գործողություն*՝ Ա: - Նե՛րս անցիր, քա՛ջ, նե՛րս անցիր, (ՇԵՇՏՈՒՄ ԵՄ, որ դու՝ քաջդ, անցնես ներս) (Նար-Դոս, 551):

- Արտահայտիչ գործողություն՝ Ա: - Մարդկայնությու՛ն, խորի՛ն մարդկայնություն: Մարդկայնությու՛ն տվեք…(Դ.Դեմիրճյան, 573):

- *Հայտարարող գործողություն*՝ Ա:- Կանիծե՛մ և կլռեմ: Կանիծե՛մ և կլռեմ: Կանիծե՛մ և կլռեմ (Արցախի դեպքերի կապակցությամբ Հայոց վեհափառ հայրապետ Վազգեն Առաջինի ելույթից): Այս օրինակում կրկնության բերած ներդրումը շեշտվում է ծիսական խոսքի յուրահատկություններով:

- *Պատճառական գործողություն*՝ Ա: - Ի՞նչը, ի՞նչն եմ սխալ անում:

Բ: - Առանձնապես ոչինչը: Դու ուղղակի կարծում ես, թե ձուկը մեքենա է, ինչպես ուզենաս՝ այնպես էլ կբռնես (Վ.Սարոյան, 1:296):

Կարծում ենք, որ վերը նշված բոլոր դեպքերում ներդրումը և նրա շեշտումն ի հայտ են գալիս հնչերանգի միջոցով իրականացվող բառային գործողության (ներգործող գործառույթ) և ոչ թե նախադասության բովանդակության շնորհիվ (տեղեկատվություն): Ջ.Սիրլը [Searle J., 1976:23] հարցական հնչերանգով արտահայտված ուղղության կարգերը դասում է հարցման արտահայտության խմբին. նման կրկնություններ մեր նյութում շատ են հանդիպում, ուստի մենք տարբերակել ենք երկու դեպք: Առաջինը որոշակի տոնայնությամբ արտահայտված խնդրանքի կրկնությունն է խոսողի նույն ներդրման մեջ: Երկրորդ դեպքում՝ խնդրանքի կրկնությունը կատարվում է հաջորդող ներդրում-ներում, որտեղ նրա շեշտումը դառնում է ավելի նկատելի, իսկ խնդրանքը փոխվում է պահանջի: Սա այն դեպքն է, երբ խոսողը նկատում է ունկնդրի չլսելը, ուստի, իր ասածը կրկնելու կարիք զգալով, հարալեզվական ցուցիչների միջոցով սաստկացնում է պատումի բառային ազդեցության ուժը՝ այդ դեպքում խնդրան-

քը փոխելով հրահանգի կամ հրամանի: Օրինակում բառային ազդեցությունն ուժեղացվում է «ՇՈՒՏ» բառով:

A:- Άντε άνοιζε, εγώ πάω να σαπουνίσω λίγο τα χέρια μου. / Ա:- Դե՛ բացիր, գնում եմ ձեռքերս լվանամ:

B: - Ποιος νά 'ναι... / Բ: - Ո՞վ պետք է լինի...

A: - Άντε άνοιζε! Ա:- Դե՛ շուտ, բա՛ց արա (Χασαπάδης Γ. /Գ.Խասապադիս, 1986:24):

Բ կողմի արտահայտության ձևերը: Ներդրում շեշտող կրկնության համար ավելի էական են Բ կողմի սերած կրկնությունները. դրանք են՝

ա/ *Անփոփոխ կրկնություն*

A: - Πώς πάμε, τελειόνουμε; / Ա:- Ինչպե՞ս ենք, ավարտու՞մ ենք:

B: - Τελειόνουμε, τελειόνουμε. /Բ:- Ավարտում ենք, ավարտում ենք (Καμπανέλλης Γ./Յ.Կաբանելիս, 1982:171):

Որոշակի դեպքերում հանդիպում են չշեշտված, պարզ ներդրումներ, /այո, ոչ, իհարկե/: Բնական է, որ խոսույթում նրանց առկայությունն ավելի նկատելի է:

բ/ *Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություն:* Այստեղ շատ են բառիմաստային կրկնությունները, որոնք գործում են հետևողականորեն՝

Բ:- Ամբոխը իր աղոթքի հետ էր: Որը լալիս էր, որը գանգատվում, որն էլ աղերսում էր բարձրաձայն: (Դ.Դեմիրճյան, 2:23):

A: - Μη φωνάζεις! Θα τρελαθώ. Πέτρο. Θα μου στριψει! /Բ: - Մի՛ բղավիր: Կգժվեմ, Պեդրո: Կկատաղեմ: (Σκούρτης Γ. /Գ.Սկուրտիս, 1982: 45):

A : - Πνίγουαι! (Πιάνει το λαιμό της). Η ανάσα μου! (Σπαράζει). Πνίγομαι! Πνίγομαι! Πνίγομαι! /Ա: - Խեղդվու՛մ եմ... /Բռնում է կոկորդը/: Շու՛նչս...(Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978: 89):

գ/ *Տվյալների հավելումով կրկնություն*

Բ: - Սանձ դրվի ըսի, բայց չըսի թե սանձ դրվելեն ետքը կառքերու լծվին (Հ.Պարոնյան:27):

Ա:- Դա տխուր է: Շատ տխուր բան է, - նույն տոնով ասաց գնդապետը՝ ուշադիր

զննելով քարտեզը (Դ.Դեմիրճյան 216):

Α: - Πολύ όμορφη. Πάρα πολύ όμορφη! / Բ:- Գեղեցիկ է, շատ է գեղեցիկ (Σκούρτης Γ. /Գ.Սկուրտիս, 1982:23):

Α: - Χάσατε. / Ա: - Տարվեցիք: Β: 'Εχασα; Και τώρα; Բ:- Տարվեցի՞ և հիմա ի՞նչ (Μουρσέλας Κ. /Մուրսելաս Կ., 1984:38):

դ/ Տվյալների հանումով կրկնություն

Բ: - Ձեռքերս կապել եք և հարցնում եք՝ վախենու՞մ եմ: Վախենու՞մ.../Ն.-Դ.:481/:

Α: - Πρέπει να κρατηθώ όμως... Πρέπει να κρατηθώ. / Ա: - Ի՞նչ արած, պետք է դիմանամ... Պետք է դիմանամ (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:50):

Α: - Για όλα φταίει η κακιά η ώρα. /Ա: - Ամեն ինչում սխալ պահն էր պատճառը:

Β: - (πικρά)'. Η κακιά η ώρα. /Բ: - Սխալ պահը (Ευθημιδιάδης Μ. / Մ.Էվթիմիդիադիս, 1981:52):

Սովորաբար կառույցի վերջին հատվածը շեշտված կրկնելով՝ խոսողը ուշադրություն է հրավիրում կոնկրետ տվյալի վրա, հեշտացնում է նրա գործառույթի ճանաչումը /Տես՝ նաև Գ.Պերսըն/ [Persson G., 1974:57, 62, 84, 97-103, 109]):

ե/ *Խառը կամ բարդ կրկնություն*

Ա:- Ես հիմա ոչինչ չեմ անիլ...ոչինչ չեմ կարող անել, դժբախտաբար, - ասաց վերջապես Նասիբյանը ծանր շնչելով (Նար-Դոս 551):

2. *Շեշտման գործառույթով կրկնության սերումը նույն կամ այլ խոսողի կողմից, միջատարածք:* Շեշտող կրկնությունը հիմնականում հանդիպում է նույն խոսողի խոսքում: Այն գործում է որպես որևէ կենտրոնական թեմայի ընդգծման միջոց: Կարծում ենք՝ նրանց դերը ավելի տեքստային է և արտահայտում է խոսակցի վերաբերմունքը ամբողջ տեքստի կամ նրա իրադարձությունների նկատմամբ: Սա, ըստ Դ. Թաննենի, խոսակցի ուշադրությունը բևեռող տեսակ է [Tannen D., 1983:363], ըստ Ս.Շեֆերդի [Shepherd S., 1985:537, 540-541] և Ն.Նորիկի [Norrick N., 1987:257-259], նաև ներքին գնահատման միջոց, երբեմն հիմնական թեմայի կրկնություն, որն իրագործվում է խոսողի հույզերով, ասույթի շարահյուսական միջոցներով կամ իրադարձություններով: Իսկ արտաքին գնահատման

դեպքում խոսողը ունկնդրին խոսույթի նպատակը հայտնում է «դրսից» (օրինակ՝ առակս զինչ ցուցանե):

3.*Շեշտման գործառույթով կրկնության Ճանաչման չափանիշները:* Շեշտող կրկնությունը կրկնյալի կամ նրա մի տվյալը ներդնելու համար կարող է ճանաչվել «ՇԵՇՏՈՒՄ ԵՄ» բայով, քանի որ խոսողը ունկնդրի ուշադրությունը բևեռում է՝ «Շեշտում եմ, որ Ա»՝ Ա-ն նախադասության մեջ կրկնվող արտահայտությունն է:

Ա: - «Թե ի՞նչն եմ ատում, չգիտեմ, բայց զգում եմ, որ տղաների այսօրվա արածն եմ ատում: Դա եմ ատում: Այ, հենց դա է, որ ես ատում եմ» (ԿՐԿՆՈՒՄ ՈՒ ՇԵՇՏՈՒՄ ԵՄ, ՈՐ տղաների այսօրվա արածը ատում եմ /Վ.Սարոյան,1:73):

Ա: - Դե, ասե՛ք, կարո՞ղ եք: Կարո՞ղ եք ինձ այնպես խուզել, որ այլևս երկար ժամանակ մազերիս մասին խոսք չլինի /ՇԵՇՏՈՒՄ ԵՄ՝ խուզեք մազերս երկար ժամանակի համար/:

Ա: - Սուրճ, - ասաց վարսավիրը, - նախ մի-մի կում սուրճ խմենք (ՇԵՇՏՈՒՄ ԵՄ, որ նախ սուրճ խմենք/ Վ.Սարոյան, 1:83): Զայնարկությունները և հնչյունական գերհատույ-թային միավորները առավել զգալի են դարձնում շեշտման գործառույթը.

Ա: - «Վա՛յ, վա՛յ, բացականչեց Բաղիրյանը, - տեսա՞ք ինչ է պատահել, էդ հո ամեն բան քանդվեց, կործանվեց, վերջացավ, գնաց մու՛թ խավա՛ր տարտարոս…» (Նար-Դոս: 315):

Ըստ Ա. Ձարձանոսի՝ «Հա, հա՞, հը, ա՛յ, վա՛յ և այլն», ձայնարկությունները՝ որպես հարալեզվական ցուցիչներ խոսակցի ուշադրությունը իրենց հնչերանգով կենտրոնացնում են խոսողի խնդրանքի, հաստատման կամ մեղադրանքի վրա [Τζαρτζανος Α., 1963:143-145]: Հաճախ նման դերակատարությամբ հանդես է գալիս նաև կոչական բառը իր շեշտով: Հաջորդ օրինակում ուշադրություն է գրավում բառային միավորը, որը հարցական հնչերանգի և լարված իրադրութ-յան պայմաններում կորցնում է բառիմաստը, քանի որ իրականում ունկնդրին խանգարող աղմուկ չկա:

Α: - Απ’ τα χέρια σου, βρε, τ’ ακούς; Απ’ τα χέρια σου. / Ա: - Քո ձեռքերից, լսու՞մ ես: Քո ձեռքերից /Ευθιμιδιάδης Μ. /Մ.Էվթիմիդիադիս, 1981:84/: Այստեղ

«լսու՛մ ես»-ը նշանակում է՝ «Ուշադրությու՛ն, ՇԵՇՏՈՒՄ ԵՄ՝ քո ձեռքերից, այսինքն՝ հարցական հնչերանգի և լարված իրադրության պայմաններում բայը իմաստազրկվում է: Շեշտման նպատակը կարող է սատարվել նաև այլ բայերի և արտահայտությունների միջոցով /քեզ եմ ասում, տես՝ ինչ եմ ասում, կրկնում եմ, ի՛նձ նայիր և այլն/:

A: - (ξαφνικά θυμώνει. Κοφτά): Δεν περάσαμε ωραία. / Ա: - /Հանկարծակի բարկանում է: Կտրուկ/ - Լավ ժամանակ չանցկացրինք:

B: - (ευτυχισμένο χαμόγελο): Εγώ πέρασα ωραία. / Բ: - /Երջանիկ ժպիտով/ - Ես լա՛վ ժամանակ անցկացրի:

A: - (θυμωμένος) Σου λέω πως δεν πέρασαμε ωραία. / Ա: - / Բարկացած/ - Քեզ ասում եմ՝ լավ ժամանակ չանցկացրինք (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986-30-31):

A: - Πέτρο, σύνελθε! Σύνελθε, σου λέω!/ Ա: - Պե՛դրո, ուշքի՛ արի: Ուշքի՛ արի, ասում եմ քեզ (Σκούρτης Γ./ Գ. Սկուրտիս, 1982:33):

4. *Շեշտման գործառույթով կրկնության Խոսող-խոսակից-հաղորդում կապը:* Շեշտող կրկնությունը խոսողի նպատակադրման արդյունքն է: Խոսողը ներդրում շեշտող կրկնությամբ արտահայտում է մի գործառույթ, որը նրա համար ունկնդրին միտված ներքին կազմակերպման միջոց է. «Սա կարևոր եմ համարում, ուստի ցանկանում եմ ՇԵՇՏԵԼ հետևյալը»: Լեզվի կառույցները կրկնվելով արտահայտում են խոսողի կանխատեսումը, որի վերաբերյալ ունկնդիրը ստանում է որոշակի արձագանք:

5. *Շեշտման գործառույթով կրկնության կապը տեղեկատվության հետ:* Ներդրումը շեշտող կրկնությունը լեզվական որևէ իմաստ չի բերում հաղորդակցության ծիր, նրա տեղեկատվությունը ներգործական է: Այսինքն՝ կրկնությունը իր ներդրումը շեշտում է որպես հետհաղորդակցական նշան: Եթե խոսողը տեքստ ներմուծի նոր տեղեկատվություն չբերող անիմաստ կրկնություն-ներ, ունկնդիրը կհամարի, որ նա չի կամենում համագործակցել զրույցին: Հենվելով հաղորդման արտալեզվական և լեզվական իրադրությանը՝ ունկնդիրն ընկալում է ասվածի մի կոնկրետ մասը միայն՝ խոսողի շեշտած տվյալները [Leech G., 1966:129, Bonhomme M., 2005:75]: Արտահայտության մի մասի

կրկնումը դառնում է կառույցի նոր տվյալ: Ներդրում շեշտող կրկնությունը վերաբերում է ասույթի ռեմային ոչ թե թեմային: Դրանով ունկնդրի ուշադրությունը բևեռվում է նոր տեղեկատվություն ներկայացնող որևէ ներդրման վրա: Մյուս կողմից՝ կրկնության մեջ խոսողն է հստակորեն տեսնում նոր տեղեկատվությունը: Ներդրումը շեշտելու համար կրկնյալի գլխավոր իմաստը հաճախ դրվում է կառույցի վերջում, ինչպես պնդում են նախադասության գործառույթների [Beaugrande R., Dressler W., 1981:20] և խոսքի տեղեկատվության [Brown G., Yule G., 1983:263] տեսությունները և ինչպես պարզվում է մեր օրինակներից: Տեղեկատվությունն աճում է կառույցի վերջում, ուր կրկնությունը նոր տեղեկություն կամ մեկնաբանություն է ներառում [Beaugrande R., Dressler W.,1981:75]:

Ա: - "Մարդ ինչքա՞ն լավը կարող է լինել: Եթե ոչ մեկին վնաս չես տալիս ու չես ուզում տալ. էլ հնարավո՞ր է դրանից լավը լինել' (Վ. Սարոյան. 3:165): Այս օրինակում ներդրման շեշտումն ուժեղանում է նաև «հնարավո՞ր է» արտահայտությամբ, որը շեշտման գործառույթին օժանդակող տվյալ է:

Պահանջի, մտապահման և բավականության իմաստի ներդրման երկրորդական գործառույթներ: Կրկնության այս գործառույթների քննությունը զետեղել ենք նույն բաժնում. նրանք նույնպես արտահայտվում են շեշտման ներդրումով, թեև այլ իմաստով:

ա/ *Պահանջ արտահայտող կրկնության օրինակներում* հանդիպում ենք նաև համոզման երևույթին: Երբ հարմար չէ ճնշում գործադրել, ապա խոսակցին ոչ թե հրամայում, այլ խնդրում, համոզում են ինչ-որ բան անել: Այս դեպքում պահանջը, բնականաբար, ունենում է թույլ շեշտվածություն, որն արտահայտվում է հիմնավորող որևէ փաստարկով:

A: - Έλα δω... / Ա: - Արի' այստեղ...

B: - Έχω δουλειά τώρα, άμα γυρίσω. /Բ: - Գործ ունեմ, վերջացնեմ՝ կգամ:

A: - Έλα δω. θέλω να σου μιλήσω. Ա: - Արի այստեղ, հետդ խոսելիք ունեմ (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:104):

Առանձին դեպքերում համոզելու նպատակ ունեցող կրկնությունները ուղղորդող պարտադրանք չեն ունենում:

Α: - Άλλη μια στεναχώρια κι άντε γειά. Τέξα ο Βούλης. Νεκρός κι αποθαμένος. Πτώμα, ουφ. /Ա: - ԵՎս մեկ հուզմունք և ցտեսությու՛ն: Վուլիսը էլ չի լինի: Մահացել է, դիակ է... ու՛ֆ... (Ευθιμιδιάδης Μ./ Մ.Էվթիմիդիադիս, 1981:85):

բ/ *Մտապահման կրկնություններ:* Ըստ Ու.Օնգի [Ong W., 1981:22]՝ բանավոր հիշողությունը հիմնված չէ բառ առ բառ կրկնության վրա: Կրկնության միջոցով մտապահում են ոչ այնքան առանձին բառերը, որքան նրանց հետ կապված զուգորդումները: Այն թեմատիկ է և հաճախ հենվում է կարծրատիպային արտահայտությունների վրա: Գիտելիքի մտապահման գործում կրկնության դերը վաղուց հայտնի է բանավոր հաղորդակցման մեջ, պոեզիայում, գովազդում, ինչպես նաև դասավանդման գործում (Persson G.,1974:295): Այս պարագայում օժանդակող դերով հանդես են գալիս «լսու՛մ ես» թեմայով բառերը՝ հիշի՛ր, լա՛վ հիշիր, չմոռանա՛ս, տես՝ չմոռանա՛ս, տեսեք, հետո հարցնելու եմ, սա ձեզ պետք է գալու, ես սա ձեզ էլի եմ ասել, էլ չեմ ասելու և այլն: Նման արտահայտություններով հարուստ է հատկապես մանկավարժական խոսույթը: Համարվում է, որ ավանդույթներում և դասական քնարերգության մեջ բանավոր կրկնվող սխեմաները և հատկապես զուգահեռույթը հարուստ են «մտապահում ապահովող» գործոններով, որոնք շատ կարևոր են դյուցազներգության, ծիսական տեքստերի, գովազդի համար [Toporov V., 1978:96, Sherzer D., 1994:73, Brody J.,1986: 258]: Սովորական բանավոր խոսքում մտապահումը միշտ էլ իրագործվում է կրկնության միջոցով [Brown G., Yule G.,1983:13]: Գովազդի մեջ կրկնությունն օգտագործվում է հանրային հիշողության և գիտակցության վրա ազդելու նպատակով (արտադրանքի որակի և նրա լավագույնը լինելու տվյալների մտապահման հրահանգների կրկնություն):

գ/ *Բավականության իմույթի արտահայտման գործառույթ* ունեն որոշ շեշտված կրկնություններ, ուր խոսողը հաճույք է զգում որոշ տվյալների արտաբերումից:

Α: Λέω να τον βγάλουμε Στρατηλάτη... Το γυιό. (το όνομα για να το ακούσει κι ο ίδιος). Στρα-τηλάτης!! /Ա:- Ասում եմ՝ անունը Ստրատիլատիս դնենք.../կրկնում է անունը, որ փոքրիկն էլ լսի/ Ս տ ր ա -տ ի- լ ա՛- տ ի ս (Κεχαϊδης Δ. /Դ.Կեխաիդիս, 1978:43):

Ա: - Սիրո՛ մասին գրիր, - ասաց, - միակ կարևոր բանը սե՛րն է:...Անվերջ սիրուց պատմիր (Վ. Սարոյան, 3:176): Խոսողի հույզերի այս կրկնությունները ուղղված են ունկնդրին և, շեշտը կենտրոնացնելով խոսքային հաղորդակցման վրա, կապվում են նրա գործառույթների հետ: Շատերն են նշում, որ հատկապես 2-3 տարեկան երեխայի խոսքում հանդիպում ենք հնչյունային, բառային, կամ այլ կրկնությունների, որոնց նպատակը միայն բավականություն պատճառելն է [Garvey C., 1977, Keenan E., 1977, Bennet-Kastor T., 1994, ΝΑΚΑΣ Θ., 1997]: Կրկնության «բավականություն» գործառույթը որպես ներդրում կապվում է նաև հումորի հետ:

Ա:- Տասը հատն /գրքույկ/ ի՞նչ ընեմ:

Բ:- Տասը հա՞տն: Կշտանալով կկարդաք (Հ.Պարոնյան 267):

3.2. ՀՈՒԶԱԿԱՆ ԼԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հուզական լարվածություն արտահայտող կրկնությունները մենք առանձնացնում ենք որպես կրկնության մի նոր և առանձին տեսակ, որը հանդիպում է շեշտման ընդհանուր կարգում, բայց տարբերակվում է ըստ իմացական և հուզական շեշտման հատկանիշների [Leech G., 1966:129, Persson G., 1974:15,17,50, Norrick N., 1987:254, Νακας Θ., 1996բ:231]: Խոսողի մոտ հուզական կրկնություններն ի հայտ են գալիս որպես զգայական բռնկում ու, եթե անգամ օժտված են որևէ շեշտով, ապա ցածր ներունակության պատճառով հնարավոր չէ շրջասել “շեշտում եմ’ բայով: Մեր կողմից այս տեսակի առանձնացման հիմնական պատճառը հենց դա է:

Α: - (Κάνει βόλτες νευρικές) Φτου σου, διάβολε! Φτου σου, διάβολε! Φτου σου,διάβολε!...

Ա: - /Նյարդայնացած քայլելով/ Թու՛ քեզ, սատանա: Թու՛ քեզ, սատանա: Թու՛ քեզ, սատանա (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:43):

Α: Πατέρα! Συγνώμη! Συγνώμη! /Ա:- Հա՛յր իմ: Կներե՛ս: Կներե՛ս: (Ματέσης Π./ Պ.Մատեսիս, 1982:80):

Այսպիսով, հուզական կրկնությունները խոսքի պահին խոսողի մոտ տեղի ունեցած զգայական բռնկման արդյունքն են, որի ընթացքում խուռն զգացում-

ները խոսողին դրդում են կրկնելու կառույցը, գուցե այդ պահին մի այլ, համարժեք արտահայտություն չգտնելու պատճառով: Դրա հետևանքով զգացմունքը ելք է փնտրում՝ անցնելով խոսքի սահմանափակող նեղ խողովակով:

1. *Հուզական լարման գործառույթով կրկնության ձևերը:* Այս կրկնությունը սովորաբար ձևավորվում է որպես բացականչություն [Σετατος Μ.,1993:392, Bussman H., 1983], ներկայանում է շեշտված առոգանությամբ և նշանային տարբեր համակարգերի պատկանող այլ տվյալներով: Նրա երկու եզրերն էլ կարճ են, հաճախ բաղկացած սեղմ արտա-հայտություններից [Watt W.,1968:121-122, Frndnric M., 1985:44], որոնք երբեմն կրկնվում են՝ առանց փոփոխվելու [Grimes J., 1972:522, Watt W., 1968:121]:

Ա Կողմի արտահայտության ձևերը:

ա/ *Ներկայացուցչական արտահայտություններ*՝ Ա: - Վառվեցե՛ք, մոխի՛ր դարձեք, դուք

շատ եք այրել իմ սիրտը (Շիրվանզադե,179):

բ/ *պարտավորական արտահայտություններ*

Ա:- Դասախոսը, ուսանողը և ուսումնաօժանդակ կազմը կրթության սուբյեկտներ են (Բոլոնիայի փաստաթղթերից):

գ/ Հուզական արտահայտություններ

Ա: - Հայրն այրե՜ց իր աղջկա պատիվը: Ա՜հ, կորավ ամեն ինչ (Շիրվանզադե, 191):

Բ Կողմի արտահայտության ձևերը: Հուզականություն արտահայտող կրկնությունների մեջ ամենահաճախ հանդիպող ձևը անփոփոխ կրկնությունն է:

ա/ *Անփոփոխ կրկնություն:*

Ա: - Ների՜ր...

Բ: - Ներելու իրավունք չունիմ... Ներելու իրավունք չունիմ /Նար-Դոս,582/:

Α: - [...] (Σε απόγνωση): Τι θα κάνω γω τώρα: Τι θα κάνω γω τώρα: Τι θα κάνω γω τώρα; /Ա: - /անորոշության մեջ/ Ի՞նչ եմ անելու հիմա: Ի՞նչ եմ անելու հիմա: Ի՞նչ եմ անելու հիմա... (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1979:45):

բ/ *Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություն*

A: Σκοτώθηκε. / Ա:- Մահացա՛վ:

B: Τον σκοτώσανε. / Բ: - Նրան սպանեցի՛ն /Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:178/:

A: Τι έπαθες; /Ա:- Քեզ ի՞նչ եղավ:

B: Π ν ί γ ο υ α ι! (Πιάνει το λαιμό της). Η ανάσα μου! Πνίγομαι! Πνίγομαι! Πνίγομαι!/Բ: Խեղդվու՛մ եմ:.../Բռնում է կոկորդը/: Շու՛նչս... (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978: 89):

գ/ *Տվյալների հավելումով կրկնություն:*

Բ:- Չե ‘մ ուզում: Լսու՞մ ես, չեմ ուզում: Ազատի՛ր ինձ քո հոգածությունից...Խնդրում եմ, ազատի՛ր, աղաչու՛մ եմ, ազատի՛ր (Նար-Դոս, 541):

A: - Ωχ ρε μαμά... άργισες πάλι τη δίαιτα... Άργισες πάλι τη δίαιτα... Και τι θα φάω εγώ τώρα; / Ա:- Վա՛յ, մայրի՛կ, դու նորի՛ց դիետայի անցար... Դու նորի՛ց դիետայի անցար... Իսկ ես ի՞նչ եմ ուտելու (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:48):

դ/ Տվյալների հանումով կրկնություն:

Ա:- Ինչու՞ միջամտեցիք: Ինչու՞ (Նար - Դոս, 545):

A: Κι η Μερόπη βρισκόταν στην Πρέβεζα! Στην Πρέβεζα. / Ա:- Մերոպին էլ էր Պրեվեզայում: Պրեվե՛զայում էր (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1979:36):

ե/ Խառը կամ բարդ կրկնություն:

A: - Και μην τολμήσετε να ξαναπατήσετε το πόδι σας εδώ μέσα! Να μη σας ξαναδώ μπροστά μου! Καθάρματα!... Καθάριατα!...(Ο Α [μόνος πια] αρχίζει να μαζεύει το «αρχείο απ’ το πάτωμά). Καθάρματα!... Καθάρματα!... Ա: - ԵՎ չհամարձակվեք կրկին ոտք դնել այստեղ: Այլևս չտեսնեմ ձեզ իմ առջև /դուռը հրելով փակում է /: - Կեղտոտնե՛ր... Կեղտոտնե՛ր... /Թղթերը հատակից հավաքելով /: - Կեղտոտնե՛ր... Կեղտոտնե՛ր... (Ματέσης Π./ Պ.Մատեսիս, 1982:80):

2. *Խոսողի հուզական լարումը շեշտող կրկնությունը* դրսևորվում է խոսողի հույզի պոռթկումից: Այն արտահայտվում է նույն ներդրման մեջ, կամ այն

ներդրումներում, որոնք շատ հեռու չեն կրկնության Ա եզրից, որովհետև սերված են նույն հուզականությունից:

Ա:- Դու սու՛տ ես ասում, քեզ ո՛չ մի ծննդկանի մոտ էլ չեն տարել, այլ դու եղել ես այն պարոնի մոտ և նրա մոտ էլ ճաշել...Ինձ չե՛ս կարող խաբել..

Բ:-Խե՛ղճ իմ գլուխ: Ոտներս դողում են վախից, - ասաց Հեղինեն ծիծաղելով:

Ա:-Ինձ չե՛ս խաբի:Ես ամե՛ն բան գիտեմ,ամե՛ն բան...Ինձ չե՛ս խաբի(Ն.-Դ.:550):

Բերված օրինակում խոսողների մուտքերը հստակ կապակցված են միմյանց, թեև Բ-ի խոսքը միջատարածք է Ա-ի կրկնության համար:

3.*Հուզական լարման գործառույթով կրկնության Ճանաչման չափանիշներ* տալիս է զգացմունքային ուժգնությամբ բնութագրվող միջավայրը: Հուզական կրկնությունների խնդիրը խոսողի խտացած զգացմունքի արտահայտումն է, որը, կարծես, խեղդվելով ու պայթելով ասում և կրկնում է նույն բանը: Ինչպես Գ.Պերսսոնն է նկատում Նրանց տարբերակման խնդիրն այն է, որ պատճառը արդյունքից առանձնացվի, դրությունը՝ գործառույթից [Persson G.,1974: 21-27]:

Գ. Պերսընը համարում է, որ, որքան մեծ է խոսողի հուզական լարումը, այնքան կրկնությունն ավելի ոճավորված է: Այն ավելի ուժեղ ազդեցություն ունի ունկնդրի վրա, քան՝ եթե պահանջը ներկայացվի խաղաղ ձևով [Persson G.,1974:89]: Նրա բերած օրինակներում իմաստային ներունակությունը համատեղվում է հուզական ճնշման հետ, ուստի շեշտված և հուզական կրկնությունները դասվում են նույն կարգին: Մեր օրինակներում երկու դրսևորումները տարբերակել ենք որպես շեշտված ներդրման և հուզական լարման գործառույթերով տեսակներ: Այլ է, երբ խոսողն ունկնդրից անկախ զգացմունքային պոռթկում է կատարում, և այլ, եթե հուզական լարման պայմաններում ցանկանում է ինչ-որ բան հայտնել որևէ մեկին: Գիտակցում ենք, որ գոյություն ունեն նշված երևույթները տարանջատելու դժվարություններ, և հասկանում, թե ինչպես է տարբերակման դժվարությունը ոմանց մղել երկու տեսակն էլ դասակարգել նույն՝ շեշտադրման կարգում: *Իրականում դրանց ձևային տարբերակումը հնարավոր է կատարել կախված այն բանից՝ տրվում է արդյոք արտահայտությունը «շեշտում եմ» եղանակով*

շրջասության, թե՝ ոչ, որի շնորհիվ և տարբերակվում են արտահայտչական և հաղորդակցական տեսակները:

4.Հուզական լարման գործառույթով կրկնության խոսող-խոսակից-հաղորդում կապը: Հուզական լարում շեշտող կրկնությունները ներկայացնում են խոսողի զգացական վերաբերմունքը: Նրանց լեզվական բովանդակությունը թույլ է, ուստի դրանք շեշտման, համոզման կամ այլ կրկնությունների նման միտված չեն ունկնդրին: Ինքնաբուխ խոսքում հուզականությունը դրսևորվում է, անգամ երբ խոսողը մենակ է կամ ներկա անձը զրուցազույգ չէ: Գործնականում անհնար պիտի լինի նման խոսքը գրանցել (դիտորդի անհնարինություն), չնայած, որպես երևույթ, այն գոյություն ունի: Ինչ վերաբերում է մասնակիցների վերաբերմունքի հաղորդմանը, ապա հուզական կրկնությունների բացականչական հնչերանգն արդեն բացահայտում է խոսողի վերաբերմունքն իր նշած գործողությունների նկատմամբ: Որպես վերաբերմունքի դրսևորում՝ հնչերանգն ավարտում է լեզվի եղանակավորող բառերի և բայի եղանակի գործառույթները:

5.*Հուզական լարման գործառույթով կրկնության տեղեկատվությունը*: Հուզական լարումն արտահայտում է ներգործող «տեղեկատվություն», իսկ խոսողի հուզումը հետհաղորդակցական նշան է: Եթե որոշ հուզական կրկնություններ իմացական բովանդակություն են արտահայտում, մյուսները այն չունեն բացարձակ:

Α: - Την παντρεύτηκε!!!! Μπράβο του!!! Τόπε και τόκανε! Τόπε και τόκανε!!!! / Ա: - Ամուս-նացա՛վ: Կեցցե՛ նա: Ասաց ու արեց: Ասաց ու արեց (Κεχαϊδης Δ./Կեխաիդիս Դ.,1978:67): Ջ.Լիչը [Leech G.,1966:78] խոսում է այս տեսակի կրկնությանը բնորոշ «ճարտասանական» հատուկ ձևի մասին, իսկ Գ. Պերսընը [Persson G., 1974:53] համարում է, որ նրա խնդիրը խոսողի հուզմունքը և վերաբերմունքն արտահայտելն է: Մաքուր հուզական կրկնությունների յուրահատկությունն այն է, որ ունկնդիրը շատ անգամ կրկնում է խոսողի ողջ ասածը, կոնկրետ հնչերանգով պարզաբանում է կրկնությանը բնորոշ հուզական վերաբերմունքը և ասույթի հռետորական ձևավորումը [Σετατος Μ., 1993: 392,395]:

A: - (ενθουσιάζεται): Αυτό είναι!... Έγινες καλά! Έγινες καλά!!! / Ա:/Ոգևորված/ - Ահա՛: Արդեն լա՛վ ես: Արդեն լա՛վ ես: Արդե՞ն լա՛վ ես:

B: - (με δυνατή φωνή): Καλά είμαι. Τώρα καλά είμαι. /Բ:(Կայտառ ձայնով) - Լա՛վ եմ: Արդե՞ն լավ եմ (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:81): Օրինակում Ա եզրի հուզական շեշտադրումն արդեն իսկ արտահայտում է խոսողի ոգևորվածությունն ուղերձով: Բ եզրը այն կրկնում է առավել ազդու շեշտելով: Մեր կարծիքով Բ եզրը կրկնելով շեշտում է կրկնյալի հետհաղորդակցական ուղերձի հուզականությունը և կարող էր շրջասվել այսպես՝ «Ա եզրի բացականչության մեջ ներդրված հույզն այնքան ուժեղ է, որ ինձ թույլ չի տալիս վերամշակել հաղորդումը որևէ այլ կերպ, քան կառույցը կրկնելն է»:

3.3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության որոնումը հաղորդակցության հիմնական նպատակներից մեկն է, որին անհատը միշտ ձգտում է, որպեսզի փարատի իր միայնակությունը: Այստեղ ներկայացնում ենք նույն կամ այլ խոսողի կողմից կատարված կրկնություններ «համագործակցության» անփոփոխակային գործառույթի այն հարուստ տարբերակներով, որոնք թելադրում են մարդու կենսագործունեությամբ և որոնց տարբեր ձևերին հանդիպել ենք հայերենի և հունարենի օրինակներում: Համագործակցություն միշտ փնտրում է խոսողը, սակայն խոսակիցը միշտ չէ, որ սատարում է նրա ցանկությանը: Ըստ խոսողի համագործակցության առաջարկի նկատմամբ նրա մոտ ծագած արձագանքների առանձնացրել ենք համագործակցության գործառույթի հետևյալ ենթակարգերը՝ համաձայնության, հաստատման, տարակուսանքի կամ կասկածի, անհամաձայնության, հակադրության, մերժման և համոզման, զրույցին հետևելու հավաստման, զրույցին ընթացք տալու - զրույցի շարունակումը քաջալերելու, զրույցն ընդհատել դրդելու և անտարբերության: Համագործակցության՝ մեր կողմից նշված դեպքերից մի քանիսի վերաբերյալ գրականության մեջ կան հիշատակումներ, սակայն նրանց առանձին որակների հատուկ ուսումնասիրություն չի կատարվել [տե՛ս, Jefferson G., 1972, Keenan E., 1977, Tannen D., 1979, 1987ա, 1987բ, 1989, Beaugrande R., Dressler W., 1981:55]: Համագործակցային կրկնության վերը նշված բազմաթիվ

տեսակների առանձնացման հնարավորությունների համար պարտական ենք հատկապես Հակոբ Պարոնյանի կատակերգություններից ընտրած երկխոսություններին, որոնք բնութագրում են դրա ամենատարբեր ձևերը:

ա/ Համագործակցության կրկնության համաձայնության գործառույթն արտահայտվում է հարցական հնչերանգով և պատմողական հնչերանգի հաստատական ու ժխտական ձևերով: Այս օրինակներում հանդես եկող կրկնությունների հիմնական ընդհանրությունը, որը մեզ թույլ է տալիս նրանց խմբավորել համագործակցության սեռի տակ, այն է, որ խոսակիցը լսածի բովանդակության նկատմամբ արտահայտում է մի բան, որը ձևավորվում է որպես Բ - ի կողմից Ա - ի հաղորդման մշակում: Նշված գործառույթն արտահայտվում է նաև հավանություն արտահայտող *իհարկե, հարկավ, այնպես է, սպույգ է, իրավունք ունես, հանգիստ եղեք,* արտահայտություններով, ինչպես նաև կրկնյալում բայի հաստատական կրկնությամբ, որոնք Ա խոսողի արտահայտության վերջին հատվածի հետ իմաստային կրկնություն են կազմում: Դրանք իմաստային մի քանի դրսևորումներ ունեն:

- *Հարցական հնչերանգով համաձայնության գործառույթ:* Ա կողմն արտահայտվում է հարցումով, իսկ Բ կողմը պատասխանում է հաստատումով:

Ա:- Աբիսողո՛մ աղա, հանգի՞ստ եք:

Բ:- Հանգի՛ստ եմ (Հ.Պարոնյան, 244-45):

- *Հաստատական ձևակերպումով համաձայնության գործառույթը* Ա կողմի հորդորն է, իսկ Բ կողմը կրկնում է թեման և ավելացնում համաձայնությունը:

Ա:- Խոշո՛ր գիրերով գրե:

Բ:- Հանգիստ եղեք, ամենեն խոշո՛ր գիրերով (Հ.Պարոնյան,218):

- *Ժխտական ձևակերպումով համաձայնության գործառույթն* արտահայտվում է Ա կողմի հարցումով, որի դրական պատասխանը ձևավորվում է ժխտական ձևով:

Ա:- …Կաղաչեմ, ըսեք, ձեր կոկորդը սխմեցի՞, որ ինձի բաժանորդ գրվիք:

Բ:- Երբե՛ք:

Ա:- Ատրճանա՞կ ցցուցի:

Բ:- Բնա՛վ, երբե՛ք (Հ.Պարոնյան,220):

բ/ *Զրուցակցի կողմից հաստատում արտահայտող կրկնությունների* Բ եզրում հանդես են գալիս *հաստատական վերաբերականներ, հոմանիշներ, հարցական կառույցների պատմողական հնչերանգով հաստատական պատասխաններ:*

Ա:- Տիկինը մինչև որ կերակուրներն տաքցունե և բերե, մենք կրնանք խոսիլ և ժամանակ անցունել, այնպես չէ՞, Աբիսողոմ աղա:

Բ:- Այնպե՛ս է /Հ.Պարոնյան,242/:

A: - Δεν ήξερα τι θα γινόμουνα. / Ա. Ես չգիտեի ինչ կլիներ ինձ հետ…

B: - Ναι. /Բ: - Այո … (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:21):

գ/ *Տարակուսանքի կամ կասկածի գործառույթով կրկնություններում* Բ կողմը կասկած կամ տարակուսանք է արտահայտում Ա կողմի ասածի նկատմամբ:

Ա: - Չորս ոսկիով կլմննա, բան մը չէ, իմ Մեկենասս պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ:

Բ:- Ճակա՞տը պիտի դնես (Հ.Պարոնյան,238):

Ա:- Ինչպե՞ս կարող ես խոսել, եթե բերանդ չես էլ բացում (Վ.Սարոյան,1:305):

դ/ *Անհամաձայնության գործառույթով կրկնություններ:* Կրկնության այս տեսակում Բ կողմը Ա կողմին իր անհամաձայնությունն է հայտնում բառային գործողությունը կրկնելով ժխտական ձևավորումով, ժխտում արտահայտող բառեր օգտագործելով կամ այլ կերպ, օրինակներ՝

Ա:- Շա՜տ վեհանձն եք:

Բ:- Ամենևին վեհանձն չեմ (Հ.Պարոնյան, 251-54):

Բ:- Ես գտնում եմ, որ միսս Դաֆնին բնավ էլ այդքան տգեղ չէ, ընդհակառակը, կարելի է ասել, հրապուրիչ է (Վ.Սարոյան, 1:253):

ե/ *Հակադրության գործառույթով կրկնություններ:* Երբեմն զրուցակիցը խոսողին հակադրվում է իր ժխտական պատասխանով կամ գործողությամբ՝

A: - Εν πάση περιπτώσει, είμαστε όλοι άνθωποι. / Ա: - Ամեն դեպքում մենք բոլորս մարդ ենք:

Β: - Εμείς δεν είιιαστε άνθρωποι. /Բ: - Մենք մարդ չենք (Ευθημιδιάδης Μ./ Մ. Էվթիմիդիադիս, 1981:78):

Α: - Τέτοια ώρα ο κόσμος κοιμάται. / Ա: - ….Այս ժամին բոլոր մարդիկ քնած են:

Β: - Ποιός κοιμάται ρε καλοκαίρι καιρός! /Բ: - Ո՞վ է քնած, դրսում ամառ է (Χασαπάδης Γ./ Գ.Խասապադիս, 1986:24):

Ուշագրավ է, որ երբ զրուցակիցը չի գտնում խոսողին հակադրվելու իրական հնարավորություն, հակադրվում է ոճով:

Ա:- Ի՞նչ գույնով էր (թիկնոցը՝ Ա.Հ.), ճերմա՞կ, թե թուխ :

Բ:- Ո՛չ, սև էր (Հ.Պարոնյան,222):

Ա:- Նրանցը նու՛յնպես ուղղահայաց է: Բ:- Ո՛չ, վերևից ներքև: Ա՛յլ տեխնոլոգիա է («Թվիքս»-ի հեռուստագովազդից):

գ/ *Մերժում և համոզում արտահայտող գործառույթով կրկնություններ:* Այս գործառույթը նշված հաջորդականությամբ արտահայտվում է երկխոսությամբ կամ բազմախոսությամբ: Այն «կոնվեյերային կատարելագործման» աստիճանի է հասնում Պարոնյանի «Քաղաքավարության վնասներ» վիպակում, որտեղ խնդրանքի մերժումը «քաղաքավարության» բռնադատվում է հայցատերերի կողմից համոզելու եղանակով: Ուշագրավ է Նահապետ աղային համայնքի ներկայացուցիչների տոմսակներ վաճառելու դրվագը: Գրասենյակն այցելած հանձնախմբի անդամները Նահապետի ամեն խոսքային մուտքին ի պատասխան, «հաջորդական ներգործման» մի յուրահատուկ եղանակով միմյանց հաջորդող 4-5 մուտքերով «համոզում» են (ճնշում են) առևտրականին 10 տոմսակ վերցնել, և անհնար է դառնում դիմադրելը՝

Ա:- 10 հա՞տ… Չեմ կրնար…

Բ:- Նահապետ աղա, պարապ խոսքեր մի ըներ:

Գ:- Կարողությունդ կներե, մենք գիտենք,10 հատ առաջարկեցինք, որ չը մերժվինք:

Դ:- Նահապետ էֆենտի, երկար մի ըներ, ուրիշ տեղեր ալ պիտի երթանք, գործ ունինք:

Ե: /Բ-ին/ - Տուՙր Նահապետին 10 հատ տոմս:

Զ:- Նահապետ աղա, տու՚ր 10 ոսկի (Հ Պարոնյան, 387):

Նման դեպքերի կապակցությամբ հեղինակը գրում է «Բնությունը քնացիր կըսե, քաղաքավարությունը մի քնանար կը պոռա» (Հ.Պարոնյան,300):

Է/ *Զրույցին հետևելը հավաստող գործառույթով կրկնություններ* (Բ - ն կրկնում է Ա - ի որոշ բառեր, որպեսզի հավաստիացնի, որ ուշադրությամբ հետևում է նրա խոսքին, եթե անգամ անձնական միտումներ չունի դրանում):

Ա:- Պիտի դառնամ…որովհետև տունը մինակ են…

Բ:- Դառնալու է…դառնալու է…քանի որ տունը մինակ են…ես ալ ըլլամ նե, կդառնամ (Հ.Պարոնյան, 405):

ը/ *Զրույցին ընթացք տվող, զրույցը շարունակելը քաջալերող գործառույթով կրկնություններ* կատարում է դրա շահագրգիռ մասնակիցը, երբ մյուսը զրույցն ընդհատելու կամ կարճելու խոսքային կամ ֆիզիկական նշաններ է անում:

Բ:- Դե՛հ, ես ինքս էլ գիտեմ, որ դու գիտես, բայց հո բոլորը չես գիտենալ…

(Դ. Դեմիրճյան, 2:12):

Խոսողը կարող է օգտագործել նաև բառային ցուցիչներ, զրույցը շարունակելու դրդող բառեր և արտահայտություններ, ինչպես՝ *լավ լսիր, լսի՚ր ինձ, լսի՚ր՝ ինչ եմ ասում, քեզ եմ ասում, ինձ նայիր, ուշադի՞ր ես լսում, հիմա ամենահետաքրքիրն է* և այլն: Հաղորդակցվողների վարքագծում նկատվում են նաև խոսողի կողմից ունկնդրի ուշադրությունը գրավելու ֆիզիկական գործողություններ. «Բարաղամն ամեն խոսելուն կամ ձեռքովը Մելքոն Աղային կուրծքին կզարնե, կամ ոտքովը անոր ոտքերուն վրա կկոխե, կամ անդին կիրե, կամ ասդին կքաշե» (Հ.Պարոնյան,349):

թ/ *Զրույցը կարճել կամ ավարտել հորդորող գործառույթով* կրկնություններն արտահայտվում են մասնակիցների խոսքային և իրադրական երեք տեսակ վարքագծով:

- Ամեն ասվածին համաձայնվելով արագ հասնել զրույցի ավարտին:

Ա:- Քեզի դեմ դատ պիտի բանամ: Բ:- Բա՚ց:

Ա:- Տանդ դռները պիտի գոցեմ: Բ:- Գոցե… (Հ.Պարոնյան,430):

- Խոսողին հասկացնելով, որ գիտի նրա ասելիքը: Ա:- Գիտեմ, տեր-հայր, այդ ամենը գիտեմ, - ընդմիջում էր վարժապետը /ավարտելու առաջարկ (Դ.Դ., 2:12):

- Լռելով , ոչինչ չպատասխանելով կարճել կամ ավարտել զրույցը. «Մերկեր աղան կը գուշակե, թե պատմիչին պատասխանելն պատմության ավելի երկարելուն պիտի նպաստե, ուստի միտքը կը դնե բառ մ'անգամ չարտասանել» (Հ. Պարոնյան,349):

ժ/ *Անփարբերություն արտահայտող գործառույթով կրկնություններ:*

Ա:- Խնդիրքս սա էր, որ կուզեի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս:

Բ:- Գնա տպել տուր, քու ձեռքեդ բռնող կա՞ (Հ.Պարոնյան,237):

Ա:- Կարծում եք, չհասկացա՞, թե ինչու հիվանդ ձևացաք և դուրս չեկաք սենյակ:

Բ:- Որ հասկացել եք, ուրեմն ավելորդ է այդ մասին խոսելը (Նար-Դոս, 480):

1.Համագործակցության գործառույթով կրկնության ձևերը: Մեր նյութում համագործակցության գործառույթով կրկնությունները հիմնականում դրսևորվում են Ա կողմի արտահայտման «ներկայացուցչական» ձևի բառային գործողություններով, քանի որ միայն պատմողական հնչերանգի նախադասությունները կարող են արտահայտել ճշմարիտ կամ կեղծ դատողություն: Այս դեպքում, որպեսզի խոսողը հաջողություն ունենա, պետք է «երաշխավորի» իր դիտավորության անկեղծությունը:

ա/ *Ուղղորդված բառային գործողությունների հաստատում*

A: - Στείλ'το γράμμα. /Ա:- Ուղարկի՛ր այն նամակը:/

B: - Ναι; /Բ:- Այո՞:/

A: - Ναι, στείλ'το. /Ա:- Այո՛, ուղարկի՛ր: (Χασαπάδης Γ./ Խասապադիս Գ., 1986:82) /ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԻՐԱԿԱՆ Է, ՈՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԱՅՆՊԵՍ ԼԻՆԻ, ՈՐ ԴՈՒ ԱՅՆ ՈՒՂԱՐԿԵՍ/:

բ/ Պարտավորեցնող բառային գործողությունների հաստատում

Ա:- Ճակա՞տը պիտի դնես:

Բ:- Այո, անունդ գրքույկին ճակատը պիտի դնեմ /ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԻՐԱԿԱՆ Է, ՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ, ՈՐ ՔՈՒ ԱՆՈՒՆԴ ԳՐՔՈՒՅԿԻՆ ՃԱԿԱՏԸ ՊԻՏԻ ԴՆԵՄ/: (Հ.Պարոնյան,238):

գ/ *Հայտարարող բառային գործողությունների հաստատում*

A: - Λυπάμαι που έχασε η ομάδα σου. /Ա:- Ցավում եմ, որ քո թիմը պարտվեց:/

B: - Αλήθεια; /Բ:- Իսկապե՞ս:/

A: - Λυπάμαι. /Ա:- Ցավում եմ: / (Χασαπάδης Γ./ Խասապադիս Գ., 1986:59) /ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԻՐԱԿԱՆ Է, ՈՐ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՄ ԻՄ ՑԱՎԸ/:

դ/ *Բացատրական բառային գործողությունների հաստատում*

Ա:- Շատ հեռու չգնաս: Հիմա երևի կհրամայեն, որ բաղնիքը տաքացնեմ:

Բ:- Ես փայտի եմ գնում, - բացատրեց ծերուկը (Դ.Դեմիրճյան,1: 649): (ԲԱՑԱՏՐՈՒՄ ԵՄ, ՈՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՄ ՓԱՅՏԻ ԳՆԱԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ):

Բ կողմի արտահայտության ձևերը: Համագործակցային կրկնության այս ձևերը ևս արտահայտվում են մեր կողմից առանձնացված 5 կարգերով: Դրանց ճնշող մեծամասնությունը վերաբերում է նվազող և անփոփոխ կրկնություններին: Տվյալների հավելումով ձևերը օգտագործում են հարալեզվական ցուցիչներ:

ա/ *Անփոփոխ կրկնություն*

A: Δε μπορώ να τα θυμηθώ έτσι... /Ա:- Այդպես չեմ կարող հիշել...

B: «Εγωισμός. /Բ:- « Էգոիզմ»:

A: «Εγωισμός. /Ա:- « Էգոիզմ»: (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:53):

բ/ *Բառի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություններ*

Ա:- Ի՞նչ ես խելքդ թոցրել:

Բ:- Այ, թե ինչ է մարդու գլխին գալիս, որ խելքը թոցնում է, բայց երևի սրա համար արժի խելքը թոցնել (Վ.Սարոյան,3:70):

գ/ Տվյալների հավելումով կրկնություն

Ա:- Դու բան չես հասկանում, - գոռաց տիկինը խելագար ձայնով:

Բ:- Հասկանում ենք մադամ, հասկանում ենք, ո՞նց չենք հասկանում, ինչ կա չհասկանալու, - համոզում էր մշակը (Դ. Դեմիրճյան, 2:161):

դ/ *Տվյալների հանումով կրկնություն:* Այս կրկնությանն ավելի հաճախ հանդիպում է համաձայնություն/հաստատում գործառույթով: Նախորդ արտահայտությունը միայն մեկնաբանում է, իսկ նորի մեջ ավելանում է որևէ ցուցիչ:

Ա:- Այս ի՞նչ հրաշալի գիշեր է: Բ:- Այո՛, հրաշալի է (Դ. Դեմիրճյան, 2:70):

ե/ *Խառը կամ/և բարդ կրկնություն:* Ա:- Ախր նա ձեզ սպանում էր:

Բ:- Թող սպանե՛ր, թող սպանե՛ր, թող սպանե՛ր, - վրա բերեց տիկինը սրտանց: - Ավելի լավ չէ՞ր լինի, միանգամից կպրծնեի (Նար-Դոս, 198):

2. *Նույն կամ այլ խոսողի կողմից սերված* համագործակցության գործառույթով կրկնությունները որոշ տարբերություններ ունեն մյուսներից: Այստեղ խոսակիցն է կրկնում և այն ծառայեցնում է տարբեր գործառույթների: Խոսողի ներդրումը հաստատվում է զրուցակցի կողմից, իսկ երկրորդ օրինակում հաստատումը կատարվում է բայի ժխտական խոնարհման ձևով:

Ա:- …Բարեկամական պարտք մը կատարելու համար եկա զձեզ տեսնելու:

Բ:- Հայտնի բան է (Հ. Պարոնյան:219):

Ա:- Բնավ ձեր մտքեն չանցուցեք, թե այս մարդը մեկ ու կես ոսկի փրցնելու համար զիս տեսնելու եկավ:

Բ:- Չեմ անցուցեր (Հ. Պարոնյան:219):

Ա:- Եթե մեկ-երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞:

Բ:- Այո՛, երկու ոսկի տալուդ պես գործը կդյուրանա, և մուսաս այս շաբաթ վազելով կուգա: (Հ.Պարոնյան:238): Բերված օրինակում Ա կողմի ներդրումը հարցումն է, Բ-ինը՝ դրա հաստատումը:

3.Համագործակցության գործառույթով կրկնությունը կարելի է ճանաչել մաքուր հաստատական կրկնություններն արտահայտող իմացական բարձր կապով և «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ» շրջասման միջոցով:

Ա:- Պատմածիդ նայելով բարի մարդ է եղեր Բարաղամ աղան:

Բ:- Բարին ալ խո՞սք է /ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, որ շատ բարի է եղել (Հ.Պարոնյան:348):

Ունկնդրի զարմանքի, կասկածի, հիացման և անակնկալի գալու դեպքում հարցականով արտահայտված հաստատման պահանջը խոսողին ստիպում է կրկնել այն, ինչ ասել է նախորդ անգամ: Սա մեկնաբանվում է իբրև ունկնդրի կողմից կատարված կրկնության գործառույթի ճանաչման լրացուցիչ չափանիշ (հաստատման պահանջ-հաստատում): Համագործակցային կրկնության համա-

ձայնության գործառույթը կարելի է ճանաչել նրանով, որ այն ուղղված է Ա կողմին և շրջասությամբ փոխարինվում են ոչ թե «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ», այլ ավելի թույլ՝ «ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» բայով: Այս «թուլացման» պատճառը մեր կարծիքով այն է, որ խոսակիցը տեղյակ չէ խոսողի իմացած փաստերից, չի կարող հաստատել կամ ժխտել դրանք. նա կարող է միայն համաձայնվել կամ չհամաձայնվել դրանց հետ:

A: - Δηλαδή έγει κάνει μπάνια ο άνθρωπος. / Ա: - Այսինքն, մարդը լողացել է:

B: - Θά 'χει κάνει μπάνια... (ΣΥΜΦΩΝΩ ΟΤΙ: θά 'χει κάνει μπάνια). / Բ: Լողացած կլինի (ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ որ լողացել է) (Κεχαϊδης Δ./Կեխաիդիս Դ., 1994:67):

Մեզ թվում է, որ դեպքը լիարժեքորեն հաստատելու համար Բ խոսողին պակասում է Գ. Ջահուկյանի «ականատեսության» իմույթը [Գ.Ջահուկյան, 1974], այդ պատճառով խոսակիցն ընտրում է բայի ոչ ականատեսային ժամանակային ձև, որի հետևանքով «հաստատում եմ»-ը փոխվում է «համաձայն եմ» վարկածային ձևով, որը թուլացնում է վկայման հավաստիությունը:

՝Համագործակցության գործառույթով կրկնության խոսքին հետևելը հավաստող, խոսքին ընթացք տվող, խոսքի շարունակմանը նպաստող կրկնությունները ճանաչվում են որպես այլ խոսողի կողմից կատարված կրկնություն, որն ունի համապատասխան գործողությունները հավաստող ցուցիչներ: Ընդունողը պարտավորություն չունի համաձայնվելու հաղորդողի հետ: Կրկնությունն այստեղ նշանակում է «ՔՈ ԽՈՍՔԻՆ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՄ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՄ, ԿԱՐՈՂ ԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ» և պատկանում է շփման մակերեսային մակարդակին: Նույն իմաստը կարող էր արտահայտվել նաև գլխի դրական շարժմամբ (արտալեզվական միջոց) կամ լեզվական ցուցիչներով՝ «այո՛»:

A: - Αυτό ήτανε το 1978. / Ա: - Դա 1978 –ին էր: Բ: - 78. /Բ:- 78-ին:

A: - Όχι, 77. / Ա:- Չէ, 77-ին էր (Σκούρτης Γ. /Սկուրտիս Գ., 1982:83):

Ունկնդիրը, իբրև ընկալման ցուցիչ, մեխանիկորեն կրկնում է տարեթիվը /Քո խոսքին հետևում եմ/: Իսկապես, հաջորդ արտահայտության մեջ խոսողը իր ասածը ճշտում է առանց ունկնդրի ներգործության: Ըստ Թ.Պավլիդուի՝ Բ

խոսողը հաղորդման նկատմամբ իր կապվածությունն արտահայտում է խոսքը շարունակելու մտադրության միջոցով [Παυλιδου Θ., 1995բ:712]: Ընդունելով նրա տեսակետը՝ կարող ենք ավելացնել, որ այս դեպքում կրկնելու նպատակը խոսողի դրական ցուցչի իմաստն է թե՛ ասույթի իմացական դրական կապի, թե՛ ողջ հաղորդակցության դրական կապի փոխադարձ ընկալման համար:

4. *Համագործակցության գործառույթով կրկնության խոսող-խոսակից-հաղորդում կապը* բացահայտելու համար նախ դառնանք համաձայնության, հաստատման և խոսքին հետևելու ցուցիչներին, որոնց հետ կապը կապ է նաև լեզվական ներունակության հետ: Կրկնողն ունի կոնկրետ նպատակ՝ հաստատել իր կամ ուրիշի խոսքը, համաձայնվել Ա խոսողի հետ՝ ցուցադրելով, որ այդ ամենն ընդունվում է որպես իրողություն, որով և ընթացք է տրվում խոսքին: Ինչ վերաբերում է հաղորդման հետ ունեցած կապին, կրկնությունը պարունակում է նաև դրա նկատմամբ կրկնողի դրական վերաբերմունքը, որն արտահայտվում է շփումը շարունակելու նրա միտման մեջ: Ինչպես շեշտում արտահայտող, այնպես էլ համագործակցային կրկնության տեսակները (համաձայնության, հաստատման, խոսքին հետևելը հավաստող և այլն) Բ կողմից ուղղված են. Ա-ին, որով հաստատում են նրա ասածը և նրան ուղղում ունեցած դրական կամ բացասական վերաբերմունքը, քանի որ ունկնդիրը նրա նպատակադրման օբյեկտն է, իսկ զրույցն ընդհատող զրուցակցի գործունեությունն ուղղված է խոսողին:

5. *Համագործակցության գործառույթով կրկնության տեղեկատվությունը* ևս որպես հետհաղորդակցական նշան իմացական բովանդակություն չունի: Սա ավելի նկատելի է դառնում, երբ նույն խոսողի կրկնությունից հետո ունկնդրի «պահանջի, կասկածի կամ բերկրանքի» արտահայտությունը հաստատում է խոսողի միտքը: Խոսողը կրկնում է նախորդ արտահայտությունը, և ունկնդիրը դա սովորական է դիտում, քանի որ կրկնությունը ոչ թե իմացական, այլ ներգործման խնդիր ունի. նրա «բովանդակությունը» հետևյալն է՝ ԱՅՆ, ԻՆՉ ԱՍՈՒՄ ԵՍ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, կամ՝ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՄ ԽՈՍՔԻԴ, կամ՝ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՄ, ԿԱՐՈՂ ԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ, կամ՝ ՔԵԶ ԼՍԵԼ ՉԵՄ

ՈՒԶՈՒՄ, ՔՈ ԱՍԱԾՆ ԻՆՁ ՉԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ և այլն, որոնցով տարբերվում են ՇԵՇՏՈՒՄ ԵՄ… բայով շրջասությունից: Ա կողմի արտահայտության կրկնված մասը ծառայում է և՛ որպես մեկնաբանություն, և՛ որպես շեշտում: Համագործակցության ներդրումները վերաբերում են նախորդ «նոր ասվածին»: Դասակարգումը հստակ կլինի, եթե միջավայրը մեզ թույլ տա կրկնության միտքը շրջասելու՝ օգտագործելով «ՀԱՍՏԱՏՈՒՄ և ոչ թե ՇԵՇՏՈՒՄ ԵՄ» ձևակերպումը, որը հնարավոր է ոչ միշտ:

3.4. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Կրկնության այս կարգում քննված պարզաբանման և տարաձայնության գործառույթները համագործակցության գործառույթից տարբերվում են ոչ թե բովանդակությամբ, այլ Բ կողմի արտահայտության ձևով. այստեղ խոսողը որպես լսածի արձագանք զգուշորեն կրկնում է խոսողի ներդրումը կամ նրա մի մասը, ապա, հետո միայն ցույց տալիս իր կողմնորոշումը՝ պարզաբանել կամ տարաձայնել: Սրանք ունեն ձևային կարևոր ընդհանրություններ, ինչպես՝

- հարցման կամ հաստատման շեշտով նախորդ արտահայտության կամ նրա մի մասի կրկնությունն են,
- այլ խոսողի անմիջական արձագանքող կրկնությունն են,
- կրկնության երկու կառույցները տարբեր գործառույթ են կատարում. մեկն առաջադրում է պարզաբանման պահանջ, իսկ մյուսը՝ տարաձայնություն Բ կողմին: Հենց այս հատկանիշների շնորհիվ նրանք չեն կարող շփոթվել համագործակցայինկրկնության «անհամաձայնության» և «հակադրության» գոծառույթով կրկնությունների հետ:

Α: Τι να μας κάνει; / Ա:- Ինչու՞ է գալիս:

Β: Να μας γνωρίσει. /Բ:- Մեզ հետ ծանոթանալու:

Α: Να μας γνωρίσει; Χα! Τι λες μωρέ γυναίκα, παλάβωσες; /Ա:- Մեզ հետ ծանոթանալու՞: Ա՛յ կնիկ, գժվե՞լ ես , ի՞նչ է, (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:48): Հիշենք, որ համագործակցային կրկնության դեպքում Ա կողմին անմիջապես հետևում էր խոսակցի անհամաձայնությունը կամ տարբերությունը, ինչպես՝

Ա: - Շատ վեհանձն եք:

Բ: - Ամենևին վեհանձն չեմ (Հ.Պարոնյան, 251-54):

Որպես բովանդակային արձագանքման կրկնություն կունենայինք հետևյալ կառույցը՝ «Բ: - Շատ վեհանձն եմ: Ամենևին վեհանձն չեմ:»

Վերը նշված պարզաբանման և տարածայնության երկու գործառույթն էլ խոսքի կազմակերպման համար կարևոր են նրանով, որ «հետագա խոսք» են սերում, առանց որի փոխազդեցությունը կոնկրետ կետում չի կարող ավարտվել: Այս խնդիրն ուսումնասիրողների կողմից անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Գլխավորապես ուսումնասիրվել են երկու տեսակների ձևային ընդհանրությունները և նրանց կապը Ա եզրի հետ, սակայն պարզաբանման նպատակով շեշտը հիմնականում դրվել է արձագանքող կրկնությունների վրա: Պարզաբանման պահանջի դեպքում կրկնությունը հաջորդում է հենց առաջին խոսողի արտահայտությանը: Բովանդակային արձագանքման կրկնությունը միաժամանակ շեշտում է նաև Ա եզրը՝ ստեղծելով հաղորդակցության զարգացման դրական կամ բացասական միտման մեխանիզմ:

ա. *դրական (պարզաբանում՝ դրական զարգացում)*

Ա: - Խոսք: Բ: - Հարցում: Ա: - Պարզաբանում:

բ. *ժխտական (տարաձայնում՝ բացասական զարգացում)*

Ա: - Խոսք: Բ: - Տարաձայնում Ա-ին:

Ելնելով պարզաբանման գործառույթով բովանդակային արձագանքման կրկնությունների միմյանց հաջորդելու հանգամանքից՝ Գ. Ջեֆերսոնը [Jefferson G.,1972: 308] դրանց անվանում է «հարցական կրկնություններ»: Նա նշում է, որ նման կրկնությունների ներդրում է դառնում հետագա խոսքի հրավերը, որն այս դեպքում Ա եզրի «փոխհատուցումն» է՝ ճշգրտումը կամ ուղղումը:

Α: - Θα’ρθεις στο σπίτι μου, να κοιτάξουμε μια ταινία. / Ա: - Կգաս մեր տուն, որ ֆիլմ նայենք: Β: - Να έρθω σπίτι σας; / Բ: - Գամ ձեր տու՞ն:

Α: - Να κοιτάξουμε μια ταινία. / Ա: - Որ ֆիլմ նայենք: (Καρρας Σ./ Ս. Կառաս, 1983:56):

Արձագանքող կրկնությունը Ա եզրի վերաբերյալ կանոնավոր պարզաբանումներ է պահանջում, որի հետևանքով ունենում ենք «հետագա խոսք»: Հնչերանգային կրկնությանը հաջորդող տարաձայնությունը «փոխհատուցումն» է, որով խոսողները, միմյանց լրացնելով, վերադառնում են խոսքի ընթացիկ թեմային:

1. *Բովանդակային արձագանքման կրկնության ձևերը:* Մեր օրինակներում բովանդակային արձագանքման կրկնության Ա եզրի արտահայտման ձևերի հանդեպ կրկնությունների մեծ մասը որևէ արգելք չունի. դրանք լեզվում կարող են ցանկացած ձևավորում ստանալ, համադրվում են, վերլուծվում՝ արտահայտությունը բաժանելով արդյունքների, հարցերի, թելադրանքների և հայտարարությունների: Արձագանքող կրկնությունները «հարցնում են» կամ «կասկած են հայտնում» նախորդ խոսողի հաղորդման արտալեզվական կամ լեզվական բովանդակության վերաբերյալ [Quirk R., 1972:408, Persson G., 1974:77, Noh E., 1995: 107-108, 111-133, Freed A., 1994:627, 633]: Հունարենը այս հարցում շարահյուսական ազատություն ունի՝ «ի՞նչ» հարցով կրկնելու Ա եզրի ցանկացած կառույցը:

Α: - Και το πόδι του: /Ա: - Իսկ նրա ո՞տքը

Β: - Τι το πόδι του: /Բ: - **Ի՞նչ** նրա ոտքը: (Καρράς Σ./Կառաս Ս., 1986:110):

Α: - Τι; / Ա: - **Ի՞նչ:**

Β: - Ε, τι τι; Που δε φοβάστε λέω... / Բ: - Է- է՛հ, ի՞նչը ինչ: Որ չեք վախենում, ասում եմ:

(Μουρσέλας Κ./ Կ.Մուրսելաս, 1981:76):

Հունարենի գրավոր օրինակներում հանդիպող «Ի՞նչ» հարցով կառուցված բովանդակային արձագանքման կրկնությունները հայերենի գրավոր օրինակներում չենք հայտնաբերել, թեև հարցվողները կառույցը սովորական և ընդունելի են համարում և՛ հայերեն բանավոր խոսքի, և՛ գրավոր տեքստի համար: Լրացուցիչ մոտ 4000 էջ տարասեռ գրականություն թերթելը նույնպես ոչինչ չտվեց: Սա, իհարկե, բավարար հիմք չի տալիս կարծելու, թե այն հայերենի գրավոր խոսքում առհասարակ չի հանդիպում, բայց ակնհայտ է, որ

հայերենի գրավոր և բանավոր խոսքերը ընտրողական վերաբերմունք են ցուցաբերում տվյալ կառույցի կիրառման առումով:

Բ եզրի արտահայտման ձևերը: Բովանդակային արձագանքման կրկնություն-ները հանդիպում են մեր կողմից բացահայտված բոլոր 5 ձևերով, սակայն դրանց մեծամասնությունը տվյալների հանումով կրկնություններ են:

ա. *Անփոփոխ կրկնություն*

A: - Δεν υπάρχει ταξί. /Ա:- Տաքսի չկա:

B: - Δεν υπάρχει ταξί; /Բ:- Տաքսի չկա՞:

A: -Τόδιωξα.Τόδιωξα το ταξί. /Ա:- Թողեցի տաքսին (Κεχαϊδης Δ. /Դ.Կեխաիդիս, 1980: 90):

բ. *Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություն*

Ա: - Թույլ չի տա:

Բ: - Թույլ չի՞ տա: Իսկ եթե թուլ՞յլ տա (Վ.Սարոյան, 123):

գ. Տվյալի հավելումով կրկնություն

Պարզաբանման կամ լրացման նպատակով արձագանքային կրկնություններն ունեն հետագա պարզաբանման պահանջ, որին ավելանում է հարցական բառույթ:

A: - Χάσατε. / Ա: - Տարվեցիք/: B: 'Εχασα; Και τώρα; /Բ: - Տարվեցի՞: ԵՎ հիմա ի՞նչ (Μουρσέλας Κ. /Մուրսելաս Կ., 1984:38-39):

Տարածայնության արտահայտման նպատակով արձագանքող կրկնության մեջ խոսքային ներդրման լրացումն այն է միայն, ինչը նախորդում է կրկնությանը:

A: - Αυτός είσαι Μήτσο. / Ա: - Է՛ս ես էլի, Միցո:

B: - Στάσου ρε. Τι αυτός είμαι. Ποιος είμαι! /Բ: - Սպասիր է՛: **Ի՞նչն** եմ էս: **Ինչ** ե՞մ որ (Ευθιμιδίαδης Μ./ Մ.Էվթիմիդիադիս, 1981:177):

A: - Ψάχνω να βρω αυγό να κάνω ομελέτα. / Ա: - Հավկիթ եմ փնտրում, որ ձվածեղ անեմ:

B: - Τι ομελέτα παιδί μου; Όλα τ' αυγά είναι βρασμένα. /Բ: - Ի՞նչ ձվածեղ տղաս: Բոլոր հավկիթներն եփել եմ (Κεχαϊδης Δ./Կեխաիդիս Դ., 1994:48):

դ. *Տվյալների հանումով կրկնություն*

Α: - Πού μπορεί να πιεί κανείς λίγο νερό...; / Ա:- Ո՞րտեղից կարող եմ մի քիչ ջուր գտնել: Β: - Νερό...; /Բ: - Ջու՞ր (Καμπανέλλης Γ./ Կաբանելիս Յ., 1982:172):

Մեր օրինակների մեծ մասում կրկնվում են միայն խոսողի հետագա պարզաբանում պահանջող այն տվյալները, որոնց առումով տարածայնություն է նկատվում: Դրանց դերն է՝ առանց որևէ բան ավելացնելու առավել ընդգծել ստեղծված տարածայնությունը:

Α: - Η Ντόρα τό 'ξερε το μαγαζί είχε έρθει... / Ա:- Դորան գիտեր խանութը, այնտեղ է գնացել:

Β: - Ποιο μαγαζί; /Բ: - *Ի՞նչ* խանութ:

Α: - Το δεύτερο. /Ա: - Երկրորդը (Καμπανέλλης Γ./ Յ. Կաբանելիս, 1982:122):

Նշենք, որ, արձագանքող կրկնության առանձնացրած տվյալը խոսակցի կողմից չմեկնաբանվելու դեպքում, խոսողը կարող է բացատրություն պահանջել կրկնվող արտահայտության տեղեկատվության վերաբերյալ:

Α: - Το οικόπεδο πουλήθηκε. / Ա:- Հողատարածքը վաճառվեց:

Β:- Ποιο οικόπεδο: /Բ:- **Ի՞նչ** հողատարածք:

Α: - Πουλήθηκε το οικόπεδο, τ' αγόρασε άλλος. Ա:- Հողատարածքը վաճառվեց, այն ուրիշը գնեց (Καμπανέλλης Γ. / Յ.Կաբանելիս, 1982:,127):

ե. *Խառը կամ բարդ կրկնություն*

Α: - Δεν του κάνει η καρδιά να σας αποχωριστεί. /Ա:- Հուզմունքը չի թողնում, որ հրաժեշտ տա:

Β: - Να μας αποχωριστεί; Χα! (Παίρνε το Χνούδι στην αγκαλιά της). Λες κι' η Σαλονίκη νάναι στην άκρη του κόσμου. /Բ:- Հուզմունքը չի՞ թողնում, պա՛հ: Կարծես թե Սալոնիկը աշխարհի ծայրին է: (Κεχαϊδης Δ. /Դ.Կեխաիդիս, 1978:71):

Լուսաբանող օրինակներում հազվադեպ ենք ունենում կրկնվող նույնական եզրերի փոփոխություն, եթե նրանք արտահայտված են հոմանիշներով:

Α: - Σου είπα να σου δώσω εκατό χιλιάδες; / Ա:- Քեզ ասացի, որ հարյուր հազար կտամ:

Β: - Εμένα μου είπες να μου δώσει λεφτά; /Բ: - Ինձ ասացիր, որ փո՞ղ կտաս:

Α: - Ναι, μαζί στον Μπάμπη τον δικηγόρο... / Ա:- Այո՛, իրավաբան Բաբիսի մոտ ասացի (Κεχαΐδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:,93):

2. *Բովանդակային արձագանքման կրկնության սերումը նույն կամ այլ խոսողի կողմից, միջատարածք:* Բովանդակային արձագանքման կրկնությունների պարզաբանման և տարաձայնության գործառույթները միշտ իրագործվում են այլ խոսողի կողմից՝ Ա եզրին հաջորդելով առանց միջատարածքի [Jefferson G., 1974:709, Fontaine N., 1990:38]: Ա եզրը վերարտադրվում է նույնությամբ՝ փոխելով միայն հարցական կամ բացականչական հնչերանգը, որն արտահայտում է «կասկած, զարմանք կամ թերահավատություն» [Quirk R.,1972:410, Persson G.,1974:7, 95]:

Α: - Δεν ήταν ο Οθωμανός ρε./ Ա: -Դա ատամանը չէր: Β: - Δεν ήταν ο Οθωμανός; /Բ: - Դա ատամա՞նը չէր: (Ευθιμιδιάδης Μ./ Մ.Էվթիմիդիադիս, 1981:14):

Մյուս կողմից, այն հաստատելու կամ կասկածելու կարիք ունեցող եզրը շատ հաճախ կրկնվում է հարցական հնչերանգով, իսկ հարցական կրկնությունները փոխակերպվում են որոշակի հարցերի:

Α: - Χωρίς το Βάγγο μες στο κόλπο, δεν κανονίζω τίποτα; / Ա:- Պայմանավորվածությունը առանց Վանգոյի չփոխե՞մ: Β: - Ποιο κόλπο; /Բ: - Ի՞նչ պայմանավորվածություն (Ευθιμιδιάδης Μ. /Էվթիմիդիադիս Մ.,1981:155):

Արձագանքային կրկնությունների հաջորդականության մեջ Գ կողմն առանձնահատուկ է նրանով, որ հանդես է գալիս կա՛մ Ա, կա՛մ Բ խոսողի կողմից: Մ.Գուդվինն [Goodwin M.,1983:658-660] ուսումնասիրել է երկրորդ խոսողի կողմից առաջին խոսողին ուղղված շտկման կամ տարաձայնության արտահայտությունները: Երեխաների զրույցում հնչերանգային կրկնությունը շտկման նպատակով կատարվում է այնպես, որ վիճարկողը շտկումը կարող է թողնել մյուս խոսողին, մինչդեռ չափահասների մոտ կրկնությունից հետո այն կատարում է երկրորդ խոսողը՝ հետևյալ սխեմայով:

Ա: - Խնդրի ակունքը (մեզ համար՝ կրկնության Ա եզրը)

Բ: - Խնդրի ակունքը (հնչերանգային կրկնություն + պարզաբանում):

Այս դեպքում ունենում ենք բարդ իրավիճակ. խոսողին հնարավորություն չի տրվում ինքնուրույնաբար շտկելու իր խոսքը, որով, համաձայն Է. Գոֆմանի տեսության [Goffman E., 1976], խոսողը կարող էր փրկել իր «հասարակական վարկը»: Տարաձայնության դրսևորման դեպքում նույնական բաժանումներ են նկատվում նաև առաջին խոսողի խոսքի նկատմամբ: Որպես «մեղմասական նրբանկատություն»՝ չափահասները հապաղում են արտահայտելու տարաձայնությունը կամ արտահայտում են շրջասաբար [Goodwin M., 1983:666, Goffman E., 1976: 305]:

A: - Έλα ρε Φωτεινή, πως κάνεις έτσι; Σε πέντε μέρες θα έχει λυγίσει. / Ա:- Ֆոտինի, այդ ի՞նչ արիր նրա հետ: Հինգ օր տառապելու է:

B: - Πέντε μέρες; /Բ:- Հինգ օ՞ր:

A: - Το πολύ. Ա:- Ամենաքիչը:

B: - Α πα πα! Πέντε μέρες είναι πολλές. /Բ:- Ի՞նչ հինգ օր: Երկու օրից կգա (Κεχαϊδης Δ./Կեխաիդիս Դ., 1994:134):

Ճշգրտման նպատակով կատարված հարցական կրկնության պարագայում երկրորդ խոսողը տարաձայնության չարտահայտելու նպատակով պահանջում է գնալ պարզաբանման, որով տարաձայնությունն զգալիորեն մեղմանում է, իսկ խոսքի հաջորդ ներդրման մեջ այն ավելի բացահայտ է դրսևորվում: Գոֆմանի արդյունքներով՝ երեխաների երկխոսություններում դրանք ավելի անմիջականորեն են արտահայտվում: Այս ուղին առավել լարված է նրանց համար, ովքեր օգտագործում են հաղորդակցման մանկական կաղապարը և հնչերանգային կրկնությունը չի դառնում տարաձայնության «նախաբան», քանի որ խոսողը միշտ կարողանում է անհրաժեշտ մեկնություն տալ:

Ա:- Լսվա՞ծ բան է, որ ձեզի պես ազնվական մը պատկերը հանել չտա. մե՛ծ ամոթ է… Բ:- Մե՞ծ ամոթ է (Հ.Պարոնյան, 253):

Բերված օրինակում Ա-ի արձագանքային կրկնությունից հետո Բ կողմը պահանջում է պարզաբանում: Կարծում ենք, որ ճշգրտման և տարաձայնության երկու գործառույթները կարելի է միավորել որպես ունկնդրի կասկածի արտահայտում՝ դրա աճող ընթացքով:

3. *Բովանդակային արձագանքման կրկնությունները կարելի է ճանաչել նրանով,* որ հաջորդականությունների առանձնացման փոխազդեցիկ ընդհանուր նպատակը Ա եզրի երկու տեսակի «կասկածն» է: Մի դեպքում հնչերանգային կրկնությունն արտահայտվում է հարցական կամ բացականչական երանգով և Ա եզրին պարզաբանելու պահանջ է թելադրում, որով նրան «նրբանկատորեն» տրվում է իրեն ուղղելու հնարավորություն: Առաջին գործառույթի ճանաչման չափանիշ են հանդիսանում շեշտը և իրադրության մասին ընդհանուր գիտելիքները: Բարձրացող հնչերանգով արձագանքային կրկնությունն արտահայտում է «զարմանք, կասկած կամ թերահավատություն»: Համաձայն մեր կողմից ընդունված չափանիշների, այստեղ կարող են օգտագործվել «ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՄ ՈՐ...», «ՃՇՄԱՐՏԱՆՄԱՆ ՉԷ», «ՏՈՒՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» կամ «ՀԱՐՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐ...» շրջասությունները:

A: - Τι να πώ Ἀριστο; Φίμες είναι. Αν μπορώ να βασίζομαι πάνο στις φίμες; /Ա: - Ի՞նչ ասեմ, Արիստո: Ասեկոսներ են: Միթե՞ կարող եմ հիմնվել ասեկոսների վրա/: **B:** - Φίμες; Τι φίμες; Μίλα καθαρά. /Բ: - Ասեկոսնե՞ր են: Ի՞նչ ասեկոսներ: Պա՛րզ խոսիր:/ (Այստեղ Ա խոսողը խույս է տալիս, իսկ Բ-ն կոնկրետ պարզաբանումներ է պահանջում) (Ευθυμίαδης Μ./Էվթիմիդիադիս Մ., 1981:156):

Մյուս դեպքում բովանդակային արձագանքման կրկնության նպատակը Ա կողմի տարաձայնության շեշտումն է, որը կրկնող խոսողի համար ընդունելի չէ: Հարցական կամ բացականչական շեշտը պարզաբանում է անհամաձայնությունը և նախապատրաստում տարաձայնություն, որը հանդես է գալիս հարցի ձևով:

A: - Ξέρετε, για να σπάει ο πάγως... Εγω... /Ա: - Գիտե՞ք, որպեսզի սառույցը ջարդվի...Ես.../ **B:** - Για να σπάει ο πάγως; Ποιος πάγως; Πάγω βλέπετε ή βούλκανο; /Բ: - Սառույցը ջարդվի՞: Ի՞նչ սառույց: Սառու՞յց եք տեսնում, թե հրաբուխ: (Μουρσέλας Κ./ Մուրսելաս Կ., 1981:31):

A: - Αυτό εγω αποφασίζω! /Ա: - Դա ես եմ որոշում:/

B: - Αυτό εσυ αποφασίζεις. /Բ: - Դա դու՞ ես որոշում: (Ματέσης Π./Մատեսիս Պ., 1982:86):

Այստեղ խոսողը այլ ճանապարհներով էլ կարող է պարզաբանել իր դիտավորությունը, ինչպես ստորև բերված օրինակում է, որտեղ Ա եզրի բովանդակությունը ժխտվում է՝ որով էլ կրկնողը հակադրվում իր զրուցակցին:

A: - Καλέστε αστινομία. /Ա: - Ոստիկանություն կանչեք:/

B: - Αστινομία; Τι αστινομία, ρε απατεόνα, ρε κλέφτη; /Բ: - Ոստիկանությու՞ն: Ի՞նչ ոստիկանություն, ա՛յ խայտառակ, ա՛յ գող: (Καμπανέλλης Ι./ Կաբանելիս Յ., 1982:118):

A: - Φιλακή μοιρίζω Ἀριστο. /Ա: - …Բանտի հոտ եմ առնում Արիստո:/

B: - Μοιρίζεις φιλακή; Χα-χα-χα. /Բ: - Բանտի հո՞տ: Հա՛,հա՛, հա՛ /Կասկածում եմ, որ բանտի հոտ է գալիս:/ Հա՛,հա՛, հա՛/Ճշմարտանման չէ/: (Ευθυμίαδης Μ./ Էվթիմիդիադիս Մ., 1981:139):

Հանրույթի կայունությունը և համերաշխությունը թույլ չեն տալիս իր անդամների տարաձայնությունները հեշտությամբ վերածել հակասության ու սպառնալիքի, ուստի խոսողները շփվում են ավելի ազատորեն:

4. *Բովանդակային արձագանքման գործառույթով կրկնության խոսող-խոսակից հաղորդում կապը:* Պարզաբանման կամ տարաձայնության գործառույթով բովանդակային արձագանքման կրկնությունները ներունակ կապ ունեն խոսողի հետ, քանի որ խոսողի կրկնության հիմնական նպատակը խոսակցի պարզաբանման պահանջին կամ տարաձայնությանը հասնելն է: Երկուսն էլ ուղղված են կրկնություն կատարող ունկնդրին: Մի ուղղությամբ կրկնությունն արտահայտում է խոսողի պարզաբանման պահանջը, երկրորդով՝ մատնանշում է տարաձայնությունը: Հաղորդման հետ կրկնության կապը դրսևորվում է ասվածի նկատմամբ խոսողի վերաբերմունքի մեջ [Keenan E.,,1977:130]: Արտահայտությունը կրկնվում է, որպեսզի «ՄԵԿՆԱԲԱՆՎԻ ԱԶԴԱՐԱՐՎՈՂ ԿԱՍԿԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ»: Դրանց «մեկնաբանման մարտահրավերը»՝ *բացասականությունը, հարցումը, զարմանքը* և այլն, կրկնության միջոցով դառնում են խոսողի պարզաբանումը: Եթե կրկնությունը չի ուղեկցվում հարցական բառույթով, ապա կրկնության գործառույթի բացահայտումը կատարվում է միայն

հնչերանգի միջոցով, քանի որ դրա միջոցով են պարզվում կրկնության ընդհանուր և առանձնահատուկ նպատակները:

5. *Բովանդակային արձագանքման կրկնության տեղեկատվությունը* հետհաղորդակցական նշանակություն ունի: Երբ կրկնորդի մեջ կրկնյալի բովանդակությանը ոչինչ չի ավելանում, ունկնդիրը կրկնելու շարժառիթը հասկանալու համար դիմում է կառույցից դուրս գտնվող այլ գործոնների օգնությանը: Է. Նոհը կրկնության «մեկնաբանություն» է համարում շեշտի ընտրությունը, միջավայրի ճանաչումը, արտահայտության հիմքերը, ինչպես նաև հնարավոր լեզվական ցուցիչները /հարցական բառեր, Noh E., 1995:138/: Սրանց հիման վրա կրկնության փոխազդեցիկ տեղեկատվության մեջ կարելի է «որսալ» խոսողի կասկածը՝ պարզաբանման պահանջից դեպի հակադրություն:

Ա:- Սա մարդը գեշ չգրեր կոր, հե՞:

Բ:- Այո՛, գեշ չգրեր: (Համաձայնություն/ Հ.Պարոնյան:266):

Ա:- Պատվակա՞ն լրագիր մ՛է:

Բ:- Ավելի պատվականը կրնար ըլլալ (հակադրություն/ Հ.Պարոնյան:266):

Հետհաղորդակցական նշանի առաջին տեսակը շրջասվում է այսպես՝ «ԿՐԿՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՑՈՒՅՑ ՏԱՄ, ՈՐ ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՄ ՔՈ ԱՍԱԾԻՆ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՄ ՏԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ»: Երկրորդ տեսակը շրջասվում է այսպես՝ «ԿՐԿՆԵԼՈՎ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐՊԵՍԶԻ ԻՄԱՆԱՍ, ԹԵ ՈՐ ԿԵՏՈՒՄ ԵՄ ՏԱՐԱՁԱՅՆՈՒՄ»: Հետևաբար գոյություն ունեն բովանդակային արձագանքման կրկնությունը բնութագրող երկու տվյալ, որոնք իբրև հետհաղորդակցական նշան նրան տարբերում են մյուսներից: Առաջին տվյալը շեշտադրումն է: Մեզ հանդիպած կրկնություններում շեշտը կարևոր դեր է խաղացել կրկնության ներգործող տեղեկատվությունը ճանաչելու գործում: Սակայն զգացմունքային ճնշման, համաձայնության ցուցման և խոսքին հետևելու բոլոր կրկնություններում կան օրինակներ, որտեղ Ա և Բ եզրերի շեշտերը կարող են նույնը լինել:

ա. *Հարցական շեշտադրում*

Ա: - Ի՞նչ կարող եմ անել… Ի՞նչ կարող եմ անել… /Նար-Դոս:415/:

բ. *Զգացմունքային պոռթկում /հուզական բռնկում /*

Ա:- Ես պապա՛ եմ ուզում, ես պապա՛ եմ ուզում…(Դ. Դեմիրճյան:552):

Առոգանույթով կրկնության մեջ ներդրված տեղեկատվությունը կարող է ճանաչվել որպես բացարձակ նույնություն: Իսկ արձագանքային կրկնության Ա և Բ մուտքերի հնչերանգները միշտ տարբերվում են, անգամ եթե Ա-ն հարց է կամ բացականչություն:

A: - Θα'ρθεί; / Ա: - Կգա՞: /Բնական հարց:

B: - Θα'ρθεί; Δηλαδί τι εννοείς όταν ρωτάς «Θα'ρθείե; /Բ: - Կգա՞: Այսինքն՝ ի՞նչ նկատի ունես, երբ հարցնում ես «կգա՞» (Ποντίκας Μ./ Պոդիկաս Մ., 1985:43):

Անգամ ձևով Ա եզրին նմանվող արձագանքային կրկնությունը, հնչերանգը փոխելով, հաղորդում է մի հավելյալ իմաստ. ի տարբերություն մյուս գործառույթների՝ հնչերանգն իր վրա է վերցնում հետհաղորակցական նշանի մեկնաբանման խնդիրը: Հարցական բառույթով բովանդակային արձագանքման կրկնության դեպքում հետհաղորդակցական նշանի մեկնաբանման դերն ընկնում է հարցական բառույթի վրա: Երկու դեպքում էլ Բ եզրը ազդում է Ա-ի վրա նրան, որպես կրկնության հետհաղորդակցական նշան, հավելելով «կասկածի» իմաստ, որով և այդ ներդրումը դառնում է փոխազդեցական: Եթե հնչերանգը և հարցական բառույթն արձագանքող կրկնության մեկնաբանության բանալի են, ապա դա նշանակում է, որ փոխանցվող տեղեկատվությունն այնքան կարևոր է, որ տեքստը չի կարող իրեն վտանգել երկիմաստությամբ:

3.5. ԱՂՄՈՒԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Կրկնության այս կարգին ենք դասում հաղորդակցման ծիրում տարբեր արգելքների պատճառով առաջացած կրկնությունները: Աղմուկը որոշակիորեն աղճատում է փոխանցվող տեղեկատվությունը և լեզվական կոդավորումը, իսկ հաղորդակցումը այն հաղթահարելու ուղիներ է փնտրում: Այդ ուղիներից մեկը «պահեստավորումն» է, որի հիմնական ձևը համակարգի տարբեր մակարդակներում սերվող կրկնություններն են: Որևէ տվյալի մեկից ավելի կրկնվելը բովանդակության փոխանցման երաշխիք է: Խոսակցի պահանջով ձևավորված կրկնությունը ուղղված է աղավաղված հաղորդման կամ չկայացած հաղորդակց-

ման ընկալմանը, ուստի մենք այն կոչում ենք «աղմուկի հետևանքով կրկնություն»: Այս կարգին ենք դասում տեղեկատվության փոխանցումը խաթարելու պատճառով առաջացած կրկնությունները, որոնք են, օրինակ՝ ցնցուղի ձայնը, որը խոչընդոտում է հաղորդակցմանը:

A: - Και το γελέκο ε; / Ա: - Իսկ վերնաշապի՞կը, է՞յ:

B: - Ποιο; /Κλείνει το ντους/; / Բ: - Ի՞նչը /անջատելով ցնցուղը/:

A: - Να σιδερώσω και το γελέκο; /Ա: -Վերնաշապի՞կն էլ արդուկեմ (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:,59):

Հաջորդ օրինակում կառույցը կրկնվում է հարցին չպատասխանելու պատճառով:

A: - Τι ώρα είναι: / Ա:- Ժամը քանի՞սն է:

B:- δεν απαντάει. /Բ: /Ոչ մի պատասխան/:

A: - Ε... θα πεις τι ώρα είναι; Θα μιλήσεις; Ա:- ԴԵ կասե՞ս ժամը քանիսն է: Կխոսե՞ս (Καρρας Σ./ Ս.Կառաս, 1986:32-33):

Աղմուկի հետևանքով առաջացած կրկնությունը կրկնություն է միայն խոսողի համար, քանի որ ունկնդիրը չի ընկալել խոսքը: Աղմուկի հետևանքով կրկնությունն իր նախնական տեսքով սերտորեն կապված է ներդրումը շեշտող կրկնության հետ: Եթե որևէ տվյալի կրկնվելը նշանակում է հաղորդման ապահով փոխանցում, ապա դրա բազմակի հայտնվելը նշանակում է հետհաղորդակցական նշանի ներդրում: Այս դեպքում կրկնության գործառույթների տարբերակումը կապված է նաև այլ գործոնների հետ: Նրա երկու գործառույթներն էլ ճանաչվում են որպես աղմուկի հետևանքով կրկնություն. մի դեպքում՝ հաղորդումը չի ընկալվել, և կրկնությունը չի պարունակում բովանդակային հավելում, մյուս դեպքում՝ խոսողն ընկալվել է, բայց, կրկնում է, որպեսզի փոխանցի նաև հետհաղորդակցական ներդրումը:

1. *Աղմուկի հետևանքով կրկնությունը ըստ ձևի* Ա-ի կողմից Բ-ին ուղղված կրկնություն է, որը կա՛մ տեղեկատվության համար հարց է առաջադրում, կա՛մ գործողության համար պահանջ. այլ խնդիր Ա-ն չունի:

Բ եզրի արտահայտության ձևերը: Աղմուկի հետևանքով կրկնություններն արտահայտված են մեր բացահայտած բոլոր հինգ ձևերով:

ա. *Անփոփոխ կրկնություն*

A: - Φέρε μου έναν καφέ. / Ա: - Ինձ սուրճ բեր:

B: - Τι; Δεν μου έχει γράψει γι'αυτό. /Բ:- Ի՞նչ: Ինձ չի՞ գրել դրա մասին:

A: - Φέρε μου έναν καφέ. /Ա:- Ինձ սուրճ բեր (Մանթέσης Π. / Պ.Մատեսիս, 1982:86):

բ. *Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություն*

A: - Καλέ, αυτό είναι από τ' άγραφα! /Ա:- Հարազա՛տս, սա չգրածներից է:

B: - Ποια άγραφα. Από τα γραμμένα και με μεγάλα γράμματα! Բ:- Ի՞նչ չգրած: Սա տպածներից է, այն էլ մեծատառերով: (Χασαπάδης Γ. /Գ.Խասապադիս, 1986:,35):

գ. *Կրկնություն տարրերի հավելումով*

A: - Πού σ' ευκόλυνε ο Θεός: /Ա: - Ու՞ր էր՝ Աստված քեզ օգներ:

B: -Τι; /Բ:- Ի՞նչ...**A**: - Πού σ' ευκόλυνε. λέω, ο Θεός να φκιάξεις κάτι τις μεγάλο; /Ա:- Ու՞ր էր, ասում եմ, Աստված քեզ օգներ՝ մի մեծ բան պատրաստեիր (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:84):

դ. Կրկնություն տարրերի հանումով

A : - (παίρνει την κουτάλα): Ορίστε, λέγε. / Ա: (Վերցնելով գդալը) - Խնդրեմ ասա՛: **B:** - Μπα. Κουτάλα; Τι... τη θες την κουτάλα; Ασ' την κυρά μου στον τέτζερη. /Բ:- Վայ...Գդա՞լ ... Ի՞նչ ես ուզում այդ գդալից: Տիկին դա սեղանին դրե՛ք:

A: - Λέγε. Ա: - Ասա՛ (Ευθιμιδιάδης Μ./Էվթիմիդիադիս Մ., 1981:90):

ե. Խառը կամ բարդ կրկնություն

A: - Δεν βρίσκω...Που είναι τα κλείδια μου; /Ա:- Չեմ գտնում...Որտե՞ղ են իմ բանալիները: B: - Τα κλείδια σου... Ναι, θα δώσεις λεφτά στην Αλέκα, για να πληρώσει αύριο για το εισειτήριο. /Բ: - Քո բանալիները...Հա Ալեկային փող կտաս, որ վաղը տոմսի համար վճարի (Καρρας Σ. / Ս.Կառաս, 1986:107):

2. *Խոսքի նախաձեռնությունը վերցնելու միջոցները:* Աղմուկի հետևանքով մեր կրկնություններում, խոսքային նույն ներդրման սկզբում հանդիպում ենք խոսքի մի հատվածի անմիջական կրկնության, որով նոր եկածը ցանկանում է զրույցի բռնվել և խոսելու իրավունք վերցնել աղմուկ հարուցելով: Խնդիրն այս բաժնում քննելը հետևանք է այն բանի, որ միշտ ուղեկցվում է սկսողի ստեղծած աղմուկով:

A: - Εεε... Ναι, βέβαια, βέβαία. / Ա:- Ըը... Այո, իհարկե, իհարկե:

B: - Στην αρχί, στην αρχί μαζί πηγαίνανε: /Բ:- Սկզբում, սկզբում միասին էին գնում (Χασαπάδης Γ. /Գ.Խասապադիս, 1986:61):

Բնական երկխոսություններում խոսելու հերթը նախապես համաձայնեցված չէ ինչպես թատերական խոսույթում, այն գտնվում է խոսողների շարունակական բանակցության ներքո: Մուտք գործողը, խախտելով զրույցը, «աղմուկով մխրճվում» է զրույցի մեջ՝ կրկնելով մյուսի խոսքի սկիզբը և անցնելով բազմախոսության: Դա ձև է, որը մնացածներին ստիպում է լռել: Այսպիսի կրկնությունները ընթացող զրույցին զուգահեռ խոսելու առումով վերաբերում են «աղմուկի» ընդհանուր պատճառին և մեր ուսումնասիրածներից բնույթով տարբերվում են նրանով, որ՝ ա/ չունեն շարահյուսական ինքնավարություն, քանի որ խոսքը կառույցի սկզբի կրկնության մասին է, որը պետք է շարունակվի մնացածի լռելուց հետո, բ/ իբրև ուղղակի կրկնություն համընկնում է խոսքային նույն ներդրմանը, մինչդեռ այն ամենը, ինչ դիտել ենք մինչև հիմա, արտահայտվում են հաջորդ ներդրումներում, եթե ուղերձը չի փոխանցվել, գ/ ունեն «մրցակցային բնույթ», իսկ աղմուկի պատճառով մեր կրկնություններն առավել «համագործակցային են»:

3.*Աղմուկի հետևանքով կատարվող կրկնության սերումը նույն կամ այլ խոսողի կողմից, միջատարածք:* Աղմուկի հետևանքով կրկնությունը միշտ կատարվում է նույն խոսողի կողմից: Ուղերձի վերահաղորդման դեպքում սպասվող խոսքային ներդրման փոխարեն լինում է լռություն կամ ունկնդրի ոչ բավարար արձագանք, որը խոսքի ներդրման առումով դատարկություն է առաջացնում:

A: - (χαμογελάει): Σ’ αρέσει; / Ա - Հավանեցի՞ր:

Β: - Τέλειος. Ποια είναι η δόση: /Բ:- Կատարյալ է: Ինչպե՞ս ես պատրաստում:

Α: - Χρόνια φτιάνω καφεδάκια. /Ա:- Արդեն տարիներ է, ինչ սուրճ եմ պատրաստում:

Β:-Ποια είναι η δόση; Բ:- Ինչպե՞ս ես անում(Καρράς Σ./Կառաս Ս., 1986:150-151):

Այս դեպքը արձագանքային կրկնության եռամաս հաջորդականություն է ներկայացնում. դրանք են՝ Ա եզրում եղած «խնդիրը», ունկնդրի կողմից դրա ազդրարումը և փոխհատուցումը Ա խոսողի կողմից: Ա եզրի նկատմանբ կասկածի ներդրումը փոխհատուցվում է հաղորդակցության ծիրում /ոչ թե բուն հաղորդման մեջ/ և հենց առաջին արտահայտության կրկնությամբ [Goffman, M.,1976:273]:

4.*Աղմուկի հետևանքով կատարվող կրկնությունը* ճանաչելուն օգնում է միջավայրի ընդհանուր տեղեկատվության հետ ընդգրկված Ա եզրի բառային գործողության ներդրումը: Իսկ եթե այն չկա, ապա, որպես կանոն, դրան հաջորդող անշեշտ կրկնությունն օժանդակում է, որ ուղերձը փոխանցվի անվնաս: Չարձագանքելու դեպքում կարևոր է, որ կրկնությունը ընդգրկի Ա կողմի հարցը կամ պահանջը: Խոսողի հանդեպ ունկնդրի լռությունը աղմուկի հետ կապելը խոսողին հիմք չի տալիս կասկածի տակ դնել ունկնդրի համագործակցելու միտումը: Մի կողմ թողնելով աղմուկի պատճառների քննարկումը՝ նշենք, որ դրանք պայմանավորված են հաղորդակցման մեծ միջատարածքով [Persson G.,1974:162], հաղորդակցման ծիրով, խոսքային իրադրությամբ, տեքստի կառուցվածքով, խոսքի տրամաբանական կապերով (պատճառահետևանքային, ժամանակատարածական և այլն) [Cherry C.,1957:117], խոսողի և ունկնդրի հաղորդակցական անհատական հատկանիշ-ներով, սեռային, տարիքային, կրոնական, մշակութային պատկանելությամբ, հանդուրժողականությամբ, միջմշակութային արժեքային տարահամակարգերով և այլն: Ստորև քննարկենք աղմուկի որոշ դեպքեր, որոնց աղբյուրը խոսողը կամ ունկնդիրն են, թեև լինում են նաև այլ պատճառներ:

ա. Ունկնդիրը ուղերձը չի լսել՝ իրական աղմուկի, ասենք՝ ցնցուղի պատճառով:

բ. Ունկնդիրը ուղերձը չի լսել՝ հեռավորության պատճառով:

Α: - [...] Νάτσινα!... (πιο δυνατά)... Νάααατσινα!... / Ա:- Նա՛ցինա... /ավելի ուժեղ/ Նա-ցի-նաաա՛ (Կեչաϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:12):

գ. Ունկնդիրը ուղերձը չի լսել՝ արդեն հեռացած լինելու պատճառով:

Α: - Στυλιανός Γιαννόπουλος... (Ρίχνει μια ματιά γύρω και ξαναλέει δυνατότερα)... Στυλιανός Γιαννόπουλος.../ Ա:- Ստիլիանոս:/Նայում է չորս կողմը և բղավում ավելի բարձր/ Ստիլիանո՛ս Յանոպուլոս: (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:176):

դ. Ունկնդիրը ուղերձը չի լսել քնած լինելու պատճառով:

Α: - [Η Α σκύβει στον Β και τον σκουντάει ελαφρά, να ξυπνήσει]Α: Αγόρι. Αγόρι. (Παύση). Αγόρι. /

Ա:/ Ցնցում է Բ-ին, որ արթնանա/ - Տղա', լսի'ր: Տղա': Տղա' (Կեչաϊδης Δ./ Կեխաիդիս Դ., 1978:94):

ե. Ունկնդիրը չի լսել՝ մի ուրիշի հետ զրույցի բռնված լինելու պատճառով:

զ. Ունկնդիրը չի լսել՝ մի այլ բանով տարված լինելու պատճառով:

է. Ունկնդիրը չի լսել, չի պատասխանել կամ պատասխանել է անորոշ մի բան:

Α: - Και... στο γάμο πώς μπλέχτηκες; / Ա:- Ինչպե՞ս ստացվեց, որ ամուսնացար:

Β: - Και είχα όνειρο να πάω κάποτε στη Βενετία. /Բ:- Ես երազում էի Վենետիկ գնալ:

Α: - Στο γάμο. Πώς μπλέχτηκες: Ա: - Ինչպե՞ս եղավ, որ ամուսնացար (Μαντέσης Π./ Պ. Մատեսիս, 1982:33):

ը. Ունկնդիրը չի լսել, կամ չի ըմբռնել ուղերձը /ցուցիչներ չկան/ վատ կամ ցածր արտասանելու, լեզվին վատ տիրապետելու, վատ լսողության պատճառներով:

Α: - (στη ΓΙΑΓΙΑ και ΜΑΡΙΚΑ): Θα σας ψήσει ο ήλιος αυτού. (Η ΓΙΑΓΙΑ σηκώνει αγριωπή το κεφάλι της. Δεν καλάκουσε τι της είπε). / Ա: - (Տատիկին և Մարիկային) Արևը ձեզ կայրի: /Տատիկը շշմած բարձրացնում է գլուխը: Չի լսել ասվածը/: Α: - Θα σας ψήσει ο ήλιος αυτού. /Ա:- Արևը ձեզ կայրի (Կեչաϊδης Δ./Կեխաիդիս Դ., 1978:14):

Թ. Ունկնդիրը չի չպատասխանում, որովհետև՝ չգիտի, կամ այլ պատճառներ ունի չպատասխանելու, չի ցանկանում պատասխանել/ենթարկվել և այլն:

A: - Mac δουλεύει. / Ա: - Մեզ ձեռք է առնում:

B: - E...; /Բ: - Հը՞:

A: - Μας δουλεύει ο κύριος... να αυτό μας κάνει. /Ա: - Մեզ ձեռք է առնում պարոնը... Էդպես էլ կա (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986:112):

Ժ. Ունկնդիրը նոր հարցադրմանը չի պատասխանում: Նա մտորում է դեռ նախորդ հարցադրման առումով՝

A: - Φέρε μου έναν καφέ. / Ա: - Ինձ սուրճ բեր: **B:** - Τι; Δεν μου έχει γράψει γι'αυτό. /Բ:- Ի՞նչ: Ինձ չի՞ գրել դրա մասին:

A: - Φέρε μου έναν καφέ. /Ա:- Ինձ սուրճ բեր (Μαντέσης Π. / Պ.Մատեսիս, 1982:86):

5. Աղմուկի հետևանքով տեղի ունեցող կրկնություններում *խոսող - խոսակից - հաղորդում կապն* առնչվում է հաղորդակցության ուղերձին խանգարող գործոններին, որոնց կրկնությունը դառնում է լարված ներունակություն: Դրա լավագույն օրինակ է տալիս հայտնի Պաղտասար աղբարը համանուն կատակերգությունից. «Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունը հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է, որ բաժնվինք իրարմե, և ըստ օրինի արտոնեք զիս ուրիշ կին մը առնելու» (Հ. Պարոնյան:585): Այս ուղերձի համար «աղմուկ» են ծառայում խնդրի լուծմանը խանգարող բոլոր այն միջավայրերը, որտեղ հերոսը վերը բերված տեքստի կամ նրա հատվածների բազմակրկնության միջոցով փորձում է հասնել դրական տեղաշարժի: Այսպիսի կրկնությունը Գ.Պերսընը (Persson, 1974:162,168) դասում է «նպատակադրումով կրկնության» տեսակին, քանի որ խոսողը շարունակում է կրկնել այնքան, մինչև հասնի իր ցանկացած արդյունքին կամ ստիպված լինի կանգ առնել: Սակայն այս անվանումը մեզ դիպուկ չի թվում, քանի որ կրկնության բոլոր դեպքերն էլ որևէ նպատակադրում ունենում են, ուստի ավելի հարմար է այն կոչել «հետապնդող նպատակադրումով» կրկնություն: «Աղմուկի» հետևանքով կրկնության տարբերությունը մյուս տեսակներից այն է, որ նրա լարված ներունա-կությունը արտաքին հանգամանքների արդյունք է, որոնք կապ չունեն խոսողի և նրա պահանջների հետ: Այս կրկնությունն ուղերձի հետ կապված է իր

սերմամբ և հավաստում է, որ «ուղերձն ըմբռնված է, շփումը կարելի է շարունակել»:

6. *Աղմուկի հետևանքով կատարվող կրկնության տեղեկատվությունը* և՛ հաղորդակցական, և՛ ներգործող է: Հաղորդող-ընդունող-ուղերձ դասական սխեմայում հաղորդակցության իմաստն այն է, որ ուղերձն ընդունողին հասնի՝ հաղթահարելով նախ հաղորդակցության աղմուկը, և երկրորդ՝ փոխազդեցության ժամանակ խուսափելով այլ տիպի «աղմուկներից»: Եթե դա տեղի չունենա, ապա իմաստ չի ունենա դիմել կրկնությանը, որպեսզի *շեշտենք, հաստատենք, ցույց տանք* մեր սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդման նկատմամբ: Աղմուկի հետևանքով կրկնությունը հաղորդակցության միակ պայմանն է: Միայն համագործակցության մակարդակին անցնելով կարելի է համարել, որ կրկնությունը գործում է իբրև խոսողի վարկած՝ «քանի որ դու չես լսել, ես կրկնելով քեզ տալիս եմ ինձ հետ շփվելու երկրորդ հնարավորություն՝ համագործակցությունը շարունակելու նպատակով»:

3.6. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Պատկերավորումը նշանակիչի և նշանակելիի որոշակի ընդհանրությունից բխող հետևանք է, երբ մեկ նշանի ֆիզիկական ձևը համընկնում է արտաքին աշխարհի որևէ առարկայի կամ գործընթացի հետ: Լեզվական կոդի առումով նշանակիչ-նշանակելի ընդհանրությունը տարբերվում է լեզվական նշանները բնութագրող սոսյուրյան հայտնի պայմանականություն-կամայականությունից: Լայոնզը [Lyons J., 1977:71] նկատել է, որ. «Եթե լեզվի պատկերայնությունը սահմանափակ լիներ, ապա իմաստների մեծ մասը իր արտահայտությունը հեշտությամբ չէր գտնի»:Պատկերավորող նշանների օրինակները լուսաբանվում են բնաձայնական անվանումներով և հին հունական լեզվափիլիսոփայությունից հայտնի «հնչյունային սիմվոլիկայի» տեսությամբ: Որքան խորանում ենք պատկերավորող կրկնությունների ուսումնասիրության մեջ, այնքան հանգում ենք նշանակիչի և օբյեկտի միջև եղած բնական կապի գաղափարին: Ընդհանրությունների բնույթը կարող է տարբեր լինել՝ բնութագիր, հատկանիիշ, հարաբերություն, համանման կառույցներ և այլն: Այստեղ խոսք է գնում

կրկնության միջոցով ժամանակային, քանակական կամ տարածական ժավալում ձևավորող պատկերավորման կառույցի ստեղծման մասին:

Ա:- Ժամանակի հարց է, - ասաց տեր հայրը, - մի շաբաթ, երկու, մի ամիս, երկու, մի տարի, երկու, մի երեխա, հետո՝ երկու…Հետո…Ի՞նչ կա որ…Ամուսնացած մարդ կլինես, երեխաներ կունենաս, տարիներ կանցնեն… (Վ.Սարոյան, 144):

Հազվադեպ է լինում, որ պատկերավորող կրկնությունը նշվի ոչ թե ժամանակային, այլ տարածական տևողության մեջ: Այս երկու դեպքերն էլ, սակայն, կրկին կրում են տևականության և շարունակականության գաղափարը, որը դրսևորվում է կրկնության միջոցով: Հաջորդ օրինակում շեշտված է գործողության շարունակականությունը, տևողությունը, ուղու կրկնումը, այլ ոչ թե հենց ուղին:

Բ: - Ա՛խ, Ամերիկան…Հարցնում ես՝ սրտո՞վս է: Ի՞նչ ասեմ…Գնա - արի…Ծանոթ-անծանոթ մարդկանց հետ սինիներ շուռ տուր: Եղածը դա է: Գնա - արի, գնա - արի… ծանոթ - անծանոթ, ծանոթ - անծանոթ… Սինիներ շուռ տուր… Ի՞նչ մարդիկ են, ի՞նչ իմանաս, եղբայր…(Վ.Սարոյան, 145):

Այլ դեպքերում գոյականների կրկնությունը կարող է արտահայտել ինչ-որ բանի մեծ քանակ կամ առատութուն. “Փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ… Երկու կոպեկ փող են տալիս, բայց հոգիդ են հանում … (Հեռուստատեսային ֆիլմից): Այստեղ պատկերավորումն ի հայտ է գալիս քանակի ընդհանուր ներկայացմամբ՝ «Փող+փող+փող+փող»: Թե՛ հայերենի և թե՛ հունարենի օրինակներում կրկնելիության - շարունակականության - տևականության օրինակները որոշակի դրսևորումներ ունեն:

Գոյականների այն եզակի կրկնությունները, որ նշում են Թ.Նակասը և Է. Էնկվիստը [Νακας Θ., 1996α:480, Enkvist E., 1981:97-104], մեր կարծիքով, ընդհանուր կրկնության մեջ վերաբերում է երևույթի, իրադարձության, բայց ոչ քանակի կրկնությանը: Օրինակ՝ Α: - Υποχώρηση, υποχώ-ρηση, υποχώρηση, και στο τέλος δεν άντεξε και έγινε νευρικός. Ա: - Նահանջ, նահանջ, նահանջ, վերջում նա չդիմացավ և դարձավ նյարդային (Κεχαϊδης Δ./Դ.Կեխաիդիս, 1978:120):

Համենայնդեպս կրկնությունը մեծացնում է տվյալների «քանակը»: Թ.Նակասը [Νακας Θ.,1996ա:471] ամբողջ կարգն անվանում է «կուտակային» համարելով, որ բայերի «կրկնության ամեն փուլում եղած քանակը շարունակական աճ է ունենում»: Մեր օրինակներում բայերի կրկնության մեջ կուտակային աճը ընդհանուր բնույթ չի կրում և կարող է դիտվել որպես բայի իմաստային բնութագիր: Ընդհակառակը, թվում է, որ կրկնելիությունը ընդհանուր իմաստային կարգ է, որը պատկերավորող կրկնության բնույթով միավորում է բոլոր տեսակի կրկնությունները: Պատկերավորող կրկնությունը մենք ներկայացնում ենք որպես ինքնուրույն և առանձին գործառույթ: Եթե նշված լեզվաբանները պատկերավորող կրկնությունը հանգեցնում են Ա եզրի կրկնա- կամ եռապատիկ կիրառմանը, ապա պետք է նշենք, որ լեզուներն ունեն նաև պատկերավորման ավելի տնտեսող ձև, քանի որ տարածաժամանակային ցուցիչները /միշտ, շարունակ, անընդհատ, ամեն տեղ, ամենուրեք և այն/ նպաստում են նույն կառույցի կրկնությունների քանակի կրճատմանը, իսկ կոդավորված արտահայտությունները տևականությունը դրսևորում են ավելի պատկերավոր բնութագրով: Համեմատենք՝

Α: - Όλο λες θες ν’ αγαπήσεις και θες ν’ αγαπήσεις. / Ա: - Ուզում ես սիրել, ուզում ես սիրել… (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1978:13) շրջասվում է «Անընդհատ ուզում ես սիրել» արտահայտությամբ:

Α: - Τουλάχιστον ο ναυτικός φεύγει, αλλά τα λεφτά λεφτά. Μήνας μπαίνει, μήνας βγαίνει, στέλνει συνέχεια…/Ա:- Եթե նավաստին գնում է, գոնե փողերը, փողերը… Ամիսն սկսվում է, ամիսն ավարտվում է, շարունակ ուղարկում է (Σκούρτης Γ., Գ. Սկուրտիս 1976:17):

Գործողության շարունակականությունը կամ տևականությունը կապ չունեն այն բանի հետ, թե տվյալներից որն է առաջինը: «Գնա-արի, գնա-արի, գնա-արի» կառույցներում պատկերավորումը ձեռք է բերվում բառերի կրկնության և ոչ թե զբաղեցրած դիրքի շնորհիվ: Որոշ դեպքերի իմաստային հիմքը ժամանակային գործընթացն է, օրինակ՝ Α: - Δύο ώρες γεύμα, όλλοι τρώνε και τρώνε, και πίνουνε…Ա: - Երկու ժամ ճաշկերույթ, բոլորը ուտում են՝ և՛ ուտում են,

և՛ խմում են... (Σκούρτης Γ., /Գ. Սկուրտիս 1976:22): Հաջորդում շեշտվում է երևույթների տևականությունը.

Α: - Η εφιμερίδα βράχεται και στεγνώνει, βράχεται και στεγνώνει πάλι και πάλι.

Ա: - Թերթը թրջվում է և չորանում, թրջվում է և չորանում կրկին ու կրկին (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:48): Առաջինի կառուցվածքն ավելի կանոնավոր է, քան երկրորդինը, որը գուցե շարահյուսորեն ավելի մեծ ծավալ ունի, որն էլ նրան ավելի պարզ ու ինքնատիպ է դարձնում: Որոշ ուսումնասիրողներ Գ.Պերսընի նման ուղղակի դիմում են կրկնականությանը, որը դրսևորվում է պայմանական կամ դարձվածային կրկնություններում [Huisman R.,1973:37, Καψωμενος Ε.,1975:-345-346, Derbyshire D.,1977:178, Tannen D., 1983:362-363, Shepherd S., 1985: 534, ΝΑΚΑΣ Θ.,1996ա,բ]:

1.*Պատկերավորող կրկնության քանակությունը:* Խոսքում որևէ իրադարձության լեզվական ձևակերպումը ավելի սեղմ է, քան նրա արտահայտած արտալեզվական ժամանակային իրադրությունը: Կառույցը խոսքում կարող է կրկնվել 2 կամ 3 անգամ, իսկ գործողությունը՝ ունենալ շատ ավելի կատարումներ: Ըստ Գրայմսի [Grimes J.,1972:521, 1975: 81]՝ միավորի բազմապատիկությունն արտահայտում է գործողության երկարատևություն: Քանի որ խոսույթի պատկերավորությունը լեզվական կառույցի հարաբերությունն է արտալեզվական միջավայրին, ուստի իրականության պատկերավորությունը բազմապատիկությամբ ներկայացնելն ավելի արդյունավետ է:

Α: - Μια γριπούλα. Αυτό ήτανε. Είχε τριανταοχτώ.,.τριανταοχτώ και μισό. Κι εγώ νόμισα θα του κρατήσει δέκα μέρες. Ε, λοιπόν σε πληροφορώ: εφιδρώσεις - εφιδρώσεις, εφιδρώσεις - εφιδρώσεις, εφιδρώσεις - εφιδρώσεις. .. παπ το πέταξε το κρυολόγημα. /Ա: - Դե հարբուխիկ էր: Երեսունութ էր...Երեսունութ ու կես: Ես էլ մտածեցի մի տաս օր կտևի: ԵՎ ասեմ քեզ՝ քրտինք ու քրտինք, քրտինք ու քրտինք, քրտինք ու քրտինք... ու դուրս եկավ մրսածությունս (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:30):

Խոսույթում բազմապատիկությունը կարող է նաև խոսողի կողմից երևույթը ճոխ ներկայացնելու՝ սուբյեկտիվ ցանկություն լինել, քան իրադարձության

երկարատևության ընդգծում (թեև միմյանց հետ կապ ունեն): Ի վերջո, նկարագրվող քանակությունը հստակ չափելի չէ: Պատկերավորող կրկնությունը պայմանականորեն է պատկերավոր. «ԿՐԿՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԲԱԶՄԱՊԱՏԻԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱՄ», կամ՝ «ԿՐԿՆՈՒՄ ԵՄ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ, ՈՐՊԵՍԶԻ ՑՈՒՅՑ ՏԱՄ, ՈՐ ՈՒՆԿՆԴԻՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԱԼԻ ՈՐՊԵՍ ՈՉ ՉԱՓԵԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ»: Այն պահից, երբ հեռանում ենք կրկնողականությունից, շարունակականությունն ու տևականությունը կարծես ավելի «պատկերավոր» են արտահայտվում, քանի որ կրկնյալի վերարտադրումը «շարունակվում է» խոսքի շղթայում, իսկ կրկնորդի արտահայտությունը դրանից «երկարում է»: Կրկնության բազմապատիկությունը ևս պատկերավոր է, եթե «Թուղթ, թուղթ, թուղթ, թուղթ…» արտահայտությունը դիտենք իբրև ենթաբազմությունների գումարման արդյունք: Կրկնությունը պատկերավոր կերպով ներկայացնում է գործողությունների ծավալումը՝ առանց դրանք լեզվականորեն միմյանցից զատելու:

2. *Պատկերավորող կրկնության բովանդակությունը:* Պատկերավորող կրկնության տևականության բովանդակությունը կարող է արտահայտվել հականիշ բառույթների, կառույցների հակադրությամբ:

Α: - Θα δίνεσαι - θ’ απομακρύνεσαι. Θα δίνεσαι - θ’ απομακρύνεσαι. Ώσπου στο τέλος θα βραχυκυκλωθεί αυτός και θα σε στείλει στο διάολο /Ա: - Կմոտենաս-կհեռանաս, կմոտենաս-կհեռանաս, մինչև որ, ի վերջո, նա գժվի ու քեզ ուղարկի գրողի ծոցը (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:164-165):

Α: - Ανεβάζει τ’ ορεινό πυροβολικό στο ύψωμα και αρχινάει... Να και τούτη, να και κείνη. Να και τούτη, να και κείνη... / Ա:- Բարձրացնում է լեռնային հրետանին բարձունքներն ու սկսում... Դես ու դեն: Դես ու դեն: Դես ու դեն (Κεχαϊδης Δ./Դ.Կեխաիդիս, 1978:88):

Խոսողի կրկնության պահանջը շատ հաճախ արտաբերվում է հարցական հնչերանգով և հատուկ ցուցիչներով.

Α: - «Λοιπόν, το ξέρετε, ότι στην παρέα ο Δημήτρης όλο για σας μιλάει; Όλο ο Ανέστης κι ο Ανέστης μας λέει. Το ξέρετε;ե /Ա: - Ուրեմն տեղյա՞կ եք, որ

Դիմիտրին անընդհատ ձեր մասին է խոսում: Անե՛ստիս հա Անե՛ստիս: Գիտե՞ք (Μουρσέλας Κ./Կ.Մուրսելաս,1981:33):

Α: - Διότι της έχω πρήξει τ' αυτιά για πάρτη σου. Ο Αρίστος κι ο Αρίστος.

Α: - Αυτός όλο να με φιλάει θέλει. / Ա :- Նա աննդհատ ձգտում է ինձ համբուրել:

Β: - Άντρας σου είναι. /Բ:- Նա քո ամուսի՛նն է:

Α: - Κάθε λίγο «έλα να σε φιλήσω κι' «έλα να σε Φιλήσω. /Ա: - Ամեն առիթով՝ «արի համբուրեմ» հա «արի համբուրեմ» (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս,1978:73): Արտահայտություններում կրկնվում են նաև բնաձայնությունները. Α: - «Με ζαλίσατε μ'αυτά τα καρυδάκια. Κράτς και κράτς, κράτς και κράτς. /«Գլուխս տարաք այդ ընկույզներով՝ չըրթ հա չըրթ, չըրթ հա չըրթ» (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:12):

Ա:- Էլի սկսվեց այս անձրևը՝ չըռ հա չըռ, չըռ հա չըռ /ΚεχαϊδηςΔ./Դ.Կեխաիդիս,1979:29/:

Կրկնողականությունն արտահայտվում է նույն կամ այլ պահերին ընթացող շարժման կամ մտքի տևողությամբ և միաժամանակ ուղեկցում է շարժմանը և մտքին: Լեզվական միավորների հարաբերությունները անմիջականորեն զուգակցված են փորձի հարաբերություններին կամ ընթացքին՝ Α: - Μαρούλι... μαρούλι το μαρούλι στο ψυγείο / Ա:- Մառոլ... Մառոլլ.../սառնարանում փնտրում է այն (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994: 50):

Α: - (σκέφτεται)գ.Τι μας θέλει! Τι μας θέλει!... / Ա:- /Մտորում է/ Ի՞նչ է ուզում մեզնից ... Ի՞նչ է ուզում մեզնից... (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:35):

Α: - Έλεγα κι εγώ... «Τόσο τέλειος! Τόσο υπέροχος! Δεν είναι δυνατόν! Κάτι θα μου βγάλει. Δεν μπορεί. Κάτι θα μου βγάλει. Κάτι θα μου βγάλει κάτι θα μου βγάλει... Και-νάτο! /Ա: - Ես էլ ասում էի...Այսքան հիանալի, այսքան կատարյալ... անհնար է: Մի բան գլխիս բերելու է: Անհնար է: Մի բան անելու է: Ու խնդրե՜մ' (Κεχαϊδης Δ./Դ.Կեխաիդիս, 1994:157):

Նույն խմբում են նաև շարժմանն ուղեկցող բաշխական կրկնությունները: Ա:- Էս քեզ, էս ինձ: Սա էլի քեզ, սա կրկին քեզ, սա անընդհատ քեզ, սա միշտ քեզ: («Հարսանիք Մալինովկայում» կինոֆիլմից):

Α: - Και σ’ αρπάζει το ενάντιο κύμα... και σε πάει αλλού... κι αλλού... κι αλλού... /Ա: - ԵՎ քեզ կվերցնի հաջորդ ալիքը...ու կտանի հեռու...հեռու...հեռու... (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:112):

3. *Պատկերավորող կրկնության ձևերը:* Իմացական տեղեկատվություն արտահայտելու պատճառով պատկերավորող կրկնությունը մյուս գործառույթներից շատ ավելի ձևեր է ընդունում: Ա կողմի արտահայտած պատկերավորող կրկնության տեսակը հիմնականում ներկայացուցչականն է: Պատկերավորող կրկնություններն արտահայտում են նաև ուղղորդվածության տեսակը, օրինակ՝ «Մոտեցար-հեռացար: Մոտեցար-հեռացար» կամ՝ «գնա-արի, գնա-արի»: Մեր օրինակներում չեն հանդիպել պատկերավորող կրկնության արտահայտչական, պարտավորեցնող, բացատրական գործառույթներ:

Բ կողմի ձևերը: Պատկերավոր կրկնությունը հանդես է գալիս հետևյալ ձևերով՝

ա/ *Անփոփոխ կրկնություն*՝ Α: - Ζωή είν’ αυτή; Σκέτο άγχος. Μη αυτό, μη εκείνο, μη το ένα μη το άλλο. / Ա: - Հապա սա կյա՞նք է: Միայն հուզմունք: Սա մի արա, դա մի արա, երրորդը մի արա... (Ευθιμιδιάδης Μ./ Մ.Էվթիմիդիադիս, 1981,1:90): Զուգահեռ կառուցվածքները պատկերավորի համեմատությամբ ավելի պայմանական են, քան պարտադիր, այսինքն՝ արտահայտում են կրկնողականության դարձվածային իմաստներ շատ թե քիչ պատկերավոր ճանապարհով՝ «մի շաբաթ - երկու, մի ամիս - երկու, մի տարի - երկու, մի երեխա, հետո՝ երկու...»:

բ/ Բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնությունը ներկայանում է հականիշների իմաստային կրկնության մեջ՝

Α: - Σώγαμπρο μ’ ανεβάζουνε, σώγαμπρο με κατεβάζουνε. /Ա:- Ինձ մեկ բարձրացնում էին, մեկ իջեցնում էին (Ματέσης Π./ Պ.Մատեսիս, 1982:28):

Պատկերավորող կրկնության մեր երկլեզվյան օրինակներում չհանդիպեցին տվյալների հավելումով, հանումով և խառը կամ բարդ տեսակի կրկնության մյուս երեք ձևերը: Այս օրինակներում կրկնվող տվյալները կարող են միանալ կամ չմիանալ «և» շաղկապով, որը շարահյուսորեն ավելի ազատ է: Բայական պատկերավորող կրկնության մեջ գործածական են անորոշ, անկատար դերբայները, խոնարհված որևէ բայաձև: Մեր օրինակներում կա նաև ապառնին:

Անորոշն արտահայտում է կրկնության հետ իրական գործողության կապը, և մեկ բայի կրկնության յուրաքանչյուր փուլը կարող է ընկալվել իբրև ամփոփ փաստ: Կրկնվող բայի դերը միշտ եզրափակող է, բացի պատկերավորման դեպքից, որը վերաբերում է լրացում պարունակող արտահայտություններին:

Α: - Να βλέπεις το βαπόρι να φεύγει... να Φεύγει... να φεύγει... και συ να 'σαι όξω πεταμένος σα σκουπίδι εκεί στα ντοκ... / Ա:- Տեսնում ես՝ գոլորշին գնում է...գնում է... գնում է, իսկ քեզ աղբի պես դուրս կնետեն նավահանգստում...(Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:162-163):

Կրկնվող բայը միշտ «հաստատում է», որովհետև, ինչպես գրում է Պերսընը [Persson G., 1974: 114], «Չի կարող կրկնվել մի բան, որն արտահայտված չէ»:

4.*Պատկերավորման գործառույթով կրկնության սերումը նույն կամ այլ խոսողի կողմից, միջատարածք:* Պատկերավորող կրկնությունը խոսույթի կառույցներում միշտ արտաբերվում է նույն խոսողի կողմից խոսքային նույն ներդրման մեջ, նույն ասույթում:

Ա:- Կանիծե՛մ և կլռեմ: Կանիծե՛մ և կլռեմ: Կանիծե՛մ և կլռեմ (Վազգեն վեհափառի խոսքից Մոսկվայում Արցախյան խնդրի կապակցությամբ 1989թ.): Պատկերավորող գործառույթով կրկնությունը կարող է կատարվել ինչպես նույն, այպես էլ այլ խոսողի կողմից Ա եզրից անմիջապես հետո կամ փոքր միջատարածքով: Երկու դեպքերում էլ խոսողը կրկին օգտագործում է անցած արտահայտության լեզվական նյութը /կամ նրա մի մասը/ և, անկախ այն բանից՝ ինքն է գործածել, թե մյուս խոսողը, կցում է այն նոր տեղեկատվությանը:

5.Պատկերավորող գործառույթով կրկնությունը ճանաչելուն օգնում են իմաստային մի քանի հատկանիշներ և նախադասության քերականական տվյալները: Հետևաբար անհնար է այն շփոթել կրկնության այլ գործառույթների հետ: Նրա բոլոր դեպքերն էլ կարող ենք փոխակերպել շրջասույթով, որը կարտահայտի տևականություն կամ քանակի աճ և կօգտագործի բառային ցուցիչներ:

Α: - «Άρχισε πάλι αυτή η βροχή... Τσιρ-τσιρ, τσιρ -τσιρ. τσιρ-τσιρ...ե / Ա: - "Էլի սկսվեց այս անձրևը... չըռ հա չըռ, չըռ հա չըռ: (Շրջասություն՝ «Այս անձրևն անընդհատ չըռչըռում է») (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1979:29): Շրջասույթի այս

հնարավորությունը, առանց «շեշտում եմ» բայի և կրկնյալի փոխարինման, ցուց է տալիս, որ կրկնությունների այս տեսակը տարբերվում է մինչ այժմ ուսումնասիրվածներից: Սրա դերն է այնպես ներկայացնել լեզվական իրականությունը, որ կրկնության յուրաքանչյուր եզրը նույն դեպքը պատկերի առանձին արտահայտությամբ /գործողության կրկնակի կատարում, պահ առ պահ շարունակվող իրադարձություն/, օր.՝ Α: - Έκλαιγε, έκλαιγε, έκλαιγε... Όλη νύχτα δεν έπαψε να κλαίει. / Ա: - Լացում էր, լացում էր, լացում էր... Ամբողջ գիշեր չդադարեց լալուց (Καμπανέλλης Ι./ Յ.Կաբանելիս 1982:143): «Առանձին արտահայտություն ասելով՝ հասկանում ենք նաև իրադրության տարրերի ավելի ընդարձակ դրսևորումը, որը տեղեկություն է արտահայտում ժամանակային ներքին հաջորդման մասին» [Bonhomme M., 1998:72]: Ինչպես նշում է Ա. Մոզերը [Մոշեր Ա., 1996:79], հունարենի երկխոսություններում այսպիսի կրկնությունը լեզվական առանձին միջոցներով չի տարբերակում տևողության, շարունակականության, կրկնողականության, «ժամանակային ներքին կառուցվածքի» իմաստային բաժանումները: Դրանք երևում են համատեքստի կազմակերպման կամ գործողությունների նկարգրման միջոցով: Դա հունարենի ժամանակի ձևաբանական հատկանիշն է, որը չի կարող կարգերը այլ կերպ տարբերակել [Մոշեր Ա., 1996:87]:

6. *Պատկերավորման գործառույթով կրկնությունը խոսող-խոսակից-հաղորդում կապի առումով* ուղղված է ունկնդրին, որն ընկալում է արտացոլվող իրադարձության ձևը: Երբ խոսողը ցանկանում է առավել պատկերավոր արտահայտել իրադարձությունը, ընտրում է այլ ձևեր:

7. *Պատկերավորման գործառույթով կրկնության կապի սահմանումը տեղեկատվության հետ* որոշ դժվարություններ է ներկայացնում, որոնք կախված են նրա սերման բնույթից և պայմանականության աստիճանից. Ա: - «Գնա-արի, գնա-արի, ծանոթ-անծանոթ, ծանոթ-անծանոթ...» (Վ.Սարոյան:145): Այստեղ կրկնությունը դիմում է արտալեզվական իրականության հետ առանձին բառույթներով կապված ուղերձին, որը համադրվում է «գնա-արի» մեկ անգամ, «գնա-արի» երկրորդ անգամ ձևերում: «Այնտեղ լավ էր...Արաբը արաբ էր, թուրքը՝ թուրք, քուրդը՝ քուրդ» (Վ.Սարոյան:146): Հաղորդման հետ

պատկերավորման գործառույթով կրկնության կապը տեղեկատվական է: Խոսողը կրկնում է նույն իրականությանը դիմելու համար, ինչը հասկանալի է դարձնում ուղերձի սխեմատիկ պատկերավորումը:

Կարևոր է հասկանալ կրկնության երկակի կապը տեղեկատվության հետ. յուրաքանչյուր եզր տեղեկատվություն է ներմուծում, իսկ երկուսը միասին գործում են իբրև մեկ լեզվական նշան, որը, սակայն, տարբերվում է մինչ այժմ ունեցած գործառույթներից՝ «ՆՈՒՅՆ ՏՎՅԱԼԸ ԿՐԿՆՈՒՄ ԵՄ ԱՅՆՔԱՆ, ՄԻՆՉԵՎ ՈՒՆԿՆԴԻՐՆ ԸՆԿԱԼԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ»:

3.7. ՄԻԱՎՈՐՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Խոսույթի կրկնության գործառույթների շարքում բավականին զգալի է միավորող կրկնությունը և նրա դերը տեքստի տեղեկատվության հին և նոր տվյալները կապակցելու գործում: «Կրկնությունը պարզապես տվյալների վերարտադրություն չէ, այլ միավորման մեխանիզմ՝ հայտնիից անհայտին անցնելու համար, որը կլրացնի, կբացատրի և կզարգացնի արդեն ասվածը», - նշում է Բաբինյոտիսը [Μπαμπινιώτης Γ., 1991:267]: Կրկնությունը «տեքստի, նախադասության որոշ բառեր, կամ քերականական բնութագրեր միավորում է նախորդի կամ հաջորդի հետ» [Hoey M.,1991:3]: Ըստ էության, սա հենց իմացության ուղին է: Շատերը կրկնության շարունակականությանը վերաբերող գրականության մեջ նույնպես շեշտում են նրա տեքստային կապակցման գործառույթը [Halliday M., Hasan R., 1976] կամ կապակցմանն աջակցելու մասին պնդումը [Hoey M.,1991:7]: Իրականում տեքստի լեզվաբանության համար տեքստակազմության միտքը կենտրոնական է: Տեքստի կապակցող միջոցների ցանկում (հղում, բացատրություն, փոխարինում և այլն) կարևոր դեր է հատկացվում նաև կրկնությանը, որը Հոյի կաղապարում աստիճանաբար հարստանում և զարգանում է որպես տեքստի կապակցման բովանդակային կարևոր բաղադրիչ: Իսկապես, երկխոսությունը շատ «յուրահատուկ» տեքստ է: Եթե ըստ Ս. Լևինսոնի, գրական, գիտական, իրավաբանական խոսույթում որևէ

տեքստի համար պետք է պարզել, թե լեզվական որ տվյալների շնորհիվ է այն ընկալվում իբրև ամբողջություն, ապա բնական երկխոսության կազմակերպման մեջ կապն իրագործվում է բառային գործողությունների մակարդակում [Levinson S., 1983:288, Stubbs M., 1983:9]: Մենք, հետևելով մեր օրինակների տրամաբանությանը, համոզվեցինք, որ այս պնդումը խիստ պայմանական է: Իրականում նման սուր բևեռացում գոյություն չունի: Երկխոսությունները՝ որպես խոսք և տեքստ, որպես լեզվական արդյունք, նույնպես հանդես են բերում գծայնություն, ուստի խոսույթի երկխոսություններում հանդես եկող միավորման գործառույթը ևս սատարվում է լեզվական միջոցներով: Ուղղակի խնդիրն այն է, որ այդ լեզվական միջոցները ունակ չեն միշտ ինքնուրույնաբար ապահովելու երկխոսության միավորումն իբրև հաջորդությունների շարք: Խոսույթի վերլուծությունը ցույց է տվել, որ երկխոսության կառուցվածքը նախադասությունից տարբերվում է նրանով, որ պատկանում է և՛ լեզվական և՛ ոչ լեզվական կազմակերպման մեջ գտնվող մի մակարդակի, [Sinclair J., Coulthard P., 1975:11, 24, Coulthard P., 1977:7]: Բնական երկխոսության կառուցվածքը գոյանում է զրուցազույգերի և խոսքի հաջորդականության սահմանափակումների միջոցով, որն ուժեղացվում է լեզվի կայունությամբ [Halliday M., Hasan P., 1976:327, Schiffrin D., 1987:8]: Կայուն կապերն ավելանում են կառուցվածքային կապերին: Լեզվաբաններն այսօր ընդունում են, որ խոսքը և տեքստը լեզվի կառուցվածքին հակադրում են իրենց կազմակերպվածությունը: Իսկ բառային կրկնությունն իր կայունությամբ ստանձնում է այդ կազմակերպվածությանն աջակցելու կարևորագույն դեր [Hoey M., 1991:13-14], այն տարբերությամբ, որ տեքստի վերլուծության կաղապարները չեն պարունակում կրկնության ներգործող գործառույթ, ուստի և չեն հետաքրքրել բնական խոսքով զբաղվողներին [Tannen D., 1989:50-51, Fontanier P., 1977:21]: Շատերը խոսույթի կապակցվածությունը որոշ եզրերով մոտեցնում են տեքստի կառուցվածքայնությանն իբրև միջանձնային ներգրավվածության նախադրյալ և միջանձնային կապերի ստեղծման միջոց [Johnstone B., 1984:251-252, Norrick N., 1987:254, 256, Tannen D., 1989: 52-53]: Մեր կարծիքով, կրկնությունը գուցե պարտադիր

պայման չէ կապակցված զրույցի համար, և նրան չի տալիս ձևային այն կազմակերպվածությունը, որը բխում է վերտեքստային հատկությունից: Միավորող կրկնության հիմնական կապակցող ուժը բնական խոսքում հին և նոր լրատվության կամրջումն է. նախորդ արտահայտության տվյալները կրկնվում են իբրև հիմք, որպեսզի միտքը հարստանա նոր լրատվությամբ:

Այսպիսով, միավորող ենք համարում այն կրկնությունը, որը նոր տեղեկատվության սահմաններում, թեև ոչ ներգործող ձևով, բայց հստակ ներառում է լեզվական միջոցներից կազմված խոսքի տվյալները: Խոսքը կրկնության այն գործառույթի մասին է, *որը տեքստում նախադասություններն է միավորում, զրույցի մեջ՝ արտահայտությունները:* Այն տարբերվում է մեր կողմից արդեն ուսումնասիրված ներգործող գործառույթներից, քանի որ նրա կրկնորդը նույն դիրքն զբաղեցնելով ու դրա միջոցով ներգործող տեղեկատվություն փոխանցելով՝ կրկնյալի վրա չի ազդում շեշտով և հաստատող այլ միջոցներով: Միավորող կրկնությունը կրկնվող տվյալները ներառում է նոր տեղեկատվության մեջ՝ նպաստելով երկխոսության միավորմանը:

Α: - Τίμια! Να τήνε κάνεις κατάπλασμα την τιμή σου! Τι με νοιάζει εμένα η τιμή σου! Από τιμή τέτοια, είμαστε φουλ εδωμέσα. Παρέα θέλω εγώ. / Ա: - Պատվո՛վ: Ինձ չի հետաքրքրում քո պատիվը: Նման պատվից այստեղ բոլորն էլ ունեն: Ես շրջապատ եմ ուզում: (Μαντέσης Π. / Պ.Մադեսիս, 1982:72): Այստեղ զրույցի թեման «պատվի» ըմբռնումն է, որը կրկնության շնորհիվ ամեն արտահայտության մեջ իմաստային մի նոր դաշտում է հայտնվում և նոր տեղեկատվություն է փոխանցում:

1.*Հարցուպատասխանը միավորող կրկնության մեջ:* Ներգործող և միավորող կրկնության մեջ կրկնյալի հարցի տվյալները կրկնորդում կարող են պահպանվել:

Α: - Συστημένο; /Ա:- Գրանցվա՞ծ է:

Β: - Συστημένο. /Բ:- Գրանցված է: (Այո) (Μαντέσης Π./ Մադեսիս Պ., 1982:36):

Արտահայտության բառային գործողության փոփոխությունը այստեղ իրականացվում է հնչերանգի փոփոխությամբ, որով նոր տեղեկատվությունն արտահայտվում է ներգործման ոլորտում [Keenan E, 1977:132, Levinson

S.,1983:293]: Արտալեզվական իրականության վերաբերյալ տեղեկատվությունը նոր արտահայտություն կազմելու փոխարեն դրսևորվում է հաղորդման կրկնյալի նկատմամբ կրկնորդի դիրքով ու բնույթով /հաստատում, կասկած և այլն/, այդ իսկ պատճառով այն համարում ենք ոչ թե միավորող, այլ ներգործող կրկնության տեսակ: Նախորդից շատ չտարբերվող մի այլ օրինակում լեզվական նյութի կրկնվելն ազդում է Ա եզրի վրա՝ դարձնելով նրան իմացական տիպի նոր տեղեկատվություն: Գոյություն ունի կրկնության միջոցով պատասխանի դերի ճանաչման և դասակարգման հետ կապված դժվարություն, որն այնքան զգալի չէ, եթե պատասխանը «մշակում է» հարցի նյութը: Բերված օրինակում պատասխանն օգտագործում է հարցի տվյալների կրկնությունը և լեզվական միջոցներով ժխտման նոր տեղեկատվություն է ներմուծում, որն արդեն միավորող գործառույթ ունի՝

Α: - Έφυγε; /Ա: - Գնա՞ց:

Β: - Δεν έφυγε. /Բ: - Չգնաց: (Σκούρτης Γ. /Գ.Սկուրտիս, 1982:32):

2. Թեմայի նախապատրաստումը միավորող կրկնության մեջ արտահայտվում է նրանով, որ այն առկա է առաջին արտահայտության սկզբում և կրկնվում է երկրորդում:

Ա: - Արամ թագավո՞րը: Լավ, որտե՞ղ է Արամ թագավորը (Դ.Դեմիրճյան,144):

Ա:- Ինչ նորությու՞ն: Վա՛տ նորություն...Դասալիքները շատացել են, պարոն գնդապետ (Դ.Դեմիրճյան, 210):

Α: - Διακοπές. Πρέπει να πάω διακοπές. /Ա: -Արձակուրդ: Պետք է արձակուրդ գնամ (Κεχαϊδης Δ. /Դ.Կեխաիդիս, 1980: 61):

Այս օրինակների ընդհանրությունը նրանցում ի հայտ եկող մի առանձին տվյալ է, որն այնուհետև տեղ է գտնում շարահյուսորեն ավարտուն կառույցում և հեշտացնում է նրա տեղեկատվական դաշտի մեկնաբանումը: Մեր օրինակնե-րում Ա եզրը հանդես է գալիս անկախ Բ արտահայտության մեջ, որը հաջորդում և լրացնում է նախորդի միտքը և հաճախ կրկնվում է ընգծված շեշտումով: Ա եզրի անփոփոխ կրկնությամբ խոսողը պատվիրում է զրույցի թեմա, բայց նրան ավելացնում է իր վերաբերմունքը: Կրկնությունն օգնում է ցույց տալու, թե

ինչպես է կրկնորդի արտահայտած նոր միտքը միանում թեմային: Գ.Պերսընն այդ դիրքի գոյական կառույցները կոչում է հոգեբանական օբյեկտներ, քանի որ խոսողի այդ պահի գլխավոր նպատակը խոսակցի ուշադրությունը խնդրի վրա հրավիրելն է [Persson G.,1947:91]:

A: - A! Τη μηχανή! Που έχουμε τη φωτογραφική μηχανή; / Ա: - ... Սա՛րքը: Ո՞րտեղ է մեր ֆոտոյի սարքը: (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1994:185):

Շատ հետազոտողների մոտ Ա եզրը անգամ անկախ դիրքում բնութագրվում է իբրև շեշտը կենտրոնացնող և ոչ թե թեմայաստեղծող գործառույթով: Այն, որ նախորդումն օգտագործվում է մասնակիցների ուշադրությունը հրավիրելու և որևէ բան հայտարարելու համար, երևում է մեր հետևյալ օրինակներից:

A: - [...] Άκου! Άκου μουσική!..../Ա:- ...Լսիր: Լսիր երաժշտությունը (Σκούρτης Γ. /Գ.Սկուրտիս, 1982:27):

A: - Βάλ' το παλτό σου. / Ա:- Հագի'ր վերարկուդ:

B: - Δεν απορώ... Δεν απορώ μέσα στο σπίτι με το παλτό. /Բ: - Չեմ կարող: Տան մեջ վերարկուով չեմ կարող (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:12):

A: - Για τον Καραμήτσο. Ρώτησες για τον Καραμήτσο; /Ա:- Կառամիցոյի մասին: Հարցրի՞ր Կառամիցոյի մասին (Κεχαϊδης Δ./ Դ.Կեխաիդիս, 1980:35):

Այստեղ Ա եզրը նախանշում է զրույցի թեման, իսկ նոր տեղեկատվությունից բաղկացած միավորող կրկնության Բ եզրը նրան տալիս է ամբողջական մեկնաբանություն և կապում ավարտուն տեղեկատվական դաշտի հետ: Կրկնությունը որպես կապակցում է գործում՝ մի կողմից անհայտը դարձնելով նոր տեղեկատվություն, մյուս կողմից՝ հին և նոր տեղեկատվությունը դնելով նույն մակարդակի վրա:

3.*Հակադրության արտահայտումը միավորող կրկնության մեջ:* Միավորող կրկնության առավել հաճախակի գործառույթներից է ամեն հակադրության արտահայտումը:

Կրկնությունը հայտնի տեղեկատվությունը ավելացնում է նորին:

A: - Για να της ανάβαμε ένα κερί. / Ա: - Մի հատ մոմ վառեինք նրա համար:

Β: - Θα της ανάψετε πολλά κεριά. Բ: - Նրա համար դեռ շատ մոմեր կվառեք (Σκούρτης Γ. /Սկուրտիս Գ., 1982:43):

Մեր օրինակներում հակադրություն արտահայտող կրկնության կարևոր միջոցներն են ժխտումը, դերի փոփոխումը, բուն հակադրումը, որոնք զուգահեռույթ են ձևավորում:

ա. Ժխտումով հակադրում

Α: - θα τον ζεχάσουμε. / Ա:- Կմոռանանք նրան:

Β: - Δεν τονζεχνάμε. /Բ:- Չենք մոռանա նրան (Χασαπάδης Γ./Խասապադիս Գ., 1986:43):

Ա:- Ի՞նչ կխմենք ուրեմն:

Բ:- Ոչինչ ... ես ըմպելիք չեմ գործածեր (Հ.Պարոնյան,332):

Նոր տեղեկության կրող տվյալի ժխտումն անպայմանորեն այլ խոսողի կողմից է ներդրվում, քանի որ նույն մարդը չի կարող միաժամանակ արտահայտել նույն երևույթի և՛ հաստատումը, և՛ ժխտումը:

բ. *Դերերի փոփոխմամբ հակադրում:* Այս դեպքում Բ եզրն արտահայտում է հակադրություն, որը բխում է Ա եզրի կողմից իրեն հատկացված դերից: Ցուցադրման և հղման ցուցիչները հետևում են դերափոխությանը, որին հաճախ ընդգծված ավելացվում է անձնական հակադրվածությունը:

Α:- Εγώ τη δουλειά μου κάνω... Εσύ να μου πεις. ./ Ա: - Ես իմ գործն եմ անում...Դու՛ ասա:

Β: - Κι' εγώ τη δουλειά μου κάνω. /Բ: - Ես էլ ի՛մ գործն եմ անում (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986-1:29):

Α: - Λυπάμαι για λογαριασμό σου. / Ա:- Ցավու՛մ եմ քեզ համար:

Β: - Εγώ λυπάμαι. /Բ:- Ե՛ս եմ ցավում:

Β: - Εγώ σε λυπάμαι. / Ա:- Ես քե՛զ համար եմ ցավում (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986:,142):

Α: - Πότε αρχίζουμε; / Ա: - Ե՞րբ ենք սկսում:

Β: - Αρχίζεις. /Բ: - Դու՛ ես սկսում (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:20):

Հակադրություն արտահայտելու նշված ձևերը կարող են համադրվել, եթե երկու խոսողներն էլ բևեռացնում են իրենց դիրքերը:

A:- (ξαφνικά θυμώνει. Κοφτά): Δεν περάσαμε ωραία. / Ա: (Կտրուկ) - Լավ չանցկացրինք:

B:- (ευτυχισμένοχαμόγελο):Εγώ πέρασα ωραία. /Բ:- (Երջանիկ ժպիտով) Ես լա՛վ անցկացրի (Καρράς Σ./ Ս.Կառաս, 1986-1:30-31):

գ. *Հակադրությունը զուգահեռույթի մեջ:* Օգտվելով տեքստում բառերի ունեցած կազմակերպական դերից՝ խոսողները հակադրության ձևերում կարող են օգտագործել նաև զուգահեռույթը:

A: - Και πού θές να ξέρω; / Ա:- Եվ որտեղի՞ց ես ուզում իմանամ:/ B: - Και πότε ήξερες εσύ; /Բ: - Եվ ե՞րբ ես դու իմացել (Σκούρτης Γ./ Գ.Սկուրտիս, 1982:34):

Կրկնությունը կրկնորդին համեմատում է կրկնյալի հետ, հակադրում է Բ և Ա խոսողներին՝ միաժամանակ ներդնելով նոր տեղեկատվություն: Է.Վինտերը [Winter E.1974, 1979] զուգահեռույթի օրինակների մեջ հակադրությունը դիտում է իբրև համե-մատության մասնավոր դեպք: Կառույցի մի մասը մնում է անփոփոխ, իսկ մյուսը նոր տեղեկատվություն փոխանցելու նպատակով փոխարկերպվում է հակադրական համեմատության: Փոխակերպման գաղափարը Վինտերի համար կենտրոնական է, որի վրա նա հիմնում է կրկնության միավորող գործառույթը: Նախադասության կրկնվող կառույցը ստեղծում է մի դաշտ, ուր փոխարինումը իմաստ է ձեռք բերում իր դիրքի շնորհիվ: Այստեղ զուգահեռույթը չի ծառայում միայն հակադրության արտահայտմանը. այն դրանով նաև մտքեր է կապակցում: Զուգահեռույթ կարող ենք ունենալ նույն խոսողի կատարած կոնկրետացման և ընդհանրացման դեպքերում հավասարապես:

A:-Και εδώ μαθαίνω, πως θα πέξω κεντρικό ρόλο. Δεν ξέρω τι θα γίνει, τι θα πούνε οι συνάδελφοι. / Ա: - ...Եվ այստեղ եմ իմանում, որ խաղալու եմ գլխավոր դերը: Չգիտեմ ինչ կլինի, ինչ կասեն գործընկերներս:

B:- Όλλες οι προσπάθιές σου σε κατέλυξαν σ'άυτό, που παρουσιάστηκε ένα καινούριο πρόσωπο στο θεάτρο, οποίος πριν δεν ύπηρχε πουθενά. Δεν ύπηρχε πουθενά.

Բ:- Քո բոլոր ջանքերը տարան նրան, որ մի նոր դեմք հայտնվեց թատրոնում, որը նախկինում գոյություն չուներ: Գոյություն չուներ ո՛չ մի տեղ (Καμπανέλλης Γ./ Յ.Կաբանելիս, 1982:126):

Այլ խոսողի կողմից կառուցված զուգահեռույթի ունեցած հարաբերությունը հակադրությունն է, որի արտահայտման նպատակով առաջին երկու տիպերի կրկնության հնարավորություններն ավելի հաճախ են երևում փոքր տարիքի երեխաների խոսքում [Keenan E., 1977:131-133, Watson-Gegeo A., Boggs S., 1977:76-77] կամ ավելի մեծ տարիքի [Brenneis D., Lein L.,1977:56-57]:

4.*Միավորող կրկնության ձևերը:* Ա եզրի արտահայտության տեսակի առումով միավորող կրկնությունը կարող է ընդգրկել նրանից տարբերվող կամ չտարբերվող ամեն լեզվական նյութ և ցուցադրել իր կապակցող ուժը՝ որպես կրկնության ամենաազատ գործառույթ: Ա եզրի միավորող կրկնությունների հարաբերություններում գոյություն ունեն որոշ սահմանափակումներ, սակայն դրանք չեն վերաբերում բոլոր ձևերին, օրինակ. Β:- Άσε τους ταξιτζήδες της Γερμανίας. Τους ξέρουμε τους ταξιτζήδες της Γερμανίας. Πες μας τι έγινε. /Բ: - «Հանգիստ թող Գերմանիայի տաքսիստներին: Գիտենք դրանց, այդ Գերմանիայի տաքսիստներին: Ասա թե ի՞նչ է պատահել» (Κεχαϊδης Δ. /Կեխաիդիս Դ., 1994:113):

Բ եզրի արտահայտության ձևերը: Միավորող կրկնությունը դրսևորվում է մեր առանձնացրած բոլոր 5 կարգերով, քանի որ կարող է միավորել տեքստի ցանկացած կառույց:

ա. *Անփոփոխ կրկնության* հանդիպում ենք միայն հարց-պատասխան կաղապարում, որտեղ գոյություն չունեն փոփոխող հղման ցուցիչներ: Հարցը հակիրճ է և ուղղված

հաղորդակցող կոնկրետ կողմին:

Α: Ευπαρουσίαστος; /Ա:Վայելչատե՞ս էր:

Β: Ευπαρουσίαστος. / Բ:Վայելչատես էր (Καρράς Σ./Կառաս Ս., 1986:64):

բ. Բառի կամ քերականական իմաստի փոփոխություններով կրկնություն

Α: - Πολύ πλούσιος; / Ա:- Շա՞տ հարուստ է:

Β: - Αληθινός Ωνάσης. Բ:- Իսկական Օնասիս (Καρράς Σ. /Կառաս Ս., 1986-1:64):

գ. *Կրկնություն՝ տվյալների հավելումով*

Ա:- Ծառայելն ամո՞թ ես համարում:

Բ:- Ծառայելն ամոթ չեմ համարում, կարծում եմ, որ կարիք չեմ ունենալ ծառայելու /Ա.Շիրվանզադե,4:132/:

դ. *Կրկնություն՝ տվյալների հանումով:* Զարմանալիորեն այս տեսակն էլ է հանդիպում հարց ու պատասխանի ժամանակ, քանի որ թվում է թե անհնար է նոր տեղեկատվություն ավելացնել մի արտահայտության վրա, որտեղից տվյալներ են հանվում: Այստեղ միայն սեղմ պատասխանի դեպքում է, որ կրկնվող տվյալը կարող է գործել կապակցված՝ որպես նոր և հին տեղեկատվությունների միասնություն:

Ա:- Ի՞նչ արած, վիրավորված ինքնասիրությունը երբեմն անգութ է լինում:

Բ:- Վիրավորված ինքնասիրությու՞նը… (Ա.Շիրվանզադե, 137):

ե. *Խառը կամ բարդ կրկնությունները* միավորող կրկնության սովորական ձևերն են և արտաբերվում են նույն կամ այլ խոսողի կողմից:

Ա:- Արի՛:Արի՛ անբախտ տատի, տես թոռանդ գլուխն ինչ է եկել:

Բ:- Ի՞նչ թոռ, այ աղջկերք, ի՞նչ է պատահել (Հ.Թումանյան, 392):

5.*Միավորող գործառույթով կրկնությունը* կարող է սերվել ինչպես նույն, այնպես էլ այլ խոսողի կողմից, Ա եզրից անմիջապես հետո կամ միջատարածքով: Երկու դեպքերում էլ խոսողը կրկին օգտագործում է անցած արտահայտության լեզվական նյութը (կամ նրա մի մասը), չնայած այն բանին՝ ինքն է գործածել այն, թե մյուս խոսողը, և այն մանրամասնելով կցում է նոր տեղեկատվությանը՝ արտահայտելով իր անհամաձայնությունը: Ասույթի բովանդակությունը երկու դեպքերում էլ ենթարկվում է փոփոխությունների:

6.Միավորող գործառույթով կրկնությունը ճանաչելի է նոր ներմուծված տվյալ-ների հետ հին տվյալների կապակցման միջոցով: Ինչպես նշում է Է.Վինտերը [Winter 1974: 10], հաղորդակցության մեջ անհայտը կարող ենք փոխանցել միայն հայտնի անվանումներ գործածելով: Այսինքն, հաղորդակցությունը ըստ կոդավորողի, ճիշտ է, եթե նոր տվյալներով հագեցած հաղորդումը պարունակում է ապակոդավորողին ծանոթ անվանումներ: Միավորող կրկնությունը իր բնույ-

թով դառնում է խաղ՝ նորի և հնի, հայտնիի և անհայտի, հաստատունի և փոփոխականի միջև: Ինչ վերաբերում է ճանաչման չափանիշներին, այստեղ իրավիճակն այլ է, քան մյուս գործառույթներում, քանի որ կրկնության երկու եզրերը չեն ազդում միմյանց վրա, բայց կրկնվող տվյալների համար տարբեր տեղեկություններ քաղելիս դիմում են արտալեզվական իրականությանը: Այս տարբերվող տեղեկատվությանը ավելանում են լեզվական այլ տվյալներ:

Α: - Το ταξί! Ήρθε το ταξί! Πω πω! Ήρθε το ταξί και δεν είμαι έτοιμος! / Ա:- Տաքսին: Եկավ տաքսին: Այ քեզ բան…Եկավ տաքսին, իսկ ես դեռ պատրաստ չեմ (Κεχαϊδης Δ./ Դ. Կեխաիդիս, 1980:60):

՝Այսպիսով, նախորդ քննարկված դեպքերի նման, խոսակիցներին պետք չէ բացատրել, թե ինչու է խոսողը նույնը կրկնում 2, 3 կամ ավելի անգամ՝ դրանով զգալիորեն նվազեցնելով տեղեկատվությունը: Խոսակիցները նոր տվյալների կրկնության պատճառը հասկանում են ամեն անգամ նոր հավելումների և նոր իմաստի շնորհիվ: Եթե կրկնությունը լեզվական միջոցներով նոր տեղեկությունը կամրջում է հնի հետ, ապա այն միավորող է: Լինում են նաև անփոփոխ կրկնություններով դեպքեր, սակայն սովորաբար միայն փոփոխվող կրկնությունն ունի ներգործող գործառույթ: Է.Վինտերը [Winter, 1974, 1979] փորձել է կոդավորել այն միջոցները, որոնցով կրկնությունը արտահայտությունը միավորում է դրա բերած տեղեկատվության հետ: Դրանք, համեմատության և համադրության միջոցով զարգանալով, կարող են արտահայտել ընդհանրացում, հակադրություն և տրամաբանական հաջորդականություն՝ հիմնվելով կրկնությամբ արտահայտված պատճառահետևանքային կապերի վրա:

7.*Միավորող գործառույթով կրկնության համար խոսող-խոսակից-հաղորդում կապն* ուղղված է նախ խոսողին: Կրկնության ինքնությունը քիչ է զգացվում, քանի որ այն սերտաճում է մի արտահայտության հետ, որի համար կարևորը նոր տեղեկատվությունն է: Կրկնությունն ուղղված է նաև խոսակցին, որի համար հաղորդում է լրացուցիչ տեղեկատվություն, որպեսզի կապակցի հինը և նորը: Դրա շնորհիվ նույն իրականությանը վերաբերող կրկնյալը և կրկնորդն ունենում են տարբեր ներդրումներ:

8.*Միավորող գործառույթով կրկնության կապը տեղեկատվության հետ* հենց կրկնվող կառույցների բովանդակության միավորումն է, որով այն տարբերվում է այլ գործառույթներից: Միավորող է այն կրկնությունը, որի տվյալները տեղեկատվական դաշտում միմյանց հետ կապվում են լեզվական միջոցներով: Կրկնության բերած նոր տեղեկատվությունը ներգործող չէ, քանի որ Ա եզրը կասկած կամ որևէ հուզականություն ներդնելու խնդիր չունի: Լեզվական միջոցներով ձևավորված նոր տեղեկատվությունը Բ-ի արտահայտության մեջ է՝ «Արծվի սրընթացությունը, որի մասին նա տեղեկություն չունի, համարում եմ իմը, ու առյուծի փառահեղությունն էլ, որի մասին նա տեղեկություն չունի, իմն եմ համարում» (Վ. Սարոյան,3:7): Քանի որ կրկնությունը այստեղ չունի տեղեկատվության ծավալման տեղ, ուրեմն խոսակիցը փոխազդեցության դաշտում է: Ընդհակառակը, այն փաստը, որ ռեման կրկնորդի մեջ է, նվազեցնում է նրա տեղեկատվական դերը: Արտահայտության թեմա-ռեմա զույգը հաջորդաբար են տեղեկատվություն բերում, որին, իբրև կամուրջ, կրկնության եզրերը ինտեգրվում են համագործակցելու նպատակադրումով: Ասույթի մեկնաբանող տվյալները Բ եզրում դառնում են ռեմա:

Ա:- Ի՞նչ սխալ արի, - հարցրի սերժանտին:

Բ:- Պիտի կոչումդ հայտնեիր:

Ա:- Բայց նա անուն ազգանունս էր ուզում:

Բ:- Պիտի կոչումդ հայտնեիր (Վ. Սարոյան, 3:98):

Ըստ Գրայմսի [1972:21]՝ Բրազիլիայի և Նոր Գվինեայի բնիկների լեզուներում տեղեկատվական զրույցի յուրաքանչյուր մուտքում կրկնվում են նախորդից ընտրված հատվածներ, որոնցում ամեն անգամ ավելացվում է տեղեկատվության մի նոր մասնիկ: Այսպիսով, եթե միավորող կրկնությունը տեղեկատվություն չի բերում, ապա կապակցում է երկխոսության տեղեկատվական կառուցվածքը [Տե՛ս նաև Benveniste E., 1966:52]:

ԱՄՓՈՓՈՒՄ: Սույն գլխում հանգամանորեն ներկայացված են կրկնության բացահայտված ներդրումը շեշտող, հուզական լարման, համագործակցության, բովանդակային արձագանքման, աղմուկի հետևանքով առաջացած, պատկերա-

վորման, միավորող գործառույթները և նրանց տարբերակները: Առանձնահատուկ քննարկված են դրանց բնույթը, դրսևորման առանձնահատկությունները, Ա եզրի արտահայտության տեսակները և Բ եզրի ձևերը: Վերջում՝ կրկնության առավել ամբողջական բնութագրման նպատակով, բոլոր գործառույթներն անց են կացվում մի քանի հայեցակերպերի խաչաձևվող հետազոտություններով, որոնցից են՝ կրկնության արտահայտման ձևերը, կրկնության սերումը նույն կամ այլ խոսողի կողմից և դրանց միջատարածքը, կրկնությունների ճանաչման չափանիշները, խոսող - խոսակից - հաղորդում կապի տեսակը, կրկնության բերած տեղեկատվությունը, որոնց լույսի տակ առավել ամբողջական են ներկայանում յուրաքանչյուր կրկնություն-գործառույթի բնութագիրն ու հստակ տեղն ընդհանուր տիպաբանական դասակարգման մեջ:

Որպես կրկնության գործառույթների ամփոփիչ բնութագրություն կարելի է նշել հետևյալը:

Ներդրում շեշտող կրկնությունն, այսպիսով, աչքի է ընկնում շեշտի կամ այլ ցուցիչների շնորհիվ և «ՇԵՇՏՈՒՄ ԵՄ» բայաձևով շրջասելու հնարավորությամբ: Նրա նպատակն ամբողջ հաղորդման կամ նրա որևէ կառույցի կատարած ներդրման շեշտումն է, որը կատարում է խոսողը՝ ունկնդրին մոտ տարածութ-յունից: Այս դեպքում կրկնությունը գործում է որպես հետհաղորդակցական նշան: Այն ունկնդրին «հուշում է», թե ինչու չի ներկայացվում իմացական նոր տեղեկատվություն: Հին տեղեկության շեշտումը կատարվում է խոսողի ցանկությամբ: Նկատել ենք, որ շեշտումը դրսևորվում է նաև կրկնության այնպիսի առաջնային գործառույթի դեպքում, ինչպիսին հուզական լարվածության արտահայտումն է, որը, սակայն, չի կարող բացատրվել «շեշտում եմ» բայի շրջասությամբ: Կարող ենք ասել, որ ներդրման և շեշտման իմացական բովանդակությունն արտահայտվում է նույն ուղիով, որով արտահայտվում է նաև ներգործման բովանդակությունը:

Հուզական լարում արտահայտող կրկնությունը բնութագրվում է միջավայրի տվյալներով և խոսողի հուզական լարվածությունից բխող բացականչական շեշտով: Սակայն դրանք արտահայտիչ կամ հաստատող կրկնությունների նման

չեն կարող վերապատմվել, շրջասվել: Նրանց տեքստային բավանդակությունը թույլ է, քանի որ կառուցված է խոսողի հուզական ներաշխարհի դրսևորման և ոչ թե ունկնդրի տեղեկացման նպատակով: Նրանց տեղեկատվությունը ներգործող բնույթ ունի և, որպես հետհաղորդակցական նշան, ընդամենը «տեղեկացնում է» խոսողի հուզական լարման մասին:

Համագործակցության գործառույթ ունեցող կրկնությունները հանդես են գալիս նույն կամ այլ խոսողի կողմից Ա եզրին հարող միջատարածքում և բնութագրվում են կա՛մ ցուցիչներով, կա՛մ որպես կրկնության Բ եզր հանդես գալով: Նրանք կարող են շրջասվել «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ», «ՀԵՏԵՎՈՒՄ ԵՄ ՔՈ ԽՈՍՔԻՆ» և այլ արտահայտություններով, քանի որ նրանց նպատակն է իբրև ընկալման ցուցիչներ արտահայտել, որ Ա կողմն արդեն ըմբռնված է կառույցի կա՛մ իմացական, կա՛մ փոխազդեցական բովանդակության մակարդակներում: Նրանք միտված են ունկնդրին և ներկայանում են որպես հետհաղորդակցական նշան, քանի որ նրանց տեղեկատվությունը ներգործող բնույթ ունի:

Արձագանքող կրկնությունները գլխավորապես ներգործող տեսակի են՝ տեղեկացնում են հետագա պարզաբանումների անհրաժեշտության և նախազգուշացնում՝ հաջորդող տարաձայնության մասին: Նրանց հատկանիշներից են գլխավորապես հարցական հնչերանգը, երբեմն՝ հարցական բառույթը: Ընդօրինակող կրկնության հետ նրանց տեղեկատվությունը միշտ ուղեկցող կասկածն է, իսկ տարբերությունն այն է, որ մի դեպքում Ա խոսողին տրվում է ինքն իրեն շտկելու և պարզաբանվելու հնարավորություն, մյուս դեպքում՝ միանգամից տարաձայնություն է արտահայտվում:

«Աղմուկի» պատճառով կրկնությունը բնութագրում ենք ունկնդրի արձագանքի բացակայությամբ, որը «աղմուկի» հետևանք է: Նրա Բ եզրը ունկնդրի կողմից չի ընկալվում որպես կրկնություն, քանի որ նա տեղյակ չէ Ա եզրի գոյության մասին:

Պատկերավորող կրկնության համար բնութագրական է, որ այն նույն հաղորդման ընթացքում ուղղակիորեն իրագործվում է խոսողի կողմից: Նրա նպատակն է նկարագրական ձևով արտահայտել որևէ իրադարձության

շարունակականությունը, տևողությունը, կրկնումը կամ քանակի աճը: Այն ուղղված է ունկնդրին և, հակառակ կրկնության այլ կարգերի, գործում է ավելի իմացական, քան ներգործման ոլորտում: Այն կրկնակի տեղեկատվություն է տալիս. նրա յուրաքանչյուր մասը բերում է իր ուղերձը, մյուս կողմից՝ ունկնդրի համար այն գործում է իբրև նշան, որը նա պետք է լրացնի մտքում:

Միավորող կրկնությունը հայտնի է իր երկու բնութագրով՝ ա) ձևի առումով այն դրսևորվում է գլխավորապես իբրև խառը, բարդ, կամ տվյալների հավելումով կրկնություն, բ) իր կրկնվող և չկրկնվող տվյալներով որոշակի տեղեկատվություն է բերում կառույցին: Միավորող կրկնությունը ներգործող կրկնությունների հետ չունի ոչ մի աղերս և հետհաղորդակցական նշան չի դառնում: Այն կարող է ի հայտ գալ Ա եզրից անմիջապես հետո, փոքր միջատարածքով և նոր տեղեկատվությունը կապակցում է հնին՝ ստեղծելով տեղեկատվական մեկնաբանության ամբողջական դաշտ:

Որպես ողջ աշխատանքի ամփոփում ներկայացնում ենք Եզրակացությունը և «Կրկնության գործառույթների տիպաբանական դասակարգման աղյուսակը», որը կառուցված է կրկնության՝ մեր բացահայտած համակարգային բոլոր հիմնական չափանիշների համալիր հաշվառմամբ: Համոզված ենք, որ այդ տիպաբանական դասակարգման աղյուսակի շնորհիվ միասնական դաշտում ավելի պարզ են երևում կրկնության և նրա գործառույթների առանձնահատկությունները և ընդհանրությունները, որոնք բխում են նրանց կիրառության ոլորտներից: Տիպաբանական դասակարգման աղյուսակը տես Հավելված 1-ում:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.Հաղորդակցությունը հիմնվում է լեզվի բանավոր օգտագործման ավանդական կաղապարների վրա, և նրա կրկնվող կառույցների բարձր հաճախականությունը օգտագործվում է արտահայտելու հաղորդակցական բազմաթիվ նպատակներ, որոնք, ըստ ներկա ուսումնասիրության սկզբունքների, բաժանվում են երկու դասի: Առաջինին պատկանում են այն կրկնությունները, որոնք իրականացնում են ներգործման, փոխազդեցության գործառույթ և ուղղված են լեզվական կոնկրետ գործողությունների կատարմանը կրկնության լայն կիրառմամբ: Երկրորդ դասում կրկնության այն գործառույթներն են, որոնք կապված են հաղորդակցման ընդհանուր ռազմավարության հետ և ուղղված են փոխանցվող տեղեկատվության տեսակին ու հաղորդակցման ընդհանուր գործընթացում նրանց ունեցած դերին: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կրկնության կարևորության ընկալումը, իբրև լեզվական տվյալների վերարտադրություն, բացահայտում է լայն սահմաններ ունեցող մի երևույթ: Սահմանների որոշումից կախված՝ կրկնությունը կարող է ընդգրկել «շուտ-շուտ» տեսակի սահմանափակ բառային կրկնություններից մինչև մարդու ամբողջական խոսքը, ուր ասույթի «թեմա-ռեմա» բաղադրիչների գործունեությունը երաշխավորված է միայն կրկնությամբ: Սա նշանակում է, որ հաղորդակցությունը կրկնություն է, որն ինքն է թելադրում իր՝

- ձևերի բազմազանությունը, որը մենք ամփոփել ենք «անփոփոխ», «բառիմաստի կամ քերականական իմաստի փոփոխություններով», «տվյալների հավելումով», «տվյալների հանումով» և «խառը կամ բարդ» հինգ տիպերում,
- լեզվի տարբեր մակարդակների և խոսքային կառույցների /պարզ հնչյունային միավորներից մինչև բառային գործողությունների/ կրկնությունները՝ հենվելով լեզվական, տեքստային և ընդհանրապես հաղորդակցական միավորների վրա,
- իմաստային կրկնությունները, որոնք ընդարձակում են կրկնությունների սահմանները՝ հոմանիշների և գերբառերի, շարահյուսական կառույցի կամ նրա տարրերի լեզվական կրկնություններից (լեզվական փաստ) մինչև խոսույթի իմաստային կրկնություններ (խոսույթային փաստ), որոնց կայացմանն

օժանդակում են խոսույթի կրնության բոլոր բաղադրիչները, դրանց գործոնները, զբաղեցրած դիրքերը, իրադրական պայմանները և այլն: Իմաստային կրկնություններն առանձնացված չեն որպես գործառույթ, սակայն օժանդակում են «կրկնություն-գործառույթ» զուգահեռների առանձնացմանը: Լեզվի մակարդակներում սերված կրկնությունների համեմատությամբ խոսքում սերված կրկնությունների գործառույթներն ավելի մեծ կախվածություն են ցուցաբերում խոսքին ուղեկցող միջավայրային, արտալեզվական հանգամանքներից և կրկնության ներքին ու արտաքին հատկանիշներից, որոնք անմիջապես նկատելի չեն:

Եթե կրկնության ուսումնասիրության մեջ սահմանափակվենք նրա առօրյա ինքնաբուխ բանավոր փոխազդեցությամբ, ապա կրկնության ոլորտը խիստ կսահմանափակվի՝ կախված զրուցակիցների կարիքներից, իսկ նրանք զրուցում են ոչ միայն տեղեկություններ փոխանակելու նպատակով, այլև որպեսզի լեզվական և հարալեզվական միջոցներով բանակցեն, համաձայնվեն, հակադրվեն, կրկին բանակցեն՝ հաստատեն, կասկածեն, ճշտեն իրենց փոխհարաբերությունները, իսկ ամենակարևորը, որ հաճախ մոռացվում է ներկայացվող կաղապարներում, հաղորդակցության միջոցով ուկնդրին մղեն խոսողի համար ցանկալի գործողությունների:

2. Կոնկրետ հաղորդակցական նպատակներ ապահովող կրկնության առավել գործածական տեսակների սույն հետազոտությունից բխում են նաև եզրակացություններ, ըստ որոնց՝ նպատակահարմար է դառնում դրանց գործառույթները դասակարգել մեր կողմից տարբերակված երեք խմբերում:

Առաջին խումբն ընդգրկում է հետազոտված կրկնությունների առաջին չորս գործառույթը՝ «շեշտման», «հուզական լարվածության», «համագործակցության» (համաձայնության, հաստատման, անհամաձայնության, հակադրության, տարակուսանքի և կասկածի, զրույցին հետևելու հավաստման, զրույցի շարունակումը քաջալերող, զրույցը կարճող կամ ավարտող, անտարբերության տարբերակներով) և «բովանդակային արձագանքման» (պարզաբանման-տարաձայնության տարբերակներով): Այստեղ հաղորդակցման հասանելիության ձևին վերաբերող

ընդհանուր տվյալն այն է, որ կրկնվող սխեմայի մեջ կրկնորդը ամեն անգամ մի նոր ձևով է կրկնում Ա եզրը, որի ուսումնասիրությամբ էլ բացահայտվում է նրա գործառույթը: Այլ կերպ ասած՝ պարունակում է կրկնություն կատարողի յուրահատուկ և կարևոր «մեկնաբանությունը»: Այդ մեկնաբանությունը՝

- կրկնության Ա եզրին վերաբերում է՝ «շեշտման», «համագործակցության», «բովանդակային արձագանքման» դեպքերում: «Ներդրումը շեշտելու» դեպքում անձը կառույցի կամ նրա մի մասի կրկնության միջոցով առաջ է քաշում կամ շեշտում Ա եզրը, «համագործակցության» դեպքում համաձայնվում կամ չի համաձայնվում Ա կողմի հետ, իսկ «պարզաբանման-տարաձայնության» դեպքում պարզաբանում է պահանջում կամ նախապատրաստում և արտահայտում է տարաձայնություն,
- «զրույցին հետևելը հավաստող» գործառույթը ավելի քիչ կրկնյալին է վերաբերում (եթե այն դիտենք իբրև ասույթի բովանդակություն) և ավելի շատ խոսողին ու խոսակցին: Այստեղ կրկնողը հստակորեն հաստատում ու ցույց է տալիս, որ հետևում է իր զրուցակցի խոսքին, չի կասկածում նրա ասածին, մտադիր չէ վերցնելու խոսելու նախաձեռնությունը և այդ ամենով նպաստում է հաղորդակցության շարունակմանը:
- վերաբերում է ավելի քիչ կրկնյալին և ավելի շատ խոսողի՝ ինքն իր հետ ունեցած կապին և հույզերին: Այստեղ «մեկնաբանությունը» վերաբերում է կրկնողի հուզական լարվածությանը, որն ամեն անգամ կապված է որևէ կոնկրետ իրադարձության հետ:

Վերը նշված գործառույթների խմբից բխող Եզրակացությունն այն է, որ կրկնությունը գործում է իբրև «մեկնաբանություն», որը դասական հաղորդակցման կաղապարի մասնակիցների՝ հաղորդողի, ընդունողի, հաղորդման և հաղորդակցական գործոնների հետ միասին, կապակցված ձևով հանդես է գալիս վերը նշված բոլոր երեք դեպքերում: Խոսքը վերաբերում է կրկնության մաքուր ներգործող գործառույթին:

Երկրորդ խումբը պարունակում է միայն «աղմուկի» հետևանքով կրկնության գործառույթները: Այստեղ կրկնությունը չի ազդում Ա եզրի վրա, որը կրկնողի

ցանկությունից հեռու և նրանից անկախ պատճառներով չի ընկալվել ունկնդրի կողմից (համենայնդեպս՝ «մաքուր» աղմուկի դեպքում): Այս դեպում կրկնությունը գործում է իբրև հետագա հաղորդակցման «կանխավարկած»: Որպեսզի տեղի ունենա փոխազդեցություն, ունկնդիրը պետք է նախ և առաջ լսի հաղորդումը: Այստեղ կրկնությունը վերաբերում է հաղորդակցման համակարգի չորրորդ գործոնին՝ հաղորդակցման պայմանների նեղ իմաստով միջավայրին և կրկին համարվում է ներգործող:

Երրորդ խումբը, կրկնության գործառույթների առանձնահատկություններից դատելով, ներգործող չէ, այլ խոսքային է և ընդգրկում է կրկնության պատկերավորող և միավորող գործառույթները: Կրկնորդը ո՛չ ազդում է կրկնյալի վրա, ո՛չ էլ կապված է հաղորդակցման գործոնների հետ: Երկու դեպքերում էլ կրկնությունը վերաբերում է արտացոլված իրականության և հաղորդման կապին, այսինքն՝ կապ ունի հաղորդման բովանդակության հետ: Պատկերավոր կրկնության դեպքում Ա և Բ եզրերը դիմում են այդ իրականությանը մի կոնկրետ եղանակով, որն ազդարարում է նկարագրվող գործողությունների կրկնողականություն - տևականություն - շարունակականություն, իսկ միավորող կրկնության դեպքում օգտագործվում է իբրև դաշտ, ուր նոր տեղեկատվությունը արդեն եղածի հետ միավորվում է հետագա մեկնաբանման նպատակով: Այն եզրակացությունները, որոնք բխում են նրանց կիրառությունից, ցույց են տալիս, որ, եթե անգամ խոսքը չի վերաբերում ներգործող գործառույթներին, միևնույնն է, իրենք ևս կապ ունեն դրանց հետ. առաջինը պատասխանում է բացառապես բանավոր խոսքին՝ լրացնելով հաղորդակցության մեջ մտած մասնակիցների կարիքները, իսկ երկրորդը վերաբերում է խոսքի թեմատիկ կազմակերպմանը, որը հատուկ է հաղորդակցման տեսակներին՝ գրավոր կամ բանավոր, ինքնաբուխ կամ ներդրված:

Նշված եզրակացությունները վերաբերում են այն կոնկրետ ուղիներին, որոնցում կրկնությունը գործադրվում է հաղորդակցման նպատակներն ապահովելու համար: Սույն աշխատանքից ի հայտ են գալիս նաև ընդհանուր

եզրակացություններ, որոնցում կրկնությունը ներկայանում է իբրև հաղորդակցական լայն ռազմավարության էական գործոն:

3. Պատրաստի լեզվական նյութը դարձյալ շրջանառելու շնորհիվ կրկնությունը, խոսույթում իր դերի հետ կապված, կատարում է երկու կարևոր դեր՝

- ցույց է տալիս լեզվական միավորների կիրառման առավել տնտեսող ճանապարհ, քանի որ վերարժևորում է զրույցի մեջ արդեն գոյություն ունեցող լեզվական նյութն իբրև խոսողի նախորդ ընտրության արդյունք: Այդ տնտեսումը վերաբերում է նաև ունկնդրին, որը բոլորովին կարիք չունի մշակելու լեզվական նոր տվյալներ,

- չի կարող փոխանցել իմացական նոր տեղեկատվություն, քանի որ նրա գոյությունը կապված է արդեն ծանոթ տվյալների հետ:

4. Այն փաստը, որ կրկնության միջոցով պատրաստի լեզվական նյութն օգտագործվում է առանձին նպատակների հասնելու համար, նրան դարձնում է տնտեսման լուրջ գործիք, ինչպես հաղորդման նպատակադրման (հաղորդող), այնպես էլ դրա ընկալման (ընդունող) գործընթացում: Խոսողը կարիք չունի դիմելու արտահատման նոր ձևերի, երբ կարող է տեքստում արդեն եղած արտահայտչական կամ շեշտահնչերանգային չնչին փոփոխությունների միջոցով արդյունավետ կերպով փոխանցել հաղորդումը: Մյուս կողմից էլ՝ ունկնդիրն է ավելի դյուրին ընկալում ասվածը, քանի որ ավելորդ կերպով չի ծանրաբեռնվում առավել ընդարձակ լեզվական նյութի ապակոդավորումով: Քանի որ բանավոր հաղորդակցումը զուրկ է հաղորդմանը կամ նրա մի մասին հարկ եղած պարագայում անդրադառնալու գրավոր խոսքի հնարավորությունից, ապա կրկնության բերած ջանքերի տնտեսումը կրկնակի է և վերաբերում է ինչպես ներդրման փուլին (հաղորդող), այնպես էլ ընկալման փուլին (ընդունող):

Մյուս շոշափելի առանձնահատկությունն այն է, որ, սկզբնապես չկարողանալով փոխանցել որևէ այլ տեղեկատվություն, կրկնությունը ձևափոխվում և դառնում է տնտեսման կարևոր գործոն՝ այս անգամ ձևավորելով փոխանցվող ուղերձի տեսակը: Իսկապես, լեզվական հաղորդակցությունն ուշադիր է աննպատակ կորուստների նկատմամբ (լեզվի նվազագույն ճիգ, խոսքի կառույցների

զեղչումներ, դերանունների օգտագործում ամբողջական կառույցների փոխարեն, հաղորդակցական միջավայրի գործոնների լայն օգտագործում լեզվական միավորների փոխարեն և այլն), և ասույթի բովանդակության փոխանցման գործընթացում գնահատում է կրկնվող տվյալների տնտեսող հնարավորությունը, որպեսզի, գործելով իբրև հետհաղորդակցական նշան, փոխանցի ներգործող բնույթի տեղեկատվություն՝ նրան հնարավորություն տալով մատնանշելու կրկնվող լեզվական տվյալների ճիշտ ընկալման օպտիմալ պայմանները:

5. Մեր ուսումնասիրությամբ պարզել ենք, որ կրկնողը հնարավորություն ունի ընտրելու իր հաղորդմանը համապատասխանող կրկնություն, ոչ թե նոր տեղեկատվության փոխանցման, այլ հինը ներգործող կերպով «մեկնաբանելու» ճանապարհով: Ներգործող տեղեկատվությունը (ներդրում, հաստատում, կասկած, համաձայնություն և այլն), իբրև հետհաղորդակցական նշան, համադրվում է ասույթի ընդհանուր տեղեկատվությանը՝ այն չծանրաբեռնելով լեզվական լրացուցիչ միջոցներով: Միաժամանակ, նոր տեղեկության սպասող ունկնդիրը առիթ է ունենում մտածելու, թե ինչու է կրկնվում հին տեղեկատվությունը և «գուշակելու» այն կոնկրետ նպատակը, որին ծառայում է տվյալ կրկնությունը: Այսինքն՝ ընդունողը «ապակոդավորում է» հետհաղորդակցական նշանը, որը խոսողը կրկնության միջոցով ուղղել էր նրան: Կրկնության ուսումնասիրության միջոցով ներգործող տեղեկատվության փոխանցման վերաբերյալ մեր կայացրած եզրակացությունները չեն վերաբերում միավորող և պատկերավորող կրկնությունների այն գործառույթներին, որոնք իրականացվում են «աղմուկի» պայմանում:

6. Կարևոր եզրակացություն է այն, որ եթե կրկնությունը իսկապես չի ծառայում վերը նշված գործառույթներից որևէ մեկի արտահայտմանը և չի ներգործում, ապա միայն և միայն այդ դեպքում կարող ենք ասել, որ այն «ավելորդ է»: Կրկնության մեր օրինակների հիման վրա բացահայտված մեխանիզմը մեզ օգնեց տալ դրա հետևյալ ձևակերպումը. «Կրկնությունն այն չէ, երբ նույն բանը ասվում է կրկին: Այն ծառայում է լեզվի ընդհանուր և հատուկ գործառույթների արտահայտմանը, որոնք ի հայտ են գալիս կրկնության հասարակական և

զրուցակցային դերերի վերլուծությունից և կոնկրետ միջավայրում իրականանում են խոսող-ունկնդիր փոխհարաբերության միջոցով»:

7. Եթե վերը նշվածը ներգործման միկրոմակարդակում առնչվում է կրկնության դերին և նշանակությանը, ապա տեքստի, երկխոսության և առհասարակ խոսքի մակրոհամակարգում դեռ բաց հարցեր են մնում՝ կապված կրկնության գործունեության ուղղորդող չափանիշների հետ (տարածություն, ժամանակ, եզրույթների լեզվական ձևեր, լեզվական մակարդակ, հաղորդակցման միավոր և այլն): Ի՞նչ դեր են կատարում այն չափանիշները, որոնք առնչվում են հաղորդակցման մասնակիցներին, օրինակ՝ խոսողի/ունկնդրի հիշողությունը: Ո՞րն է վերջապես միջտեքստայնության և կրկնության կոնկրետ կապը:

Առավել մեծ հետաքրքրություն կներկայացնեին այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են կրկնության կապը մշակութային զարգացման հետ մի կողմից, կրկնության կապը օնթոգենեզի հետ մյուս կողմից՝ հիմք ընդունելով այն փաստը, որ այս մակարդակները հաճախ զուգահեռույթների ստեղծման պատճառ են դառնում:

Ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ որքան էլ ծավալվի հետազոտության ընդգրկած նյութը, միևնույնն է, այն անընդհատ ծավալման կարիք ունի, քանի որ կրկնության դերը խոսույթում շատ նշանակալի է, իսկ վերը բերված հիմնահարցերի պատասխանը, երբ էլ որ այն հնարավոր լինի տալ, շատ կարևոր քայլ կդառնա կրկնության՝ որպես լեզվի հիմնական մեխանիզմներից մեկի վերաբերյալ առավել ամբողջական մի համակարգ ձևավորելու համար:

8. Մի շարք հանգամանքների բերումով հետազոտական խնդիր չենք դրել հայերենի և հունարենի խոսույթների հիման վրա մեկնաբանելու նրանց սոցիոմշակութային և լեզվամշակութային առանձնահատկությունները, քանի որ այդ խոսույթները դիտել ենք որպես անդրլեզվական համազոր և համարժեք նյութ: Հետազոտության ընթացքում ակնհայտ դարձավ, որ ուսումնասիրած կրկնությունների գործառութային անփոփոխակները և տարբերակները լուսաբանող երկլեզվյան օրինակներում հունարենի արտահայտչամիջոցները՝ կապված ասույթում ձայնի երաժշտական շարժման առանձնահատկությունների և

հնչերանգային միջոցների հարստության հետ, որոշ չափով գերազանցում են գրական հայերենի հնարավորությունները: Իսկ գրական արևմտահայերենը այս առումով անհամեմատ ավելի շահեկան վիճակում է, քան արևելահայերենը և նշված հնարավորություններով ավելի մոտ է հունարենին: Սակայն այս նկատառումը նախնական է և հետագա լուրջ հետազոտության կարիք է զգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, 699 էջ:
2. Ամբարդարյան Գ., Կրկնավոր ձևերի իմաստային-տիպաբանական վերլուծություն, դոկտորական ատենախոսություն, Եր. 2007. 361 էջ:
3. Աթայան Ա., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, ԵՊՀ, 1981, 390 էջ:
4. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ.,1984, 371 էջ:
5. Գալստյան Ս., Աճանցումը և աճանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ, 1978, 324 էջ:
6. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, 375 էջ:
7. Կարապետյան Ա., Կրկնությունը ժամանակակից հայերենում, դոկտորական ատենախոսություն, Ե.,2005, 550 էջ:
8. Հակոբջանյան Հ., Փոխկաղապարման կիրառումը բառապաշարի համակարգայնության դրսևորումների ուսումնասիրության մեջ, ՀԽՍՀ Բանբեր ԳԱ, Լ հասարակական գիտությունների, 1983, թ.1, էջ 23-32:
9. Հակոբջանյան Հ., Նույնանվանական բառերի իմաստային կառուցվածքի ուսումնասիրության փորձ, հայերենի և ռուսերենի բառապաշարի նյութի վրա, Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ,1982, թ.3, էջ 90 -108:
10. Հովսեփյան Լ., Կրկնությունը գրաբարի բառակազմության մեջ, SLOVO /inalco/, Paris, 1999, vol. 26-27, էջ 169-178/:
11. Նազարյան Ա., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն - ռուսերեն – հայերեն ուսումնական բառարան, Եր.,Ապոլոն, 1993, 656 էջ:
12. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, ԵՊՀ, 1975, 350 էջ:
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Ե., Ակադեմիա, 1967, էջ:
14. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Ե., Ակադեմիա,1974, 587 էջ:

15. Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., Ակադեմիա,1960, 634 էջ:
16. Ջահուկյան Գ.,Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., Ասողիկ, 2003,165 էջ:
17. Ջրբաշյան Է., Գրականագիտության տեսություն, Ե., Ակադեմիա,1996թ., 345 էջ:
18. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, ԵՊՀ,1984, 247 էջ:
19. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ,1989, 420 էջ:

1. Апресян Ю.Д. Дистрибутивный анализ значений и структурные семантические поля. - В кн.: Лексикографический сборник. вып.5, М.:1962, с.52-72.
2. Арутюнова Н.Д. Предложение н его смысл. М.:Наука, 1976, 383с.
3. Атаян Э.Р. Коммуникация и раскрытие потенций языкового сознания. ЕГУ,1981, 60 с.
4. Атаян Э.Р. Предмет и основные понятия структурального синтаксиса. ЕГУ,1968, 279 с.
5. Ахманова О.С. Словарь лингвистических терминов. М., Советская Энциклопедия,1966, 607с.
6. Афанасенко Е. В. “Семантический повтор в политическом дискурсе, на материале русского и английского языков”. Саратов, 2006, 265 с.
7. Балли Ш. Французская стилистика. М.: Изд. ин. лит., 1961, 398 с.
8. Бенвенист Э. Общая лингвистика. М.:Прогресс, 1974, 448 с.
9. Блумфилд Л. Язык. М., Прогресс,1968, 607 с.
10. Виноградов В., Русский язык: Грамматическое учение о слове. изд. 2-е, М.,1972. 296 с.
11.Гак В.Г. Сравнительная типология французского и русского языков. Л., Просвещение, 1976, 300 с.

12. Гальперин И. Р.,Текст как объект лингвистического исследования. М.: Наука,1981.-139 с.

13. Глиссон Г., Введение в дескриптивную лингвистику. М.:Изд. Ин. лит.,1959, 486 с.

14. Есперсен.О., Философия грамматики. М.:Изд. Ин. лит.,1958, 404 с.

15. Звегинцев В.Г., Проблема значения в современном зарубежном языкознании. – В кн.: Новое в лингвистике, вуп. II. М.: Изд-во иностр. лит., 1962, с. 9-16.

16. Карасик В.И., Язуковой круг, личность, концепты, дискурс. Волгоград “Перемена”, 2002, 305 с.

17. Кацнельсон С.Д., Типология языка и речевое мышление. Л., Наука, Ленингр. отдел, 1972 , 216с.

18. Принципы н методы семантических исследований. М.: Наука, 1976, 380с.

19. Русская грамматика. АН СССР, первый том, изд.:М., Наука, 1980. 783с.

20. Русская грамматика. АН СССР, второй том, изд.:М., Наука, 1982. 709с.

21. Сепир.Э. Язык. М.-Л. Соцэкгиз,1934, 222с.

22. Тронский А., Античные теории язука и стиля. - М.: Прогресс, 1936, 177 с.

23. Ульман С., Семантические универсалии. - В кн.: Новое в лингвистике, вып. У, М.: Прогресс,1970, с. 250-293.

1. Andre-Larochebouvy Danielle, Introduction analyse semi-linguistique de la conversation. Paris, 1984, Didier-CREDIF.

2. Austin J.L., How to Do Things with Words, Oxford, 1962, Clarendon Press.

3. Bennet-Kastor Tina L., “Repetition in Language Development: From Interaction to Cohesion”. In B. Johnstone, Vol. A, 1994, 155-171.

4. Brenneis Donald, Lein Laura., “You Fruithead: A Sociolinguistic Approach to Children’s Dispute Settlement”., In S. Ervin-Tripp, C. Mitchell-Kernan, 1977: 49-65.

5. Brody Jill., “Repetition as a rhetorical and conversational device in Tojolabal (Mayan)”. IJAL 1986: 52, 255-274.

6. Brown Gillian, Yule George Discourse Analysis., Cambridge Textbooks in Linguistics, Cambridge: 1983: Cambridge University Press.

7. Brown Penelope, Levinson Stephen C., Politeness: some universals in language usage. Studies in Interactional Sociolinguistics 4, Cambridge: 1987: Cambridge University Press.

8. Burton Deirdre., Dialogue and Discourse: A Sociolinguistic Approach to Modern Drama Dialogue and Naturally Occurring Conversation. London: 1980: Routledge and Kegan Paul.

9. Bussman H., Lexikon der Sprachwissenschaft. Stuttgart: Alfred Kroner Verlag.

Cambridge, 1983: Mass.: The M.I.T Press.

10. Cherry Colin, On Human Communication: A Review, a Survey, and a Criticism.

11. Chomsky Noam, 1965: Aspects of the Theory of Syntax. Cambridge, 1957: Mass.: The M.I.T. Press.

12. Corrigan Roberta, "Use of Repetition to Facilitate Spontaneous Language Acquisition". Journal of Psycholinguistic Research 1980: 9, 231-241.

13. Comrie Bernard, Aspect. An introduction to the studi of verbal aspect and related problems. Cambrige Textbooks in Linguistics, Cambrige: 1976: Cembrige University Press.

14. Coulthard Malcolm, An introduction to Discourse Analysis. Applied Linguistics and Language Study, London: 1977: Longman.

15. de Beaugrande Robert-Alain, Dressler Wolfgang Ulrich, Introduction to Text Linguistics. London: 1981: Longman.

16. Derbyshire Desmond C., "Discourse redundancy in Hixkaryana". IJAL, 1977: 43, 176- 188.

17. Dore John .,"Holophrases, speech acts and language universals". Journal of Child Language 1975: 2, 21-40.

18. Duranti Alessandro, Ochs Elinor, "Left-dislocation in Italian conversation". In T. Givon, Syntax and Semantics 12: Discourse and Syntax. New York: Academic Press, 1979:377-416.

19. Edmondson Willis Spoken Discourse. A Model for Analysis. London: 1981: Longman.

20. Enkvist Nils Erik, 1981: "Experiential iconicism in text strategy". Text 1/1, 97-111.

21. Ervin Susan, "Imitation and structural change in children's language". In E.H. Lenneberg, New Directions in the Study of Language. Cambridge, Mass.: The MIT Press, 1964: 163-189.

22. Ervin-Tripp Susan, Mitchell-Kernan Claudia, Child Discourse. New York: 1977: Academic Press.

23. Fairclough Norman L., Discourse and Social Change.Cambridge: 1992: Polity Press.

24. Fairclough Norman L., Language and Power. London/New York: 1989: Longman.

25. Fairclough Norman L., Critical Discourse Analysis. London: 1995: Longman.

26. Folger Joseph P., Chapman Robin S. "A pragmatic analysis of spontaneous imitations". Journal of Child Language 1978: 5, 25-38.

27. Freed Alice F., "The form and function of questions in informal dyadic conversation". Journal of Pragmatics 1994: 21, 621-644.

28. Garvey Catherine, "Play with language and speech". In S. Ervin-Tripp, C. Mitchell-Kernan, 1977: 27-47.

29. Geluykens Ronald, "R(a)ising questions:Question intonation revisited. A Reply to Batliner and Oppenrieder". Journal of Pragmatics 1989: 13, 567-575.

30. Goffman Erving, "Replies and responses". Language in Society 5, 257-313. Green Georgia M. 1968: "On too and either, and not just on too and either, either". Fourth CLS, 1976: 22-39.

31. Goodwin Harness Marjorie, "Aggravated correction and disagreement in children's conversations". Journal of Pragmatics 1983: 7, 657-677.

32. Grice H. Paul, "Logic and conversation". In P. Cole, J. Morgan, Syntax and Semantics 3: Speech Acts. New York: 1975: Academic Press, 41-58.

33. Grimes Joseph E., "Outlines and overlays". Language 48, 1972: 513-524.

34. Grimes Joseph E., 1975: The Tread of Discours.The Hague: Mouton.

35. Gumprez John J., Aulakh Gurinder, Kaltman Hannah “Thematic structure and progression in discourse”. In J. J. Gumperz, Language and Social Identity. Cambridge: 1982: Cambridge University Press, 22-56.

36. Halliday M.A.K., Hasan Ruqaiya Cohesion in English. London: 1976: Longman.

37. Harris Zellig, “Discourse analysis”. Language 1952: 1-30.

38.Heritage John C., “Recent Developments in Conversation Analysis”.Sociolinguistics Newsletter 1985: 15/1, 1-19.

39. Hoey Michael, Patterns of Lexis in Text. Describing English Language, Oxford: 1991: Oxford University Press.

40. Huisman Roberta D., “Angaataha narrative discourse”. 1973: Linguistics 110, 29-42

41. Hymes Dell, “Models of Interaction of Language and Social Life”. In J.J. GUMPERZ, D.H. HYMES, Directions in Sociolinguistics: The Ethnography of Communication. New York: Holt, 1972: Rinehart & Winston, 35-71.

42. Jakobson Roman, “Linguistics and Poetics”. In T.A. Sebeok, Style in Language. Cambridge, 1960: Mass.: The M.I.T. Press, 350-377 [= Jakobson 1981բ (SW ΠI), 18-51].

43. Jakobson Roman, 1981ա: “Retrospect”. In Jakobson 1981ա (SW ΠI), 765-789.

44.Jakobson Roman, Selected Writings III (SW III): Poetry of Grammar and Grammar of Poetry. The Hague: 1981բ: Mouton.

45. Jefferson Gail, “Side Sequences”. In D. Sudnow, Studies in Social Interaction. New York: 1972: The Free Press, 294-338.

46. Johnstone Koch Barbara, 1983b: Arabic lexical couplets and the evolution of synonymy”. General Linguistics 23/1, 51-61.

47. Johnstone Koch Barbara, 1984: “Repeating uourself: Discours psrsphrase and the generation of language”. Proseedings of the Eastern States Conference on Linguistics. Ohio Stete University Press, 250-259.

48. Johnstone Barbara, “Perpectives on Repetition: An introduction”. Text 7/3, 1987: 205- 214.

49. Johnstone Barbara, “Repetition in Discourse:a Dialogue”. In B. Johnstone, 1994: Vol. A, 1-20.

50. Johnstone Koch Barbara, “Repeating yourself: Discourse paraphrase and the generation of language”. Proceedings of the Eastern States Conference on Linguistics. Ohio State University 1984: Press,-250-259.

51. Keenan Elinor Ochs, “Making it last: repetition in children’s discourse”. On S. Ervin-Tripp and C. Mitchell-Kernan, 1977: 125-138.

52. Labov William, Language in the Inner City. Oxford: 1972b: Basil Blackwell.

53. Labov William, Sociolinguistic Patterns. Oxford: 1972a Basil Blackwell.

54. Labov William, Fanshel David Therapeutic Discourse: Psychotherapy as Conversation. New York: 1977: Academic Press.

55. Leech Geoffrey N., English in Advertising:A linguistic study of advertising in Great Britain. English Language Series, London: 1966: Longman.

56. Levin Samuel R., Linguistic structures in poetry. The Hague: 1973: Mouton.

57. Levinson Stephen., Pragmatics. Cambridge textbook in Linguistics, Cambridge: 1983: Cambridge University Press.

58. Lomax Alan, “A sty listic analysis of speaking”. Language in Society 1977:6, 15-47

59. Lovday Leo, “Rhetoric patterns in conflict: the sociocultural relativity of discourse-organizing processes”. 1983: Journal of Pragmatics 7, 169-190.

60. Lyons John, Semantics (Vol. 2). Cambridge: 1977: Cambridge University Press.

Mass.: Harvard Univ. Press.

61. Menyuk Paula, “A preliminary evaluation of grammatical capacity in children”. Journal of Verbal Learning and Verbal 1963: Behavior 2, 429-439.

62. Merritt Mairilyn, “Repetition in Situated Discourse – Exploring its Forms and Functions” 1994: In vol.A, 23-26 of B. Johnstone.

63. Morris C.W., Foundations of the Theory of Signs. O. Neurath, R. Carnap and C. Morris: International Encyclopedia of United Science. Chicago: 1938: University of Chicago Press, 77-138.

64. Norrick Neal R., 1987: “Functions of repetition in conversation”. Text 7/3, 245-264.

65. Noh Eun-Ju, 1995: “A pragmatic approach to the echo questions”. Working Papers in Linguistics 7, University College London, Department of Phonetics and Linguistics, 1987:107-139.

66. Ochs Elinor, 1979: “Planned and unplanned discourse”. In T. Givon, Syntax and Semantics 12: Discourse and Syntax. New York: Academic Press, 51-80.

67. Ong Walter J., “Oral remembering and narrative structures”. In D. Tannin, Analyzing Discourse: Text and Talk. Georgetown University Round Table on Language and Linguistics, Washington, 1981: D.C.: Georgetown Univ. Press, 12-24.

68. Persson Gunnar, Repetition in English. Part I, Sequential Repetition. Acta Universitatis Upsaliensis, Studia Anglistica Upsaliensia 1974: 21, Uppsala.

69. Peters Ann M., “The role of imitation in the developing syntax of a blind child”, 1987: Text 7/3, 289-311.

70. Petofi Janos., Transformationsgrammatiken und eine Ko-Textuelle Texttheorie. Frankfurt: 1971: Atheneum.

71. Rygiel Dennis “Lexical Parallelism in the Nonfiction of Joan Didion” 1994: In vol.A, 113-127 of B. Johnstone.

72. Quirk Randolph, Greenbaum Sidney, Leech Geoffrey, Svartvik Jan, A Grammar of Contemporary English. London: 1972: Longman.

73. Sacks Harvey, Schegloff Emanuel A., Jefferson Gail, 1974: “A simplest systematics for the organization of turn-taking for conversation”. Language 50/14, 696-735.

74. Schegloff Emanuel A., “Sequencing in conversational openings”. In J.J. Gumperz, D.H. Hymes, Directions in Sociolinguistics: The Ethnography of Communication. New York: 1972: Holt, Rinehart and Winston, 346-380.

75. Shegloff Emanuel A., Jefferson Gail, Sacks Harney 1977: "The preference for self-correction in the organization of repair in conversation". Language 53,361-382.

76. Schiffrin Deborah 1987, Discourse Markers. Studies in Interactional Sociolinguistics 5, Cambridge: Cambridge University Press.

77. Searle John R., "A classification of illocutionary acts". 1976: Language in Society 5, 1- 23.

78. Shepherd Susan C., "On the functional development of repetition in Antiguan Creole morphology, syntax, and discourse". In J. Fislax, Historical Semantics-Historical Formation. Trends in Linguistics, Studies and Monographs 29, Berlin etc.: Mouton, 1985: 533-545.

79. Cherry Colin, 1957: On Human Communication: A Reviw, a Survey, and a Criticism. Cambridge, Mass.: The M.I.T Press.

80. Sherzer Dina, "Effects of Repetition in the French New Novel". In B. Johnstone, 1994: Vol.A, 68-85.

81. Sifianou Maria, Politeness Phenomena in England and Greece. A Cross-Cultural Perspective. Oxford: 1992: Clarendon Press.

82. Silverstein Michael, "On the pragmatic 'poetry' of prose: parallelism, repetition and cohesive structure in the time course of dyadic conversation". In D.Schiffrin, Meaning, form and use in context: linguistic applications. Georgetown Round Table on Languages and Linguistics, Washington, D.C.: 1984: Georgetown Univ. Press, 181-199.

83. Sinclair J. McH., Coulthard R.M., Towards an analysis of discourse. The English used by teachers and pupils. Oxford: 1975: Oxford University Pres.

84. Snow Catherine, "The uses of imitation". Journal of Child Language 8, 1981: 205-212.

85. Sperber Dan, Wilson Deirdre, 1986: Relevance: Communication and Cognition. Cambridge, Mass.: Harvard University Press.

86. Stubbs Michael,1983: Discourse Analysis. The Sociolinguistic Analysis of Natural Language. Language in Society 4, Oxford: Blackwell.

87. Stephany Ursula, “Zur Rolle der Wiederholung in der sprachlichen Kommunikation zwischen Kind und Erwachsenem”. In H.Seilrer, Struktura 4, Linquistic Workshop I. Munich: W. Fink Verlag, 1973: 73-105.

88.Swales J., Genre Analysis: English in Academic and Research Settings.Cambridge: 1990: Cambridge University Press.

89. Tannen Deborah, “What’s in a Frame? Surface Evidence for Underlying Expectations”. In R. Freedle, New Directions in Discourse Processing. Norwood, 1979: N.J.: Ablex, 137-181.

90. Tannen Deborah, “A comparative analysis of oral narrative strategies: Athenian Greek and American English”. In W.L. Chaffe, The Pear Stories: Cognitive, Cultural and Linguistic Aspects of Narrative Production. Norwood, 1980a: N.J.:Ablex, 51-87

91. Tannen Deborah, “I take out the rock-dok!’:How Greek women tell about being molested (and create involvement)”. Anthropological Linguistics 25/3, 1983:, 359-373.

92. Tannen Deborah, “Repetition in Conversation as Spontaneous Formulaicity”. Text 7/3, 1987a: 215-243.

93. Tannen Deborah, “Repetition in conversation: Toward a poetics of talk”. Language 63/3, 1987b: 574-605.

94. Tannen Deborah, Talking voices: Repetition, dialogue, and imagery in conversational discourse. Studies in Interactional Sociolinguistics 6, Cambridge: 1989: Cambridge University Press.

95. Taylor Talbot J., Cameron Deborah Analysing Conversation. Oxford: 1987: Pergamon Press.

96. Toporov Vladimir N., “William Butler Yeats:’Down by the Salley Gardens’:An Analysis of the Structure of Repetition”. 1978: PTL 3, 95-115.

97. van Dijk Teun, Some Aspects of Text Grammars. The Hague: 1972: Mouton.

98. Watson-Gegeo Karen Ann, Boggs Stephen T. “From Verbal Play to Talk Story: The Role of Routines in Speech Events among Flawaiian Children”. In S. Ervin-Tripp, C. Mitchell-Kernan, 1977: 67-90.

99. Watt W.C., “English Reduplication”. Journal of English Linguistics 2, 1968: 96-129.

100. Wells Gordon, Maclure Margaret, Montgomery Martin, “Some strategies for sustaining conversation”. In P. Werth, Conversation and Discourse. London: 1981: Croom Helm, 73-85.

101. Winter E.O., Replacement as a function of repetition:a study of some of its principal features in the clause relations of contemporary English. Ph. D. Dissertation, University of London. 1974: University Microfilms 77-70, 036. Ann Arbor, U.S.A. (with minor emendations).

102. Yngve Victor H., The Depth Hypothesis, Structure of Language and Its Mathematical Aspects (Proceedings of Symposia in Applied Mathematics, vol. XII), American Mathematical Society, 1961.

1. Bally Charles, Traite de stylistique francaise: Paris 1909. https://archive.org/details/traitdestylist01ball

2. Benveniste Emile, Problemes de linguistique generale, 1, 1966, Paris, Gallimard.

3. Bonhomme M., Pragmatique des figures du discours, Paris, 2005. Champion.

4. Bonhomme M., Les figures cles du discours. 1998. editions du Seuil.

5. Breal M., Essai de semantique. Science des significations. 2-me ed. Rev. – Paris:Hachette, 1899, 319p.

6. Bronckart J. P., Activite langagiere, textes et discours -Lausanne, 1997: Delachaux & Niestle.

7. Charaudeau Patrick & Maingueneu Dominique, Dictionnaire d’analyse du discours, Paris, Seuil.

8. Fontaine N., De la repetition dans les textes litteraires. Situation historique et approche structurale. These, Tours.1990.

9. Fontanier P., Les Figures du Discours. Paris, 1977. Flammarion.

10. Frndnric M., La repetition. etude linguistique et rhetorique, Tebingen, 1985. Max Niemeyer Verlag.

11.Molinie G., « Problematique de la repetition , Langue Francaise101, « Les figures de rhetorique et leur actualite en linguistique 1994. (pp. 102-111).
12. Molinie G., Dictionnaire de rhetorique. Paris, 1993. Librairie Generale Francaise.
13. Problemes de linguistique generale, 2, 1974, Paris, Gallimard.
14. Piaget Jean, William Fritz, Le Langage et la pensee chez l'enfant, Paris, Delachaux et Niestle, 1923.
15. Richard E., La repetition, syntaxe et interpretation, L'Information grammaticale, 100, 2004. p. 53-54.
16. Noailly, Universite de Bretagne Occidentale (Brest), 2000.
17. Watine M.A., « La reduplication: une interpretation dialogique, in Les Figures a l'epreuve du discours. Dialogisme et polyphonie, 2012. PUPS.

1. Καψωμενος Ερατοσθένης, Η συντακτική δομή της ποιητικής γλώσσας του Σεφέρη. Διδακτορική διατριβή, Επιστημονική Επετηρίδα της Φιλοσοφικής Σχολής του Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης, Παράρτ. 18, Θεσσαλονίκη. 1975:
2. Κακριδις Ι.Θ. Νεοελληνικές μελέτες. 1. Το ανακόλουθο και ο νόμος της ελευθερίας της λέξης. 2. Η επαναστροφή. Η Βιβλιοθήκη του Φιλολόγου 12, Αθήνα. 1976:
3. Νακας Θανάσης «Αθροιστική επανάληψη/επαναδίπλωση». Μελέτες για την ελληνική γλώσσα, Πρακτικά της 16ης ετήσιας συνάντησης του Τομέα Γλωσσολογίας της Φιλοσοφικής Σχολής του Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης, 4-6 Μαίου Θεσσαλονίκη, 1996α :470-481.
4. Νακας Θανάσης Λεξική και φραστική επανάληψη/επαναδίπλωση». Ανάτυπο από το Λεξικογραφικόν Δελτίον (της Ακαδημίας Αθηνών), τόμος Κ', 1996δ: Αθήνα.
5. Νακας Θανάσης Σχετικά με ορισμένες περιπτώσεις αυτοεπανάληψης στο λόγο των παιδιών προσχολικής ηλικίας. Greek Linguistics 95, Proceedings of the Second International Conference on Greek Linguistics, Salzburg 22-24 Sept 1995. Vol I, University of Salzburg, The Department of Linguistics, 1997: 305-313.

6. Ντορφμουλλερ-Καρπουζα Καίτη Κείμενα δίγλωσσων Ελληνόπουλων:δόμηση κείμενων. Μελέτες για την ελληνική γλώσσα, Πρακτικά της 7ης ετήσιας συνάντησης τον Τομέα Γλωσσολογίας της Φιλοσοφικής Σχολής του Αριστοτελείον Πανεπιστημίου Θεσσαλονίκης, 12-14 Μαΐου 1986. Θεσσαλονίκη:Εκδ. Οίκος Αφών Κυριακίδη, 1986: 299-316.

7. Μπαμπινιωτης Γεώργιος Γλωσσολογία και λογοτεχνία (από την Τεχνική στην Τέχνη του Λόγου). Αθήνα. Τζαρτζανος Αχιλλεύς Α. 1946-1963 (ανατ.):Νεοελληνική σύνταξις (της Κοινής Δημοτικής), τόμ. Ἀ:Αθήνα 1946, ΟΕΣΒ, τόμ. Ἀ:Αθήνα 1953 ΟΕΔΒ. 1991:

8. Παυλιδου Θεοδοσία Φατική (επι)κοινωνία και φατικά στοιχεία. Μελέτες για την ελληνική γλώσσα, Πρακτικά της 15ης ετήσιας συνάντησης του Τμήματος Γλωσσολογίας της Φιλοσοφικής Σχολής του Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης, 11-14 Μαΐου 1994. Θεσσαλονίκη, 1995β: 710-721.

9. Σετατος Μιχάλης Γλωσσολογικές μελέτες Β':Οι αναφωνήσεις στην Κοινή Νεοελληνική. Ελληνικά 43/2, 1993: 389-401.

10. Τζαρτζανος Αχιλλεύς Α. 1946-1963 (ανατ.): Νεοελληνική σύνταξις (της Κοινής Δημοτικής), τόμ. Ἀ: Αθήνα 1946, ΟΕΣΒ, τόμ. Ἀ: Αθήνα 1953, ΟΕΔΒ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1: Կրկնության գործառույթների տիպաբանական դասակարգման ամփոփիչ աղյուսակ

Հավելված 2: Հայերեն ստեղծագործությունների ցանկ, որոնցից ընտրված են մենախոսություններ, երկխոսություններ և բազմախոսություններ

Հավելված 3: Հայերենով մենախոսությունների, երկխոսությունների և բազմախոսությունների օրինակներ

Հավելված 4: Հունարեն ստեղծագործությունների ցանկ, որոնցից ընտրված են մենախոսություններ, երկխոսություններ և բազմախոսություններ

Հավելված 5: Հունարենով մենախոսությունների. երկխոսությունների և բազմախոսությունների օրինակներ

Հավելված 1: Կրկնության գործառույթների տիպաբանական դասակարգման ամփոփիչ աղյուսակ



AGHIUSAK.xls

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հայերեն ստեղծագործությունների ցանկ, որոնցից ընտրված են մենախոսություններ, երկխոսություններ և բազմախոսություններ

Դ.Դ.- 1 - Դերենիկ Դեմիրճյան, երկեր երկու գրքով, գիրք առաջին, պատմվածքներ, Երևան, «Սովետական գրող» 1977 թ. 662 էջ:

1. Սեփականություն, էջ 25-37:
2. Ավելորդը, էջ 37-60:
3. Տերտերը, էջ 60-67:
4. Ժպիտը, 67-73:
5. Մեքենան, էջ 73- 80:
6. Ստամոքս, էջ 80- 87:
7. Խուժանի շունը, էջ 87-95:
8. Խանութպան, էջ 95-101:
9. Միայն մեկը, էջ 101-123:
10. Չարգյահ, էջ123-137:
11. Ադաջիո, էջ 137-144:
12. Արամ թագավորը, էջ 144- 152:
13. Գիրք ծաղկանց, էջ 152-179:
14. Ջութակ և սրինգ, էջ179-186:
15. Թանգարանի նյութեր, էջ 186-191:
16. Ընկերներ, էջ 191-252:
17. Դադար, էջ 252-269:
18. Նրանց ուղին, էջ 269- 281:
19. Հողը, էջ 281-319:
20. Մարհատներ, էջ 319- 323:
21. Աստծո տանը, էջ 323-330:
22. Խնամին, էջ 330-336:
23. Կրասնարմեյցը, էջ 336-341:
24. Կայարանի Ակոբը 341-349:
25. Էշելոնը, էջ 349-356:
26. Մերկե, էջ 356-362:
27. Հանգստի տանը, էջ 362-367:
28. Աբդուլ, էջ 367-375:
29. Անհետացում, էջ 375-379:
30. Սաթոն, էջ 379-387:
31. Երեքը, էջ 387-431:
32. Ցաված սեր, էջ 431-162:
33. Իրեր, էջ 462-468:
34. Կոնդուկտորը, էջ 468-473:
35. Նարգիզը, էջ 473-476:
36. Խավարի անդունդը, 476-479:

37. Սաբեթ, էջ 479-484:
38. Երկու եղբայր, երկու քույր 484-502:
39. Նոր պոեմ, էջ 502-521:
40. «Քաղաքացիներ», էջ 521-525:
41. Բժիշկը, էջ 525-543:
42. Չականա, էջ 543-559:
43. Անհայրություն, էջ 559-555:
44. Ուրիշի երեխան, էջ 555-560:
45. Մարուշ, էջ 560-565:
46. Լիզոչկա, էջ 565-574:
47. Քեփթըն, էջ 574-586:
48. Տուն, էջ 586-617:
49. Անահիտ, էջ 617-641:
50. Հայրենի կտուրի տակ, էջ 641-645:
51. Խոշտանգվածի ավանդը, էջ 645-656:
52. Անխուսափելին, էջ 656-662:

Դ.Դ.- 2 - Դերենիկ Դեմիրճյան, երկերի ժողովածու տասնչորս հատորով, հատոր երկրորդ պատմվածքներ, Երևան, Ակադեմիա, 1977 թ. 518 էջ:

1. Իդեալիստը, էջ 7-20:
2. Ուխտավորներ, էջ 20-29:
3. Աշուղի հեքիաթը, էջ 29-37:
4. Ջութակ և սրինգ, էջ 37-44:
5. Անտառը վրդովված էր, էջ 56-61:
6. Գետակի երգը, էջ 61-85:
7. Երազ, էջ 85-88:
8. Դաշնամուր, էջ 156-162:
9. Վերքը, էջ 298-309:
10. Քարհատներ, էջ 317-322:
11. Ծանրագին թուղթը, էջ 400-403:
12. Լիպո, էջ 408-421:
13. Միսակի հարսանիքը, 421-441:

Ն.Դ.-Նար-Դոս, երկեր, Երևան, «Սովետական գրող» 1977 թ., 590 էջ:

1. Ինչպես բժշկեցին, էջ 13-33:
2. Սաքուլն ուխտ գնաց,էջ 33-50:
3. Հոգուն վրա հասավ էջ 50-59:
4. Հոպոպ, էջ 59-67:
5. Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց, էջ 67-77:
6. Սև փողերի տոկոսը, էջ 77-87:
7. Ադամամութին, էջ 87-96:
8. Ես և նա, էջ 96-109:
9. Նոր հավ, էջ 109-118:

10. Աղա Մարտինի պարիկը, էջ 118-129:
11. Ավետիս, էջ 129-137:
12. Նեղ օրերից մեկը, էջ 137-151:
13. Խմբագիրը, 151-161:
14. Տանտիրոջս աղջիկը, 191-236:
15. Աննա Սարոյան, 236-292:
16. Սպանված աղավնին, էջ 292-409:
17. Պայքար, էջ 409-590:

Հ.Պ. – Հակոբ Պարոնյան, երկեր, Երևան,Սովետական գրող, 1979:

1. Ազգային ջոջեր, էջ 3-214:
2. Մեծապատիվ մուրացկաններ, էջ 214-299:
3. Քաղաքավարության վնասները, էջ 299-416:
4. Ատամնաբույժն արևելյան, էջ 416-550:
5. Պաղտասար աղբար, էջ 550-669:

Վ.Ս.-1 - Վ.Սարոյան, ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, Երևան, «Սովետական գրող» 1986 թ., 485 էջ:

1. Հովվի աղջիկը, թարգմ. Մ.Հարությունյան, էջ 52-54:
2. Նարինջները, թարգմ. Հ.Դավթյան, էջ 54-59:
3. Կոտրված անիվը, թարգմ. Գ.Հախվերդյան, էջ 59-70:
4. Պատերազմը, թարգմ. Գ.Հախվերդյան, էջ 70-74:
5. Ֆրեզնոն, թարգմ. Գ.Հախվերդյան, էջ 74-80:
6. Վարսավիրը, որի քեռու գլուխը կրծեց կրկեսի վագրը, թարգմ. Ռ.Ղազարյան, էջ 80-87:
7. Սև թաթարները, թարգմ. Վ.Ավետիսյան, էջ 87-96:
8. Իմ սիրտը լեռներում է, թարգմ. Խ.Հրաչյան, էջ 96-106:
9. Բիթլիսը, Գ.Հախվերդյան, էջ 106-109:
10. Կիրակնօրյա Ցեպելինը, թարգմ. Խ.Հրաչյան, էջ 109-125:
11. Վելվետե շալվարը, թարգմ. Ա.Խանզադյան, էջ 125-130:
12. Առաջին օրը դպրոցում, թարգմ. Խ.Հրաչյան, էջ 130-135:
13. Մեքսիկացին, թարգմ. Մ.Դավոյան, էջ 135-141:
14. Գյուղացին, թարգմ. Վ. Դավթյան, Կ.Պասմաճյան, էջ 141-147:
15. Որտես ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ բարեկիրթ են, թարգմ. Հ.Հարությունյան, էջ 147-155:
16. Չորս, հինգ, վեց, դուռը մեկեն փակվեց, թարգմ. Խ.Հրաչյան, էջ 155-163:
17. Ֆիլիպինցին ու հարբածը, թարգմ. Լ. Բոյամյան, էջ 163-165:
18. Հանճարը, թարգմ. Լ. Բոյամյան, էջ 165-171:
19. Ջիմ Փեմբըրթընը և նրա որդի Թրիգերը, թարգմ. Մ. Հարությունյան, էջ 171-178:
20. Դու կոտրում ես սիրտս, թարգմ. Մ.Դավոյան, էջ 178-191:
21. Մրջյունները, թարգմ. Ռ.Ղազարյան, էջ 191-196:
22. Ակրոբատները, թարգմ. Ա.Խանզադյան, էջ 196-203:
23. Մեր ուզածը սեր է և փող, թարգմ. Զ.Բոյաջյան, էջ 203-205:
24. Իսպանիայի պատերազմը, թարգմ. Զ.Բոյաջյան, էջ 205-208:

25. Կանը՝ տաք ու խաղաղ հովտում, թարգմ. Վ.Գրիգորյան, էջ 208-215:
26. Գեղեցիկ սպիտակ ծիու ամառը, թարգմ. Դ. Քեշիշյան, էջ 215-222:
27. Ուղևորություն դեպի Հանֆորդ, թարգմ. Ս.Հարությունյան, էջ 222-229:
28. Նռնենիները, թարգմ. Հ.Հարությունյան, էջ 229-241:
29. Նա, կարելի է ասել, մեր ապագաբանաստեղծն է, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 241-243:
30. Հիսուն յարդանոց վազք, թարգմ. Խ.Հրաչյան, էջ 243-250:
31. Հնաոճ սիրավեպ սիրային ոտանավորներով ու այլևայլ բաներով, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 250-258:
32. Իմ զարմիկ հռետոր Տիգրանը, թարգմ. Ա.Էմին, էջ 258-264:
33. Իրիցական եկեղեցու երգիչները, թարգմ. Ս.Հարությունյան, էջ 264-274:
34. Կրկեսը, թարգմ. Ա.Էմին, էջ 274-281:
35. Կրթված նպարավաճառը լողորդ երեք տղայի առջև, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 281-390:
36. Լոկոմոտիվ-38օջիրվեյը, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 390-298:
37. Խորհուրդներ ամերիկացի ճանապարհորդին, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 298-301:
38. Խեղճուկրակ արաբը, թարգմ. Կ.Սուրենյան. էջ 301-308:
39. Ուղերձ չնչահավաններին, թարգմ. Շ.Մաթևոսյան, Հր,Մաթևոսյան, էջ 308-315:
40. Մարդկային կատակերգություն /վիպակ/, թարգմ. Գր.Քեշիշյան, էջ 315-485:

Վ.Ս.- 3 - Վ.Սարոյան, ընտիր երկեր չորս հատորով, հատոր երրորդ, Երևան, «Սովետական գրող» 1988 թ., 476 էջ:

1.Վեսլի Ջեքսոնի արկածները, վիպակ, թարգմ. Զ.Բոյաջյան, էջ 6-318:
2.Ծննդյան տոներից երեք օր հետո, թարգմ. Զ.Բոյաջյան, էջ 318-327:
3.Փասիան որսացողը, թարգմ. Ռ.Ղազարյան, էջ 327-343:
4.Մաղադանոսի այգին, թարգմ. Ռ.Ղազարյան, էջ 343-349:
5.Դավադրությունը, թարգմ. Զ.Բոյաջյան, էջ 349-351:
6.Ծիրանի ծառ, թարգմ. Կ.Սուրենյան, էջ 354-355:
7.Հեծանվորդը, թարգմ. Կ.Սուրենյան, էջ 355-357:

Ա.Շիրվանզադե, Երկեր 5 հատորով, հատոր 4, 1987թ. 508 էջ:
Պատվի համար 118-191 էջ:
Գ.Ն. - Գրիգոր Նարեկացի, ստեղծագործություններ /գրաբար/, Եր., Սովետական գրող,1977թ., 493 էջ:
Գ.Ն. - Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թարգմ. Վազգեն Գևորգյան, Երևան, Սովետական գրող, 1979, 654 էջ:
Հ.Թ. – Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Եր., Սովետական գրող,1978 թ.360 էջ:

Հավելված 3: Հայերենով մենախոսությունների, երկխոսությունների և բազմախոսությունների ցանկ

1. **Վիլյամ Սարոյան, երկեր, հատոր 1, Երևան, Սովետական գրող, 1986, 487 էջ:**

ՎՍ.Էջ 8. Ա: - Ի՞նչ ըրիր դրամ,-կհարցնե մայրս:
Բ: - Մարդ մը տեսա, ձեռք պարզեր էր ինձի, տվի անոր:
Ա: - Է, վեց սենթ տայիր, տասը սենթ տայիր, տասնվեց սենթ տայիր, ինչու՞ բոլոր տվիր:

էջ 12. Ա: - Շատ լավ եք ըրեր, որ կանչեր եք մոլդավներուն, ժողովուրդներ իրար պիտի ճանչնան ու հասկնան երգով, պարով բանաստեղծությամբ: Խոսք ու զրույցով պիտի հասկնան իրար: Շատ կուզեմ երթալ իրենց համերգին…
Բ: - Է, երթանք…

ՎՍ. Էջ 52. – Դու պետք է մի կարգին գործ սովորես. Պետք է սովորես կավից կամ փայտից, կամ մետաղից, կամ էլ գոծվածքեղենից ինչ-որ մի բան,մարդկանց համար ինչ-որ մի օգտակար իր սարքել:

ՎՍ. Էջ 81. Ա: – Դա ուրիշ բան է, ասաց Գրիգոր եղբայրս,- դու Սամսոնը չես:
Բ: - Չե՞ մ, -ասացի ես: - Դու ի՞նչ գիտես, որ չեմ: Իսկ ինչո՞ւ չեմ, ինչու՞ ես այդպես կարծում:

ՎՍ. Էջ 60. Ա: - Ուզում ես ասել, որ այստեղ ոչ ոք չի՞ ապրել:
Բ: - Այո, ինձ թվում է՝ ոչ ոք, բացի մողեսներից, օձերից, եղջերավոր դոդոշներից, բազեներից ու նման բաներից: Ոչ մի մարդ:

ՎՍ. Էջ 49. Ա: - Երևի կգնա շուրջերկրյա ճանապարհորդության:
Բ: - Եթե գնա էլ, ուր էլ որ լինի, ինչ-որ բան է վաճառելու: Գնացքներում, նավերի վրա կամ էլ արտասահմանյան երկրներում նա ինչ-որ բան է վաճառելու: Րոպե անգամ չի կորցնի շուրջը նայելու համար: Կբացի ազդացուցակը և ուզածդ բանը կվաճառի օտարերկրացիներին:

ՎՍ. 73.

Ա: - Գրիգոր, դու ատու՞մ ես գերմանացիներին…
Բ: - ……
Ա: - Դու գերմանացիներին ատու՞ մ ես , Գրիգոր…
Բ: - Ոչ, ես նրանց չեմ ատում: Թե ինչն եմ ատում, չգիտեմ, բայց մի բան ատում եմ՝տղաների այսօրվա արածն եմ ատում: Դա եմ ատում: Այ հենց դա է, որ ես ատում եմ:

ՎՍ. Էջ 81-82. Ա: - Ես ուրախ էի, որ կա աշխարհ և ուրեմն կարող էի և ես լինել: Ես մենակ էի և տխուր, տխուր ամեն ինչի համար, բայց և ուրախ: վերջապես դա նույն բանն է: Ես շատ ուրախ էի այն ամենի համար, ինչի համար որ տխուր էի: Ես այնքան ուրախ էի և տխուր ամեն ինչի համար, որ ուզում էի երազել այնպիսի վայրերի մասին, որ երբեք չէի տեսել: /հականիշ բառերով իմաստային կրկնություն, Միավորող/ի կոնտեքստային չեզոքացում, հաշտեցում՝ մենակ-ը տխուր-ի, տխուր-ը՝ ուրախ-ի, ուրախ-ը և տխուր-ը՝ երազանք-ի հետ/

ՎՍ. 83. Ա: - *Մազերս կկտրե՞ք*, հարցրի հայերեն,- քսանհինգ սենթ ունեմ:
Բ: - Ահ, - ասաց նա, - շատ ուրախ եմ Ձեզ այստեղ տեսնելու: Ձեր անունն ի՞նչ է: Նստեցեք խնդրեմ: Նախ ես մի սուրճ պատրաստեմ…
Ա: - Դե, ասեք, *կարո՞ղ եք: Կարո՞ղ եք ինձ այնպես խուզել*, որ այլևս երկար ժամանակ *մազերիս մասին խոսք չլինի*:
Բ: - Սուրճ, - ասաց վարսավիրը, - նախ մի-մի կում սուրճ խմենք:

ՎՍ. 123. Ա: - Խնդրիր մայրիկին:
Բ: - թույլ չի տա:
Ա: - Իսկ եթե թույլ տա՞: / բառույթի կրկնություն քերականական տարբեր բառաձևերով:

ՎՍ. Էջ139-141.

Ա: - Այդ այգու վրա ես անցյալ տարի ահագին դրամ կորցրի, ասաց հորեղբայրս:
Բ: - Գիտեմ, - ասացի, - անցյալ տարի էլ նույնն էր:
Ա: - Այդ այգին առնելուս օրվանից դրա վրա դրամ եմ կորցնում: Ու՞մ է պետք խաղող, ու՞մ է պետք չամիչ:
Բ: - Միգուցե այս տարի կփոխվի՞: Ինձ թվում է մեքսիկացին հաջողություն կբերի:
Ա: - Հետաքրքիր է, ես էլ նույնն էի մտածում: Եթե նա 13 հոգու կերակրելու է այս ձմեռ, ուրեմն այնքան էլ վատ տարի չի լինի: Ինձ թվում է այս տարին լավը կլինի:

ՎՍ. 142. Ա: - Տեր հայր, նա ճաշ եփել գիտի՞: Շատ եմ ուզում իմանալ՝ ճաշ եփել գիտի՞: Ստամոքսս այս երկրի կերակուրներից խենթացել է: Ճաշ եփել գիտի՞, երգել գիտի՞, հիմա ձեր տա՞նն է:/Միավորող, խառը/

ՎՍ. 144. Ա: - Չեմ ուզում վարժվել, տեր հայր, ներիր ինձ, անբախտ եմ:
Բ: - Ժամանակի հարց է, ասաց տեր հայրը, - մի շաբաթ, երկու, մի ամիս, երկու, մի տարի, երկու, մի երեխա, հետո՝ երկու…Հետո… Ի՞նչ կա որ… Ամուսնացած մարդ կլինես, երեխաներ կունենաս, տարիներ կանցնեն

ՎՍ. 145. Ա: – Ախ, ես էլ շատ լավ եմ, սիրելիս, իսկ Ամերիկան հավանու՞մ ես, սրտո՞վդ է, գյուլտիկցի եղբայր:
Բ: - Ախ, Ամերիկան… Հարցնում ես՝ սրտո՞վս է: Ի՞նչ ասեմ… Գնա, արի… Ծանոթ-անծանոթ մարդկանց հետ սինիներ շուռ տուր: Եղածը դա է: Գնա- արի, գնա-արի, ծանոթ-անծանոթ, ծանոթ-անծանոթ …Սինիներ շուռ տուր… Ի՞նչ մարդիկ են, ի՞նչ իմանաս, եղբայր…

ՎՍ. 146. Բայց նա տխուր էր, նա ոչինչ չէր հասկանում: Գյուլտիկն էր հիշում: Այնտեղ ամեն ինչ լավ էր: Այնտեղ մարդ գիտեր, թե ում հետ է խոսում. Արաբը արաբ էր, թուրքը՝ թուրք, քուրդը՝ քուրդ: Մարդ գիտեր՝ ում հետ է խոսում: Ճանաչում էր դեմքը, աչքերը,քիթը, հոտը: Այնտեղ տուն էր, օջախ էր: Երբ մարդ խոսում էր մեկի հետ, գիտեր, թե ում հետ է խոսում: Բայց ՞ինչ էր Ամերիկայում: Նա չէր կարողանում մոռանալ, թե ինչ է Ամերիկայում ... /Տարբեր իրողությունների կրկնությունը որպես դրական դիտվող կենսակերպի հաստատում/Անորոշության վախ, պատկերավորող կրկն. Խառը/

ՎՍ. 147. Ա: - Բարի լույս միսիս Հիլպլի:

Բ: - Բարի լույս Ջո:

ՎՍ. 152. Բ: - Ցտեսություն, - ասացի ես:
Ա: - Ցտեսություն, ասաց միսիս Հիրպլին:
Գ: - Ցտեսություն, - ասաց միստր Ուայլին:

ՎՍ. 157. Ա: - Դու Գլեն Լա՞յլն ես, դատավոր Լայլի որդի՞ն, հարցրեց շերիֆը:
Բ: - Այո, սըր:
Ա: - Ճանաչու՞մ ես այս սևամորթին:
Բ: - Այո, սըր , նրա հայրը մեր այգեպանն է, իսկ ինքը՝ իմ ընկերը:
Ա: - Այս սևամորթը քեզ ի՞նչ ընկեր:
Գ: - Այ, հարցրեք Գլենին, ե՞ս եմ վառել տունը, թե ոչ, նա Ձեզ կասի: Գլեն, ես ե՞մ արել, - ասաց Ջոնը:
Ա: - Այս սևամորթը քեզ ինչ ընկեր:

ՎՍ. 253. Ա: - Ինչու՞ ես գրել այս ոտանավորը:
Բ: - Չեմ գրել, ասացի ես:
Ա: - Անշուշտ դու կասես, որ չես գրել, բայց և այնպես ինչու՞ ես արել այդ բանը:
Բ: - Չեմ արել :

ՎՍ. 253.Ա: - Դու իսկապե՞ս գտնում ես, որ միսս Դաֆնին այդքան տգեղ է:
Բ: - Ոտանավորը ես չեմ գրել: Ընդհանրապես ես այդպես չեմ գրում:
Ա: - ...Ես գտնում եմ, որ միսս Դաֆնին բնավ էլ այնքան տգեղ չէ: Ընդհակառակը, կարելի է ասել հրապուրիչ է:
Բ: - Դե, ուրեմն, հիանալի է: Իմ ուզածը միայն այն է, որ ուրիշի մեղքերը չքավեմ:

ՎՍ. 262 էջ: Դա մի սքանչելի բայց տխուր տեսարան էր:

ՎՍ. 264 էջ: - Ախ, այս մազալու, խենթ աշխարհի խենթ ու մազալու զավակները, - հառաչելով կոշիկները հանեց պապս:

ՎՍ. 269 էջ: Ա: – Այդ դու ՞ էիր, Յուջին, դու ՞ էիր երգում:
Բ: - Արամ, ոչ թե Յուջին: Իմ անունը Արամ է:
Ա: - Դու ես, որ կաս: Դու պիտի երգես եկեղեցում, պատանիների խմբում: Դու շատ քրիստոնեական ձայն ունես:

Բ: - Չեմ երգի, ես ձայն չունեմ:
Ա: Քո ձայնը իմ լսած ձայներից ամենաքրիստոնեական ձայնն է:
Բ: - Միևնույնն է, ես չեմ երգի…
Ա: - Դու պարտավոր ես, պարտավոր ես երգել…
Բ: - ……
Ա: - Դու արտակարգ քրիստոնեական ձայն ունես, մի ձայն, որի կարիքն զգում է եկեղեցին: Դու ինքդ խորապես հավատացյալ ես, թեև դեռ չես գիտակցում այդ : Քանի որ այդպես է, ես քեզ շատ եմ խնդրում, կիրակի օրերը երգիր ինձ համար, երգիր Թուլարե սթիտի եկեղեցում: Ես քեզ կվճարեմ:

ՎՍ. 274էջ. Ա: - Կրկեսը մեզ համար այն էր, ինչ մնացած ամեն *ինչը չէր*: Այն արկած էր, վտանգ, ճանապարհ, շնորհք, անուրջներ, զավեշտ, նուշ, ադի-բուդի, *ծամոն* ու գազով ջուր:

ՎՍ. 305. Ա: - Ինչի՞ մասին խոսեցին, -հարցրի մորս:
Բ: - Ոմանք, երբ խոսելու բան ունեն, խոսում են, - ասաց մայրս, -ոմանք էլ չեն խոսում:
Ա: - Ինչպես կարող ես խոսել, եթե բերանդ չես էլ բացում:
Բ: - Կխոսես առանց բառերի: Մենք միշտ խոսում ենք առանց բառերի:

Ա: - Ուրեմն բառերն ինչի՞ են պետք:
Բ: - Շատ անգամ այնքան էլ պետք չեն: Շատ անգամ պետք են նրա համար, որ բուն ասելիքդ ծածկես, կամ էլ թաքցնես այն, ինչ չես ուզում ուրիշներն իմանան:
Ա: - Իսկ իրոք գիտե՞ն, թե ինչի մասին են խոսում, - ասացի:
Բ: - Չգիտեմ ինչ ասեմ քեզ, - ասաց մայրս, - որովհետի բառերի մեջ չէ նրանց խոսածը, Բայց իրենք գիտեն:

ՎՍ. 296. Ա: - Դու ձկնորսությունից գաղափար չունես, - ասաց հնդկացին:
Բ: - Ի՞նչն եմ սխալ անում:
Ա: - Ամեն ինչը: Դու երբևէ ձուկ բռնե՞լ ես:
Բ: - Ոչ, բայց ի՞նչն եմ սխալ անում:
Ա: - Հատկապես՝ ոչինչը: Դու ուղղակի կարծում ես ձուկը մեքենա է, ինչպես ուզենաս՝ այնպես էլ կբռնես:
Բ: - Դրա ի՞նչն է սխալ :

ՎՍ. 302.Ա: - Այս սրճարանը իր ժամանակին մեծ համբավ ու կշիռ ունեցող վայր էր: Այսօր էլ նույնն է, թեպետ քսան տարի առաջվա հաճախորդներից շատերը մահացել են:

Բ: - Մեծ մասամբ հայերն էին հաճախում այնտեղ, բայց գալիս էին նաև ուրիշները: Բոլոր նրանք, ովքեր *հիշում էին* հին երկիրը: Բոլոր նրանք, ովքեր *սիրում էին* հին երկիրը:Բոլոր նրանք, ովքեր հին երկրում թավլի *էին խաղացել* կամ սկամբիլ թղթախաղը: Բոլոր նրանք, ովքեր *ճաշակել էին* հին երկրի կերակուրը, գինին, ռաքըն և փոքրիկ բաժակներով սուրճը կեսօրից հետո: Բոլոր նրանք, ովքեր *սիրում էին* երգերն ու պատմությունները: Եվ բոլոր նրանք, ովքեր *սիրում էին լինել* ընտանի բույր ունեցող մի վայրում, հայրենիքից հազարավոր մղոններ հեռու:

ՎՍ. 372. Ա: - Քանի տարեկան պետք է լինել հեռագրի ցրիչ դառնալու համար, -ասաց Օգին:

Բ: - Տասնվեց, - ասաց Սփանգլերը:
Ա: - Ես ինը տարեկան եմ, - ասաց Օգին, - ինչու՞ պետք է այդքան երկար սպասել:
Բ: - Դա օրենք է:
Ա: - Ինչի՞ համար է այդ օրենքը:
Բ: - Ինչպես քեզ ասեմ…Այդ օրենքը երեխաներին պաշտպանելու համար է:
Ա: - Իսկ եթե երեխան չի ուզում, որ իրեն պաշտպանեն, - ասաց Օգին, - Իսկ եթե նա ուզում է աշխատել: Իսկ Հոմե՞ րը, մի՞թե նա արդեն 16 տարեկան է: Այդ աշխատանքը ես էլ կարող եմ անել…Ես ինը տարեկան եմ: Ես կարող եմ հեծանիվ քշել, միայն թե դեռ հեծանիվ չունեմ.… Եթե հեծանիվ ունենամ, կարո՞ղ եմ ես էլ ցրիչ դառնալ, միստր Սփանգլեր: Դուք ինձ աշխատանք կտա՞ք:
Բ: - Այո, կտամ Օգի, - ասաց նա, - բայց ոչ հիմա: Ինը տարեկանը դեռ մեծ չէ: Տասներեքում, կամ երբ լրանա տասնչորսդ, լա՞վ:
Ա: - Գուցե տասներկուսու՞ մ, - հարցրեց Օգին:
Բ: - Գուցե, - ասաց Սփանգլերը, - բայց դու ինչու՞ ես ուզում ցրիչ լինել:

ՎՍ. 419. Ա: - Բլիթ ունե՞ք, - հարցրեց հաճախորդը:
Բ: - Բլ՞ իթ, - կրկնեց խանութպանը պատրաստակամությամբ, - ի՞ նչ տեսակ բլիթ եք ուզում: Ա: - Չամիչով բլիթ ունե՞ք:
Բ: - Չամիչով բլի՞ թ, - հարցրեց խանութպանը: Դժվար հարց էր: - Բլիթ չամիչո՞ վ, - նորից հարցրեց նպարավաճառը՝ համարյա շշնջալով: - Չամիչով բլիթ, - կրկնեց նա:
Գ: Որդին ձեռքի բանանը դրեց սեղանին: - Հայրիկ: Բլիթ, - ասաց նա:
Բ: - Դու խնձոր ուզեցիր, ես քեզ խնձոր տվեցի, կոնֆետ ուզեցիր, ես քեզ կոնֆետ տվեցի, բանան ուզեցիր, ես քեզ բանան տվեցի: Հիմա՞ ինչ ես ուզում:
Գ. - Բլիթ, - ասաց տղան:

Բ: - Ի՞նչ տեսակ բլիթ ես ուզում, - ասաց հայրը որդուն, դրանով հարցնելով հաճախորդին ու բոլոր նրանց, ովքեր այդ պահին ինչ-որ բան են ուզում:
Գ: - Բլիթ:
Ա: - Բլիթ, - ասաց օտարականը համբերությամբ, - իմ եղբոր երեխան հիվանդ է, նա լաց է լինում, բլիթ է ուզում: Բլիթ, որի մեջ չամիչ լինի:
Բ: - Բլիթ չունեմ, - շշնջաց խանութպանը, ոչ մի տեսակի չունեմ: Ինչի՞ համար եք բլիթ ուզում: Ես ամեն ինչ ունեմ, բայց ոչ բլիթ: Ի՞ նչ է բլիթը: Ի՞ նչ եք ուզում:
Ա: - Բլիթ, որի մեջ չամիչ լինի:
Բ: - Բլիթ չունեմ, - նորից ասաց նպարավաճառը: - Ես նույնպես փոքր երեխա ունեմ: Ես նրան խնձոր եմ տալիս, նարինջ, կոնֆետ, բանան, շատ ընտիր բաներ: Կոնֆետ, նարինջ, խնձոր, բանան.… Խնդրեմ, բայց ոչ բլիթ:

ՎՍ. 473. Մեքենան ուղղվեց դեպի զվարճացողների վերջին խումբը: Այդ խումբը գուցե ամենահետաքրքրականն էր: Բոլորից ուրախ ու զվարթը: Նրանց երաժշտությունը՝ սվինգ, ջայվ, և բուգի-վուգի էր, իսկ պարը՝ սոսկալի:
Ա: - Ամերիկացիներ են, - ասաց Սփանգլերը, - նայիր նրանց: Ամերիկացիներ են՝ հույն,

սերբ, լեհ, ռուս, հայ, գերմանացի, իսպանացի, պորտուգալացի, իսպանացի, հաբեշ, հրեա, ֆրանսիացի, անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի… **Մի դրանց նայիր**: /

ՎՍ. 479. Ա: - Արի Հոմեր, - ասաց Սփանգլերը, - եկ մի քիչ ման գանք:
Բ: - Ի՞նչ է անում մարդ նման դեպքերում, - ասաց Հոմերը շատ հանգիստ, համարյա մեղմ. – Չգիտեմ՝ ում ատեմ: Մտածում եմ, թե ո՞վ կարող է լինել այդ մարդը և չեմ հասկանում: Պարզապես չեմ հասկանում : Ի՞նչ է հարկավոր անել: Ի՞նչ կարող եմ անել ես: Մարդ ինչպես շարունակի ապրել: Ու՞մ կարող է այլևս սիրել:

ՎՍ. 479. Բ: - Ու՞մ ատեմ, -հարցրեց Հոմերը, - ոչ ոքի չեմ ճանաչում, որին կարելի լինի ատել:……Ես չգիտեմ ինչ է այս: Չգիտեմ ով է այդ անում: Բոլորովինչեմ հասկանում: ….Այժմ ես դառնացած եմ, բայց ու՞մ դեմ: Ո՞վ է թշնամին: Դուք գիտե՞ք, միստր Սփանգլեր:

Վիլյամ Սարոյան, երկեր, հատոր 3, Երևան, Սովետական գրող, 1988, 478 էջ:

ՎՍ. 3:7. Ա: - Ուրեմն՝ արդեն իմացաք անունս, իմացաք՝ քանի տարեկան եմ:/Բարդ, միավորող, /

ՎՍ. 3:7. Ա: - Ոչ թե մի քիչ գեշ եմ, ասենք՝ որոշ տղերքի պես, չէ, իրո՛ք գեշ եմ:

ՎՍ. 3:8. Ա: - Ասում էր, թե ինքը կյանքի ճիշտ ճամփից շեղվել է,ու աչքը վախեցած է, մեկ էլ տեսար, ես էլ շեղվեցի:

ՎՍ. 3:9. Ա: -Ինձ թվում էր, որ անպայման պիտի մեկնումեկին գրեմ, դե՛ ես էլ նրան գրեցի:

ՎՍ. 3:9. Ա: - Լռությու՛ն, ոչ մի ծպտուն չլսեմ, - ասաց:

ՎՍ. 3:10. Ա: - Բոլորն էնպես բարձր հոհոացին,որ էդ տեսակ հոհոոց մենակ բանակում կլսես:

ՎՍ. 3:11. Ա: - Դուք գրող եք, ես ինքս էլ կյանքիս քառասուն տարիները գրելով եմ անցկացրել…

ՎՍ. 3:11. Ա: - Պիտի ասեմ, որ դուք ինձնից լավ եք գրում, ուստի պարտավոր եք գրել: Գրե՛ք, որդիս, գրե՛ք:

Վ Ս. 3:12. Ա: - Բանակի մասին ինչ ասես չէի լսել՝ թե՛ ծիծաղելի, թե՛ գարշելի:

ՎՍ. 3:12. Ա: - Բայց ես իսկի բանակ գնալու տրամադրություն չունեի, ընդհակառակը՝ չգնալու տրամադրություն ունեի

ՎՍ. 3:13. Ա: - Աշխարհը մարդիկ են, իսկ մարդիկ շատ են:

ՎՍ. 3:13. Ա: - Հենց էդ □շրջադարձային□ կոչվածը մի քիչ ծանրութեթև ես անում, էն եզրակացությանն ես գալիս, թե աշխարհի երեսին ոչ մի բան չկա, որ շրջադարձային կետ չլինի, ու շրջադարձի մեջ միակ կարևորը սա է. ինչից դեպի ինչն է շրջադարձ կատարվում:

ՎՍ. 3:15. Ա: - Եթե ճիշտը վերցնենք, պիտի ոչ վախենայի, ոչ գլուխս կորցնեի, ոչ էլ կատաղեի, արի տես, որ և՛ վախեցել եմ, և՛ գլուխս եմ կորցրել, և՛ կատաղել եմ:

Վ Ս. 3:16. Ա: - Դու ի՞նչ ուներիր գնդապետի մոտ:
Բ: - Կապիտանն էր ուղարկել:
Ա: - Ինչի՞ էր ուղարկել:
Բ: - Լեյտենանտի ասածով:

ՎՍ. 3:35. Ա: - Անընդհատ սպասելիքներ կան՝ կամ փոքր կամ մեծ : Սպասում ես ուտելիքի, սպասում սրսկվելու, սպասում ստուգման, սպասում, որ կայազորից քաղաք բաց թողնեն: Հետո հերթը մեծ սպասելիքներին է հասնում. խպասում ես նամակի, սպասում, թե առաջիկայում քեզ ուր են տանելու, սպասում ես պատերազմի վերջանալուն, ու, իհարկե, ամենակարևորը՝ սպասում ես թե քեզ կսպանեն, կամ էլ միգուցե փրկվես:

ՎՍ. 3:36. Ա: - Այս աշխարհում ինչ կա չկա՝ մահվան դեմ մարդու պայքարից է ծնվել.մեր բոլոր երգերը, բոլոր բանաստեղծությունները, մեր իմացած ողջ ճշմարտությունը, բոլոր կրոնները, մեր բոլոր պարերը, բոլոր կառավարությունները, ամեն-ամեն *ինչ՝ առևտուրը, գյուտերը մեքենաները, նավերը, գնացքները, ինքնաթիռները, զենքը, տները, պատուհանները, դռները, դռան բռնակները, հագուստ-կապուսրը,եփութափը, օդափոխիչները, սառնարանները, կոշիկները*

ՎՍ. 3:42. Ա: - Նախանձում էի, որ ազատության մեջ է, մեքենայի տեր…Նախանձում էի, որ տուն ունի, ընտանիք, գնալու տեղ:/Ջուգահեռույթով ներդրում/

ՎՍ. 3:43. Ա: - Իզուր էլ չկրակեցի, լեշդ փռեի:
Բ: - Լեշս փռեի՞ր, ինչի՞ համար:
Ա: - Որ ասում եմ կանգնի, չես կանգնում, այ թե ինչի համար:
Բ: - Կանգնեցի, էլի…
Ա: - Երեք անգամ բղավելուց հետո կանգնեցիր…

Վ Ս. 3:43. Ա: - Լավ լսի, սերժանտ: Լակած ես ու կարգ ես խախտել: *Ուզածդ միշտ էդ է եղել*, որ իմ պարտքը կատարեմ, չէ՞: Էն որ *որպես պատիժ ուղարկեցիր խոհանոց*՝ ես պարտքս կատարեցի, էն որ *բարաքը մաքրել տվիր*, էլի պարտքս կատարեցի, ու ամեն անգամ էլ, *ինչքան կարգադրել ես*՝ պարտքս կատարել եմ, դե հիմի էլ եմ կատարում. *առավոտը քեզ սերժանտից շարքային կսարքեն*:

ՎՍ. 3:70. Ա: - Այ, թե ինչ է մարդու գլխին գալիս, որ խելքը թոցնում է, բայց երևի սրա համար արժի խելքը թոցնել

ՎՍ. 3:90. Ա: - Հիվանդներին հենց հիվանդներն էլ խնամում էին: Թեթև հիվանդները ծանր հիվանդներին /

ՎՍ. 3:98. Ա: - Ի՞նչ սխալ արի, - հարցրի սերժանտին:
Բ: - Պիտի կոչումդ հայտնեիր:

Ա: - Բայց նա անուն ազգանունս էր ուզում:
Բ: - Պիտի կոչումդ հայտնեիր:

ՎՍ. 3:105. Ա: - Իսկ աղյուծն ապրում է՝ առանց իմանալու, թե ինչքան փառահեղ է: Արծիվն ապրում է՝ առանց իմանալու, թե ինչքան սրաթև է: Վարդը չգիտի, թե ինչ է վարդը՝ նա իր անուշ հոտից հաճույք չի առնում, չի տանջվում իր քայքայման գարշահոտից:

ՎՍ. 3:105. Բայց մարդը գիտի, թե ինչ է աղյուծը, արծիվը, վարդը: Ամեն ինչ գիտի, ու ամեն ինչի վերջում վրա հասնող քայքայումն ու կսկիծը նրա աչքերը արցունքով են լցնում, տանջում նրա հոգին:

ՎՍ. 3:7. Ա:- *Արծվի սրընթացությունը,* որի մասին նա տեղեկություն չունի, *համարում եմ իմը* ու *աղյուծի փառահեղությունն* էլ, որի մասին նա տեղեկություն չունի, *իմն եմ համարում*:

ՎՍ. 3:120. Ա: - Արար աշխարհի վրա էր զայրացել, բոլոր մարդկանց, որ առանց իմսնալու, թե ովքեր են իրենք, չեն թողնում լինես էն, ինչ որ իրոք կաս:

ՎՍ. 3:122. Ա: - Ոնց որ ե՛ս չէի ուզում նրան սպանել, էնպես էլ նա՝ ինձ, երկուսս էլ դա տեսնում էինք,բայց նեղ տեղ էինք ընկել, ճար չկար, պիտի էդ բանն անեինք:

ՎՍ. 3:163. Ա: - Այդպես լավ է, թեև մի կողմից էլ վատ է, բայց լավ է, թե վատ, ինչ էլ գրում ես, ընթերցողի համար է:

ՎՍ. 3:163. Ա: - Հանդեսը տարա, դրի սեղանիս ու նամակը կարդացի, հետո մի անգամ էլ կարդացի, որովհետև խելքս գլուխս չէր գալիս:

ՎՍ. 3:164. Ա: - Ես ո՞վ էի, որ գրելով զբաղվեի: Գրելու ինչ իրավունք ունեի… Եթե կարող էի էդպիսի բաներ գրել, ուրեմն կարող էի շատ ու շատ բաներ գրել: Բայց ես ուզու՞մ էի գրող լինել:

ՎՍ. 3:165. Ա: - Ասենք, թե հայրիկը լավը չէր, բայց իր կարծիքով, ինչքա՞ն լավը պիտի լիներ: Մարդ ինչքա՞ն լավը կարող է լինել: Եթե ոչ մեկին վնաս չես տալիս,ու չես ուզում տալ, էլ հնարավո՞ր է դրանից լավը լինել:

ՎՍ. 3:164-170. Ա: - “Վեսլի Ջեքսոնի Արկածներ”-ի երեսուներկուերորդ գլուխը 6,5 էջ է, որտեղ հեղինակը 58 անգամ կրկնում-գործ է ածում □Լացել□ բայի հարադրական “լաց լինել” ձևը, ինչպես նաև հոմանիշ բազմաթիվ ձևեր՝ արցունք, աղի արցունք թափել, աչքերը ծով դառնալ, արտասուքը հերիք չանել,արտասուք թափել, անանուն լացել,վերջ տալ լացին, լացը գալ, լացը չգալ, թափած ամենաանմխիթարական արցունքներ,ծով արտասուք թափել.

ՎՍ. 3:193. Ա: - Էս կինը գիտեր՝ իրեն էնպես չեմ սիրում, ոնց որ հարսնացուիս կսիրեի, բայց ուրախ էր,որ կարող եմ նրան էդքան շատ սիրել, որովհետև իրեն էլ էի համարյա էդքան շատ սիրում:

ՎՍ. 3:197. Ա: - Ինչն արդար է՝ արդար, էստեղ ոչ մի և չկա: Ոչ մի խարդախություն: Ոչ մի խաբեություն: Ոչ մի մի խնամակալություն: Ոչ մի զիջողություն:

Դերենիկ Դեմիրճյան, Պատմվածքներ: Երկու հատորով: հ. 1 : "Սովետական գրող" 1977, 663 էջ:

ԴԴ.էջ 27. Ա: - Պարոնի համար այստեղ շատ հանգիստ է, բայց …ներեցեք պարոն …այգին մասնավոր է, և նրա մուտքը արգելված:
Բ: - ……
Ա: - Հաճեցեք վեր կենալու, պարոն, այգին մասնավոր սեփականություն է … և վերջապես… Բ: - Ինչպե՞ս թե արգելված է, ինչու՞, - ակամա հարցրեց այգու ծառի տակ նստած օտարականը:
Ա: - Ինչպես թե ինչու, չե՞ք տեսնում այն տախտակը, որի վրա պարզ գրված է "Այս այգու մեջ մուտքն արգելված է":

Բ: - Լավ, ի՞նչ անենք, ի՞նչ եղավ այգին մտնելով:
Ա: - …..Այստեղ սեփականությունը հարգված է: Ես Ձեզ խնդրում եմ թողնեք այգին:
Բ: - Դուք այս այգու տե՞րն եք, - խոսքը փոխեց երիտասարդը քիչ հեգնորեն:
Ա: - Պիտի հեռանա՞ք այստեղից, թ՝ չէ. պարոն:

ԴԴ:141. Ա: - Երգիր ադաջիոն:
Բ: - Մի՛ դիպչիր ինձ…
Ա: - Չեմ դիպչի…
ԴԴ:141. Բ: - Ազա՛տ թող ինձ…
Ա: - Ահա՛, ազա՛տ: Դե՛…

ԴԴ:141Բ: - Ո՛չ. բոլորովի՛ն ազատ թող, ավելի՛…
Ա: - Ահա՛, ավելի՛, - թուլացավ վարպետը և հառաչեց ծանր ու դառն, - ամեն ինչ կռվով, ամեն ինչ ճիգով:

ԴԴ:144. Ա: - Հայր ունե՞ք:
Բ: - Այո՛, մեր հայրը Արամ թագավորն է:
Ա: - Արամ քագավո՞րը: Լավ, որտե՞ղ է: / կրնություն զարմանքի պահն անցկացնելու նպատակով//Բովանդակային արձագանքում՝ պարզաբանման նպատակով, խառը տեսակ/

ԴԴ:196.Ա: - Եթե չեք կարող, հանձն մի առեք, - փորձել ուզեց հրամանատարը: Կարո՞ղ եք: Բ: - Կարող ենք, - ասաց Ղոնդին:
Գ: - Կարող ենք, - ասաց Գըդըլը:

ԴԴ:210: Ա: - Նու, ի՞նչ նորություն, - խմբապետին դարձավ գնդապետը:
Բ: - Ինչ նորությու՞ն: Դասալիքները շատացել են, պարոն գնդապետ:
Ա: - Դա տխուր բան է…Շատ տխուր բան է:
Բ: - Ես կզարմանամ այս գյուղացիներուն վրա, - գանգատվեց խմբապետը: - Ասոնք հայրենիքի գաղափար չունի՞ն:
Ա: - Դա տխուր բան է, շատ տխուր բան է, - նույն տոնով շշնջաց գնդապետը՝ ուշադիր

զննելով քարտեզը:
Բ: - Երեկ հավաքեցի գյուղացիներուն. խոսք տվին, երդում ըրին, բայց չեն կռվում:
Ա: - Դա տխուր բան է, շատ տխուր, - նա պատուհանից դուրս էր նայում:

ԴԴ:248. Ա: - Շատ գեղեցիկ: - Եվ Դավթյանը՝ կարմիր հրամանատարը, վայր դրեց սեղանին ճմրթած նամակը… - Շատ գեղեցիկ:

ԴԴ:248. Լռությունը կլանեց նրա այդ խոսքը ևս: Դավթյանը սկսեց մտախոհ նայել պղտոր պատուհանից դուրս, որ գիշերը լցվել էր սև մրի պես: Ի՞նչ էր մտածում նա: Մի պահ հայացքն ուղղեց Ղոնդուն: Երկուսի հայացքները հանդիպեցին իրար: Նա միայն մեքենայաբար դարձյալ կրկնեց առանց կապելու իր միտքը Ղոնդու, նրա բերած նամակի հետ:

ԴԴ:248. Ա: - Շատ գեղեցիկ: Շատ գեղեցիկ:

ԴԴ:256. Ա: - Այ տղա, էդ բուրժուաները ոնց էին անում, ո՞նց էին տարիներով պարապ անցկացնում. Բա սրտները չէր ճաքու՞մ:

Բ: - Հա, - ժպտաց ու գլուխն օրօրեց մի մռայլ բանվոր՝ ինչ-որ դառն բան հիշելով, - *էդ էն ժամանակն էր, որ աղքատն աղքատանում էր, հարուստը հարստանում:*

ԴԴ:526. Ա: - Ապա ի՞նչն է նրան խանգարում զբաղվել մի մասնագիտությամբ, որը միաժամանակ պրակտիկա է: Պարտավո՞ր է նա վերջապես բժշկել՝ երբ բժիշկ է:
Բ: - Այո, պետք է բժշկել, երբ մարդ բժիշկ է, իսկ երբ բժիշկն այլևս անելիք չունի, նա պետք է մարդ լինի մահացողի մոտ:

ԴԴ:260. Ա: - Էնպիսի զուլում չի բարձրացել, որ փեչի գլխին պառկես, վեր կաց, գնա. Բարինը էլի գլխներիս է ուզում նստի, չես հասկանու՞մ: Գիտե՞ս ինչ է քաղաքացիական պատերազմը: Բ: - Հասկանալու բան չկա, - վեր կացավ տեղից Եգորը, - էն կլինի, ինչ որ ամենքը վճռեն, իսկ ի՞նչ վճռելու բան կա՝ երբ ամեն բան վճռել-պրծել ենք: Ես դուրս եմ գալիս: Գ: - Հենց էդպես ու էդպե՞ս:
Բ: - Ես թխսահավ չեմ, թևերս ընտանիքի վրա չեմ փռում:Թևերը թռչելու համար են տրված:Թռչելու տեղերն էլ **շաաա~տ.** Կգնամ, թող մարդկանց կյանքը թեթև լինի:

ԴԴ:325. Ա: - Մենք կխնդրեինք, որ մեզի պսակես:
Բ: - Ի՞նչ…պսակե՞մ… Հասկանու՞մ ես, թե…- շնչատեց հայր սուրբը, քեզ պսակե՞մ, ե՞րբ… Ա: - Էսօր, հիմի:
Բ: - Վայ քու տղիս տղա: Ծո, խելքնե՞րդ եք կորցրել, թե նզովք է մտել ձեր ցեղի մեջ: Ասել է թե չորս կողմդ չե՞ս նայել, չե՞ս իմանում ինչ բանի մեջ եք, որ պսակվել եք ուզում:
……
Ա: - Ապա ո՞նց պսակվենք…..Շատ կխնդրվինք, որ մեզի պսակես… Երկուսս էլ որբ ենք, պսակի:
Բ: - Առաջ արիք, - տեղի տվեց հայր սուրբը լռության ու արցունքի միջից, - ձեր կամքը լինի որդիքս, ձեզ կպսակեմ:

ԴԴ:332. Ա: - Դու բուրժուա ես, որ էդպես ես խոսում:
Բ: - Բուրժուան դու ես:
Ա: - Հաա~, ես ինչի՞ եմ բուրժուա: Բուրժուան դու ես, որ խոզի պես ես:
Բ: - Դու բորժուա տեսե՞լ ես , ես տեսել եմ:
Ա: - Ստլիկ, բուրժուա որտեղ կա, որ տեսնես:
Բ: - Մեյդանի ղասապը բուրժուա չէ՞, փորը հաստ:
Ա: - Դմբո, ղասապը բուրժուա՞ է – ծիծաղում է քրոջ վրա: - Բուրժուան լրագրի մեջ է լինում: Այ բուրժուա, և ցույց է տալիս պատից կախված լրագրի վրա Մուսոլինիի պատկերը:

ԴԴ:399. Ա: “Կինը պետք է, կյանքի մի պետք”, - ասաց մտքում Սյոման: - Հենց նրա համար է պետք, որ նրա մասին չմտածես, ինչպես օդի մասին: Սեր է, սովորություն է, թե ինչ՝ կինը պետք է: Եվ վերջապես չի կարելի այսքան զբաղվել մի կնոջով: Այ, եթե ինքն էլ Մաքսիմի պես մի կին ունենար այստեղ՝ մտքում ոչ մի կին չէր լինի”:

ԴԴ:526. Ա: - Թերևս ասենք ավելի շատ հարմար էր, որ նա փիլիսոփա, գիտնական լիներ, քան բժիշկ:

ԴԴ:526Բ: - Թերևս…բայց ինչո ՞ վ պակաս կլինի մի բժիշկ՝ եթե փիլիսոփա և գիտնական լինի:

ԴԴ:527. Ա: - նրան հիվանդանոցից ուղարկել են տուն…հետագա բուժման… - թեթև իրոնիայով խոսեց բժիշկը:
Ա: - Հույս կա ՞ բուժելու նրան, - հարցրեց բարեկամս: Հույս կա՞:
Բ: - Հու՞յս… հույսը միշտ գալիս է մեզ հետ մինչև գերեզման և դրանից էլ հետո, - նա ծխախոտ հանեց: - Միայն հույս կա շատ անգամ և ուրիշ ոչինչ:/Ներդրման շեշտումով կրկնություն՝ փվյալների հավելումով/
Բ: - Միայն հույսով ի՞նչ կլինի:

Ա: - Դե դա կյանքն ինքն է… ներեցեք, ես պետք է գնամ հիվանդի մոտ:

ԴԴ:537. Ա: - Ի ՞նչ եք կամենում, մեղմ հարցրեց բժիշկը՝ կարեկցաբար թեքվելով նրա դեմքին:
Բ: - …Մարդկայնությու~ն, խորի~ն մարդկայնություն… - Նա լռեց մի պահ… և կրկին խռպոտ ու դառն ձայնով կրկնեց , - մարդկայնությու~ն, խորի~ն մարդկայնություն: Մարդկայնությու՛ն տվեք…, - կարծես նա գտել էր հիվանդության դեղը: /
ԴԴ:539. Ա: - Գիտե ՞ք ինչ, ապագայում, մարդկության շատ ավելի խոր և նրբին կյանքում բժշկին սպասում է մի նոր վեհ, դժվարին, ծանր թերևս, բայց բարձր առաքելություն: Հերոսական կոչում: Լինել մարդ, սովորել մարդուն, գիտենալ մարդուն և դառնալ մարդու դաստիարակը, նվիրական ընկերը: Այդպիսի մի “պաշտո~ն” Բժիշկ և մարդ բառերի իմաստների:
Բ: - Անկարելի, դժվար բան է:/ Կրկնությունը հաստատում է, որ բժշկի էությունը պետք է հագենա ոչ այնքան մասնագիտական գիտելիքներով, որքան մարդեղենության տարրերով:

ԴԴ:552. Ա: - Ինչու՞ ես լալիս, Լևիկ, ի՞նչ է եղել:
Բ: - Ես ուզում եմ պապայիս ցույց տալ, թե ինչպես եմ սովորում, ուզում եմ, որ նա տեսնի տետրակներս…Ես պապա եմ ուզում, - գոչեց նա բռունցքը թափահարելով օդում, - սիրտս պապա է ուզում… շա~տ է ուզում:
Երեխան հոգեպես ծարավի էր: Պապա էր ուզում: Որտեղից պապա… Պապան վճարում էր ալիմենտը և տարիներով լռում, ինչպես անտարբեր ժայռ: Որտեղից պապա

ԴԴ:600. – Նրանք սկսեցին ավելի կենդանի հետաքրքրություն ցույց տալ դեպի այն հայրենիքը, որ Արթինի երազանքն էր արդեն և տենչերի վայրը: Սկսեցին իրենք ևս խոսել հայրենիք գնալու մասին: Գնալ այնտեղ, ապրել այնտեղ, մասնակցել հայրենիքի կյանքի վերելքին:

ԴԴ:602. Նույն միջոցն է աշխատում նաև երկու էջ անց՝ արաբական ափեր – քստմնելի դժոխային պատմություն – Տեր-Զոր –աքսորի ավազադաշտեր – մարդկանց ավերակներ՝ գանգեր ու ոսկորներ, ոստիկանների մտրակներ – ջարդարար ամբոխների հռնդյուններ – օտարի դառն հաց: Ներդրումով իմաստային կրկնություն՝ տեքստային հոմանիշ կառույցներով/

ԴԴ:648. Ա: - Հա, ի՞նչ է, չի՞ հանգստացել:
Բ: - Ախր ո՞նց կհանգստանա, Լեկսեյ Պետրովիչ, ո՞նց կհանգստանա իմ աղունակ Ֆեդկան, որ հարցնում ես, ո՞նց կհանգստանա իմ արև բալեն: Հնգաթև աստղերն այրում են նրա թշերը, կսկծում, չեն թողում քնի, ախր աչքերը չկան, որ փակի, խոռոչներ են, , ո՞նց կհանգստանա…

ԴԴ,1:649. Ա: - Շատ հեռու չգնաս: Հիմա երևի հրամայեն, որ բաղնիքը տաքացնեմ:
Բ: - Ես փայտի եմ գնում, - բացատրեց ծերուկը և հանկարծ կանգ առավ ու ընդոստ դարձավ դեպի պառավը, - թող հրամայեն: Այո, թող հրամայեն: Ամեն օր չեն հրամայի: Չեն հրամայի ամեն օր:

Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հատ 2, Եր., Ակադեմիա 1977, 518 էջ:

/:ԴԴ 2:12,Ա: - Գիտեմ, տեր-հայր, գիտեմ, ընդմիջում էր վարժապետը: /թեման ավարտելու առաջարկ կրկնության միջոցով:

ԴԴ 2:12:Ա: - Դե~հ, ես ինքս էլ գիտեմ, որ դու գիտես, բայց հո բոլորը չես գիտենալ: Նրա համար եմ պատմում այս ամենը, որ դու արդեն գլխի ընկնես, հասկանաս, թե բանը ինչումն ա:

/ԴԴ 2:12/: Ա: - Ամեն տեղ կռիվ, կեղծություն, խաբեբայություն, հացի խնդիր

/ /ԴԴ 2: 21/:Մի գնացեք ասեք՝ շտապեն է~, ուշանում ենք: /պառճառահետևանքային եզրեր նշանակող հականիշ բառերը որպես հուզական լարումով կրկնություն:

: /ԴԴ 2: 23/ Ա: - Ամբոխը իր աղոթքի հետ էր: Որը լալիս էր, որը գանգատվում, որն էլ աղերսում էր բարձրաձայն:

/ԴԴ, 2: 67/Ա: - Կարելի՞ է իմանալ ձեր տխրության պատճառը, Օֆե՛լյա, - ասաց Սուրենը:
Բ: - Ես տխուր չեմ:
Ա: - Ձեր տխրության պատճա~ռը, շարունակեց նա Օթելլոյի խոսքերը, - Ահա պատճառը, Դեզդեմոնա, ահա պատճառը
/ԴԴ 2: 216/: Ա: - Մենք մարդ ենք ու մարդ ենք սպանում: **Նար – Դոս, Երկեր, Հայ դասականների գրադարան : "Սով. Գրող" 1977: 590 էջ:**

ՆԴ:53. – Ինչ ոտ եմ դրել էս տունը, ոչ մի լավ օր չեմ տեսել, միշտ ծեծ ու հայհոյանք, միշտ հայհոյանք ու ծեծ :

ՆԴ:53. Ծեծն ու հայհոյանքն էլի վնաս չունի, էդ բանին դեռ կարելի է դիմանալ, բայց գոնե տան և երեխաների հոգսը քաշեր… Տունը ես եմ պահում, երեխաներին ես եմ հագցնում, կերակրում իմ ձեռքի աշխատանքով, ուրեմն ինչացու՞ է այդ միշտ արբած մարդը, էլ ի՞նչ սրտով է քղավում, հայհոյում, ծեծում, ինչու՞ և ի՞նչ իրավունքով:

Ն.Դ.63. Ա: - Ու՞ր ա մերդ, - հարցրեց հայրը:
Բ: - Բագրատենց տուն գնաց:
Ա: - Բագրատենց տու~ն… Լավ. Շատ լավ: Դե հիմա կգաս, կտեսնենք, էլի, …Ես քեզ Բագրատենց տուն շանց կտամ…Հայ գիտի հա, Ասատուրը մեռել ա , էլ գետնի էրեսին ման չի գալի էլի, որ նրա կնկա հետ որիշներն են սիլի-բիլի անում…Հոպոպ որ դառանք, նամուս էլ կորցրի՞նք, Ալ գետինը չմտնի էս գդակը:

ՆԴ:64. Ա: – Ինչ պիտի շինեի նրանց տանը: Լվացք ունեին անելու, կանչել էին, որ էգուց գնամ լվանամ:
Բ: - Լվա՞ցք… լվա~ցք… Տո ես քու …. Անտեր-մունդռիկ ե՞ս մնացել, քաղցած-տկլոր ե՞ս մնացել, որ ուրիշների համար լվացք ես անում: Բա ես չկա՞մ, բա իմ գլուխը շներն ու գելերը կերել ե՞ն: Իմ կնիկն ինչի պտի ուրիշի լվացքն անի: Տո Բագրատն ում շունն ա, որ որ իմ կնիկը գնա նրա համար լվացք անի, հը՞: Տո ես Բագրատի պես հարուրին կառնեմ-կծախեմ, ու իմ կնիկը պտի գնա նրա համար լվացք անի՞: Տո ի՞նչ լվացք, ի՞նչ դես, ի՞նչ դեն, ու՞մ ես ուզում խաբի: Հազիր ասես գնացել իր նրա հետ շնութին անելու~… /

Պահանջ: ՆԴ:104. Ա: - Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձայնի բարձրանալ ինձ մոտ, իմ սենյակում նվագելու:

Ա: - Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձայնի ինձ հետ մի զբոսանք կատարելու ծովի վրա:

Ա: - Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ թույլ չես տա գլուխս դնեմ ծնկանդ վրա
Ա: - Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ մի համբույր չես տա ինձ/
Շարահյուսական զուգահեռույթ , հարցական շեշտումով ներդրում/

Ա: - Անտոնիո, Անտոնիո…
Բ: - Ջուլիետա, Ջուլիետա…/

ՆԴ:109. – Բարձրանա~լ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ… Օ~, ի~նչ հրաշալի վրիժառություն, որի համար, սակայն, ես անընդունակ եղա:

ՆԴ:115. – Մեզանում գոյություն ունի դեռևս այդ շղթան ամուսինների մեջ: Այդ զարհուրելի շղթան՝ մեր տգիտության, մեր խավարամտության շնորհիվ: Եվ ո՞վ է կռում այդ շղթան, զարհուրելի է՝ կրոնը, եկեղեցին: Բայց ես առաջինը կլինեմ մեզանում, որ կփշրեմ այդ շղթան և ցույց կտամ, որ կրոնը, եկեղեցին ոչինչ են, նրանք շղթա են հագցնում ժողովրդին և այդ շղթաներից մեկը ամուսնությունն է, - զայրացացած ասում էր կնոջը Մասխարյանցը:

ՆԴ:119. Ա: - Սուս կաց, թե չէ քաչալ գլուխդ կկոտրեմ:
Բ: - Ի~, հողեմ քաչալ գլուխդ:

ՆԴ:127. Ա: - շան որդի, - բղավեց աղա Մարտինը, - էս րոպեին պարիկս տուր, թե չէ էդ ածելին կառնեմ, վիզդ կկտրեմ:
Բ: - Ի՞նչ պարիկ, պապա:
Ա: - Իմ պարիկը:
ՆԴ:127. Բ: - Քո պարիկը ինչիս է պետք, պապա:
Ա: - Բա դու չե՞ս *գողացել:*
ՆԴ:127. Բ: - Ինչու պիտի *գողանայի* քո պարիկը, պապա:

ՆԴ:135. Ա: - Ո՞վ եք, բղավեց ներսից մի տարօրինակ ձայնով:
Բ: - Ավետիս, աղա, ասաց ծերունի ժամկոչը ինքը ևս վախեցած այդ միջադեպից:
Ա: - Ի՞նչ, - հարցրեց ճաղատ պարոնը:
Բ: - Ավետիս, կրկնեց ժամկոչը:
Ա: - Ի՞նչ Ավետիս, ո՞վ է Ավետիսը:
Բ: - Ավետիս ասելու ենք եկել, աղա: / Իմաստային կրկնություն համանուն բառերով

ՆԴ:148. - Գնացել վարժապետ ու գրող ես դառել , վա~յ գրողը տանի քեզ, Պատրիկ ջան, գրողը… ինձ էլ քեզ հետ, - ավելացրեց քարտուղարը և գնաց նստեց իր տեղը:/Կրկնություն *գրող* բառի համանուն իմաստների օգտագործմամբ:

ՆԴ:152. Ա: - Ո՞վ է, ի՞նչ է, - լսվեց ներսից քնից նոր ելած խմբագրի խռպոտ ձայնը:
Բ: - Տանտիրուհին է, դատական պրիստավ է բերել, Ձեզ են ուզում, -ասաց Հայրումյանը:

Ա: - Հաա՞… Ասացեք՝ իսկույն գալիս եմ:
Բ: - Իսկույն կգա խմբագիրը, - ասաց Հայրումյանը վերադառնալով և նստեց իր տեղը:

ՆԴ:155. Ա: - Բավական է, - գոչեց խմբագիրը կատաղության հանկարծակի բռնկումով: - Ես ձեր ոչ սեռին և ոչ տիտղոսին կնայեմ և դուրս կշպրտեմ ձեզ պատուհանից, եթե շարունակեք ինձ վիրավորել:
Բ: - Այս ի՞նչ վայրենի տեսարան է, այս ի՞նչ վայրենի տեսարան է, - շշնջաց իշխանուհին ետ-ետ քաշվելով: - Այս ի՞նչ վայրենի տեսարան է, համ պարտքը չվճարել, համ էլ …Ես ոչինչ չեմ հասկանում, պարոններ… այս ի՞նչ վայրենի տեսարան է:

ՆԴ:156. Ա: - Ես չեմ վճարել բնակարանի վարձը, որովհետև չեմ կարողացել: Այժմ դուք ցանկանում եք իրեղեններս ցուցակագրեք և աճուրդի հանեք: Դա ձեր իրավունքն է: Ես չեմ փախել…
Բ: - Միշտ փախչում էիք, - վրա բերեց իշխանուհին:
Ա: …Ոչինչ չեմ թաքցրել…
Բ: - Դա դեռ հարց է, չե՞ք թաքցրել,-

ՆԴ:191. Ա: - *Ուզու՞մ եք*, - ասացի ես, - ձեզ հետ պարապեմ հայերեն:
Բ: - *Ուզու՞մ եմ*…ինչպես թե ուզում եմ… իհարկե ուզում եմ, - բացականչեց Քալին ուրախությունից վառված աչքերով

ՆԴ:198. Ա: - Ինչու՞ միջամտեցիք, ինչու՞ ձեր կյանքը վտանգի ենթարկեցիք:
Բ: - Նա ախր ձեզ սպանում էր:
Ա: - Թո՛ղ սպաներ, թո՛ղ սպաներ, թո՛ ղ սպաներ, - նույնական կրկնություն , խառը տեսակի, հուզական լարվածության/ վրա տվեց կինը սրտանց: - Ավելի լավ չէ՞ր լինի, միանգամից կպրծնեի…Իմ մահը երջանկություն կլիներ ինձ համար, իսկ ձեզ…Ի՞նչ ասաց բժիշկը. Վերքը խո վտանգավոր չ՞ է :

ՆԴ:313. Ա: - Դու վիրավորվեցի՞ր, - հարցրեց Գարեգինը:
Բ: - Ես առհասարակ չեմ սիրում, որ ինձ հարցաքննում են, - պատասխանեց Սառան խստորեն, առանց նրան նայելու:
Ա: - Ես քեզ ե՞րբ հարցաքննեցի, - թոթովեց խեղճ բարեկամս:
Բ: - Դուք այս րոպեիս հարցրիք՝ կարդացե՞լ եմ ես այս գիրքը: Ասացեք, խնդրեմ, ինչու չպետք է կարդացած լինեի:

ՆԴ:315. Ա: - Սառան նեղացավ, որ **դու**-ով էի խոսում հետը:
Բ: - Վա~յ, վա~յ, - բացականչեց Բաղիրյանը, - տեսա՞ք ինչ է պատահել. Էդ հո ամեն բան քանդվեց, կործանվեց, վերջացավ, պրծավ, գնաց մու~թ, խավա~ր տարտարոս…Հիմի ի՞նչ անենք:

ՆԴ:325. Ա - Ի՞նչ խորհրդավոր բաներ, -հարցրեց Գարեգինը զարմացած իմ մտքից:
Բ: - Խորհրդավոր չթվացի՞ն քեզ նախ նրա այն խոսքերը, թե կանայք առհասարակ չեն կարողանում վրեժ լուծել իրենց վիրավորողից այնպես, ինչպես տղամարդը կլուծի, հետո այն, որ նա ատրճանակ նկարեց, հետո հարցրեց՝ մարդ կարո՞ղ ես սպանել:

ՆԴ:326. – Խնդրում եմ, աղաչում եմ, Միքայել, մի կոտրիր սիրտս: Ես նրան սիրում եմ: Սիրում եմ անչափ: Սա իմ անդրանիկ սերն է:Ես պաշտում եմ նրան: Որ թույլ տա՝ մոմ կվառեմ նրա առջև, ծունկ կչոքեմ և կհամբուրեմ այն գետինը, որի վրա ոտք է դնում… Ես չեմ կարող ձեռք քաշեմ նրանից, ավելի լավ չէ՞ ասես՝ ձեռք քաշեմ իմ կյանքից, իսկ նրան սիրելուց հետո այնպե~ս սիրում եմ կյանքը: /բացի **սեր** գաղափարի արտահայտությունների կրկնությունից հերոսն օգտագործում է հոմանիշ բառերով և կառույցներով իմաստային կրկնություն ներ, զուգահեռներ, այլաբանություններ, որոնք մերձիմաստ են միմյանց/ այսպես, թե այնպես սիրո տրամադրվածության կրկնություններն են/:

Բ: - Էլ մի հարցնիլ, Օսան ջան, էլ մի հարցնիլ. իմ որդու արարմունքը ինձ ողջ-ողջ գերեզման դրեց: Զրույց սկսելուն նպաստող կրկնություն:

ՆԴ:415. – Խնդրել եմ մայր աստվածածնից, որ որ նա այրվի, այրվի, ոնց որ մենք ենք այրվում-փոթոթվում անկրակ՝ նրա պատճառով: Խնդրել եմ տեր ամենակալից, որ նրա օրն ու կյանքը այնպես խավարի, ոնց որ մեր կյանքն է խավարել նրա պատճառով, սև ու մութ լուսանա նրա գլխին կարմիր զատիկը, ոնց որ սև ու մութ է արել նա մեր օրերը

ՆԴ:417. Ա: - Թո՛ղ ուր ուզում է գնա, ես դրան պահողը չեմ:
Բ; - Հիմի չես պահո՞ղը, խեղճ աղջկա ուղն ու ծուծը քամեցիր: Հիմի չես պահո՞ղը, երբոր խեղճի բաժինքի փողերը դուրս բերիր, տարար լակեցիր. քթովդ դուրս գա:

ՆԴ:422. – Նրա հայացքից, հետո խոսակցության տոնից այնպիսի մի բան ես զգում, որ կարծես թե խաղտում են կռներիդ տակ, համ ախորժելի է, համ անախորժ, համ ծիծաղում ես, համ զայրանում, բայց ընդհանրապես գժի պես ուրախ ես զգում քեզ:

ՆԴ:432. – Մինչդեռ ես կասեմ, որ այն, ինչ որ դու ես քարոզում, սոփեստություն է, ստություն է, կեղծիք է, դիմակ է: Իսկ ճշմարտությունն այն է, որ դուք սարսափելի եսասերներ եք, բանական արարածի պատկերը կորցնելու չափ եսասերներ:

ՆԴ:435. Ա: - Ինչու՞ ես եկել, հարցրեց Հեղինեն՝ պենսնեի պարզ ապակիների միջից փայլեցնելով նրա վրա ցասումնալից աչքերը:
Բ - Ինչպե՞ս թե ինչու եմ եկել, - հարցրեց նա մեքենայաբար:
Ա: - Հա, ինչու ես եկել, հարցնում եմ քեզ, - կրկնեց Հեղինեն մի քայլ առաջ գալով:

ՆԴ:480. Ա: - Եվ դուք կարծում եք չհասկացա՞, թե ինչու զատկին սուտ հիվանդ ձևացաք և դուրս չեկաք սենյակ:
Բ: - Որ հասկացել եք, ուրեմն *ավելորդ է* այդ մասին խոսելը, - նկատեց Մանեն խստորեն: Ա: - Ոչ, ավելորդ չէ: Մանե, *ավելորդ չէ*, - շշնջաց նա հուսահատական սիրով: - Դուք ամեն կերպ աշխատում եք խուսափել ինձնից, բայց ես տեսնում եմ, թե որքան թանկ է նստում այդ ձեզ:

ՆԴ:481. Ա: - Նա ոչինչ չգիտե: Եթե գիտենա էլ… Մի՞թե վախենում եք:
Բ: - Վախենու՞մ…Ձեռքերս կապել եք և հարցնում եք՝ վախենու՞մ եմ: Շատ էլ չեմ վախենում, բայց այնպիսի դրության մեջ եք դրել ինձ, որ ուզեմ-չուզեմ պետք է զգույշ կենամ ամենից առաջ հենց ձեզ համար: Վստահեցրեք ինձ, թե վճռական րոպեին ինձ հետ կլինեք և ոչ իմ դեմ, այն ժամանակ կտեսնեք վախենու՞մ եմ, թե ոչ:

ՆԴ:500. Ա: - Մանե, նամակը թույլ չտվի տպել ձեր պատվի և հանգստության համար, - ասաց նա գրեթե լացագին:
Բ: - Մի՞թե, - բացականչեց Մանեն, և ինչ-որ խիստ կծու մի ժպիտ ծամածռեց նրա գեղեցիկ դեմքը:
Ա: - Երդվում եմ արևովս, Մանե, միմիայն ձեր պատվի և հանգստության համար,

որովհետև չէ՞ որ դուք նրա կինն եք և ձեր անունը այսպես թե այնպես կապված է նրա անվան հետ: ՝

ՆԴ:506. Ա: - Վահան, Վահան… Մի՞թե չես տեսնում ինչ դրության մեջ եմ ես:
Բ: - Ինչպե՞ս չեմ տեսնում: Տեսնում եմ, որ հուսահատության մեջ ես և…զղջում ես, թե ինչու ես նրան վիրավորել ու վռնդել:

ՆԴ:530. – Ա~խ, այսօրվա օրը, այս չարաբաստիկ օրը, - հառաչեց Բադամյանը հոգեկան ծանր տանջանքով: - Եթե կարողանայի մոռանալ և մոռացնել տալ…Որ մտածում եմ, թե ինչքա~ն բան և ի~նչ կորցրի այս մի օրում նախ առավոտյան ՝ ձեր տանը, հետո այժմ՝ իմ տանը… Այս ի՞նչ չար ոգի էր, որ խլեց ինձանից այսօր ամեն մի նվիրականը և թողեց միայն տիղմ և ապականություն…

ՆԴ:541. – Մի անգամ գլուխս քարովը տվի և խնդրեցի, որ օգնես ինձ: Այժմ չեմ ուզում, լսու՞մ ես, չեմ ուզում: *Ազատիր ինձ քո հոգացողությունից …Խնդրում եմ ազատիր*, աղաչում եմ ազատիր և, եթե կարելի է, մոռացիր իմ գոյությունն անգամ…

ՆԴ:550. Ա: - Դու սու՛տ ես ասում, քեզ ո՛չ մի նոր ծննդկանի մոտ էլ չեն տարել, այլ դու եղել ես այն պարոնի մոտ և նրա մոտ էլ ճաշել… *Կարծու՞մ ես ես այդ չգիտե՞մ… Ես ամեն բան գիտեմ*, և *ինձ չես կարող խաբել*…Լսու՞մ ես, *չես կարող*…
Բ: - Խեղջ իմ գլուխ: Հապա ի՞նչ անեմ, որ չխաբեմ, ոտներս դողում են քեզնից, - ասաց Հեղինեն ծիծաղելով

ՆԴ:550. Ա: - Ծաղրում էլ ես հա՞…Ծիծաղում էլ ես հա՞… Ես քեզ…կմորթեմ, - ճչաց Նասիբյանը:

ՆԴ:551. Ա: - Արի՛, քա՛ջ, մոտեցիր:
Բ: - Ես հիմա ոչինչ չեմ անիլ…ոչինչ չեմ կարող անել, դժբախտաբար, - ասաց վերջապես Նասիբյանը, ծանր շնչելով:

ՆԴ:553. – Դուք ազատամիտ, մինչև անգամ չափազանց ազատամիտ եք, երբ գործը չի վերաբերում ձեր անձնականին, բայց հենց որ բանը գալիս է ձեր կաշվին, դուք *ամենաթունդ խավարամիտից* էլ *խավարամիտ* և, որ ամենագարշելին է, պարզապես *բռնակալ* եք դառնում

582. - …Ահավասիկ ես նստած եմ ձեր առաջ թույլ, կամազուրկ, տատանվող, անվճռական, նույնիսկ վախկոտ, ինչպես մի Համլետ, որ ընդունակ է միայն մտածելու, մտածելու և սարսափելու իր մտածմունքներից:

ՆԴ:582. – …Երբ մի քիչ էլ առաջ եմ անցնում , տեսնում եմ, որ նույնիսկ ներելու իրավունք չունիմ, այո, նույնիսկ ներելու իրավունք, որովհետև ներելու իրավունք ունիմիայն նա, ով ամենից առաջ *պատժելու իրավունք* ունի, իսկ ես հենց *պատժելու իրավունքից է, որ զրկված եմ* համարում ինձ: Շատ-շատ ես իրավունք ունեմ ասելու “մնաս բարև” և գնալու իմ ճանապարհով

Հ.Պարոնյան, Երկեր, Հայ դասականների գրադարան: “Սով. Գրող” 1979: 667 էջ

ՀՊ:25. - Քանի որ ճշմարտություն է, ինչու՞վախնանք ըսելու թե մեր դաստիարակության շենքերը Յանոսի տաճարներն էին մինչև մոտ ժամանակներս. եթե կովո ժամանակ չէին բացվեր անոնց դռները՝ գոնե բացվելուն պես կռիվը կսկսեր…

ՀՊ:25. - …Եթե իմ տեղս Շիշմանյանն ըլլար երկար հոդվածով կհասկցներ ձեզ, թե միապետությու՞նը սահմանադրութենեն կելնե, թե սահմանադրությունը միապետութենեն:

ՀՊ:27. – 1863 –ին քաղաքական ժողովո անդամ եղավ և առաջարկեց, որ ազգային լրագրերու բերանը սանձ դրվի: Սահմանադրության բարեկամե մը ասանկ առաջարկություն լսելը շատերուն զարմանք պատճառեց. Բայց արդարացուց ինքզինք, առարկելով, թե՝ սանձ դրվի ըսի, բայց չըսի թե սանձ դրվելեն ետքը կառքերու:

ՀՊ:36. - …ԵՎ եթե հաճի օր մը, գոնե օր մը արդար դատի մը պաշտպան կանգնիլ…

ՀՊ:36. – Այն համբավն, որ կվայլե, և որ այնքան կվայլե իրեն, որքան յուր երկար վերարկուն…

ՀՊ:39. - 1838-ին մտավ *ճեմարան, ուր ճեմելեն* զատ բան չսորվեցավ:

ՀՊ:42. - ազգային ջոջերին նվիրված Հ Պարոնյանի երգիծական ստեղծագործություններում գրական հնարք է բառերի գործածումը մեկ իմաստով և դրանից մեղանչումը նույն բառի կրկնությամբ՝ մեկ այլ իմաստով՝ մեկ այլ խոսքաշարում: Ահա դրա վառ օրինակներից մեկը.

Հ.Պ., 42: Ա: - Ի՞նչու համար այս մարդուն պատվույն դպար:

Բ: - Ես չհայհոյեցի:

Գ: - Ինձի վատ և կենդանի ըսելեն ետքը հիմա կը պնդե, որ կենդանի բառը մարդ կնշանակե, և աս նշանակութենե կը եզրակացնե, թե ես ալ մարդ եմ:

Ա: - Մարդ բառը չե՞ք ընդունիր, անո՞ր դեմ կը բողոքեք:

Գ: - Չէ, մարդ եմ բայց կենդանի չեմ:

Բ: - Եթե կենդանի չես ուրեմն մեռյալ ես /Բազմիմաստության բառաիմաստային տարբերակներով իմաստային կրկնություն/:

Հ.Պ.: 43: - Ա: - Վատ բառին համար ի՞նչ պիտի ըսեք:
Բ: - Վատը ցածր չնշանակեր:
Ա: - Բա՞րձր կը նշանակե…
Բ: - Ոչ, վատ բառը ծույլ, թույլ, հույլ կը նշանակե:
Գ: - Ծույլ ըլլալը կրնա՞ս հաստատել:

Բ: - Եթե ծույլ չէ՝ վախկոտ է, վատը վախկոտ ալ կը նշանակե: Հ.Պ. 45:Ա: - Հայր սուրբ, իմացանք, որ դուք ամեն ցավերը կփարատեք:
Բ: - Հրամեր եք օրհնած:
Ա: - Քանի մը շաբաթե ի վեր գլխու ցավ ունիմ, կուզիմ, որ փարատեք:
Բ: - Գլու՞խդ, թե ցավդ.… Ա եզրի վերլուծություն՝ պարզաբանող բավանդակ. արձագանքման գործառույթով/

Հ.Պ. 137: /Առանց ժողովո հրամանին, գանձապետը ստակ չկրնար տալ:/
Ա: - Ժողովն ե՞րբ հրաման պիտի տա, որ վճարվի:
Բ: - Երբ որ գումարվի:
Ա: - Ե՞րբ կը գումարվի:
Բ: - Երբ գումարման պետքն զգացվի:
Ա: - Ե՞րբ կը զգացվի այդ պետքը:
Բ: - Երբ հրավեր ղրկվի:
Ա: - Երբ կը ղրկվի հրավերը:
Բ: - Երբ որ հրավիրագրերը գրվին:
Ա: - Ե՞րբ կը գրվին:
Բ: - Երբ զանոնք գրող պաշտոնյային ամսականը վճարվի:
Ա: - Ե՞րբ կը վճարվի:
Բ: - Երբ սնտուկին մեջ ստակ գտնվի:

Հ.Պ.,156: Ա: - 1859-ին վարժարանեն ելավ և Թեոդոսիա դառնալով ուզեց դասատվությամբ ապրիլ: Դասատվությամբ ապրի~լ…հրաշք դարերն անցած են….դասատվությամբ մեռնիլ, այս է իրականությունը: ՀՊ:201. - Վարդովյան էֆենտին հասակով բարձր, կազմով միջին, գույնով դեղին, դեմքով երկար, մորուքով կարճ, ուղեղով փոքր մարդ մ’է:

ՀՊ:201. – Դեմքին չարություն մը չերևար, բարություն ալ չգուշակվիր…

ՀՊ, 216/ Ա: - Արդարև մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզի պես պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մեկը…
Բ: - Սնտուկներս…
Ա: - Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը…
Բ: - Բեռնա…
Ա: - Հայրենասեր անձ մը…
Բ: - …կիրները..
Ա: - Ազգասեր, ուսյալ, կրթյալ…
Բ: - Սնտուկ…
Ա: - Դաստիարակյալ…
Բ: - …ներս առին, տարին…
Ա: - Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկը իր մեջ ունենալուն համար:
Բ: - Սնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան, - պատասխանեց Աբիսողոմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար:

/ՀՊ, 217/:Ա: - Տաճկերեն գիտեք կարծեմ:
Բ: - Ոչ:
Ա: - Ֆրանսերե՞ն:
Բ: - Ոչ:
Ա: - Անգղիերե՞ն:
Բ: - Ոչ:
Ա: - Գերմաներե՞ն:
Բ: - Ոչ:
Ա: - Վնաս չունի, ես լեզվագետ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ: /Լեզուների թվարկումը ներկայանում է իբրև տեքստային հոմանիշներով իմաստային կրկություն: Շատ կարևոր է խոսակիցներից յուրաքանչյուրի խոսքային նպատակադրումը: Անգամ այն բանից հետո, երբ Ա-ն իր բոլոր հարցերին ստանում է բացասական պատասխան, միևնույնն է, չի հրաժարվում նպատակադրումից/: Իռացիոնալ սիլոգիզմ:

/ՀՊ, 217/ Ա: - Շատ լավ, իմ անունս ալ գրեցե՛ք ես ալ պատվավոր ազգային մ'եմ: Մեր քաղքին մեջ արտերու, եզներու, կովերու և ագարակներու տեր եմ:

Հ.Պ.,218: Ա: - Շատ լավ, բայց մյուս ըսածներս լրագրույդ մեջ ամենեն առաջ դիր, որ կարդան: Բ: - Այնպես ընելու միտք ունիմ:

Հ.Պ.,218: Ա: - Խոշոր գիրերով գրե: Բ: - Հանգիստ եղեք, ամենեն խոշոր գիրերով

Հ.Պ.,219: Ա: - Չէ, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրույս՝ մեկ ու կես ոսկի վճարելով ինձի: Բ: - Մեկ ու կես ոսկի~... շատ է...երեք քառորդ ոսկի չը բավեր:

Հ.Պ.,219: Ա: - ...Բարեկամական պարտք մը կատարելու համար եկա զձեզ տեսնելու:
Բ: - Հայտնի բան է:

Հ.Պ.,219: Ա: - Բնավ ձեր մտքեն չանցուցեք, թե այս մարդը մեկ ու կես ոսկի փրցնելու համար զիս տեսնելու եկավ:
Բ: - Չեմ անցուցեր:

Հ.Պ.,219: Ա: - Վասն զի կանխել մը մուրացկան խմբագիրներ, որք Պոլիս եկեղները կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կը գրեն զանոնք. ես այդ բանը չեմ կարող ընել, վասն զի բնությանս մեջ չկա...ես իբրև պատվավոր մարդ կուզեմ ապրիլ:

Բ: - Հասկցա, իբրև պատվավոր մարդ կուզեք ապրիլ:

Հ.Պ.,219-220: Ա: - Ինձ հետ ձեր ունեցած այս տեսակցությունն ալ ուրիշի մի' զրուցեք, վասն զի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, որք բանդագուշական կենսագրություններ կգրեն և իմ անձնականությունս կը խծբծեն:
Բ: - Կը հասկնամ, անձնականությունդ կը խծբծեն

Հ.Պ.,220: Ա: - ...Կաղաչեմ, ըսեք, ձեր կոկորդը սխմեցի՞, որ ինձի բաժանորդ գրվիք:
Բ: - Երբե՛ք: / Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:

Հ.Պ.,220 Ա: - Ատրճանա՞կ ցցուցի:
Բ: - Բնավ, երբեք: / Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:
Հ.Պ.,220 Ա: - Դանա՞կ քաշեցի :
Բ: - Ոչ:

Հ.Պ.,220 Ա: - …Սա ըսել կուզեմ, որ դուք ձեր հոժար կամքով բաժանորդ գրվեցաք:
Բ: - Այո՛:

Հ.Պ.,220 Ա: - Եվ ես վեհանձնաբար վարվեցա այս պարագային մեջ:
Բ: - Տարակույս չկա:

Հ.Պ.,220 Ա: - Չվարվեցա այն խմբագիրներուն պես, որք օտարականի մը Պոլիս գալն իմանալնուն պես՝ վազելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար:
Բ: - Այդ չվառականներն իրավունք չունին քու անձնականությունդ խծբծելու… դուն վստահ եղիր ինձի…

Հ.Պ.,222: Ա: - Ի՞նչ գույնով էր /թիկնոցը՝ Ա.Հ./, ճերմա՞կ, թե թուխ:
Բ: - Ո՛չ, սև էր:
Ա: - Սև՞ էր:

Հ.Պ.,223: Ա: - Ա՛յդ ոտերով վեր պիտի ելնեք: Բ: - Ուրիշ ոտք չունինք, այս ոտներով պիտի ելնենք:

Հ.Պ.,225: Ա: - Հապա, Աբիսողոմ աղային անկողինն ու սնտուկները բերին, ինքն ալ հիմա կուգա:
Բ: - Իրա՞վ կըսես, կնի՛կ: Ա: - Սուտ ինչու՞ պիտի խոսիմ:

Հ.Պ.,231: Ա: - …Ժողովուրդն երբ աղեկ ըլլա, քահանաներուն ալ երեսը կը խնդա:
Ա: - Այնպես է, տեր հայր, - պատասխանեց Աբիսողոմ աղան՝ յուր աչերն չզատելով բնավ խուցին դռնեն, ուսկից կերակուր կը հուսար:

Հ.Պ.,231: Ա: - …Ջերմեռանդությունն ալ օրըստօրե պակսելու վրա է:
Բ: - Իրավ է: …/ Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:
Ա: - …Սուրբ գիրքը կըսե, ով համբերեսցե, իսպառ նա կեցցե:
Բ: - Այնպես է: …/ Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:

Հ.Պ.,232: Ա: - Եթե չհամբերենք, բարկանալ պետք է, և մարգարեն կըսե, բարկանայք և մի՛ մեղանչեք:
Բ: - Ճիշտ է …
Ա: - …Այս վաղանցուկ կյանքի մեջ ուրիշներուն բարիք ընենք, աղքատ տնանկները խնամենք և երբեմն ալ մեր ննջեցելոց հոգվույն համար աղոթենք:
Բ: - Այնպես է …/ Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:

Հ.Պ.,232: Ա: - Պատրաստ գտնվելու ենք, որ կանչվելնուս պես երթանք:
Բ: - Իրավ է …

Հ.Պ.,233: Ա: - Ներեցե՛ք համարձակությանս, բայց իմ պարտքս է միշտ իմացունել, որ ննջեցյալները մոռնալու չէ: Բ: - Իրավունք ունիս, տեր հայր:

Հ.Պ.,235: Ա: - Վսեմափայլ տե՛ր, ձեր գալուստն լսելով փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հավաստիքը ձեր ոտերուն տակը դնել: Բ: - Ոտերու՞ս տակը. շատ աղեկ, դի՛ր

Հ.Պ.,235-36: Ա: - …Իսկ հիմա անցան այն ժամանակները . անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, մենք՝ գիտուն, անուք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են մենք բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են մենք՝ վարդ, . անցան, անցան այն դարերը, ուր մարդկությունը տգիտության օրորոցին մեջ մեյ մը ասդին, մեյ մը անդին կերթար, կուգար:

Հ.Պ.,237: Ա: - Խնդիրքս սա էր, որ կուզեի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս:
Բ: - Գնա տպել տուր, քու ձեռքեդ բռնող կ

Հ.Պ.,238: Ա: - Գիտե՞ք, որքան ծանր է գրագետի մը ասանկ խոսքեր լսելը:
Բ: - Չեմ գիտեր և գիտնալ չեմ ուզե
Ա: - Չորս ոսկիով կլմննա, բան մը չէ,իմ Մեկենասս պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ:
Բ: - Ճակա՞տը պիտի դնես /Համագործակցային կրկն՝ կասկածի գործառույթով/

Հ.Պ.,238Ա: - Եթե մեկ-երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞:
Բ: - Այո՛, երկու ոսկի տալուդ պես գործը կդյուրանա, և մուսաս այս շաբաթ վազելով կուգա

Հ.Պ.,242: Ա: - Աբիսողո՛մ աղա, հանգի՞ստ եք:
Բ: - Հանգիստ եմ/Համագործակցային կրկն՝ հաստատմանան գործառույթով/_:

Հ.Պ.,242: Ա: - …Եթե ձեզի գավաթ մը օղի տամ, կը տնկե՞ք. ախորժակ կը բանա:
Բ: - Գավաթ մը միայն *կը խմեմ:*

Հ.Պ.,242: Ա: - Տիկինը մինչև որ կերակուրներն տաքցունե և բերե, մենք կրնանք խոսիլ և ժամանակ անցունել, այնպես չէ՞, Աբիսողոմ աղա:
Բ: - Այնպես է:

Հ.Պ.,242: Ա: - Եթե մտիկ ընելու ժամանակ չունիք և գլուխնիդ կը ցավցունեմ կոր, ըսե՛ք:
Բ: - Ատ ի՞նչ խոսք է…բա …
/Հ.Պ.,244/:Ա: - Եթե դուն ըլլայիր ժամագործին տեղը չէի՞ր բարկանար:
Բ: - Կբարկանայի:
/ՀՊ, 245/:Ա: - Դուն ալ ըլլաս, չէ՞ս էլլար, ա~:
Բ: - Չեմ էլլար…ա~ …

ՀՊ, 251/:- Արդարև մեր պարտքն էր երեկ գալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ասոր համար հատկապես ձեր ներողությունը կխնդրենք:
Բ: - Այսօր գալով պակասություն մ'ըրած չեք ըլլար, որ ներողություն խնդրեք…

/ՀՊ, 252/:Ա: - Շատ վեհանձն եք:
Բ: - Ամենևին վեհանձն չեմ

Հ.Պ.,253/:Ա: - Եվ եթե /պատկերս/ չտամ, կը խնդա՞ն իմ վրա:
Բ: - Խնդալն ալ խո՞սք է :

/Հ.Պ.,253/:Ա: - Լսվա՞ծ բան է, որ ձեզի պես ազնվական մը պատկերը հանել չտա. մեծ ամոթ է…
Բ: - Մե՞ծ ամոթ է,

/ՀՊ, 254/:Ա: - Այո, Աբիսողոմ աղա', աս ըսածներես հատ մը եթե պակաս ըլլա ձեր պատվույն վնաս կուգա:
Բ: - Իրա՞վ կըսեք:

Հ.Պ.,256: Ա: - Չկրնա՞ր ըլլալ, որ սպասավորներս ալ առջևս բարև բռնած հանեք: Բ: - Շատ աղեկ կլլա: Կրկնության մեջ Ա եզրի ծավալի հավելում/:

Հ.Պ.,257: Ա: - …Կանխիկ գումար մը կառնենք… ոչ թե վստահություն մը չունենալուս համար, այլ սովորություն մը հարգելու համար:
Բ: - Ադ ի՞նչ գեշ սովորություն է: /Անհամաձայնություն/:
Ա: - Վերջապես սովորություն մ'է:

Ա: - Շատ լավ, երկու ոսկի կբավե՞:
Բ: - Այո, կը բավե /Համաձայնություն /

Հ.Պ.,262: Ա: - ….
Բ: - Ի՞նչ կըսեք: Եթե այդպես է, չեմ ուզեր
Ա: - ….
Բ: - Եթե այդպես է, կուզեմ/Համաձայնություն /:
Ա: - …
Բ: - Եթե այդպես է, չեմ ուզեր:
Ա: - …
Բ: - Եթե այդպես է, կուզեմ:

Հ.Պ.,263-64: Ա: - Բացի ասկից, երջանկությունը շատ քիչ կը գտնվի այն ամուսնության մեջ, որ կնիկը էրիկեն ավելի բան գիտե:
Բ: - Այնպես է, ես ալ այն կարծիքին եմ:

Հ.Պ.,263: Ա: - Շատ լավ,. աղջիկը ճերմա՞կ գույն ունենա, թե քիչ մը թուխ:
Բ: - Ճերմակ կուզեմ

Հ.Պ.,264: Ա: - Աչքերը սև՞ թե կապույտ:
Բ: - Եկու տես, որ սևն ալ կսիրեմ, կապուտն ալ…

Հ.Պ.,266: Ա: - Սա մարդը գեշ չգրեր կոր, հե՞:
Բ: - Այո՛, գեշ չգրեր:

Հ.Պ.,266: Ա: - Պատվական լրագիր մ՛է:
Բ: - Ավելի պատվականը կրնա ըլլալ:

Հ.Պ.,267: Ա: - Տասը հատն ի՞նչ ընեմ: Բ: - Տասը հա՞տն: Կշտանալով կկարդաք

Հ.Պ.,269: Ա: - …Վասնզի այն ազգն, որ ազգասեր չունի յուր մեջ, ազգ չէ:
Բ: - Այո՛

Հ.Պ.,269: Ա: - Փոխադարձաբար այն ազգասերն ալ, որ ազգ չունի, ազգասեր չէ:
Բ: - Շիտակ է :

Հ.Պ.,269: Ա: - Այս երկուքն իրարու հետ այնպիսի սերտ կապակցություն մ՛ունին, որ իրարմե բաժնելուդ պես երկուքն ալ կկորսվին:
Բ: - Այնպես է:

Ա: - Ազգ մը, որ յուր աշխատավորները չքաջալերեր, ազգերու կարգն անցնելու բնավ իրավունք չունի:
Բ: - Շատ աղեկ կխոսիք

Հ.Պ.,271: Ա: -…Ու՞ր էր, թե բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի և մեռնեի. մեր ազգին մեջ հիվանդությունը բժշկութենեն աղեկ է, վասնզի տգիտությունն գիտութենեն ավելի կքաջալերվի, թեթևությունը ծանրութենեն ավելի հարգ կգտնե, մոլիներն առաքինիներեն ավելի պատիվ կվայելեն…

Հ.Պ.,273: Ա: -…Աղեկ եղավ, որ , - ըսավ բժշկին, - ասօր հոս եկաք, վասնզի քանի մ՛օրե ի վեր վրաս գեշություն մը կա:
Բ: - Ի՞նչ կզգաք,- հարցուց բժիշկը:
Ա: - Գեշություն մը կզգամ:
Բ: - Ո՞ր կողմդ:
Ա: - Ո՞ր կողմս:
Բ: - Այո:
Ա - Ամեն կողմս…

Հ.Պ.,273: Ա: -Գիշերները հանգիստ կքնանա՞ս:
Բ: - Շատ հանգիստ, բայց վրաս գեշություն մը կզգամ

Ա: - Գլուխդ երբեմն կցավի՞:
Բ: - Այո՛

Ա: - Վրադ սանկ թուլության պես բան մը…
Բ: - Ճի՛շտ

Ա: - Դողալեն վերջը տաքություն մը…
Բ: - Տաքություն մը…

Ա: - Տաքութենեն վերջը քրտինք մը…
Բ: - Քրտինք մը

Ա: - Առտուները լեզվիդ վրա լեղիություն մը:
Բ: - Այո՛, լեզվիս վրա լեղիություն մը

Ա: - Հասկցա, բան մը չէ, կանցնի, ինքզինքդ մրսեցուցած ես:
Բ: - Ինձի ալ այնպես կուգա, որ ինքզինքս մրսեցուցած եմ: /Հարցապնդումով զրույց, …/ Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:

Հ.Պ.,274: Ա: - Նախ դեղը պիտի առնես, - ասաց բժիշկն, - որպեսզի վաղը առտու դուրս ելնես: Բ: - Եթե այս դեղն խմեմ, վաղն առտու անպատճառ դուրս կրնա՞մ ելնել:
Ա: - Այո՛, անպատճառ:
Բ: - Աս ի~նչ աղվոր դեղ է, հապա թե որ դարձյալ հյուրեր գան և զիս խոսքի բռնե՞ն:
Ա: - …
Բ: - Երկու առտու է, որ դուրս ելնել կուզեմ և թույլ չեն տար. կուգան, երկու ժամ գլուխ կցավցունեն: Բայց վաղը առտու անպատճառ պիտի ելնեմ, վասնզի պատկերս քաշել պիտի տամ

Հ.Պ.,278: Ա: - Ահա այսպես, Աբիսողոմ աղա, դասատուներուն այս վիճակը լսելով չե՞ս ցավիր: Բ: - Չցավիլն ալ խո՞սք է
Ա: - Կվայլե՞ ազգի մը այսպես մուրացկանի պես ապրեցնել յուր վարժապետները:
Բ: - Չվայլեր …/ Համագործակցային կրկն.՝համաձայնություն/:

Հ.Պ.,278: Ա: - Կարծեմ, - կըսե, - Աբիսողոմ աղան տեսնելու պատիվը կվայլեմ…
Ա: - Կարծեմ, - կը կրկնե, - այն մեծ մարդուն առջևգտնվելու բարեբախտությունն ունիմ, որ մայրաքաղաքս եկած է մեկենաս անվանվելու համար…
Ա: - Կարծեմ, - կերեքնե, - այդ ազնիվ անձին քովը գտնվելու բախտը կը վայլեմ, որուն անունը քանի քանի մը օր առաջ լրագրի մը մեջ կարդացի: Աբիսողոմ աղան հրամանքնիդ կկարծեմ:
Բ: - Այո՛, ես եմ

Հ.Պ.,279: Ա: - Անկարելի է, որ ձեզի պես մարդ մը դատ չունենա. ոչ միայն անկարելի է, այլև անպատվություն ալ է. ձեզի պես մեկը հարյուրներով դատեր ունենալու է, և ձեր շորիիվ քանի մը փաստաբաններ ապրելու են: Եթե դուք դատ չունենաք, անդին աղքա՞տը պիտի ունենա

Հ.Պ.,279: Ա: - Զարմանալի բան. մեկու մը դեմ դատ բանալու ալ միտք չունի՞ք:
Բ: - Բնավ, դատ բանալու ալ պատճառ մը չունիմ

Հ.Պ.,279: Ա: - Դատ բանալու համար անպատճա՞ռ պատճառ մը ունենալու է. մեկու մը դեմ դատ կբանաք, կլմննա, կերթա:
Բ: - Է, ի՞նչ կը շահիմ

Հ.Պ.,279: Ա: - Դուն չես շահիր, բայց փաստաբանդ կշահի. ձեզի համար աղոթք կընե: Մեծ մարդերն հիմա այնպես կընեն. փաստաբաններն ապրեցնելու համար՝ իրենց դեմը ելնողներուն դեմ պատվո դատ կբանան:
Բ: - Ես անանկ խայտառակություններ չեմ սիրեր:

Հ.Պ.,280: Ստորև բերված երկխոսական տեքստը կից զույգերի բաժանելու դեպքում ստանում ենք համագործակցային կրկնության անհամաձայնություն գործառույթով տարբեր կառույցներ՝ կրկնություն հերքման, ժխտման միջոցով, օգտագործելով ժխտական վերաբերական բառեր և արտահայտություններ Հարցապնդումով երկխոսություն:

Ա: - …Լսեցի, որ շոգենավուն մեջ մեկու մը հետ քիչ մը առեր տվեր եք, և այն մեկը ձեր պատվույն դեմ ծանր խոսքեր ըսեր է:
Բ: - Ամենևին:

Հ.Պ.,280: Ա: - Թե դուք ալ անոր քանի մը խոսք ըրեր եք…
Բ: - Բնավ:

Հ.Պ.,280: Ա: - Թե վերջը ծեծկըվուքի ելեր եք…
Բ: - Անանկ բան մը բնավ եղած չէ:

Ա: - Թե դուք անոր գլխուն զարկեր եք…
Բ: - Սուտ է:

Հ.Պ.,280: Ա: - Թե անիկա ալ ձեզի ապտակ մը տվեր է…
Բ: - Բոլորովին սուտ:

Ա: - Թե երրորդ մը մեջ մտեր է…
Բ: - Երկրորդ չկա, որ երրորդ ըլլա:

Հ.Պ.,280: Ա: - Թե քու թևեդ քաշեր է…
Բ: - Սխալ:

Հ.Պ.,280: Ա: - Թե անոր ալ ձեռքը բռներ է…
Բ: - Սուտ:

Հ.Պ.,280: Ա: - Թե ասանկով զձեզ բաժներ է…
Բ: - Բնավ տեղ չկա:

Հ.Պ.,280: Ա: - Թե դուք այս բաժանումեն գոհ չըլլալով՝ դատ բանալ ուզեր եք:
Բ: - Որչա~փ սուտ:

Հ.Պ.,280: Ա: - Թե վարպետ փաստաբան մը փնտռեր եք:
Բ: - Ամենն ալ սուտ:

Հ.Պ.,280: Ա: - Թե զիս կանչել տալ ուզեր եք…
Բ: - Ամենևին:

Հ.Պ.,280: Ա: - Որպեսզի ձեր դատը պաշտպանեմ. և ես ալ ասոր համար եկա:
Բ: - Ատանկ բան մը չկա:

Հ.Պ.,281: Ա: - Հարյուր յոթանասուն և վեց դահեկա~ն… Ես այնչափ բան չկերա:
Բ: - Այո՛, դուք չկերաք, բայց ձեզի եկող հյուրերն ալ կերան

Հ.Պ.,282: Ա: - Ամեն նյութ բնություն մ՛ ունի: Նյութ կա, որուն բնությունն է լալ, նյութ կա, որուն բնությունն է խնդալ, նյութ կա որուն բնությունն է համոզել, նյութ կա, որուն բնությունն է հուզել, դարձյալ նյութ կա, որուն բնությունն է արձակ, նյութ կա, որուն բնությունն է ոտանավոր, վերջապես նյութ կա, որուն բնությունն է կրկնություն

Հ.Պ.,283: Ա: - Անոնք ալ աղքատ են, խեղճերն ի՞նչ ընեն:
Բ: - Ապրելու համար թող ուրիշ գործ մը փնտռեն, արհեստ մը սորվին, վերջապես ընեն, ինչ որ կուզեն…

Հ.Պ.,284: Ա: - Վաղը իրիկուն ներկայացում պիտի տամ իմ հաշվույս համար, և ձեր ազնվության օթյակի մը տոմս բերի:
Բ: - Չեմ ուզեր:
Գ: - Բռնությամբ գործ ալ չլլար, - ըսավ Մանուկ աղան /Այլաստությամբ Բ եզրի հաստատում/

Հ.Պ.,284: Ա: - Եվ ազգին *ծառայություն կընեմ*:
Բ: - *Աղայություն ընեիր թո՛ղ*, ինչու՞ս պետք իմին, ատոնք պարապ խոսքեր են:
Գ: - Իրավունք ունի, ատոնք պարապ խոսքեր են, - ըսավ Մանուկ աղան:

Հ.Պ.,284: Ա: - Տաս տարիե ի վեր է, որ բարոյական դպրոցի մը մեջ ազգին վարժապետություն կընեմ:
Բ: - Ի՞նչ փույթ ինձի:
Գ: - Ի՞նչ փույթ անոր, - ըսավ Մանուկ աղան /Գ-ի կողմից Բ- եզրի հաստատում/

Հ.Պ.,284: Ա: - Իրավունք ունիմ, կարծեմ ինձի համար տրվելիք ներկայացման ձեզի պես ազնիվ մեկն ալ հրավիրել:
Բ: - Ես պետք չունիմ:
Գ: - Ան պետք չունի, - ըսավ Մանուկ աղան: /Գ-ի կողմից Բ- եզրի հաստատում/

Հ.Պ.,284: Ա: - Եթե դուք օթյակ մը չեք ընդունիր, որու՞ ուրեմն տամ օթյակի տոմսակներն:
Բ: - Ուր ուզես հոն տար. ատ իմ խառնվելու բանս չէ:
Գ: - Ատ իր խառնվելու բանը չէ, տղաս, - ըսավ Մանուկ աղան:
Հ.Պ.,284: Ա: - Կաղաչեմ, մի մերժեք այս տոմսակն. եթե մերժելու ըլլաք, զիս փողոցներու մեջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք:
Բ: - Գնա՛ բանդ, ես ձանձրացա այդ տեսակ խոսքեր մտիկ ընելե:
Գ: - Ան ձանձրացավ այդ տեսակ խոսքեր մտիկ ընելե, - հարեց Մանուկ աղան:

Հ.Պ.,284: Ա: - Ա՛հ, եթե ասկից ձեռնունայն ետ դառնամ, իմ մահս պիտի տեսնեմ:
Բ: - Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ:
Գ: - Քեզ մտիկ ընելու ժամանակ չունի, - ըսավ Մանուկ աղան:

Հ.Պ.,285: Ա: /Բ-ին/ - Ինչու՞ ուրեմն խաբեցիր զիս, ստախո՛ս:
Բ: - Որպեսզի ծանուցումները ետ չմնան:
Գ: - Ես քու խաղալի՞քդ եմ:
Դ: - Ան քու խաղալի՞քդ է, - ըսավ Մանուկ աղան:

Հ.Պ.,293: Ա: - Հինգ օրեն ետքը, Աբիսողոմ աղա, հինգ օրեն ետքը պատրաստ են պատկերներդ, - ըսավ պ. Դերենիկ ներս մտնելով:
Բ: - Շատ աղեկ

Հ.Պ.,293: Ա: - Ա~հ, - ըսավ Մանուկ աղան Աբիսողոմ աղային դառնալով, - հանցանքը ձերն է, , ամենուն երես կուտաք. ասոնք միմիայն քեզմե օգտվելու համար կը մոտենան քովդ: Բ: - Իրա՞վ կըսեք:
Ա: - Ինչու՞ սուտ պիտի զրուցեմ: Կարգվել կուզես, լավ. ես ընտրեմ քեզի աղջիկներ, ընտրե և ուզածդ առ:

Հ.Պ.,300: Ա: - Բնությունը <u>քնացիր</u> կըսե, քաղաքավարությունը <u>մի քնանար</u> կը պոռա /բայական գործողության հրամայականի դրական և ժխտական ձևերը ծառայում են բնության և քաղաքավարության հակադրմանը: Համագործակցային կրկնության հակադրության գործառույթ/:

Հ.Պ.332: Ա: - Ի՞նչ կխմեք, ուրեմն:
Բ: - Ոչինչ, չիյտե՞ս քանի տարի մը կա, որ ես ըմպելիք չեմ գործածեր:
Ա: - Ըմպելիք չե՞ս գործածեր:
Բ: - Ոչ:
Ա: - Իրա՞վ կսես:
Բ: - Ինչու՞ սուտ խոսիմ:
Ա: - Աստվածդ սիրես:
Բ: - Չեմ խմեր:
Ա: - Կատա՞կ կընես հետս:
Բ: - Ի՞նչ հարկ կա կատակ ընելու:
Գ: - Ինչու՞ կապրիս կոր ուրեմն:
Ա: - Կը խմե, կը խմե, կատակ կընե կոր:
Բ: - Չեմ խմեր, Մարկոս աղա:
Ա: - Ամոթ է, աղբար, չխմել կըլլա՞, լսվա՞ծ բան է, նստողները վրանուս խնդացունե՞նք պիտի: Բ: - Սովորություն չունիմ, եղբայր, ինչու կը ստիպեք:
Գ: - Կնիկ ես, ինչ ես, պե մարդ, օղին չխմվի՞ր:
Դ: - Բերնին համը ի՞նչ գիտե անիկա:
Ե: - Պարզ մարդ մ՛է…Զ: - Ճգնավոր…
Է: - Հա~, հա~, հա~, օղի չխմեր եղեր, վայ ապուշ, վայ…
Ա: - Կը խնդրեմ, Գամիկ աղա, վերջացնենք սա խաղը, կըսե Մարկոս աղան:

Բ: - Ի՞նչ ընեմ… Գավաթ մի միայն խմե:
Բ: - Գավաթ մը կը խմեմ խաթերդ համար

Հ.Պ.341: Ա: - Կերակուրնիս ուտենք, շտկվինք, շտկռտվինք, դուն ալ շապիկդ փոխե, էֆենտիին տունը մեծ մարդեր կուգան, խաղք չըլլա՛նք:
Բ: - Կերակուրնիս ուտենք, շտկվինք, շտկռտվինք, ես ալ շապիկս փոխեմ, էֆենտիին տունը մեծ մարդեր կուգան, խաղք չըլլա՛նք… լմնցա՞վ:

Հ.Պ.343: Ա: - Ի՞նչ անկիրթ մարդ է:
Բ: - Ո՞վ է այդ վայրենին:
Գ: - Կոշիկները վարը ձգեր է:
Դ: - Անասուն կը նմանի:

Հ.Պ.348: Ա: - Պատմածիդ նայելով բարի մարդ է եղեր Բարաղամ աղան:
Բ: - Բարին ալ խո՞սք է

Հ.Պ.348: Ա: - Այսինքն շենքով շնորհքով մարդ է եղեր:
Բ: - Շենքով շնորհքովին խո՞սք կըլլ

Հ.Պ.348: Ա: - Այսինքն ծանր մարդ:
Բ: - Ի~նչ ծանր, ի~նչ ծանր… ինչպե՞ս հասկցնեմ քեզի. ծանր, բայց հիմիկիվան թեթևներուն պես ծանր չէ:

Հ.Պ.348: Ա: - Այսինքն ազդեցիկ մարդ:
Բ: - Ողջ ըլլալու էր ու քեզի ցուցնելու էի, որ մարդ տեսնայիր:Մա՛րդ էր, մա՛րդ

Հ.Պ.381: Ա: - Բարիկուն տիկին, բարիկուն Աթանաս աղա, ձեզի տեսնելու համար եկա, . այս գիշեր հորաքրոջս տունը պիտի երթանք՝ քիչ մը ժամանակ անցունելու, - ըսավ Միհրան:
Բ: - Շնորհակալ եմ, բայց ժամանակ չունիմ այս գիշեր, - պատասխանեց Աթանաս աղան
Հ.Պ.381: Ա: - Անկարելի է, մինչև որ ձեզի չառնիմ, չեմ երթար:
Բ: - Սարսափելի սանճի մը ունիմ:
Ա: - Ատ ուրիշ:
Բ: - Այո՛, սարսափելի սանճի մը:
Ա: - Իրավունք ունիք:
Բ: - Ատոր ըսելիք չունիմ:
Բ: - Այո/, սարսափելի սանճի մը, ի՞նչ է, չիյտեմ:
Ա: - Հանգիստ ըրեք ուրեմն այս գիշեր:
Բ: - Այո՛, սարսափելի սանճի մը, նստելու իսկ ժամանակ չունիմ, երթամ, պառկիմ պիտի, սարսափելի սանճի մը

Հ.Պ.381: Ա: - Գացեք, պառկեցեք, ես տիկինը կառնեմ, կտանիմ, հոգ մի ընեք, վերջն ալ կբերեմ. Աթանաս աղա, դուն հանգիստդ նայե:

Բ: - Ան ալ չը կրնար գալ, ան ալ սարսափելի գլխու ցավ ունի:
Ա: - Դուրս ելլալուն պես գլխու ցավը կանցնի:
Բ: - Չանցնիր:
Ա: - Գոնե տիկինն առնեմ, տանեմ պիտի:
Բ: - Չըլլար:

Հ.Պ.381: Ա: - Իլլեքի պիտի տանիմ, որոշված է: Կը սպասեն կոր նե…/Բռնի ուժով հաղթանակ/

Հ.Պ.430: Ա: - Քեզի դեմ դատ պիտի բանամ:
Բ: - Բա՛ց:
Ա: - Տանդ դռները պիտի գոցեմ:
Բ: - Գոցե՛:
Ա: - Ընդհանուր ժողովքը պիտի ելնեմ:
Բ: - Ելի՛ր:
Ա: - Վերջեն Թաղական պիտի իջնամ:
Բ: - Իջի՛ր:

Ա: - Վերջապես խոսքդ ըրիր և 5 ոսկիեն ավելի չտվիր…վնաս չունի,…շնորհակալ ենք Նահապետ աղա:
Բ: - Մնաք բարով մյուայու Նահապետ:
Գ: - Մնաք բարով Նահատետ էֆենտի:
Դ: - Մնաք բարով, Նահապետ պեյ
Ե: - Մնաք բարով, հոճա Նահապետ
Զ: - Մնաք բարով Նահապետ աղա:

Հ.Պ.341: Ա: - Կերակուրնիս ուտինք, շտկվինք, շտկռտվինք, դուն ալ շապիկդ փոխե, էֆենտիին տունը մեծ մարդեր կուգան, խաղք չըլլանք:
Բ: - Կերակուրնիս ուտենք, շտկվինք, շտկռտվինք, ես ալ շապիկս փոխեմ, էֆենտիին տունը մեծ մարդեր կուգան, խաղք չըլլանք… լմնցա՞վ:

Տաճկաստանին մեջ բանտ. բանտին մեջ բա՞նտ

Հ.Պ.392: Ա: - Տիկինը կը քաշվի՝ պատուհանը գոցելով, բայց Զաքար աղային ականջի ցավը չը քաշվիր

Հ.Պ.394: Ա: - Թող չեն տար մարդուն, որ խոսի, ինչպես որ քիչ մ՛առաջ թող չտվին, որ չխոսեր

Հ.Պ.426: Ա: - Սրիկա, դուն իմ ստակովս մարդ եղար, համբավ ստացար,հիմա զիս միս մինակ թողլով գլուխդ կ՛առնես թատրոն կ՛երթաս:
Բ: - Ուրիշ անգամուն գլուխս քեզի կը ձգեմ անանկ կերթամ

Հ.Պ.435: Ա: - /Ատամը ցավող այցելուին/ Ի՞նչպես անցուցիր այս գիշեր:
Բ: - Ամենևին աչքս չգոցեցի:
Գ: - Հայտնի է, որ պարոնին աչքը կը ցավի

Հ.Պ.468: Ա: - Գիտե՞ս հայրիկ, առանձին կուզեի գտնալ ձեզ, որպեսզի ձեզի իմ սիրտս բանամ: Բ: - Բաց նայիմ

Հ.Պ.481: Ա: - Մոտ եկուր, համբույր մը տպեմ երեսիդ: Բ: - Իմ երեսս տպարան չէ
Հ.Պ.448: Ա: - Անզգամ, տես գլխուս, դուն ճերմակցուցիր աս մազերը…
Բ: - Ճերմակը սևին վրա աղեկ կը վայլե

Հ.Պ.468: Ա: - Ինչպես՞ գտաք այն պարոնը:
Բ: - Անիկա ինքնիրեն եկավ:

Հ.Պ.399: Ա - Բարթամ երկաթագործ է, աշխատասեր երիտասարդ մ'է. գինովություն չունի, խաղամոլություն չունի, ստակ չունի, տուն ալ չունի:
Բ: - Ստակ չունի, տուն ալ չունի, թող չունենա, աշխատությունն միշտ ստակ է, միշտ տուն է

Հ.Պ.398-405: Ա: - Ք.Վնասները երկի Մարգրիտի և Ղազարոսի ակնարկը մի սքանչելի պատմություն է կրկնվող հաղորդման վրա հիմնված անցանկալի հաղորդակցությունների մասին, որոնցով տառապում են մարդիկ և այն մասին, թե ինչպես խուսափել նման զրույցներից; Ականջները կախել և քաղաքավարի լսելու փոխարեն Պարոնյանը լավ դեղատոմս է առաջարկում՝ ընդհատել արդեն լսված խոսքը հենց սկզբից և ասել , - Արդեն պատմել ես:

Հ.Պ.405: Ա: - Բարի եք եկեր, Բարսեղ աղա, ո՞ր հողմը փչեց զձեզ դեպի մեր գյուղը:
Բ: - Պզտիկ այցելություն մը ունեի ընելու:
Ա: - Ընելու է… ընելու է… երբեմն-երբեմն այցելություն ալ ընելու է… շատ աղեկ…շատ աղեկ… այս գիշեր հո՞ս եք:
Բ: - Ոչ, կտոր մը պանիր հաց կերա հոս, պիտի դառնամ…որովհետև տունը մինակ են… Ա: - Դառնալու է…դառնալու է…քանի որ տունը մինակ են…ես ալ ըլլամ նե, կդառնամ: Բ: - Դուրսը մնալու սովորություն չունիմ:
Ա: - Ունենալու չէ… ունենալու չէ…դուրս մնալու սովորությունը աղեկ սովորություն մը չէ… Հ.Պ.405: Ա: Կրկնությամբ ամեն պարագայում /Համագործակցության կրկնություն համաձայնության և զրույցը շարունակելու գործառույթներով/:

Գ.նարեկացի,Տաղեր, "Սով. Գրող" 1977: 494 էջ, 1979: 654 էջ

Գ.Ն. 2: 568: Ա: - Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,

Ուռամիջակ, հաստաբազուկ,

Լայնաթիկունք, խարտիշագեղ, աիեղագոչ…/Իմաստային կրկնություն բառերի կուտակումով: Հաստատման գործառույթ/

Գ.Ն. 2. 103: Ա: - Գոսացած, կարկամ, վիատ, գլխիկոր

Ու տագնապահար՝ այն կնոջ նման.…

Գ.Ն.2, 6: Ա: - Ընդունիր հյուսվածքն իմ այս կարճառոտ ու սեղմ խոսքերի

Բարեհաճորեն, ոչ թե *բարկությամբ* /հականիշությունը կարող է ընդունվել որպես կրկնություն, քանի որ եզրերը հանդես են գալիս որոշակիորեն կապակցված/

Գ.Ն. 2, 21: Ա: - Լինեն մեղավոր, թե արդարամիտ,

Ինքնապանծ գոռոզ, թե սխալներին հասու անձնադատ,

Անչար ու բարի, թե եղեռնագործ,

Նկուն, թե խիզախ,

Ստրուկ, հպատակ, թե իշխանավոր կամ գերաշխարհիկ,

Շինական, միջակ, թե բարետոհմիկ, սեպուհ, պայազատ,

Թե՛ արու, թե՛ էգ,

Թե՛ հրամայող և թե՛ հնազանդ,

Թե՛ վեհ ու վսեմ, թե՛ փոքր ու նվաստ,

Արգո, թե անարգ, ասպետ, թե ռամիկ,

Թե՛ գյուղաբնակ, թե՛ քաղաքացի

Գ.Ն. 2, 22: Ա: - Նվիրյալներին, զգաստ ու պարկեշտ,

Քահանաներին, ընտիր ու մաքուր…./հոմանիշներով իմաստային կրկնություն/

Գ.Ն. 2, 29: Ա: - Ո՛չ սաղմնավորվել բնավ արգանդում,
Ո՛չ ձևավորվել որովայնի մեջ,
Ո՛չ ծնունդ առնել, ո՛չ լույս աշխարհ գալ,
Ո՛չ մարդկանց թվում երբևէ գրվել,
Ո՛չ հասակ առնել, աճել, զարգանալ,
Ո՛չ գեղապատկեր դեմքով զարդարվել,
Ո՛չ օժտվել խոսքով, բանականությամբ…..
Գ.Ն. 2. 33: Ա: - Չկշտամբեցիր երբ հանդգնեցի քեզ կցորդվելու,
Չմթագնեցիր լույսը աչքերիս,….
Չխորտակեցիր դաստակը բազկիս,….
Չկոտրատեցիր մատներս, երբ ես
Շոշափում էի պատգամդ կենաց:
Գ.Ն. 2. 40: Ա: - Մեկն իր ծնունդով, մեկն իր սերունդով,
Մեկն իր ծիլերով, մեկն իր բերքերով,
Մեկն իր փշերով, մեկն արմատներով,…….
Մեկն իր կայծերով, մեկն իր կրքերով,
Մեկն իր խորքերով, մեկն իր գարշությամբ,….
Մեկն աղբյուրներով, մեկն իր գետերով,
Մեկն իր շանթերով, մեկն հեղեղներով, մեկն ամոթներով,

Մեկն իր վիհերով, մեկն անդունդներով,…
Գ.Ն. 2. 185: Ա: - Երկու ըմպանակ ունի ձեռքերում,
Մեկն արյունով լի մյուսը՝ կաթով.
Երկու բուրվառներ կայծակնացնցուղ,
Մեկը՝ խնկաբույր, մեկը՝ ճենճահոտ.
Անոթներ, երկու համեմունք կրող,
Մեկը՝ քաղցրության, մեկը՝ դառնության.
Զույգ բաժակ, երկու պարունակությամբ,
Մեկը՝ արտասուք, մյուսը՝ ծծումբ.
Գավաթներ բռնած մատների ծայրով,
Մեկի մեջ՝ գինի, մյուսում՝ լեղի
Գ.Ն. 2. 195: Ա: - Դաժանության մեջ՝ բարեհոգություն,
Թերատության մեջ՝ կատարելություն,
Գոռոզության մեջ՝ հեզամտություն,
Ստահոդության մեջ՝ ճշմարտություն,
Խորամանկության մեջ՝ շիտակություն,
Խարդախության մեջ՝ ուղղամտություն…,
Գ.Ն. 2. 101: Ա: - *Չկայի* երբեմն՝ ինձ ստեղծեցիր,…. / Միջատարածքներ
Չէի *աղաչել*՝ խնամարկեցիր,…
Չէի *աղաչել*՝ տվիր զորություն,…
Չէի *պաղատել*՝ ինձ ողորմեցիր,…
Չէի *հեծեծել*՝ ունկնդիր եղար
Գ.Ն. 2.125: Ա: - Ինչպե՞ս համարեմ ես ինքս ինձ մարդ,
Երբ կարգն եմ դասված տմարդիների.
Կամ ինչպե՞ս պիտի բանական կոչվեմ,
Երբ անբանների կցորդ եմ դարձել իմ հիմարությամբ……..
Եվ ինչու՞ պիտի ունենամ համբավ զգայականի,
Երբ իմացության դռներս են փակված……
Գ.Ն. 2. 136:Ա: - Թե զինվոր *տեսնեմ*, մահ եմ *սպասում*,
Թե պատգամաբեր՝ արհավիրքի բոթ,
Եթե գրագիր՝ կորստյան մուրհակ,
Թե օրինապահ՝ անեծք ու նզովք,
Եթե քարոզիչ՝ ոտքերի փոշու թոթափում միայն,
Եթե բարեպաշտ՝ հանդիմանություն,
Եթե անզգամ՝ կսկիծ ու մորմոք:
Գ.Ն. 2. 158: Ա: - Մեղա~ ես մեծիդ բարերարության, Անարգս մեղա~,
Մեղա~ ծագումին ճառագայթներիդ, Խավարս մեղա~,
Մեղա~ շնորհիդ երախտիքներին, Արդարև մեղա~,
Մեղա~ երկնային գթառատ սիրուդ, Հայտնապես մեղա~,
Գ.Ն. 2. 80: Ա: - Զի կարկամած էր,…/ Մեծ միջատարածքներով կրկնություններ/
Զի պապանձված էր,
……
Զի խորտակված էր,

……
Զի մեղապարտ էր,
……
Քանզի լքված էր,
……
Զի հուսահատ էր,
……
Գ.Ն. 2. 411: Ա: - Այստեղ՝ դսրովում, այնտեղ՝ պարսավանք,
Այստեղ՝ ծանակում, այնտեղ՝ նախատինք,
Այստեղ՝ դառնություն, այնտեղ՝ կշտամբանք,
Այստեղ՝ վարանում, իսկ այնտեղ՝ լքում,
Այստեղ՝ հեծություն, այնտեղ՝ հառաչանք,
Այստեղ՝ կասկածներ, այնտեղ՝ իրացում,
Այստեղ՝ տագնապներ, այնտեղ՝ հատուցում,
Այստեղ՝ փորձություն, այնտեղ՝ դատաստան
Գ.Ն. 2 340: Ա: - Ինձ անկարելին՝ կատարված է քեզ,….
Ինձ անկշռելին՝ չափված է ճշտիվ անճառության քո,….
Ինձ անբուժելին՝ վտանգազերծ է բարձրյալիդ համար,….
Ինձ սարսափելին՝ հաճելի է քեզ,….
Ինձ անպարտելին՝ դյուրահաղթ է քեզ,…/
Գ.Ն. 2.166: Ա: - Արդ ո՞ր մեկն ասեմ, ո՞րն հիշատակեմ,
